

ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՍԵՐՈՒՆԴ

Հետազոտություն երիտասարդների շրջանում
Հայաստան 2016

ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՍԵՐՈՒՆԴ

Հետազոտություն երիտասարդների շրջանում
Հայաստան 2016

Երևան
Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամի հայաստանյան մասնաճյուղ
2016

ՀՏԴ 316
ԳՄԴ 60.5
Ա 596

Անկախության սերունդ
Ա. 596 Հետազոտություն երիտասարդների շրջանում
Հայաստան 2016.- Եր.: Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամի հայաստանյան մասնաճյուղ, 2016, 232 էջ

Հրատարակիչ **Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամի հայաստանյան մասնաճյուղ**
Երևան 0002, Մոսկովյան փող. 31.76/1

Հրատարակչի ներկայացուցիչներ
Յուլյա Բլեզիուս, ՖԷՀ
Լիանա Բաղալյան, ՖԷՀ

Մենագրությունը երաշխավորված է հրատարակման Երևանի պետական համալսարանի սոցիոլոգիայի ֆակուլտետի գիտական խորհրդի որոշմամբ:
Մասնագիտական գրախոսողներ՝
բ.գ.դ. Ա.Վ. Աթանեսյան
ս.գ.թ. Ա.Ռ. Վարտիկյան

Հեղինակներ **Արթուր Մկրտիչյան, Հարություն Վերմիշյան, Սոնա Բալասանյան**

Խմբագիր **Արմեն Բաղդասարյան**

Ձևավորում **pertext, Berlin** | www.pertext.de

Նկարազարդում **Ֆրանցիսկա Ուհլիգ** | **www.franziskauhlig.de**

Էջադրում **Գրիգոր Հակոբյան** | **grego.hakobyan@gmail.com**

Կազմի նկար **Ֆոտոլուր** | **photolure.am**
Հայաստանի քարտեզ **Mdesignstudio (shutterstock.com)**

Տպագրություն **«Տիգրան Մեծ» հրատարակչություն**
Տպաքանակ **300 օրինակ**

ՀՏԴ 316
ԳՄԴ 60.5

Սույն հրատարակության մեջ ներկայացված տեսակետները, կարծիքները և եզրակացությունները կարող են չարտացոլել Ֆրիդրիխ Էբերտ Հիմնադրամի տեսակետները: Գրքում տեղ գտած տվյալների ճշգրտության համար պատասխանատու են հեղինակները:

© Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամի հայաստանյան մասնաճյուղ, 2016
© ԵՊՀ, սոցիոլոգիայի ֆակուլտետ, 2016

ISBN 978-9939-1-0485-0

ՆԱԽԱԲԱՆ

Շատ հետխորհրդային երկրների պես, Հարավային Կովկասի երկրները դեռևս գտնվում են անցումային շրջանում: Հայաստանը, լինելով տարածաշրջանում ամենափոքր հանրապետությունը, դեռևս փորձում է իր ուղին գտնել Եվրոպայի և Ռուսաստանի, ինչպես նաև արժեքների, ինտեգրացիոն մոդելների և դրանց առնչվող անվտանգության գործոնների միջև: Ժողովրդավարական հասարակության և ազատ շուկայական տնտեսության տրանսֆորմացիան հեռու է ավարտված համարվելուց: Ի հավելումն այդ ամենին, երկիրն ունի Թուրքիայի և Ադրբեջանի հետ տևական վեճեր, որոնք հանգեցնում են մեկուսացման, ինչպես նաև «ոչ պատերազմ-ոչ խաղաղություն» իրավիճակի:

Տվյալ հետազոտությունը բացահայտում է Հայաստանի երիտասարդների մտահոգությունները, ձգտումները, արժեքները և կենսակերպերը: Այսօրվա 14-29 տարեկան երիտասարդները մեծացել են Խորհրդային Միության փլուզումից հետո՝ անկախ Հայաստանում, նրանք «անկախության սերունդն են»: Այս իմաստով, այս սերունդը ներկայացնողն է մի կողմից՝ խորհրդային ժառանգության և մյուս կողմից՝ հայաստանյան հասարակության հետագա զարգացման:

Հետազոտությունը հիմնված է համահայաստանյան ներկայացուցչական հարցման վրա, որն անցկացվել է 2016թ. փետրվար-մարտ ամիսներին 14-ից 29 տարեկան երիտասարդների շրջանում: Ուղենիշ է համարվել 1953թ.-ից Գերմանիայում պարբերաբար անցկացվող Shell երիտասարդական հետազոտությունը, որը հասարակության միջնաժամկետ զարգացման հուսալի և արժեքավոր ցուցանիշ է: Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամն իրականացրել է մի շարք նմանատիպ ուսումնասիրություններ բալկանյան երկրներում, ինչպես նաև Կենտրոնական Ասիայում: Ուսումնասիրությունը

Արևելյան գործընկերության երկրներում անցկացվող հետազոտությունների մաս է կազմում: Առաջին երկիրը, որտեղ այն իրականացվել է, Վրաստանն է: Բոլոր հետազոտություններն ուղղված են երկրների միջև համեմատություն անցկացնելու համար հնարավորություններ ստեղծելուն:

Հետազոտության արդյունքները հետաքրքիր պատկեր են ստեղծում Հայաստանի երիտասարդների վերաբերյալ՝ ցույց տալով այն մարտահրավերները, որոնց նրանք ստիպված են առնչվել անձնական, տնտեսական և քաղաքական կյանքի տեսանկյունից: Անհավասարաչափ զարգացած կրթական համակարգի, գործազրկության բարձր տոկոսի, ինչպես նաև ավտորիտար քաղաքական կառույցների պատճառով նրանք բախվում են տնտեսական և քաղաքական անապահովության զգացողությանը: Սա հանգեցնում է մեկուսացման՝ ընտանիքի և ընկերների հետ կապվածության շեշտադրմամբ և քաղաքական և/կամ սոցիալական ներգրավվածության հանդեպ ունեցած մեծ դժկամությամբ: Այնուամենայնիվ, շատ երիտասարդներ լավատես են ապագայի նկատմամբ: Հետազոտությունը բացահայտում է նաև հսկայական անհամաչափություն մայրաքաղաքում ու շրջաններում ապրող երիտասարդների, ինչպես նաև արական և իգական մասնակիցների միջև: Ավանդական դերային մոդելների և արժեքների գերիշխանության պայմաններում՝ երիտասարդները վերարտադրում են հին արժեքներն ու տեսակետները՝ չնայած, որ նրանք անկախության սերունդն են:

Եվ վերջապես, հետազոտության արդյունքները նաև ցույց են տալիս, որ դեռևս կա երիտասարդների մի փոքր հատված, որը հավատում է ավելի ժողովրդավար և ազատական հասարակությանը և պատրաստ է պարտավորություն վերցնել այդ հարցում: Դիտարկելով Հայաստանում տեղ գտած վերջին զարգացումները՝ այս խումբն ավելի ու ավելի տեսանելի է դառնում: Նրանց դրդապատճառները և հաջողությունները որոշ հարցերի վերաբերյալ հուսադրում են, որ հայաստանյան երիտասարդները կարող են վերջապես դառնալ փոփոխության դերակատարներ:

Այս հետազոտությունը միտված է ավելի խորը վերլուծության և քաղաքական քննարկումների հիմք դառնալուն: Այն հասցեագրվում է Հայաստանում և արտերկրում որոշում կայացնողներին, գիտնականներին, ինչպես նաև ՀԿ-ներին ու երիտասարդական կազմակերպություններին: Մտահոգությունների, ձգտումների և կենսակերպերի մասին խոսելը երիտասարդներին տալիս է ձայնի իրավունք: Ավելին՝ երկրի զարգացման այս հարուստ ներուժը պահպանելու համար հետազոտության նպատակն է երիտասարդների

առջև ծառացած մարտահրավերները հաղթահարելու ուղիների վերաբերյալ երկխոսության խթանումը:

Որպես վերջաբան ցանկանում եմ երախտիքիս խոսքն ուղղել Երևանի պետական համալսարանին, որն այս նախագծի շրջանակներում եղել է հուսալի և շատ արհեստավարժ գործընկեր, մասնավորապես՝ Արթուր Մկրտիչյանին, Հարություն Վերմիշյանին և Սոնա Բալասանյանին: Շնորհակալ եմ նաև Քլաուս Հուրելմանին՝ Հերթիի կառավարման դպրոցից՝ իր արժեքավոր խորհրդատվության համար, բոլոր այն հայ փորձագետներին, ովքեր ներգրավված են եղել որպես խորհրդատուներ և վերջապես՝ ՖԷՀ հայաստանյան թիմին, հատկապես նախագծի պատասխանատու համակարգող Լիանա Բաղալյանին իր տքնաջան և գերազանց աշխատանքի համար:

Յուլյա Բլեզիուս
ՖԷՀ Հարավային Կովկաս

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Համառոտագիր 11

Ներածություն 15
Հետազոտության մեթոդաբանություն 16
Հետազոտության ընտրանք 17
Երիտասարդների սոցիո-ժողովրդագրական բնութագրիչները 19
Ֆոկուս խմբերի ընտրության չափանիշներ 21

Կրթություն և զբաղվածություն 23
Ներածություն 23
Հիմնական տվյալներ 24
Վերլուծություն 25
Կրթություն 25
Զբաղվածություն 39
Քննարկում 48

Ժողովրդավարություն և կառավարում 51
Ներածություն 51
Հիմնական տվյալներ 52
Վերլուծություն 53
Քաղաքական մասնակցություն և ժողովրդավարություն 53
Քաղաքական դիրքորոշումներ 66
Զարգացման հիմնախնդիրներ ու մարտահրավերներ 70
Քննարկում 76

Արտաքին քաղաքականության ընկալումը 79
Ներածություն 79
Հիմնական տվյալներ 80
Վերլուծություն 81
Միջազգային ինտեգրման նախապատվություններ 81
Միջազգային ինտեգրման հիմնախնդիրներ 88
Քննարկում 97

Անհանգստություններ և ձգտումներ 101
Ներածություն 101
Հիմնական տվյալներ 102
Վերլուծություն 103
Կյանքով բավարարվածություն 103
Սոցիետալ ռիսկեր 108
Միգրացիա և խտրականության փորձառություն 115
Քննարկում 129

Ինքնություն, արժեքներ և կրոն 131
Ներածություն 131
Հիմնական տվյալներ 132
Վերլուծություն 134
Սոցիալական պատկանելություն և վստահություն 134
Արժեքանորմատիվ պատկերացումներ 148
(Ան)հանդուրժողականություն
և սոցիալական հեռավորություն 158
Քննարկում 163

Ընտանիք և ամուսնություն 167
Ներածություն 167
Հիմնական տվյալներ 168
Վերլուծություն 168
Ծնողների հետ փոխհարաբերություններ 168
Ամուսնություն 184
Քննարկում 192

Ժամանց և ապրելակերպ 195
Ներածություն 195
Հիմնական տվյալներ 196

Վերլուծություն 197
Ժամանց..... 197
Ջանգվածային լրատվամիջոցներ և համացանց.....202
Անձնական ծախսեր 207
Սովորություններ և տարածված վարքաձևեր 213
Սեռական կենսափորձ 219
Քննարկում 223

Եզրակացություն 225

Օգտագործված գրականություն.....229

ՀԱՄԱՌՈՏԱԳԻՐ

Կիրառելով քանակական և որակական մեթոդների համակցությունը՝ «Երիտասարդները Հայաստանում 2016» հետազոտությունը բացահայտում է երկրի երիտասարդների՝ անկախության սերնդի դիրքորոշումները, կարծիքները և ակնկալիքները: Արդյունքները ցույց են տալիս Հայաստանի երիտասարդության ներկայիս կյանքը արժեքների բախման, սոցիալական իրականության հակասությունների, ինչպես նաև մշակութային և ազգային համատեքստում: Հետխորհրդային հասարակություններին բնորոշ միտումների առկայությունը փաստող տվյալները աչքի են ընկնում հակասականությամբ:

Հետազոտության նպատակն է ներկայացնել Հայաստանում երիտասարդների կրթության, զբաղվածության, քաղաքական մասնակցության, մտահոգությունների, ինքնության ձգտումների, կրոնական, հանդուրժողականության, ընտանեկան կյանքի, ժամանցի, ինչպես նաև կենսակերպի հիմնախնդիրները:

Երիտասարդները Հայաստանում բավականին բազմազան են: Նրանք ցուցաբերում են բարձր մակարդակի ինտելեկտուալ ինքնուրույնություն և միջին մակարդակի ինքնուրույնություն առօրյա կյանքում (ընդհանուր առմամբ նրանք կարող են իրենց ներքին խնդիրներն ինքնուրույն լուծել), սակայն պակաս անկախ են ֆինանսական և տնտեսական հարցերում, որը մատնանշում է նրանց խոցելիությունը աշխատանքային շուկայում (տե՛ս նաև «Երիտասարդների զբաղվածության հիմնախնդիրները ՀՀ-ում», 2013: 73): Մեր հետազոտությունը ցույց է տվել, որ նրանք խիստ կախվածություն ունեն իրենց ծնողներից թե՛ նյութապես, թե՛ բարոյապես, ինչպես նաև գտնվում են համայնքների սոցիալական ճնշման տակ՝ հատկապես գյուղական վայրերում: Երիտասարդ տղաներին ավելի մեծ ազատություն է տրվում

որոշումներ կայացնելու հարցում, մինչդեռ երիտասարդ կանայք դժվարանում են իրենց անվանել որոշում կայացնողներ:

Անկախության, ինքնահիրացման և կենսական նշանակության պլանավորման հիմնախնդիրների համատեքստում կրթությունը շարունակում է մնալ նորանկախ Հայաստանի կարևորագույն ոլորտներից մեկը և երիտասարդների համար վեր է հանում կենսական նշանակության խնդիրներ: Մասնավորապես, ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ երիտասարդների ստացած գիտելիքները չեն երաշխավորում աշխատանք իրենց մասնագիտացման ոլորտում: Հովանավորչությունը մեծ դեր է խաղում աշխատանքի անցնելու և կարիերա կառուցելու հարցում, որն իր հերթին շարունակում է մեծացնել սոցիալական կախվածությունների և խնդիրները լուծելու թերզարգացած անձնական մեխանիզմների շրջանակը:

Ի հավելումն վերը նշվածի՝ արևմտյան և/կամ հետխորհրդային կրթական և կամավորական հնարավորություններին առնչվող տարբեր մշակութային արժեքների բախումը դժվարացնում է որոշումներ կայացնելը (և խիստ անդրադարձ է ունենում այդ որոշումների վրա) ու խանգարում նրանց ընդունել այն, ինչ հասարակությունը կարող է առաջարկել: Խնդիրն ավելի է բարդանում, երբ դիտարկում ենք Հայաստանի օրենսդրությամբ կամավորական աշխատանքի կարգավորված չլինելու հանգամանքը, հետևաբար՝ օրենսդրական բացթողումները և համընդհանուր չափանիշների բացակայությունը հանգեցնում են կամավորությանն առնչվող տարբեր մեկնաբանությունների (օրինակ՝ որպես ուսումնառության փորձ և սոցիալական փոփոխություններում ներդրում ունենալու հնարավորություն): Սոցիալական կախվածության գործոնը նաև պայմանավորում է երիտասարդների քաղաքական կողմնորոշումը և վարքագիծը, ինչպես նաև ծնողների կարծիքներին և ավանդական լեգիտիմ արժեքներին ապավինելը որոշումներ կայացնելու հարցում: Իրականության հակասական ընկալումների առումով արդի հայաստանյան երիտասարդությանը առավել բնութագրական հատկանիշներից է կոմպլեմենտար վերաբերմունքը երկընտրանքների նկատմամբ, որն առավել դրսևորվում է Եվրամիություն, թե՞ Եվրասիական տնտեսական միություն նախապատվությունների քննարկման ժամանակ:

Ըստ հետազոտությունների արդյունքների՝ իրենց կարևորագույն նախագծերն իրականացնելիս երիտասարդները հաշվի են առնում սոցիալական ռիսկերը, որոնց հիմքը պետք է փնտրել սոցիալական անարդարության դրսևորումներում: Թեև հետազոտությունը վեր է հանում և բարձրաձայնում

Հայաստանում երիտասարդների տարբեր մտահոգությունները, անհանգստությունները և անհանդուրժողականության դրսևորումները, այդուհանդերձ, պետք է արձանագրել, որ այդ գործոնները հետ չեն պահում նրանց ապագայի նկատմամբ լավատես լինելուց, ջանք գործադրելուց և նպատակասլաց լինելուց:

Սեռ

Արական	Իգական
Սոցիալական ակտիվություն	Սոցիալական պասիվություն
Սոցիալական ներառում	Սոցիալական օտարում
Ինքնուրույնություն	Կախվածություն

Տարիք

Ցածր	Բարձր
Լավատեսություն	Հոռետեսություն
Սոցիալական վստահություն	Սոցիալական անվստահություն

Բնակավայր

Գյուղ	Քաղաք
Քաղաքական ակտիվություն	Քաղաքական պասիվություն
Սոցիալական վստահություն	Սոցիալական անվստահություն

Եկամուտ

Ցածր	Բարձր
Սոցիալական օտարում	Սոցիալական ներառում
Դժգոհություն կյանքից	Գոհունակություն կյանքից
Հոռետեսություն	Լավատեսություն
Կախվածություն	Ինքնուրույնություն

Կրթություն

Ցածր	Բարձր
Քաղաքական ակտիվություն	Քաղաքական պասիվություն
Սոցիալական օտարում	Սոցիալական ներառում

Ընդհանուր առմամբ ուսումնասիրության արդյունքները բացահայտում են, որ այսօրվա երիտասարդությունը Հայաստանում խոցելի է և հիմնականում ոչ ինքնուրույն: Ասվածը հատկապես ակներև է՝ ա) իգական սեռի մասնակիցների շրջանում, ովքեր ցուցաբերում են առավել մեծ սոցիալական պասիվություն, օտարում և կախվածություն, բ) առավել հասուն երիտասարդների շրջանում, ովքեր ունեն բարձր մակարդակի անվստահություն և հոռետեսություն, գ) քաղաքաբնակ երիտասարդների շրջանում, ովքեր դրսևորում են քաղաքական պասիվություն և սոցիալական անվստահություն: Եկամուտը և կրթությունը երիտասարդների կյանքի վրա ազդող հիմնական գործոններն են. որքան ցածր է նրանց եկամուտը, այնքան մեծ է նրանց մեկուսացման մակարդակը, կյանքի նկատմամբ դժգոհությունը, հոռետե-

սությունը և կախվածությունը, որքան բարձր է կրթական մակարդակը, այնքան նվազ է քաղաքական ակտիվությունը և մեծ է սոցիալական ներառվածությունը:

Երիտասարդներին օժանդակող սոցիալական քաղաքականությունը չափազանց կարևոր են հիմնախնդիրները լուծելու համար: Ակնհայտ է, որ կրթությունը, հանդուրժողականությունը, կամավորությունը, սեփական անձի և մյուսների նկատմամբ «բարիք ստեղծելու» սոցիալական դիրքորոշումը, ֆինանսական անկախությունը և քաղաքականապես ակտիվ քաղաքացիությունը գենդերային սոցիալականացման մի շարք կարևոր ոլորտներին զուգահեռ կարևորագույն թեմաներ են և ավելի կոնկրետ գործելու պարագայում պետք է ավելի հասցեական ձևակերպում ստանան (միջանձնային, տեղական, պետական կամ միջազգային մակարդակում):

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության 25-ամյա անկախության պայմաններում հետխորհրդային սերունդը ներառվել է սոցիալական նոր հարաբերությունների մեջ, այս պայմաններում նրա կապը հասարակության հետ միջնորդավորող հին ինստիտուտներն ու խմբերը կորցրել են իրենց նախկին կարգավորող գործառույթը, իսկ նորերը դեռևս կայացման փուլում են: Աճող անհատականացումը մարդկանց դուրս է բերել կոլեկտիվ բարոյական վերահսկողության նախկին շրջանակներից, որոնք ապահովում էին հին սոցիալական նորմերի, կարծրատիպերի, ավանդույթների կարգավորիչ դերը: Մյուս կողմից էլ, գլոբալացումն աշխարհի բոլոր երկրներում, այդ թվում՝ Հայաստանում, իրարամերժ դիրքորոշումներ և նոր հակասություններ է առաջացնում: Այս համատեքստում է տեղի ունենում նաև հայոց պետականության կայացումը: Ուստի պարզ է, որ հայոց նորանկախ պետության կառուցման շրջանը պետք է ուղեկցվեր մարդկայինի և նյութականի բախումով, տեղային ավանդական և գլոբալ ֆորմալ արժեքների կոնֆլիկտով, որը դրսևորվում է անկախության տարիների յուրահատուկ քննախոսության մեջ: Նման հանգամանքներում հատկապես հրատապ է երիտասարդների համապատասխան սոցիալականացումը, նրանց խնդիրներին ժամանակին լուծումներ տալու, երիտասարդների հանդեպ ճիշտ քաղաքականություն վարելու հրամայականը: Հետևաբար, երիտասարդներին հուզող հիմնախնդիրների, նրանց նույնականացման գործընթացների և դրանց վրա ազդող գործոնների շարունակական ուսումնասիրությունը ժամանակի պահանջ է, և սույն սոցիոլոգիական հետազոտությունը կարևոր է պետական քաղաքականություն մշակողների և իրականացնողների համար: Այստեղ ներկայացված տվյալները «պարարտ հող» են քաղաքական և սոցիալական որոշում կայացնողների արձագանքի,

ինչպես նաև երիտասարդության հետագա ուսումնասիրությունների համար, ինչը հատկապես կարևոր է ընդհանրապես Հարավային Կովկասի նման տարածաշրջանում և մասնավորապես՝ նորանկախ, կայացող պետականությամբ Հայաստանի համար:

Երիտասարդությունը սոցիոլոգիայում բնորոշվում է ոչ թե որպես երիտասարդ լինելու կենսաբանական վիճակ և ոչ էլ զուտ որպես կենսաշրջանի փուլերի հաջորդականությունը բնորոշող ժամանակահատված՝ վաղ դեռահասությունից մինչև հասունություն, այլ՝ որպես սոցիալապես կառուցված ձեռքբերովի կարգավիճակ, որի հետ կապված է երիտասարդների արդի հասարակության մեջ հասունանալուն, հասարակությանում իրենց տեղը զբաղեցնելուն և ըստ այդմ պատասխանատվություն ստանձնելուն վերաբերող սոցիալական հիմնախնդիրների մի ամբողջություն (Scott, 2014, էջ 813): Միևնույն ժամանակ, երիտասարդությունը հասարակության զարգացման հիմնական սոցիալական ռեսուրսն է և զարգացման հիմնահարցերի լուծման սոցիալական մոդելը (Furlong, 2013; Hurrelmann & Quenzel, 2015):

Հետազոտության մեթոդաբանություն

Սույն հետազոտության նպատակն էր ներկայիս փոփոխվող իրականության համապատկերում վերհանել հայաստանյան երիտասարդների աշխարհընկալումներն ու դիրքորոշումները՝ անդրադառնալով հայաստանյան երիտասարդության (i) բավարարվածության, (ii) վստահության, (iii) պատկանելիության և (iv) գործունեության/ներգրավվածության հիմնախնդիրների պարզաբանմանը: Որպես հիմնական թեմատիկ ոլորտներ դիտարկվել են՝

1. կրթությունն ու զբաղվածությունը,
2. ժողովրդավարությունն ու կառավարումը,
3. արտաքին քաղաքականության ընկալումները,
4. անհանգստություններն ու ձգտումները,
5. կրոնն ու կրոնականությունը,
6. ընտանիքը,
7. ժամանցն ու ապրելակերպը

Սույն հետազոտական խնդիրների ուսումնասիրությունը թույլ է տվել վերհանել հայաստանյան երիտասարդության հիմնախնդիրների քանակա-

կան և որակական ցուցանիշեր՝ պարզաբանելով հայաստանյան երիտասարդների սոցիալականացման առանձնահատկությունները, կենսական ակնկալիքներն ու ռազմավարությունները և հանդուրժողականության, նույնականացման/ տարբերակման հիմնահարցերը:

Հետազոտությունը իրականացված է քանակական և որակական մեթոդների համադրությամբ՝

1. Ուսումնասիրության շրջանակում կիրառվել է քանակական մեթոդ՝ ստանդարտացված հարցազրույցի ձևաչափով:

2. Կոնկրետ թեմաների շուրջ (ծխելու սովորություն, ալկոհոլի օգտագործում, ընկերություն, կրոն, քաղաքականություն, ինտեգրումը Եվրասիական տնտեսական միությանը, մերձեցում Եվրոպական միությանը, տարածաշրջանային բնակավայրային հիմնախնդիրներ, հարևանություն, արժեքանորմատիվ ընկալումներ, հանդուրժողականություն, նպատակներ/վախեր, կրթություն/աշխատանք, առօրյա կենսական ռազմավարություններ, ներգրավվածություն) առավել խորքային պատկեր ապահովելու, ինչպես նաև հիմնախնդրի որակական հայեցակետերը վերհանելու նպատակով երիտասարդների շրջանում անց են կացվել ֆոկուս խմբային հարցազրույցներ:

Հետազոտության ընտրանք

Ջանգվածային քանակական հետազոտության իրականացման համար նպատակահարմար է համարվել կիրառել կոմբինացված միաստիճան կլաստերային ընտրանքը, որի դեպքում ընտրանքի հիմքը, այն է՝ Հայաստանի հանրապետության մշտական բնակչությունը, նախապես տրված թվաքանակով բաժանվում է ներքին անհամասեռ, արտաքին համասեռ, նույնածավալ ենթախմբերի՝ կլաստերների: Կլաստերներից յուրաքանչյուրը բաղկացած է 8 նպատակային «հասցեներից», որոնք հետազոտվել են ամբողջությամբ: Արդյունքում ընտրված կլաստերներում լրացուցիչ ենթաընտրանքներ չեն կառուցվել:

Կլաստերների ընտրության նպատակով կառուցվել է Հայաստանի Հանրապետության բոլոր բնակավայրերի բնակչության կուտակային բաշխում՝ ըստ Հայաստանի Հանրապետության 10 վարչական շրջանների

(մարզերի) և Երևան քաղաքի 11 համայնքների: Պատահականության սկզբունքով ընտրված առաջին բնակավայրից սկսած, ուր և գտնվում է հետազոտության ենթակա առաջին ութ «հասցեանոց» կլաստերը, ընտրված քայլին համապատասխան՝

$$n=\frac{P}{Cl},$$

որտեղ n- քայլն է, P-ն Հայաստանի հանրապետության մշտական բնակչությունը 2011թ.-ի մարդահամարի տվյալների համապատասխան, Cl-ը նախապես ամրագրված կլաստերների թվաքանակը: Նման մոտեցմամբ որոշակի բնակավայրում կլաստերների տվյալ քանակի ընտրության հավանականությունը ուղիղ համեմատական է բնակավայրի բնակչության թվին, ինչն ապահովում է ընտրանքի միանշանակ համամասնականությունը, ինչպես նաև մեծ բնակավայրերի՝ մարզկենտրոնների և մայրաքաղաքի պարտադիր համամասնական ներկայացվածությունը ընտրանքում:

Իր հերթին յուրաքանչյուր բնակավայրում վերջնական հասցեների ամբողջական, վստահելի ցուցակի բացակայության պատճառով իրականացվել է երթուղային ընտրանք, ուր յուրաքանչյուր կլաստերի առաջնային հասցեն՝ երթուղու սկզբնակետը որոշվել է տվյալ բնակավայրի ընտրատեղամասերի հասցեների ցուցակից պարզ պատահական ընտրության սկզբունքով ընտրված կոնկրետ հասցեից սկսած, ներքոնշյալ տրամաբանությամբ:

Մասնավորապես քաղաքային բնակավայրերում որպես յուրաքանչյուր կլաստերի առաջնային հասցե ընտրվել է նախապես տրված ընտրատեղամասին հասցեների աճման ուղղությամբ առավել մոտ բազմաբնակարանային շենքը / առանձնատունը՝ պահպանելով հասցեների զույգ կամ կենտ թվանշումը: Յուրաքանչյուր անգամ նման տրամաբանությամբ շարժվելիս հասցեների ավարտի դեպքում կիրառվել է համապատասխան ռոտացիա:

Ընտրված առաջին բազմաբնակարանային շենքում առաջին բնակարանի հերթական համարը և շենքի հերթական համարը համընկել են: Եթե ընտրված շենքի համարը մեծ էր շենքում բնակարանների ընդհանուր քանակից, ապա նույնպես իրականացվել է համապատասխան ռոտացիա: Յուրաքանչյուր բազմաբնակարանային շենքում իրականացվել է մեկ հարցում: Երթուղու հաջորդ բազմաբնակարանային շենքը կամ առանձնատունը հասցեների աճման ուղղությամբ յուրաքանչյուր երկրորդն

էր: Մարզային քաղաքներում յուրաքանչյուր շենքում իրականացվել է երկուական հարցում: Գյուղական բնակավայրերում որպես երթուղու սկզբնակետ հանդես է եկել համայնքային վարչակազմի շենքը, որը հիմնականում համընկնում է ընտրատեղամասի հետ: Բնակարանում/առանձնատանը հարցումն իրականացվել է 14-ից 29-ը տարեկան այն քաղաքացու հետ, ում գալիք ծննդյան օրը առավել մոտն է հարցման անցկացման օրվան:

Ստանդարտացված հարցազրույցի եղանակով իրականացված սոցիոլոգիական հարցմանը մասնակցել են 1200 երիտասարդներ ՀՀ տարբեր մարզերից, քաղաքային և գյուղական բնակավայրերից (ընտրանքի սխալի միջակայքը 3% է): Երիտասարդները 1987թ. և հետագա տարիների ծնունդ են: Հենց այդ տարվանից էլ սկսվել են անկախացման գործընթացները, քանզի այդ ժամանակ ծավալվեցին առաջին հակախորհրդային ցույցերը Հայաստանում: Հետևաբար՝ մեր հարցվածները նրանք են, ում առաջնային սոցիալականացումը անկախացման, անկախության կայացման և ամրապնդման ժամանակահատվածում է տեղի ունեցել: Եվ այս տեսակետից մենք անկախության սերունդի հետ գործ ունենք:

Երիտասարդների սոցիո-ժողովրդագրական բնութագրիչները

Հարցվածներից 41%–ը արական, 59%-ը իգական սեռի ներկայացուցիչներ են: Նման տարբերությունը պայմանավորված է արտագնա աշխատանքներում արական սեռի երիտասարդ ներկայացուցիչների զանգվածային ներգրավվածությամբ, ինչը հանգեցնում է փաստացի բնակչության համապատասխան անհամամասնության՝ ըստ սեռի: Հարցված երիտասարդների 97,7%-ն ազգությամբ հայեր են, 0,5-ական%-ը՝ եզդի, հույն և ասորի, ավելի փոքր%-ներով ներկայացված են նաև քրդերը, ռուսները և այլն:

Տարիքային կտրվածքով հարցվածների բաշխումը հետևյալն է. 14-17 տարեկան անչափահասները կազմում են 29,2%, 18-21 տարեկան երիտասարդները՝ 23,9%, 22-25 տարեկանները՝ 24,9%, 26-29 տարեկանները՝ 22% (տե՛ս **գծապատկեր 1.1**):

Գծապատկեր 1.1: Տարիքը



Գծապատկեր 1.2: Ո՞րն է լավագույնս ներկայացնում Ձեր տնային տնտեսության ֆինանսական վիճակը



Տնային տնտեսության ֆինանսական վիճակի առումով հարցվածների 44,5%-ը նշել է, որ գումարը բավականացնում է սնունդ և հագուստ գնելու համար, բայց այն բավարար չէ թանկարժեք իրեր գնելու համար, 31,9%-ը՝ որ կարող են իրենց թույլ տալ որոշակի թանկարժեք իրեր գնել, 11,5%-ը՝ որ կարող են թանկարժեք իրեր գնել, գնալ ամառային հանգստի, բայց չեն կարող բնակարան գնել, 5,8%-ը՝ որ գումարը բավականացնում է սնունդ, բայց ոչ հագուստ գնելու համար, 2,7%-ը՝ որ գումարը չի բավականացնում անգամ սնունդ գնելու համար, 2,3%-ը, որ իրենք կարող են անգամ բնակարան գնել (տե՛ս **գծապատկեր 1.2**): Հարցվածների 44,9%-ը չունի ավտոմեքենա տնային տնտեսությունում, 42,2%-ը ունի մեկ ավտոմեքենա, 13%-ը՝ երկու և ավելի:

Հարցվողների ծնողների կրթական աստիճանի վերաբերյալ հարցին երիտասարդների զգալի մասը պատասխանել է, որ իրենց մայրը և հայրը ունեն միջնակարգ կրթություն (համապատասխանաբար՝ 38,4% և 35,9%), անավարտ միջնակարգ (0,7% և 2%), միջին մասնագիտական կրթություն՝ (31,1% և 32%), հնգամյա բարձրագույն կրթություն[1] (22,2% և 22,1%), բակալավրի աստիճան (4,6% և 5,7%), մագիստրոսի աստիճան (2,3% և 1,1%), ասպիրանտուրա ավարտած (0,4% և 0,7%), գիտական աստիճան ունեցող (0,4% և 0,5%):

Ֆոկուս խմբերի ընտրության չափանիշներ

Ընդհանուր առմամբ իրականացվել է 16 ֆոկուս խմբային հարցազրույց: Որպես ֆոկուս խմբերի ձևավորման չափանիշներ ընտրվել են (տե՛ս **աղյուսակ 1.3**)՝

1. Բնակավայրը՝ քաղաքային/գյուղական
2. Սեռը՝ արական/իգական,
3. Տարիքը՝ 14-20/21-29

1 Մինչև Հայաստանի բարձրագույն կրթության՝ Բոլոնյայի գործընթացի մաս դառնալը, համալսարանական կրթության տևողությունը երկրում հինգ տարի էր:

Աղյուսակ 1.3

Բնակավայր	Սեռ	Տարիք	Թիվ	
Քաղաքային	Արական	14–20	1	16
		21-29	1	
	Իգական	14–20	1	
		21-29	2	
	Երկու սեռերի ընդգրկմամբ	14–18	1	
		19-22	1	
		23-29	1	
Գյուղական	Արական	14–20	2	
		21-29	2	
	Իգական	14–20	2	
		21–29	2	

ա. Քաղաքային բնակավայրում նախատեսված 8 ֆոկուս խմբերից 6-ը իրականացվել են Երևան քաղաքում, իսկ 2-ը՝ մարզային քաղաք/ներում: Երևան քաղաքում նախատեսված 6 ֆոկուս խմբերից 3-ը իրականացվել են երկու սեռի ներկայացուցիչների խառը ներգրավմամբ՝ մեկական 14-18, 19-22 և 23-29 տարիքային խմբերում:

բ. Գյուղական բնակավայրերն ընտրվել են ՀՀ տարբեր մարզերից, որպես լրացուցիչ-վերահսկիչ չափանիշներ հաշվի են առնվել գյուղական համայնքի չափը և քաղաքային բնակավայրերից (Երևան, մարզկենտրոն) հեռավորությունը:

Յուրաքանչյուր ֆոկուս խմբում ներգրավվել են 8-10 մասնակիցներ:

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ և ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅՈՒՆ

Ներածություն

2005թ.-ից Հայաստանի Հանրապետությունը պաշտոնապես միացած է Բարձրագույն Կրթության Եվրոպական Տիրույթին (ԲԿԵՏ, 2014): Այս իմաստով, երկրի կրթության հետազոտության տեսանկյունից, հետաքրքրական է վերջինիս վարած եվրոպականացման քաղաքականությունը: Հետսոցիալիստական բլոկի կրթության հետազոտություններում բազմիցս բարձրաձայնվում են բարեփոխումների տեսանկյունից գաղափարախոսությունների բախման հիմնահարցերը (Silova, 2010): Ընդհանուր առմամբ, Հայաստանի կրթության ոլորտում բախվում են խորհրդային, ամերիկյան, եվրոպական գաղափարական մոտեցումները: Թղթի վրա գրված քաղաքականություններից մինչև հայաստանյան երիտասարդների ամենօրյա կրթական իրականություն տանող ճանապարհը դեռևս հստակ տարորոշված չէ և քիչ է հետազոտված: Պարզ է, որ այն զարգանում է այսպես կոչված «հակասական սոցիալական կոնստրուկտների» շրջանակներում (Tiryakian, 1970): Բուրդյեն և Պասերոնը (1990; Robbins, 2010) ընդգծում էին, որ երբ սահմանափակվում է կրթվողների քննադատական ներուժը, հասարակությունը՝ դրա գերակա ուժերը (հարուստ խավը, իշխանության տիրապետողները) սովորողների նկատմամբ ձեռք են բերում սիմվոլիկ դոմինանտություն: Հայաստանն առանձնահատուկ բարձր գործազրկության մակարդակ ունի երիտասարդների շրջանում՝ տատանվելով 32-39%-ի միջակայքում (ETF 2013, էջ 5): Համաձայն որոշ հետազոտությունների (Yeghiazaryan, Avanesyan & Shahnazaryan, 2003) բարձրակարգ մասնագետները բախվում են կարիերայի խնդիրների հետ և չունեն զարգացման հեռանկարներ. արձանագրվել է, որ 1989-2001թթ.-ին բարձրագույն կրթություն ունեցող և մագիստրատուրա ավարտած 250.000-300.000 մասնագետներ լքել են երկիրը (էջ 10): Եվրոպական հարևանության և գործընկերության գործիքի (Makaryan & Galstyan, 2012, էջ 7) երկրին առնչվող զեկույցը նշել է, որ հայաստանյան կրթական համակարգը դեռևս պետք է հարմարվի զարգացող տնտեսական

կառույցների մարտահրավերներին, որովհետև չափից դուրս շատ հայ երիտասարդներ ձեռք են բերում հմտություններ, որոնք չեն կարող պատշաճ կերպով կիրառվել երկրի ներսում կամ արտերկրում: Կրթական հաստատությունները իմաստաստեղծ ինտենցիոնալ համակարգեր են (Luhman and Schorr, 2000) և դրանց նկատմամբ պետական, կրթական քաղաքականության ուշադրությունն ու զգոնությունը արդարացված են ոչ միայն ֆորմալ կրթական որակի, այլև հասարակական կարգի, հասարակության կյանքի որակի և կրթվող երիտասարդ սերնդի ինքնության և ապագայի ձևավորման տեսանկյունից: Կրթության որակն է ստեղծում երիտասարդների համար սոցիալական աշխարհն ըմբռնելու, մեկնաբանելու, դրանում լինելու, գործելու հիմնարար ուղիներ:

Այս բաժնում ներկայացված վերլուծությունը ցույց է տալիս, թե ինչ սոցիալական միջավայրում են Հայաստանի երիտասարդները ստանում իրենց կրթությունը և դրա արդյունքում՝ ինչ հիմնական հետևանքներ են առաջացել նրանց սոցիալ-տնտեսական և մշակութային կապիտալի կուտակման հարցում:

Հիմնական տվյալներ

- Երիտասարդները սիրով են հաճախում հանրակրթական և բարձրագույն ուսումնական հաստատություններ, որովհետև այդպես նրանք հասակակիցների հետ շփվելու, ծանոթություններ ձեռք բերելու հնարավորություն են ստանում:
- Արտադասարանային պարապմունքներին հատկացված ժամանակը վիճակագրորեն կապվում է դպրոցում/քոլեջում ունեցած առաջադիմության, բայց ոչ բուհական առաջադիմության հետ:
- Լուրջ խնդիր է լավ մասնագիտական կրթություն ստանալու համար անհրաժեշտ ֆինանսական ռեսուրսների սակավությունը: Երիտասարդների 24,3%-ը չի ցանկանում շարունակել կրթությունը ֆինանսական միջոցների բացակայության պատճառով:
- Ըստ երիտասարդների (10.2% դպրոց/քոլեջում, 0.8% բուհում) կրթական հաստատություններում հնարավոր է գնահատականներ և քննություններ «գնել», սակայն սովորողների մեծամասնությունը նշում է, որ կաշառքի միջոցով գնահատական չի ստացել:
- Երիտասարդների ստացած գիտելիքները չեն երաշխավորում ըստ մասնագիտության աշխատանք գտնելը, միայն 35,4%-ն է աշխատում

մասնագիտությամբ, 13,5%-ը՝ մասնագիտությանը հարակից աշխատանք ունի, մասնագիտությամբ աշխատանքը ներկայանում է որպես «անեկամտաբեր» զբաղմունք:

- Աշխատանքի ընդունվելիս մեծ է «ծանոթի» ինստիտուտի դերը: Հովանավորչության կարիք կա նաև կարիերա անելու ժամանակ:
- Երիտասարդների հիմնական աշխատանքային տարիքը սկսվում է 23 տարեկանից:
- Աշխատելու հարցում էական գործոն են ամուսնական կարգավիճակն ու սեռը, աշխատանք ունի ամուսնացած տղամարդկանց 67,2%-ը, և չի աշխատում ամուսնացած կանանց 76,6%-ը:
- Երիտասարդների միայն 18,9%-ը է նշել, որ ունի սեփական եկամուտ, մնացածը ստիպված են ապավինել այլոց աջակցությանը:

Վերլուծություն

Կրթություն

Հարցվածների (N=1200) 49,1%-ը հարցման պահին սովորում էր որևէ կրթական հաստատությունում (28,1%-ը միջնակարգ կամ միջին մասնագիտական կրթություն էր ստանում, 20,7%-ը՝ բարձրագույն, 0,3%-ը՝ սովորում էր ասպիրանտուրայում): Հարցման մասնակիցների 50,9%-ը ոչ մի տեղ չէր սովորում: Ստորև ներկայացված է սովորող և չսովորող երիտասարդների բաշխումը ըստ սեռի, տարիքի և բնակավայրի (տե՛ս **աղյուսակ 2.1**):

Աղյուսակ 2.1: Ներկայումս սովորո՞ւմ եք որևէ կրթական հաստատությունում/ շարունակո՞ւմ եք արդյոք Ձեր կրթությունը:

		Այո	Ոչ
Սեռը	Արական	51.0%	49.0%
	Իգական	47.7%	52.3%
Տարիքը	14-17 տարեկան	95.1%	4.9%
	18-21 տարեկան	64.8%	35.2%
	22-25 տարեկան	19.4%	80.6%
	26-29 տարեկան	4.5%	95.5%
Բնակավայր	Քաղաք	52.6%	47.4%
	Գյուղ	43.1%	56.9%
Ընդամենը		**49.1%**	**50.9%**

Գծապատկեր 2.2: Օրական միջինում որքա՞ն ժամանակ եք հատկացնում սովորելուն, դասերը պատրաստելուն (չհաշված դպրոցի դասաժամերը):



Դպրոցում և քոլեջում սովորողների 53,0%-ը դպրոց/քոլեջ հաճախում է սիրով (տե՛ս **գծապատկեր 2.3**), իսկ նրանց 59,6%-ն իրենց առօրյան դպրոցում/քոլեջում համարում են հեշտ և ոչ լարված (տե՛ս **գծապատկեր 2.4**): Հարցվածների 42,0%-ը նշել է, որ դպրոց/քոլեջ հաճախում է երբեմն սիրով, երբեմն ոչ: Ընդ որում, դպրոց/քոլեջ հաճախելու հանդեպ վերաբերմունքն ու դպրոցի/քոլեջի առօրյա լարվածությունը համահարաբերակցված են՝ այսինքն, որքան մեծ է լարվածությունը, այնքան ավելի դժկամորեն են աշակերտները հաճախում դպրոց (Սպիրմանի rho=-.177, p<.001):

Նկատի ունենալով աշակերտների պատասխանները արտադասարանային աշխատանքի և դպրոցի/քոլեջի առօրյա լարվածության վերաբերյալ՝ կարող ենք արձանագրել, որ աշակերտների մեծամասնությունը այդքան էլ ծանրաբեռնված չէ դասերով: Միևնույն ժամանակ, հարցված աշակերտների 79,0%-ը մտադիր է շարունակել կրթությունը բարձրագույն կրթական հաստատություններում, ընդ որում, պատրաստ են շարունակել գերազանց

առաջադիմություն ունեցողների 92.6%-ը, լավ սովորողների՝ 85.4%-ը, բավարար սովորողների՝ 64.7%-ը (տե՛ս **գծապատկեր 2.5**): (Սպիրմանի rho=-.267, p<.001)

Գծապատկեր 2.3: . Կարո՞ղ եք ասել, որ դպրոց/քոլեջ գնում եք ...



Գծապատկեր 2.4: Ինչպե՞ս կնկարագրեք Ձեր առօրյան դպրոցում:



Որպես կրթություն շարունակելու դրդապատճառ հարցված երիտասարդների 26,6%-ը նշում է իմացական կարողությունները զարգացնելու ցանկությունը, 12,4%-ը ինքնահիրացման պահանջը, 16,3%-ը՝ աշխատանքի ընդունվելու հեռանկարով պայմանավորված դիպլոմ ստանալու անհրաժեշտությունը, 15,2%-ը՝ ծնողների ակնկալիքների ազդեցությունը, 14,1%-ը ավելի շատ գումար վաստակելու և ապահովված լինելու ցանկությունը, 7,4%-ը՝ ավելի բարձր սոցիալական դիրքի հասնելու ցանկությունը, 6,9%-ը՝ նոր կենսափորձ ձեռք բերելու կարևորությունը, 0,8%-ը՝ պարտադիր զինվորական ծառայությունից խուսափելու հնարավորությունը, 0,3%-ը՝ այլընտրանքի բացակայությունը (տե՛ս **գծապատկեր 2.6**):

Գծապատկեր 2.5: Մտադի՞ր եք սովորել/շարունակել ուսումը բարձրագույն ուսումնական հաստատությունում



Երիտասարդների ընտանիքի եկամուտը և բարձրագույն կրթություն ստանալու/չստանալու՝ դպրոցի/քոլեջի աշակերտների մտադրությունը համահարաբերակցված են (n=325, X^2=12.48, phi=0.196, p=0.002): Ստորև ներկայացված են բարձրագույն կրթություն ստանալու հարցում կողմնորոշվածների և չկողմնորոշվածների տոկոսային հարաբերությունները՝ ըստ ընտանիքի եկամտի (տե՛ս **աղյուսակ 2.7**):

Գծապատկեր 2.6: Ինչու՞ եք ցանկանում շարունակել Ձեր կրթությունը բուհում:



Աղյուսակ 2.7: Մտադիր եք սովորել բուհում:

Ընտանիքի եկամուտ	Այո	Ոչ	Ընդհանուր
Ցածր եկամուտ	55.6%	44.4%	8.3%
Միջին եկամուտ	79%	21%	76.3%
Բարձր եկամուտ	90%	10%	15.4%
Ընդհանուր	**78.9%**	**21.1%**	**100%**

Նկատելի է, որ որքան ավելի բարձր է ընտանիքի եկամուտը, այնքան ավելի բարձր է այդ ընտանիքներից բարձրագույն կրթություն ստանալու ցանկություն արտահայտած դեռահասների թիվը:

> *«Կան ջահելներ, որ շատ խելացի են, բայց ֆինանսական ռեսուրսներ չունեն բուհ դիմելու համար ու կան նրանք, ովքեր ֆինանսապես ապահովված են, բայց խելացի չեն»*
>
> (ՖԽ, 14-20 տարեկաններ, արական, գյուղական համայնք):.

Այն ընտանիքներում, որտեղ ծնողներից ոչ մեկը չունի բարձրագույն կրթություն, դեռահասների 74.9%-ն են արտահայտել բուհ ընդունվելու ցանկություն, մինչդեռ այն ընտանիքներում, որտեղ երկու ծնողներն էլ ունեն բարձրագույն կրթություն, բարձրագույն կրթություն ստանալու հարցում կողմնորոշված դեռահասների թիվը հասնում է 88.7%-ի, տարբերությունը կազմում է 13.8%: Այն ընտանիքներում, որտեղ ծնողներից միայն մեկն ունի բարձրագույն կրթություն, բարձրագույն կրթություն ստանալու հարցում կողմնորոշված դեռահասների թիվը կազմում է 83.1%:

Ընդհանուր համախմբության մեջ (N=1147) բարձրագույն կրթությամբ երկու ծնող ունեցող երիտասարդները 240-ն են, մնացյալ 907-ի կա՛մ մի ծնողը չունի բարձրագույն կրթություն, կա՛մ երկուսն էլ չունեն: Չնայած թվային զգալի տարբերությանը՝ բարձրագույն կրթությամբ երկու ծնողներ ունեցող երիտասարդների տանը ավելի շատ գիրք կա (Mdn=6՝ 51-100 գիրք), քան բոլոր այն երիտասարդների տանը, ում ծնողներից մեկը կամ ոչ մեկը չունի բարձրագույն կրթություն (Mdn=4՝ 21-30 գիրք). ծնողների բարձրագույն կրթություն ունենալը/չունենալը համահարաբերակցված է տանը առկա գրքերի քանակի հետ (U=87352.5, z= -4.96, p<.001):

Հարկ է ընդգծել, որ հարցված երիտասարդների 83,5%-ի համար բարձրագույն կրթություն ստանալը մոդայիկ է ընկալվում, իսկ աշխատանքի ընդունվելիս, կրթական մակարդակն իր կարևորությամբ ամենաառաջնային գործոնն է միայն 34,2%-ի համար (28,7%-ը այդ գործոնին երկրորդական տեղ է հատկացնում): Աշխատանքում առաջխաղացման համար, կարիերա անելիս բարձրագույն կրթությունը ամենաառաջնային գործոնն է 26,2%-ի համար (երկրորդական՝ 25,9%-ի համար):

Այն երիտասարդները, ովքեր չեն ցանկացել շարունակել իրենց կրթությունը, համարում են, որ իրենց կրթական մակարդակը արդեն բավարար է (25,7%), խոստովանում են, որ չեն սիրում սովորել (15,7%), վստահ չեն, որ կրթությունն իրենց համար ավելի լավ ապագա կապահովի (10,0%), պատրաստվում են տեղափոխվել այլ երկիր բնակվելու կամ աշխատելու (7,1%) (տե՛ս **աղյուսակ 2.8**).

«Ինչի՞ սովորենք, եթե վերջում խոպան ենք գնալու»

(ՖԽ, 14-20 տարեկաններ, արական, մարզային քաղաք):

Աղյուսակ 2.8: Կրթությունը բուհում չշարունակելու մտադրության պատճառներ

Կրթությունը բուհում չշարունակելու մտադրության պատճառներ	25.7%
Ինձ բավարարում է իմ կրթական մակարդակը	24.3%
Ֆինանսական միջոցների բացակայության պատճառով	15.7%
Չեմ սիրում սովորել	10.0%
Վստահ չեմ, որ դա կապահովի ավելի լավ ապագա	7.1%
Պատրաստվում եմ տեղափոխվել այլ երկիր բնակվելու	17.2%
Այլ պատճառներ	

Ուշագրավ է, որ 24,3%-ը չի ցանկանում շարունակել կրթությունը ֆինանսական միջոցների բացակայության պատճառով, ինչը լուրջ սոցիալական հիմնախնդրի առկայության վկայություն է:

«Չեմ կարծում, թե միջին վիճակագրական որևէ ընտանիք, որ բնակվում է մարզային քաղաքում կամ գյուղում կկարողանա իր երեխային ուղարկել բարձր վարկանիշային հաստատություններում կամ արտերկրում սովորելու, քանի որ չեն կարողանա վճարել բարձր ուսման վարձերը»

(ՖԽ, 21-29 տարեկաններ, իգական, մարզային քաղաք):

Անդրադառնալով բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորողների ուսումնական առաջադիմությանը՝ հարկ է նկատել, որ ուսանողների 27,6%-ը ներկայացել է որպես գերազանց առաջադիմություն ունեցող, 52,8%-ը՝ որպես լավ, 14,0%-ը՝ բավարար[2]: Ընդհանուր առմամբ, ուսանողների և դպրոցի/քոլեջի աշակերտների միջև տարբերությունը նշանակալի չէ արտադասարանային աշխատանքի ժամաքանակի տեսանկյունից: Ինչպես երևում է **աղյուսակ 2.9**-ից օրական միջինում 3 ժամից ավելի ժամանակ սովորելուն հատկացնում են ուսանողների 37,0%-ը աշակերտների 29,6%-ի դիմաց: Ի տարբերություն դպրոց/քոլեջում սովորող երիտասարդների, բուհում սովորողների առաջադիմությունը և դասերին հատկացվող օրական ժամանակը համահարաբերակցված չեն (Սպիրմանի rho=-.116, p=.071):

2 Ուսանողների 5,6%-ը առաջին կուրսեցի են, սույն հարցը նրանց չի վերաբերում:

Աղյուսակ 2.9: Օրական միջինում որքան ժամանակ եք հատկացնում սովորելուն

	Բուհ	Դպրոց/քոլեջ
Մինչև մեկ ժամ	17.1	20.0
1–2 ժամ	24.0	23.9
2–3 ժամ	22.0	26.6
3–4 ժամ	17.9	13.4
4–5 ժամ	10.2	10.1
Ավելի, քան 5 ժամ	8.9	6.0
Ընդամենը	**100.0**	**100.0**

Ուսանողների 72,1%-ը բուհ հաճախում է սիրով (տե՛ս **գծապատկեր 2.10**), իսկ նրանց 45,8%-ն իրենց առօրյան բուհում համարում են հեշտ և ոչ լարված (տե՛ս գծապատկեր 2.11): Տվյալ ցուցանիշները վկայում են այն մասին, որ ի տարբերություն դպրոցի/քոլեջի, բուհ հաճախողները առավել դրական են տրամադրված և բուհ այցելում են սիրով:

Գծապատկեր 2.10: Կարող եք ասել, որ ԲՈՒՀ գնում եք ...



Ֆոկուս խմբերից ստացված որակական տեղեկատվությունը, ի հավելումն ներկայացված քանակական տվյալների, ցույց է տալիս, որ բուհ հաճախելը երիտասարդների մոտ ոչ միշտ է կապվում սովորելու՝ որպես առաջնային նպատակի հետ: Համալսարանական միջավայրը ներկայանում է ոչ միայն սովորելու, այլ հատկապես սոցիալական կապեր ստեղծելու ու երիտասարդի համար տարիները ուսանողի կարգավիճակում անցկացնելու հետ:

Գծապատկեր 2.11: Ինչպե՞ս կնկարագրեք Ձեր առօրյան բուհում:



«Գալիս են համալսարան մի մասը, որ ուղղակի դիպլոմ ա պետք, մի մասը, որովհետև ինքը սիրուն շորիկներ ունի ու ուզում ա ցույց տա, մի մասը գալիս ա, որովհետև ինքը թեկնածու ա ուզում գտնի ամուսնության համար, մի մասը գալիս ա ուղղակի, որովհետև ուզում ա սովորի, մի մասն էլ գալիս ա ուղղակի, որովհետև անելու բան չկա, մի մասին էլ ծնողները ասել են, պիտի գնա սովորի, ու ինքը գալիս, չի սովորում: Էդ իմաստով, բայց մեր ազգը ծայրահեղ ա բոլոր դեպքերում, էս դեպքում նույնպես ծայրահեղ ա, ամեն մեկս մեր կուրսերում կտեսնենք, մի մասը լավ ա սովորում, մի մասը ընդհանրապես չի սովորում, ու քիչ են էն մարդիկ, ովքեր իրոք սովորում են»

(ՖԽ, 21-29 տարեկաններ, իգական, Երևան):

Կաշառքի կամ ծանոթի միջոցով դպրոցում, քոլեջում և բուհում գնահատական ստանալու կենսափորձի և/կամ հնարավորությունների վերաբերյալ դպրոցում/քոլեջում սովորողների 10,2%-ը գտնում են, որ միշտ հնարավոր է, միայն 53,3%-ն է նշել, որ իրենց դպրոցում/քոլեջում անհնար է գնահատականներ և քննություններ «գնել»: Ի տարբերություն այս խմբի, բարձրագույն կրթական հաստատություններում սովորողների 93,2%-ը պնդում է, որ երբեք կաշառքի միջոցով գնահատական չի ստացել, իսկ հաճախ կաշառք տալու հանգամանքը խոստովանել է 0,8%-ը: Գրեթե նույն պատկերն է նաև ծանոթի միջոցով գնահատական ստանալու մասին հարցին տրված պատասխաններում՝ բուհերում ուսանողների 88,8%-ը պնդում է, որ երբեք այդ եղանակով գնահատական չի ստացել (տե՛ս **գծապատկեր 2.12**):

Գծապատկեր 2.12

Կարծո՞ւմ եք, որ Ձեր դպրոցում հնարավոր է գնահատականները և քննությունները «գնել»:



Դուք երբևէ Ձեր բուհում գնահատական և/կամ քննություն ստացե՞լ եք կաշառքի միջոցով:

Դուք երբևէ Ձեր բուհում գնահատական և/կամ քննություն ստացե՞լ եք ծանոթի միջոցով:

● Հաճախ ● Երբեմն ● Հազվադեպ ● Երբեք

Միջնակարգ կամ միջին մասնագիտական հաստատությունների աշակերտ չհանդիսացող հարցվածների 42,3%-ը ցանկություն ունի շարունակելու կրթությունը: Այս խմբի ներսում կրթությունը շարունակելու ցանկությունը հարցվածները բացատրում են իմացական կարողությունները զարգացնելու (26,3%), ինքնաիրացման (18,7%), ավելի շատ գումար վաստակելու և ապահովված լինելու (17,6%), աշխատանքի ընդունվելու հավանականությունը մեծացնելու նպատակով դիպլոմ ստանալու (15,7%), նոր կենսափորձ ձեռք բերելու (6,8%), ծնողների ակնկալիքները արդարացնելու (6,7%), ավելի բարձր սոցիալական դիրքի հասնելու (6,5%) ձգտումներով, այլընտրանքի բացակայության պատճառով (0,7%), պարտադիր զինվորական ծառայությունից խուսափելու նպատակով (0,3%) (տե՛ս **գծապատկեր 2.13**):

Փաստորեն, այս երիտասարդների 15.7%-ի համար միայն դիպլոմի առկայությունը մեծացնում է աշխատանքի ընդունվելու հավանականությունը:

Գծապատկեր 2.13: . Ինչո՞ւ եք ցանկանում շարունակել/շարունակում եք Ձեր կրթությունը:



«Որքանով է կրթությունը կարևոր, ինձ համար արդեն կարևոր չի, ու հիմա ասեմ, եթե ես հիմա... Այսինքն՝ էս մտածելակերպով, էս տարիքին, եթե ես ունենայի 15-16 տարեկան երեխա, ես հաստատ իրան չէի ասի գնա բուհ, էնպես չի, որ ինձ տանը պարտադրել են, դա իմ ընտրությունն ա եղել, բայց շատ հիասթափված եմ, այսինքն ես լրիվ ուրիշ բան էի սպասում, ու իրականում լրիվ ուրիշ բան եղավ, ու հիմա ավելի շատ կարևոր ա, թե ինչքանով ա մարդը իրա վրա աշխատում, դա ավեի կարևոր ա, քան դիպլոմը, բայց դե հասկանում ենք, որ դիպլոմը պետք ա ուղղակի աշխատանքի համար, որովհետև առանց դրա չի լինի»

(ՖԽ մասնակից, 24 տ., իգական, Երևան):

Նրանք, ովքեր չեն ցանկանում շարունակել կրթությունը որպես պատճառ նշում են իրենց կրթական մակարդակով բավարարվածությունը (41,4%), կրթության միջոցով ավելի լավ ապագա ունենալու նկատմամբ հոռետեսությունը (20,3%), ֆինանսական միջոցների բացակայությունը (17,7%), երկրից հեռանալու մտադրությունը (5,8%), ժամանակ չունենալը (3,7%) (տե՛ս **գծապատկեր 2.14**):

Գծապատկեր 2.14: Ինչո՞ւ եք որոշել չշարունակել Ձեր կրթությունը:



Աղյուսակ 2.15: Շարունակելու եք Ձեր կրթությունը:

	Այո	Ոչ
Չամուսնացած	53.2%	46.8%
Ամուսնացած	23.9%	76.1%
Ամուսնալուծված	28.6%	71.4%
Ամուրի/այրի	44.4%	55.6%
Ընդամենը	**42.5%**	**57.5%**

Ուշագրավ է, որ բուհական կրթությունը շարունակել չցանկացողների 5,8%-ը խոստովանել է, որ չի սիրում սովորել: Կարևորվում են նաև ընտանեկան կյանքի հետ կապված խոչընդոտները: Այսպես՝ կրթության շարունակությունից հրաժարվողների 1,8%-ը նշում է, որ ծնողներն են խոչընդոտել կրթությունը շարունակելուն, 0,6%-ը՝ որ ամուսինը չի թողնում, 1,8%-ը պարզապես նշում է, որ ընտանիք և երեխաներ ունի: Էական է, որ ամուսնական կարգավիճակը նշանակալի կապ ունի կրթությունը շարունակելու հետդպրոցական տարիքի երիտասարդների ցանկության հետ (X^2=65.651, p<0.001, Cramer's V=.284) (տե՛ս **աղյուսակ 2.15**):

Գծապատկեր 2.16: Որքանո՞վ եք բավարարված Հայաստանում կրթության որակով:



Մյուս կողմից, երիտասարդներն ամուսին կամ կին ընտրելիս մեծ նշանակություն են տալիս զուգընկերոջ կրթական մակարդակին: Այն կարևոր կամ շատ կարևոր է երիտասարդների 76,4%-ի համար: Ընդ որում, գյուղական համայնքներում բարձրագույն կրթությունը ավելի կարևոր է համարվում տղաների, քան աղջիկների համար, մասնավորապես, այդպես է կարծում հարցվածների 24,8%-ը, իսկ քաղաքներում այդպես է կարծում հարցվածների 15,0%-ը: Միևնույն ժամանակ կրթությունը տղաների համար ավելի կարևոր համարող

քաղաքաբնակ երիտասարդների 70,0%-ը հենց արական սեռի ներկայացուցիչներ են (գյուղաբնակների շրջանում այդ ցուցանիշը 87,5% է կազմում):

Ընդհանրացնելով կրթության վերաբերյալ հայաստանյան երիտասարդների ընկալումներն ու դիրքորոշումները՝ հարկ է նկատել, որ հարցվածների 16,7%-ը բավարարված չէ Հայաստանում կրթության որակով, 42,9%-ը մասամբ է բավարարված (տե՛ս **գծապատկեր 2.16**), իսկ երիտասարդների 14,6%-ը որպես ամենաառաջնային հասարակական խնդիր, որի վրա պետք է կենտրոնանա ՀՀ կառավարությունը, նշում է կրթության որակի բարձրացումը:

Ֆոկուս խմբային քննարկումների ժամանակ երիտասարդները նշել են, որ ժամանակի հետ կրթության որակն ավելի ընկել է.

> *«Ինչքան հետ գնանք, էնքան համալսարանները ավելի լավն էին»*
>
> (ՖԽ, 21-29 տարեկաններ, իգական, Երևան)

> *«Ուսանողներն էլ արդեն հիասթափվում են, քանի որ որոշ համալսարաններում կրթություն չկա»*
>
> (ՖԽ, 21-29 տարեկաններ, իգական, մարզային քաղաք):

Աղյուսակ 2.17: Որքանո՞վ եք բավարարված Հայաստանում կրթության որակով:

Ներկայումս սովորո՞ւմ եք որևէ կրթական հաստատությունում:	Շատ եմ բավարարված	Հիմնականում բավարարված եմ	Մասամբ բավարարված եմ, մասամբ բավարարված չեմ	Հիմնականում բավարարված չեմ	Ընդհանրապես բավարարված չեմ
Այո, ես սովորում եմ դպրոցում, քոլեջում	6.6%	43.5%	39.9%	6.6%	3.3%
Այո, ես շարունակում եմ կրթությունս բուհում	3.7%	31.7%	48.8%	10.6%	5.3%
Այո, ես շարունակում եմ կրթությունս ասպիրանտուրայում/դոկտորանտուրայում	0.0%	0.0%	75.0%	0.0%	25.0%
Ոչ	6.7%	30.7%	41.9%	13.7%	7.0%
Ընդամենը	**6.0%**	**34.4%**	**42.9%**	**11.0%**	**5.7%**

Հարկ է նշել, որ բացահայտվել է նշանակալի վիճակագրական կապ երիտասարդների որևէ կրթական հաստատության պատկանելու/չպատկանելու և ՀՀ կրթության որակի հանդեպ դիրքորոշումների միջև (X^2=37.098, p<0.001, Cramer's V=.102) (տե՛ս աղյուսակ 2.17): Կրթության որակով ընդհանրապես բավարարված չեն նրանք, ովքեր առհասարակ չեն սովորում որևէ կրթական հաստատությունում և նրանք, ովքեր ուսանող լինելու զգալի փորձ ունեն՝ ասպիրանտուրայի ուսանողները:

Հայաստանյան կրթության որակի հանդեպ վստահության պակասի պայմաններում երիտասարդների 42,3%-ը ցանկություն ունի հնարավորության դեպքում կրթություն ստանալ արտերկրում (Հայաստանից հեռանալ պատրաստվող երիտասարդների 60,6%-ն ունի այդ ցանկությունը): Հայաստանում նախընտրում է կրթություն ստանալ հարցվածների 30,3%-ը, մասամբ Հայաստանում, մասամբ արտերկրում՝ 27,4%-ը (տե՛ս **գծապատկեր 2.18**):

Գծապատկեր 2.18: Եթե ընտրության հնարավորություն ունենայիք, որտեղ կցանկանայիք ստանալ Ձեր կրթությունը:



Զբաղվածություն

Ինչպես երևում է ստորև ներկայացված աղյուսակից, հարցված աշխատող երիտասարդների միայն 5.4%-ն է նաև սովորում, 43.6%-ը սովորում է և չի աշխատում, 20.1%-ը աշխատում է և չի սովորում, 30.9%-ը չի սովորում և չի աշխատում (տե՛ս **աղյուսակ 2.19**):

Աղյուսակ 2.19: Աշխատո՞ւմ եք:

		Այո	Ոչ	
Ներկայումս սովորո՞ւմ եք որևէ կրթական հաստատությունում/ շարունակո՞ւմ եք արդյոք Ձեր կրթությունը:	Այո	65	520	585
		5.4%	43.6%	100.0%
	Այո	240	369	609
		20.1%	30.9%	100.0%
Ընդամենը		**305**	**889**	**1194**
		25.5%	**74.5%**	**100.0%**

Աղյուսակ 2.20: Մասնակցե՞լ եք պրակտիկայի/վերապատրաստման/հավելյալ որակավորման ձեռքբերման:

	Այո	Ոչ
Սեռը		
Արական	29.0%	71.0%
Իգական	43.2%	56.8%
Տարիքը		
14-17 տարեկան	14.4%	85.6%
18-21 տարեկան	37.1%	62.9%
22-25 տարեկան	53.5%	46.5%
26-29 տարեկան	49.8%	50.2%
Ներկայումս սովորո՞ւմ եք որևէ կրթական հաստատությունում:		
Այո, ես սովորում եմ դպրոցում, քոլեջում	15.9%	84.1%
Այո, ես շարունակում եմ կրթությունս բուհում	45.7%	54.3%
Այո, ես շարունակում եմ կրթությունս ասպիրանտուրայում/ դոկտորանտուրայում	100.0%	0.0%
Ոչ	45.4%	54.6%
Բնակավայր		
Քաղաք	40.9%	59.1%
Գյուղ	31.4%	68.6%
Ընդամենը	**37.4%**	**62.6%**

Ստացած կրթությանը զուգահեռ երիտասարդների միայն 37,4%-ն է մասնակցել պրակտիկայի կամ հավելյալ որակավորման դասընթացների: Ընդ որում, պրակտիկայի կամ հավելյալ որակավորման դասընթացների առավել հաճախ մասնակցել են իգական սեռի ներկայացուցիչները (X^2=24.094, p<.001, Cramer's V=.145), հետդպրոցական տարիքի ներկա-

յացուցիչները (ըստ տարիքի՝ X^2=128.596, p<.001, Cramer's V=.329, ըստ ուսումնական հաստատության՝ X^2=96.707, p<0.001, Cramer's V=.285) և քաղաքաբնակ երիտասարդները (X^2=10.623, p=0.001, Cramer's V=.094) (տե՛ս **աղյուսակ 2.20**):

Գծապատկեր 2.21: Աշխատում եք:



Աղյուսակ 2.22: Աշխատում եք:

Ձեր ամուսնական կարգավիճակը	Սեռը	Yes	No
Չամուսնացած	Արական	26.9%	73.1%
	Իգական	19.8%	80.2%
Ամուսնացած	Արական	67.2%	32.8%
	Իգական	23.4%	76.6%
Ամուսնալուծված	Արական	100.0%	0.0%
	Իգական	25.0%	75.0%
Ամուրի/այրի	Արական	42.9%	57.1%
	Իգական	0.0%	100.0%

Հարցման մասնակիցների 25,5%-ը հարցումն իրականացնելու ժամանակ ուներ աշխատանք (6,6%-ը աշխատում էր կա՛մ կես դրույքով, կա՛մ ժամանակ առ ժամանակ, ինքնազբաղված էր 2,4%-ը): Երիտասարդները զբաղվածության առումով ակտիվ են 19 տարեկանից հետո, իսկ

գործունակությունը հասնում է իր գագաթնակետին 23 տարեկանում: (տե՛ս **գծապատկեր 2.21**): Այդուհանդերձ, 23 տարեկան և մեծ երիտասարդների 55,0%-ը ներկայումս չի աշխատում: Աշխատելու հարցում էական գործոն են ամուսնական կարգավիճակն ու սեռը. մասնավորապես աշխատանք ունի ամուսնացած տղամարդկանց 67,2%-ը, չի աշխատում ամուսնացած կանանց 76,6%-ը (տե՛ս **աղյուսակ 2.22**):

Ինչ վերաբերում է մասնագիտական աշխատանք իրականացնելուն, ներկայումս աշխատանք ունեցող երիտասարդների միայն 35,4%-ն է աշխատում ըստ մասնագիտության, 13,5%-ը՝ մասնագիտությանը հարակից աշխատանք ունի (տե՛ս **գծապատկեր 2.23**):

Գծապատկեր 2.23: Աշխատո՞ւմ եք մասնագիտությամբ:



Երիտասարդների միայն 18,9%- նշել է, որ ունի սեփական եկամուտ, մնացածը ստիպված են ապավինել այլոց աջակցությանը. մասնավորապես 49,9%-ը՝ ծնողների, 13,4%-ը ֆինանսական աջակցություն է ստանում ամուսնուց/կնոջից, 6,3%-ը՝ արտերկրում ապրող բարեկամներից: Հարցվածների 5,8%-ը որպես հիմնական ֆինանսական աղբյուր նշել է ընտանեկան նպաստը, 1,7%-ը՝ այլ ձևաչափի պետական օգնությունը, 2,0%-ը ստանում է ուսանողական կրթաթոշակ/նպաստ (տե՛ս **գծապատկեր 2.24**):

Հաշվի առնելով ստացած կրթությունը՝ հարցվածների 51,8%-ը կարծում է, որ դժվարությամբ աշխատանք կգտնի, իսկ 6,7%-ը չի հավատում, որ երբևիցե աշխատանք կգտնի:

Գծապատկեր 2.24: Որոնք են Ձեր հիմնական ֆինանսական աղբյուրները:



Աշխատանք գտնելու հետ կապված հիմնահարցերը շատ էին անհանգստացնում ֆոկուս խմբերի 14-20 տարեկան արական սեռի ներկայացուցիչներին.

> *«Աշխատանքը քիչ ա, մասնագետները շատ են, գործ կարող ա ճարես, ասա՝ նորմալ վարձատրվես, իսկ լավ գործ ճարելու համար պետք ա ծանոթ, դիպլոմ, խելք [հնարամտություն, ճարպկություն], խելքի հետ էլ՝ գիտելիք»*
>
> (ՖԽ, 14-20 տարեկաններ, արական, մարզային քաղաք):

Աշխատանքի ընտրության հարցում երիտասարդների նախապատվությունը ակնհայտ է՝ 45,5%-ը առաջին հերթին կարևորում է աշխատանքի եկամտաբերությունը (22%-ի համար եկամտաբերությունը երկրորդ տեղում է), 16,8%-ը՝ հաճելի մարդկանց հետ աշխատելը (երկրորդական՝ 26,3%-ի համար), 13,3%-ը՝ աշխատանքի անվտանգությունը (երկրորդական՝ 15,0%-ի համար), 10,3%-ը՝ աշխատանքի համապատասխանությունը մասնագիտությանը (երկրորդական՝ 6,5%-ի համար), 5,5%-ը՝ աշխատանքի բնույթով բավարարվածությունը (երկրորդական՝ 9,3%-ի համար), 5,4%-ը՝ առաջխաղացման հնարավորությունները (երկրորդական՝ 10,3%-ի համար), 2,7%-ը՝ աշխատանքի հեղինակությունը (երկրորդական՝ 7,0%-ի համար), 1%-ը՝ հեշտ աշխատանքը (երկրորդական՝ 3,7%-ի համար) (տե՛ս **գծապատկեր 2.25**):

Գծապատկեր 2.25: Գործոններ, որոնք կարևոր են համարվում աշխատանքը ընտրելիս:



Նաև որակական տվյալներից երևում է, որ աշխատանքի՝ որպես բարեկեցության հասնելու հիմնական միջոցի դերն ու նշանակությունը հայաստանյան հասարակությունում բավականաչափ նվազել է: Մասնագիտությամբ աշխատանքը ներկայանում է որպես «անեկամտաբեր» զբաղմունք:

> *«Ես ունեմ Հայաստանում ծանոթներ, որ գերազանց են ավարտել համալսարանը, բայց դաբքի են քշում, լավ աշխատատեղեր չկան [լավ վարձատրվող], աշխատանք ունենալու համար պետք է ունենաս գումար, որ դաս ու աշխատես, կամ ծանոթ ունենաս՝ քեռի, հոպար, ծանոթ բարեկամ, լեզուներ էլ իմանաս լավ ա»*
>
> (ՖԽ մասնակից, 15 տ., արական, գյուղական համայնք, չի աշխատում):

> *«Լավ աշխատեղերը [սոցիալական ապահովող ու լավ վարձատրվող] զբաղված են, սպասում ենք, որ մեծերը գնան թոշակի, տեղ բացվի, աշխատենք»*
>
> (ՖԽ, 14-20 տարեկաններ, իգական, գյուղական համայնք):

Գծապատկեր 2.26: Նշված ոլորտներից որո՞ւմ կուզենայիք աշխատել:



Հարցվածների 29,2%-ը ցանկանում է աշխատել աշխատաշուկայի պետական հատվածում, 25,1%-ը՝ մասնավոր: Ուշագրավ է, որ հարցվածների

21,8%-ը ցանկություն ունի աշխատելու միջազգային կազմակերպություններում, 7,7%-ը նախընտրում է աշխատել հասարակական կազմակերպություններում, 5,8%-ը՝ գյուղատնտեսության մեջ, 7,7%-ը հանրային կառավարման ոլորտում: Հարկ է, նշել, որ բացահայտվել է նշանակալի վիճակագրական կապ հարցվածների սեռի և աշխատանքի ոլորտի նախապատվության միջև (X^2=64.881, p<.001, Cramer's V=.238). մասնավորապես պետք է ընդգծել, որ իգական սեռի ներկայացուցիչները առավելապես նախապատվություն են տալիս հասարակական սեկտորում, միջազգային կազմակերպություններում և հանրային կառավարման համակարգում աշխատելուն, ի հակադրություն սրան, արական սեռի ներկայացուցիչները նախապատվություն են տալիս գյուղատնտեսության ոլորտին և մասնավոր սեկտորին (տե՛ս **գծապատկեր 2.26**):

Ինչ վերաբերում է աշխատանք գտնելու և/կամ աշխատանքում առաջխաղացմանը, ապա հարկ է նշել, որ երիտասարդները կարծում են, որ աշխատանքի ընդունվելիս ծանոթ/բարեկամի ինստիտուտի դերը կարևորությամբ ավելի առաջնային է, քան մասնագիտական պրակտիկ կարողություններին տիրապետելը (29,5% 22,6%-ի դիմաց), իսկ հաջողությունը ավելի մեծ նշանակություն ունի, քան աշխատանքային ստաժը (7,2% 4,9%-ի դիմաց) (տե՛ս **գծապատկեր 2.27**): Պատկերը փոխվում է, երբ նույն գործոնները գնահատվում են աշխատանքում առաջխաղացման/կարիերայի տեսակետից: Այստեղ արդեն ծանոթ/բարեկամի օգնությունը և մասնագիտական պրակտիկ կարողությունները հավասարապես կարևորվում են (24,3% և 24,5%), աշխատանքային ստաժին նախապատվություն է տալիս հարցման մասնակիցների 11,1%-ը, իսկ հաջողությանը՝ 9,1%-ը (տե՛ս **գծապատկեր 2.27**): Աշխատանքի ընդունվելու պարագայի համեմատ ավելի բարձր է գնահատվում նաև քաղաքական հովանավորչության դերը հաջող կարիերայի համար (համապատասխանաբար՝ 1,8% և 4,9%):

Գծապատկեր 2.27: Գործոնների ցուցակ, որոնք սովորաբար կարևոր են համարվում աշխատանքի ընդունվելիս



Զբաղվածության թեմային նվիրված ֆոկուս խմբային քննարկման ժամանակ «ծանոթ» հասկացությանը կենտրոնական նշանակություն էր տրվում.

> *«Շատերը հենց զուտ իրենց գիտելիքով աշխատանք գտնում են, բայց դե երևի 10-ից՝ 2-ը, լավ ծանոթ, ինամի-բարեկամ ունենալը չի խանգարի, իսկ գիտելիքը ավելի շատ պետք ա, որ ծանոթը ավելի վստահ քո համար բարեխոսի»*
>
> (ՖԽ, 21-29 տարեկաններ, իգական, մարզային քաղաք):

Քննարկում

Հայ երիտասարդության վերաբերմունքը կրթության նկատմամբ դրսևորվում է արժեքային կողմնորոշումների և գործնական մտադրությունների մակարդակում: Արժեքային մակարդակում, ինչպես խորհրդային տարիներին էր, կրթությունը դիտարկվում է որպես հանրային բարիք, բայց երբ հարցը վերաբերում է անհատական ներգրավվածությանը կրթությանը և գործնական մտադրություններին, կրթությունը չի դիտարկվում որպես մշակութային կապիտալի զարգացման միջոց: Մասնավորապես՝ կրթություն ստանալը չի համարվում գիտելիք ձեռքբերելու կամ ապագայում մասնագիտական աշխատանք իրականացնելու գրավական: Փոխարենը այն ընկալվում է որպես սոցիալական կապերն ամրապնդելու, ակտիվացնելու, սոցիալական ճանաչում ստանալու և երիտասարդ լինելու սոցիալական կարգավիճակը հաստատելու միջոց: Այսպիսով, սոցիալական կապիտալն ավելի շատ է արժևորվում, քան մշակութայինը: Այս պնդումը հաստատվում է երիտասարդների կողմից ուսումնառությանը դասից դուրս հատկացվող ժամանակի հարաբերականորեն ցածր մակարդակով: Ազգային մտածելակերպից զատ (Արծրունի, 1904)՝ երիտասարդությունն ավելի շատ արժևորում է իր հասակակիցների հետ շփումը, քան ուսումնառությանը հատկացրած ժամանակը: Ավելին, համալսարանական նվաճումները և դասից դուրս ուսումնառությունը թույլ են փոխկապակցված: Պատճառն այն է, որ մի կողմից խորհրդային ժառանգությունն առաջարկում է կրթությունն արժևորել որպես հանրային բարիք, մյուս կողմից հայաստանյան սոցիալ-տնտեսական իրականությունը կտրուկ տարբերվում է այն իրողությունից, որը գոյություն ուներ խորհրդային ժամանակներում: Օրինակ, բարձրագույն կրթական հաստատությունները համարյա չունեն որևէ պետական ֆինանսավորում, արտերկրյա ուսանողների ներհոսքը մեծ չէ, և համալսարանները ստիպված են ապավինել վճարովի համակարգում սովորող

ուսանողների վարձավճարներին: Եթե հաշվի առնենք կրթության որակը, ուսման վարձավճարներն այնքան էլ բարձր չեն, սակայն ծնողների սոցիալ-տնտեսական ոչ բարենպաստ վիճակում (ովքեր էլ հիմնականում վճարում են իրենց երեխաների վճարները) սա մեծ բեռ է, քանի որ ահռելի սոցիալական ճնշում կա հասարակության կողմից, և ծնողները պարտավորված են զգում իրենց երեխաների համար ապահովել բարձրագույն կրթություն: Արդյունքում՝ խորհրդային ժամանակների համեմատությամբ՝ համալսարան ընդունվող ուսանողների թիվը կտրուկ մեծացել է (Հայաստանի ազգային մրցունակության զեկույց, 2010), որը հնարավորություն է տալիս այլ պարագաներում կրթական որակի պահանջներին չբավարարող երիտասարդությանը ստանալ բարձրագույն կրթության դիպլոմ, ինչն արտահայտում է ոչ այնքան երիտասարդության, որքան նրանց ծնողների և ընտանիքի ցանկությունը:

Ծնողների ազդեցությունը՝ նաև ակներև է դառնում այն փաստից, որ բարձրագույն կրթություն ունեցող ընտանիքները հակված են վերարտադրել իրենց մշակութային կապիտալը կրթության միջոցով: Եթե փոխաբերական ձևակերպում տանք, կրթությունը վերածվել է նորաձև սոցիալական «աքսեսուարի», որը սակայն չի փոխակերպվելու տնտեսական կապիտալի, հատկապես անապահով երիտասարդության շրջանում, քանի որ վերջիններիս համար ամբողջական կրթաթոշակի ինստիտուցիոնալիզացված համակարգի բացակայության պայմաններում, կրթական անհավասարության խնդիրն ավելի է սրվում և նպաստում սոցիալական անհավասարության վերարտադրմանը:

Երիտասարդությունն ինքը կրթական որակի բարձրացումը չի դիտարկում որպես Հայաստանի կառավարությանը հասցեագրվելիք կարևորագույն խնդիրներից մեկը: Փոխարենը նրանք բարձրաձայնում են աշխատատեղերի և զբաղվածության խնդիրները: Սա նշանակում է, որ կապիտալի մի տեսակը չի վերաճելու մեկ այլ տեսակի. կրթության (որպես մշակութային կապիտալի) և զբաղվածության (որպես տնտեսական կապիտալի) փոխհարաբերությունը խաթարվում է: Հայաստանի տնտեսական համակարգի անկմամբ մասնագիտական գիտելիքի և բարձրակարգ աշխատուժի նկատմամբ պահանջարկը նվազել է, քանի որ շատ բիզնես կազմակերպություններ և պետական գործակալություններ դեռևս օգտագործում են հնացած տեխնոլոգիաներ և միջոցներ անձնակազմի կառավարման համար: Լայնածավալ գործազրկությունը (այժմ որևէ բուհական հաստատությունում չսովորող երիտասարդության մեծամասնությունը նույնպես

գործազուրկ է), բարեկամական կապերի (բարեկամների և ընկերների միջև) անցյալի ժառանգությունը և սրանց գումարած՝ զբաղվածության հայրիշխանական կառուցվածքը հանգեցնում են կոռուպցիոն ռիսկերի: Ըստ այդմ, ակնհայտ է, թե ինչու է միայն երիտասարդության փոքր մասը արժևորում մասնագիտությունը աշխատաշուկա մուտք գործելիս:

ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ և ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Ներածություն

ժողովրդավարացման գործընթացները հետխորհրդային կովկասյան երկրներում սկզբունքորեն այլ ձևով են ընթանում, քան, ասենք, Արևելյան Եվրոպայի հետսոցիալիստական երկրներում (արտաքին ազդեցությունների հետ կապված տե՛ս, օրինակ, Lebanidze, 2014; Վրաստանի օրինակի վերաբերյալ տե՛ս Siroky and Aprasidze, 2011): Անավարտ պատերազմների պայմաններում հայ հասարակությունը մի կողմից փորձում է լուծել սոցիալ-տնտեսական զարգացման և ժողովրդավարացման միանգամայն խաղաղ հիմնախնդիրներ, մյուս կողմից՝ պահպանում է ռազմականացման (միլիտարիզացիայի) բարձր աստիճան: Թե՛ տնտեսության ազատականացումը, թե՛ քաղաքականության ժողովրդավարացումը ենթակա են ռազմականացման հրամայականներին, արտադրության միջոցների սեփականաշնորհումը չի հանգեցրել ազատ մրցակցության և հակամենաշնորհային ռեժիմի հաստատմանը, իսկ կառավարման ժողովրդավարական ձևերի կանոնակարգման փորձը դեռևս չի վերացրել ավտորիտար վարչակարգը, որի գոյությունը մեծապես պայմանավորված է նաև պատերազմի վերսկսման վտանգով (MacFarlane, 1997): Այդպիսի պայմաններում ինչպես նոր ժողովրդավարական ինստիտուտները, այնպես էլ նոր գաղափարական ուղենիշերը, մշակութային կարգավորման նոր ավանդույթները և հաղորդակցական (հետադարձ կապի) իրադարձությունների անընդհատության ապահովումը դեռևս վերջնականապես չեն ձևավորվել: Պետական իշխանության հանդեպ երիտասարդների հավատարմությունը հաստատվում է, երբ երիտասարդության տարբեր խմբեր համոզվում են, որ այն լավ է ծառայում իրենց և իրենց պետության նպատակների իրականացմանը (Nagle & Mahr, 1999, էջ 141-142; Ishkanian, 2015): սրա նախապայմաններ են գերկենտրոնացված հրամայական վարչակազմի բացառումը, իրավակարգի ապահովումը և այլն:

Քաղաքացիական մշակույթը ժողովրդավարության անհրաժեշտ հիմքն է: Ժողովրդավարական քաղաքական վարչաձևի համար հույժ կարևոր է երիտասարդ քաղաքացիների քաղաքական կանխադրույթների, արժեքների, գնահատականների, վարքի բնույթը, քանի որ չի կարող լինել ժողովրդավարություն առանց ժողովրդավարների: Ժողովրդավարության հաստատման համար չափազանց կարևոր է, թե ինչ գիտեն երիտասարդները քաղաքական համակարգի մասին (իմացական տեսանկյուն), ինչ զգացմունքներ ունեն նրա նկատմամբ (հուզական տեսանկյուն), ինչպես են գնահատում այն (արժեքաբանական տեսանկյուն) և ինչպես են գործում այդ համակարգում (պրաքսիոլոգիական տեսանկյուն) (Almond & Verba, 1989): Այս բաժնում անդրադարձ է արվում ժողովրդավարությանը և առկա քաղաքական իրադրությանը տրված ներկայիս հայաստանյան երիտասարդների գնահատականներին:

Հիմնական տվյալներ

- Հարցմանը մասնակցած երիտասարդները հետաքրքրված են Հայաստանում տեղի ունեցող քաղաքական իրադարձություններով՝ 77,1% (շատ են հետաքրքրված 22.3%-ը, հետաքրքրված՝ 54,8%-ը), սակայն նրանց զգալի մասը (24,6%-ը) չի պատրաստվում մասնակցել խորհրդարանական ընտրություններին, եթե ընտրությունները անցկացվեին ներկա պահին:
- Բավականին ցածր է երիտասարդների վստահությունը ընտրովի քաղաքական մարմինների նկատմամբ, իսկ 51,7%-ը բոլորովին չի վստահում իշխող քաղաքական կուսակցություններին:
- Եթե այսօր լինեին ԱԺ ընտրություններ, գյուղաբնակ երիտասարդների 51,4%-ը հստակ գիտի, թե որ կուսակցության օգտին պետք է քվեարկի, մինչդեռ քաղաքաբնակների միայն 35,1%-ն է կողմնորոշված:
- Որքան բարձր է հարցվածների կրթական մակարդակը, այնքան նրանք հակված չեն քվեարկելու որևէ կուսակցության օգտին և/կամ մասնակցելու ԱԺ ընտրություններին:
- Հարցված երիտասարդների 50,5%-ի համար քաղաքական իրադարձությունների մասին տեղեկատվություն ստանալու հիմնական աղբյուրը համացանցն է. 33,4%-ը տեղեկատվությունը ստանում է համացանցային լրատվական միջոցներից, իսկ 17,1%-ը՝ սոցիալական ցանցերից:

- Որքան նվազում են երիտասարդների անձնական ծախսերը, այնքան նրանք ավելի են հակված ասելու, որ հասարակության հարստությունը պետք է հավասար բաշխվի:
- Որքան ավելի են երիտասարդները բավարարված ՀՀ-ում ժողովրդավարության աստիճանով, այնքան ավելի լավատեսական են նրանց պատկերացումները սեփական ապագայի և երկրի տնտեսական ապագայի մասին:

Վերլուծություն

Քաղաքական մասնակցություն և ժողովրդավարություն

Հետազոտության տվյալները փաստում են, որ հայաստանյան երիտասարդները առավել հետաքրքրված են Հայաստանում տեղի ունեցող քաղաքական իրադարձություններով՝ 77,1% (շատ են հետաքրքրված 22.3%-ը, հետաքրքրված՝ 54,8%-ը), ռուսաստանյան քաղաքական իրադարձություններով հետաքրքրված է երիտասարդների 52.4%-ը, համաշխարհային հարթակում ընթացող քաղաքականությամբ՝ 45.5%-ը, կովկասյան տարածաշրջանային քաղաքականությամբ՝ 39.3%-ը, Եվրոպայում տեղի ունեցող քաղաքական իրադարձություններով՝ 37.5%-ը (տե՛ս **գծապատկեր 3.1**):

Հարկ է նշել, որ ընտրելու իրավունք ուներ հարցված երիտասարդների 70,9%-ը, ընդ որում նրանց կեսից ավելին՝ 51,4%-ը, միշտ մասնակցել է ընտրություններին, երբեք չի մասնակցել 14,4%-ը (տե՛ս **գծապատկեր 3.2**):

Գծապատկեր 3.1: Որքանո՞վ եք ԴՈՒՔ անձամբ հետաքրքրված քաղաքական իրադարձություններով, որոնք տեղի են ունենում:



Չնայած այն հանգամանքին, որ հարցվածների մեծամասնությունը միշտ կամ մեծամասամբ մասնակցում է քաղաքական ընտրություններին, այդուհանդերձ բավականին ցածր է երիտասարդների վստահությունը ընտրովի քաղաքական մարմինների նկատմամբ. մասնավորապես 51,7%-ը բոլորովին չի վստահում իշխող քաղաքական կուսակցություններին, 53,9%-ը՝ ընդդիմադիր քաղաքական կուսակցություններին, 53.8%-ը՝ ՀՀ նախա-

գահին, 52.7%-ը՝ Ազգային ժողովին և 40.3%-ը՝ տեղական ինքնակառավարման մարմիններին (տե՛ս **գծապատկեր 3.3**):

Գծապատկեր 3.2: Եթե կարող եք հիշել, ինչ հաճախականությամբ եք ընտրությունների մասնակցել/քվեարկել այն ժամանակից ի վեր, երբ ընտրելու իրավունք ստացաք:



Գծապատկեր 3.3: Ընդհանրապես որքանո՞վ եք վստահում ...



Որակական տվյալները նույնպես անվստահության մթնոլորտ են նկարագրում.

«Ինքը [կառավարությունը] իր մեջ ա որոշում նոր օրենքներ ա հանում, բայց կան բաներ, որոնք հասարակությանը, ժողովրդին պետք չեն գալիս»

(ՖԽ, 14-20 տարեկաններ, իգական, գյուղական համայնք)

«Մեկ ա, իրանք [քաղաքական գործիչները] անելու են նենց, ոնց որ իրանց հարմար ա»

(ՖԽ, 14-20 տարեկաններ, արական, մարզային քաղաք):

«Որ մտնում ես Ազգային ժողով, որտեղ մարդիկ պետք ա նորմալ որոշումներ կայացնեն, թե էս ազգի վիճակը ոնց բարելավեն ու ի՞նչ են անում իրանք: Իրանք դուրս են գալիս, սկսում են իրար հետ կռվել»

(ՖԽ, 21-29 տարեկաններ, արական, Երևան):

«Հենց վատը էն ա, որ էս երկիրը ղեկավարում են նենց մարդիկ, որոնք ավելի շատ մտածում են ոչ թե էս ազգին օգնել, այլ իրանց օգնել: Իրանք մի կողմից ցույց են տալիս, թե իրանք ամեն ինչ անում են ազգի համար, բայց իրականում իրանք շատ քիչ բան են անում»

(ՖԽ, 21-29 տարեկաններ, արական, մարզային քաղաք):

Այն հարցին, թե ո՞ր քաղաքական կուսակցության օգտին կքվեարկեիք, եթե ՀՀ ԱԺ ընտրությունները լինեին այսօր, 37,2%-ը նշել է՝ ոչ մեկի, 24,6%-ը՝ չի մասնակցի քվեարկությանը: Բացահայտվել է վիճակագրական կապ ընտրությունների մասնակցության, որևէ կուսակցության օգտին քվեարկելու և հարցվածների բնակավայրի միջև (X^2=19.832, p<0.001, Cramer's V=.161). մասնավորապես, կարելի է պնդել, որ եթե այսօր ԱԺ ընտրություններ լինեին, գյուղաբնակ երիտասարդների 51,4%-ը հստակ գիտի, թե որ կուսակցության օգտին պետք է քվեարկի, բայց ի տարբերություն նրանց, քաղաքաբնակների միայն 35,1%-ն է կողմնորոշված: Չի մասնակցի ընտրություններին և/կամ չի քվեարկի ոչ մի կուսակցության օգտին քաղաքաբնակների 64,9%-ը և գյուղաբնակների 48,6%-ը (տե՛ս **գծապատկեր 3.4**): Մյուս կողմից, բացահայտվել է հետաքրքիր վիճակագրական կապ ընտրությունների մասնակցության, որևէ կուսակցության օգտին քվեարկելու և հարցվածների կրթական մակարդակի միջև (X^2=13.952, p<0.001, Cramer's V=.135). որքան բարձր է հարցվածների կրթական մակարդակը, այնքան նրանք հակված չեն քվեարկելու որևէ կուսակցության օգտին և/կամ մասնակցելու ԱԺ ընտրություններին: Եթե այսօր լինեին ԱԺ ընտրություններ, ապա որևէ կուսակցության օգտին կողմնորոշված ընտրողները կկազմեին միջնակարգ/

միջին մասնագիտական կրթություն ունեցողների 45,8%-ը, իսկ բարձրագույն կրթություն ունեցողների միայն 32,6%-ը (տե՛ս **գծապատկեր 3.5**):

Գծապատկեր 3.4: Եթե ՀՀ Ազգային Ժողովի ընտրություններ լինեին հիմա, որևէ քաղաքական կուսակցության համար կքվեարկեիք:



Հարցվածների գերակշռող մասի՝ 86,5%-ի, կարծիքով երիտասարդության շահերը միայն որոշ չափով կամ քիչ են ներկայացված ՀՀ քաղաքական շրջանակներում (11,2%-ը համարում է, որ ընդհանրապես ներկայացված չեն):

Երիտասարդության ձայնն ու խնդիրները հաշվի առնելու տեսակետից հարցման մասնակիցների մի նշանակալի մասի կարծիքները նույնպես հոռետեսական են. 31,3%-ը համարում է, որ համապետական կառավարման մարմինները, ինչպիսին են Ազգային ժողովը և ՀՀ կառավարությունը, իրենց ձայնը ընդհանրապես հաշվի չեն առնում, իսկ տեղական կառա-

վարման մարմինների պարագայում այդպես է կարծում հարցվածների 25,8%-ը (տե՛ս **գծապատկեր 3.6**): Ընդ որում, ըստ հարցվածների 43.6%-ի իրենց ձայնը ընդհանրապես նշանակություն չունի քաղաքական ընտրությունների ելքի իմաստով, իսկ 22,7%-ը կարծում է, որ այն քիչ նշանակություն ունի (տե՛ս **գծապատկեր 3.7**):

Գծապատկեր 3.5: Եթե ՀՀ Ազգային Ժողովի ընտրություններ լինեին հիմա, որևէ քաղաքական կուսակցության համար կքվեարկեիք:



Գծապատկեր 3.6 : Նշվածներից յուրաքանչյուրը որքանով է հաշվի առնում երիտասարդության ձայնը:



Ֆոկուս խմբերին մասնակցած երիտասարդները նույնպես չեն գտնում, որ երիտասարդության ձայնը վճռորոշ է քաղաքականության մեջ: Մասնակիցներից մեկը այդ հանգամանքը վերագրում է անգամ Հայաստանի մշակութային համատեքստին.

> *«Մեր մոտ ընդունված չի, որ երիտասարդի խոսքը ճիշտ է»*
>
> (ՖԽ մասնակից, 22 տ., իգական, Երևան):

Գծապատկեր 3.7: Ըստ Ձեզ, որքանո՞վ է նշանակալի Ձեր քվեն քաղաքական ընտրությունների արդյունքների համար:

● Շատ ● Որոշ չափով ● Քիչ ● Ընդհանրապես նշանակություն չունի

«Ես մեծ հաշվով հեգաքրքրված չեմ քաղաքականությամբ, շատ կան իմ շրջապատում, որ քննարկում են, ինձ այդքան էլ չի հետաքրքրում քաղաքականությունը, որովհետև ինչքան էլ քննարկենք, մեկ ա լինելու ա էն, ինչ որ արդեն որոշված ա, ինձ թվում ա շատ մանր հարցերում կարող ա ինչ-որ ազդեցություն ունենանք [երիտասարդները], բայց գլոբալ հարցերում չէ, օրինակ որ սահմանադրությունը փոխվել էր մեզ ձեռք չէր տալիս, բայց կառավարությունը որոշել էր»

(ՖԽ մասնակից, 21 տ., արական, մարզային քաղաք):

«Մեր վերջին զանգին, վերջին դասին բոլոր դասատուները մեզ մտան, ասեցին՝ դուք եք մեր ուժը, դուք մեր ապագա սերունդն եք, դուք պետք ա որոշեք, իրանց ժամանակ էլ իրանց դասատուներն են ասել, ու իրանք ոչ մի բան չեն փոխել, նույն ձևով էլ մենք չենք փոխի»

(ՖԽ մասնակից, 23 տ., արական, գյուղական համայնք):

«Այսօր Հայաստանում ամեն ինչ այնքան էլ ազատ չի, ինչպես Եվրոպայում, որպեսզի երիտասարդների պայքարը հաշվի առնվի, նրանց ձայնը տեղ չի հասնում»

(ՖԽ մասնակից, 26 տ., իգական, Երևան):

Միևնույն ժամանակ, ֆոկուս խմբային քննարկումների ընթացքում հնչում էին նաև լավատեսական կարծիքներ, որոնք ոչ թե ենթադրում էին, որ երիտասարդների ձայնը հասնում է քաղաքական ատյաններին, այլ քաղաքական մասնակցության ու ակտիվության «կոչ» էին պարունակում իրենց մեջ:

«Երիտասարդությունը ամենաակտիվ գործող ուժն է, երբ որ մեր երկրում լինում է քաղաքական լուրջ հարցեր և խնդիրներ, առաջինը կառավարությունը ուշադրություն ա դարձնում համալսարաններին, որովհետև բոլորը երիտասարդներ են, որ հասարակության շարժիչ ուժը երբեք չգործի, այսինքն շատ բռնկվող իրավիճակներում երիտասարդները կարևորվում են, որ դեմ չկանգնեն, իսկ այսօր մեր [երիտասարդության] ազդեցությունը միջին կգնահատեի»

(ՖԽ, 21-29 տարեկաններ, արական, Երևան):

«Երիտասարդությունը կարևոր ա, որովհետև իսկապես իրանք [իշխանությունները] լսում են, թե երիտասարդության արձագանքը կոնկրետ որտեղից ա, ինչպիսին կլինի»

(ՖԽ, 21-29 տարեկաններ, արական, մարզային քաղաք):

«Քանի դեռ մենք երիտասարդ ենք ու մտածում ենք, որ մեր ձայնը ոչինչ չի, էդ տենց էլ կմնա, որովհետև մենք էն ամենաուժեղ բանն ենք էս ամբողջ հասարակության մեջի, որ շատ շատերը, եթե գրականության հետ, գիտության հետ կապ ունեցող մարդկանց հարցնեք, իրանք կասեն, մենք էն ամենաշարժիչ ուժն ենք էդ օղակի մեջ, բայց մենք չգիտենք մենք ինչ ուժ ենք, չգիտենք, իրոք չգիտենք»

(ՖԽ, 21-29 տարեկաններ, իգական, Երևան):

«Մենք անկախության սերունդն ենք չէ՞, մենք մեր ավագ սերնդից տարբերվում ենք նրանով, որ մենք ծնվել ենք անկախության մեջ ու եթե ասում ենք, որ ոչ մի բան չի փոխվել ու հիասթափվելու ենք և այլն, ես դրա հետ համաձայն չեմ, որովհետև մենք ենք աճելու ու դառնալու էս պետության գլուխները, կապ չունի, որ պաշտոնի կամ չգիտեմ թեկուզ եթե ինչ-որ պաշտոնյա էլ չլինես, հա դու քո էրեխուն պետք ա դաստիարակես, սերունդը փոխվելու ա, ոչ մի բան նույնը չի մնալու, եթե մենք անկախության սերունդն ենք, մենք ծնվել ենք անկախության մեջ, ուրեմն պետք է ձգտենք մեր ցանկացած երկիրը ստեղծել»

(ՖԽ, 21-29 տարեկաններ, իգական, մարզային քաղաք):

Գծապատկեր 3.8: Որոնք են ներկայիս քաղաքական իրադարձությունների մասին Ձեր հիմնական տեղեկատվական աղբյուրները:



Ուշագրավ է, որ հարցվածների ընդամենը 32,5%-ն է գոնե շաբաթը մեկ անգամ կամ ավել քաղաքական բանավեճեր դիտում, իսկ լինել քաղաքականապես ակտիվ միանշանակ մոդայիկ է հարցվածների 41,0%-ի համար: Հարցված երիտասարդների 50,5%-ի համար քաղաքական իրադարձությունների մասին տեղեկատվություն ստանալու հիմնական աղբյուրը համացանցն է՝ 33,4%-ը տեղեկատվությունը ստանում է համացանցային լրատվական միջոցներից, իսկ 17,1%-ը սոցիալական ցանցերից: Ավանդաբար պետական քաղաքականության մասին իրազեկող հեռուստատեսությունն աստիճանաբար զիջում է իր տեղը՝ որպես ամենահիմնական տեղեկատվական աղբյուր. այն այդպիսին են համարում հարցմանը մասնակցած երիտասարդների ընդամենը 31.3%-ը: Երիտասարդների համար որպես տեղեկատվության աղբյուր գրեթե չեն ծառայում ռադիոն (1.1%) և օրաթերթը (0.9%) (տե՛ս **գծապատկեր 3.8**):

Գծապատկեր 3.9: Որքա՞ն հաճախ եք քաղաքականությունը քննարկում Ձեր ծնող/ների հետ:



Գծապատկեր 3.10: Որքանո՞վ են Ձեր քաղաքական հայացքները համապատասխանում Ձեր ծնողների քաղաքական հայացքներին:



Ինչպես երևում է գծապատկերից, քաղաքական իրադարձությունների մասին երիտասարդների 8,8%-ը հիմնականում տեղեկատվություն է ստանում ընտանեկան, իսկ 7,0%-ը՝ ընկերական քննարկումների միջոցով: Հետաքրքիր է, որ հարցվածների ընդամենը 4,4%-ն է միշտ քաղաքական թեմաներ քննարկում ծնողների հետ, իսկ 33,5%-ը պնդում է, որ երբեք չի քննարկում (28,2%-ը հազվադեպ է քննարկում) (տե՛ս **գծապատկեր 3.9**), միայն 12,3%-ն է նշում, որ իր քաղաքական հայացքները բոլորովին չեն համընկնում ծնողների հայացքների հետ (տե՛ս **գծապատկեր 3.10**):

Ընդ որում, բացահայտվել է նշանակալի վիճակագրական կապ վերոնշյալ երկու փոփոխականների միջև (X^2=148.6, p<0.001, Cramer's V=.220: rho=249**, p<0.001). այսինքն՝ որքան հաճախ են երիտասարդները քաղաքական թեմաներ քննարկում իրենց ծնողների հետ, այնքան նրանք համարում են, որ իրենց և ծնողների քաղաքական հայացքները համընկնում են (տե՛ս **գծապատկեր 3.11**):

«Օրինակ, իմ կարծիքով քաղաքականությամբ մեծերն են հետաքրքրվում, որովհետև հիմնականում լուրերի միջոցով են իմանում՝ ինչ է կատարվում ու իրանք են ավելի շատ մտածում երիտասարդներից, իմ կարծիքով, մի երկու բան համացանցով կկարդան, կնայեն, շատերն էլ կասեն՝ ինչների՞ս ա պետք, ինչ ուզում են, թող անեն, մենք գնանք մեր գործերով, իսկ մեծերը կնստեն, կնայեն՝ ինչ ա կատարվում Աժ-ում»

(ՖԽ, 14-20 տարեկաններ, իգական, գյուղական համայնք):

Գծապատկեր 3.11: Որքան հաճախ եք քաղաքականությունը քննարկում Ձեր ծնող/ների հետ:

Միշտ



- 38,5%
- 42,3%
- 7,7%
- 11,5%

Հաճախ



- 24,5%
- 55,6%
- 11,9%
- 7,9%

Որքանո՞վ են Ձեր քաղաքական հայացքները համապատասխանում Ձեր ծնողների քաղաքական հայացքներին:

● Շատ ● Որոշ չափով ● Քիչ ● Բոլորովին

Երբեմն

- 15,4%
- 67,1%
- 12,2%
- 5,3%

Հազվադեպ



- 15,4%
- 60,7%
- 18,6%
- 5,3%

Երբեք



- 12,9%
- 37,5%
- 19,1%
- 30,5%

«Երևի քննարկումները իրենց գագաթնակետին են հասնում հատկապես ընտրությունների շրջանում՝ մի քիչ առաջ ու մի քիչ հետո, արդեն երբ մեկը ընտրվում ա, կրքերը հանդարտվում են, ես կարող եմ հիշել իմ ուսանողական տարիները, երբ որ ներկայիս նախագահը ընտրվեց, մեր կուրսը բաժանվել էր երեք մասի՝ նրանք ովքեր պաշտպանում էին նախագահին, ովքեր քարկոծում էին, երրորդի համար էլ մեկ էր՝ ինչ կլինի [ծիծաղ], ու չգիտեմ՝ էլ ինչ ասեմ, էս քաղաքականության թեման իմ համար էլ հաճելի չի»

(ՖԽ, 21-29 տարեկաններ, իգական, մարզային քաղաք):

«Պիտի ընտրությունները լինեն առողջ, արդար, իրոք արդար ընտրություններ, որ օրը որ էղան, էն ժամանակ էլ մենք՝ երիտասարդներս, իրավունք կունենանք քաղաքականությունից ընդհանրապես խոսելու»

(ՖԽ, 21-29 տարեկաններ, արական, գյուղական համայնք):

Քաղաքական դիրքորոշումներ

Հարցված երիտասարդներին հարցաթերթով առաջարկվել էին ներքոնշյալ չորս դատողությունները երկու ենթադատողությամբ, որոնք արտահայտում են քաղաքական դիրքորոշման հակադիր բևեռներ՝ աջակողմյան և ձախակողմյան: Երկու ենթադատողությունները գնահատվել են 1-10 (1-5՝ ավելի մոտ առաջին ենթադատողությանը, 6-10՝ ավելի մոտ երկրորդ ենթադատողությանը) բալանոց սանդղակով: Պատասխանների ընդհանուր պատկերը՝ **գծապատկեր 3.12**-ում:

- **I դատողություն** – Պետությունը պետք է կրի ավելի մեծ պատասխանատվություն մարդկանց սոցիալական ապահովության համար/ Մարդիկ իրենք պետք է կրեն ավելի մեծ պատասխանատվություն իրենց սոցիալական ապահովության համար:
- **II դատողություն** – Հասարակության հարստությունը պետք է հավասար բաշխվի/Հասարակության հարստությունը չպետք է հավասար բաշխվի՝ անհատական ջանքերը խրախուսելու համար:
- **III դատողություն** – Տնտեսության մեջ պետական սեփականության մասնաբաժնի ավելացում/ Տնտեսության մեջ մասնավոր սեփականության ավելացում:
- **IV դատողություն** – Մրցակցությունը վնասակար է. այն մարդկանց մոտ բացահայտում է վատագույն որակները/Մրցակցությունը լավ բան է. այն խթանում է աշխատասիրությունը և ստեղծում է նոր գաղափարներ:

Գծապատկեր 3.12: Ինչպե՞ս կդասակարգեիք



III դատողություն
Տնտեսության մեջ պետական սեփականության մասնաբաժնի ավելացում
Տնտեսության մեջ մասնավոր սեփականության ավելացում
22,6%
5,3%
4,8%
3,9%
14,5%
7,8%
4,9%
7,0%
6,0%
17,8%
5,5%


IV դատողություն
Մրցակցությունը ինքնանպատակ է, այն մարդկանց մոտ բացահայտում է կատարելագույն որակները
Մրցակցությունը լավ բան է, այն խթանում է աշխատասիրությունը և ստեղծում է նոր գաղափարներ
7,4%
2,1%
1,3%
2,5%
7,4%
4,7%
4,3%
8,8%
11,8%
46,8%
2,9%
1
2
3
4
5
6
7
8
9
10
ՀՊ/ԴՊ

Երիտասարդների 50,3%-ը միանշանակ պնդում է, որ պետությունը պիտի ավելի մեծ պատասխանատվություն կրի մարդկանց սոցիալական ապահովության համար, և միայն 9,4%-ն է միանշանակ կողմ, որ մարդիկ իրենք պետք է կրեն ավելի մեծ պատասխանատվություն իրենց սոցիալական ապահովության համար: Երիտասարդների 36,8%-ն էլ հակված է այն դիրքորոշմանը, որ հասարակության հարստությունը պետք է հավասար բաշխվի, ևս 15,2%-ը այս կամ այն չափով հարում է այդ կարծիքին, այդ դատողությանը միանշանակորեն հակադրվում են հարցվածների 12,5%-ը:

Հարցված երիտասարդների դիրքորոշումը համարյա հավասարապես բաշխվել է «ձախակողմյանների», «կենտրոնամետների» և «աջակողմյանների» (համապատասխանաբար՝ 32,7%, 31,1% և 30,8%)՝ աջ-ձախ երկընտրանքի դասական իմաստով: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ժամանակակից ձախակողմյան գաղափարախոսությունն ամբողջովին ընդունում է մրցակցության անհրաժեշտությունը՝ դժվար է հստակ կերպով սահմանել երիտասարդների դիրքորոշումը հասարակական կարգի նկատմամբ: Փաստացի՝ 46,9%-ը համարել են հասարակության ներսում մրցակցությունը շատ լավ երևույթ, միայն հարցվածների 7,4%-ն է կտրականապես դեմ գնացել դրան: 46,9%-ը հասարակության մեջ մրցակցությունը շատ լավ բան է համարում, նրանց ծայրահեղորեն հակադրվում են հարցվածների միայն 7,4%-ը:

Երիտասարդների կողմից հասարակության հարստությունը պետք է/չպետք է հավասարապես բաշխվի ենթադատողությունների նկատմամբ աջակողմյան, ձախակողմյան հայացքները, փաստորեն, վիճակագրորեն զգալի կերպով կապված են երիտասարդների անձնական ծախսերի հետ: Վիճակագրական թեստը (H (4)=11.580; p=0.041) ցույց տվեց, որ որքան նվազում են երիտասարդների անձնական ծախսերը (սոցիալ-տնտեսական պայմանների պատճառով ստիպված են ավելի քիչ գումար ծախսել), այնքան նրանք ավելի են հակված ասելու, որ հասարակության հարստությունը պետք է հավասար բաշխվի:

Գծապատկեր 3.13: Անկախ ընտրանքների Կրուսկալ-Ուոլիսի տեստ[3]
Ինչպե՞ս կդասակարգեիք՝ հասարակության հարստությունը պետք է / չպետք է հավասար բաշխվի



«Ես մտածում եմ՝ քաղաքականությամբ հետաքրքրված եմ էնքանով, ինչքանով էդ ամեն ինչը հասնում ա գրպանիս, սոցիալական վիճակին, հիմա Հայաստանում երևի էդ սոցիալական վիճակը ամենա տենց գերիմնդիրներից մեկն ա, դրա համար, երբ որ ամեն ինչ գալիս հասնում ա դրան, արդեն անհանգստանում ես էլի»

(ՖԽ մասնակից, 29 տ., արական, մարզային քաղաք):

Զարգացման հիմնախնդիրներ ու մարտահրավերներ

Ընդհանուր առմամբ, երիտասարդության մեծամասնության կողմից ընդգծվում է պետության հասարակական պատասխանատվությունը: Դա վերահաստատում են նաև ՀՀ տնտեսական վիճակի բարելավման տե-

3 Կրուսկալ-Ուոլիսի (1952) տեստը (որը նաև անվանում են «միակողմանի ANOVA դասակարգում» (բազմազանության վերլուծություն)) դասակարգման վրա հիմնված ոչ պարամետրիկ տեստ է, որն օգտագործվում է որոշելու՝ արդյոք վիճակագրական առումով կան էական տարբերություններ անկախ փոփոխական խմբերի միջև շարունակական կամ հերթական կախյալ փոփոխականների նկատմամբ:

սանկյունից նշված պատասխանատուները. պատասխանատուների շարքում առաջին տեղում ՀՀ նախագահն է (34,4%), երկրորդը՝ ՀՀ կառավարությունը (23,8%), երրորդը՝ Ազգային ժողովը (19,1%) (տե՛ս **գծապատկեր 3.14**): Թերևս տնտեսական վիճակի բարելավման համար գլխավոր պատասխանատուն համարվում է ՀՀ նախագահը, այն դեպքում, երբ նույն բանի համար մասնավոր բիզնեսի ներկայացուցիչների առաջնային պատասխանատվությունը նշում է հարցվածների ընդամենը 3,2%-ը: Մի կողմից սա ավագ սերնդից ժառանգած պատերնալիզմի դրսևորում է, մյուս կողմից՝ երկրում ավտորիտար ժողովրդավարության հաստատման արդյունք: Զուգահեռաբար կարելի է ընդգծել քաղաքացիական պատասխանատվության զգացողության համեմատաբար բարձր մակարդակը երկրի տնտեսական վիճակի բարելավման հարցում. ըստ հարցված երիտասարդների 11,6%-ի, ՀՀ քաղաքացիները նաև պատասխանատու են տնտեսական զարգացումը խթանելու հարցում: Այսպիսով, կարելի է նաև պնդել, որ երիտասարդներն ունեն պատասխանատու, հաշվետու և թափանցիկ պետության վերաբերյալ ժամանակակից պատկերացումներ՝ գիտակցելով, որ առանց պատասխանատու կառավարման և քաղաքացիական կեցվածքի Հայաստանի տնտեսական իրավիճակը չի բարելավվի:

Գծապատկեր 3.14: Ո՞վ է երկրի տնտեսական վիճակի բարելավման գլխավոր պատասխանատուն:



Գծապատկեր 3.15: Նշված խնդիրներից, որոնց վրա առաջնահերթ պետք է կենտրոնանա ՀՀ կառավարությունը:

Ընդ որում, հարցվածների կարծիքով ՀՀ կառավարությունը առաջին հերթին պիտի կենտրոնանա հետևյալ խնդիրների լուծման վրա՝ գործազրկության նվազեցում (դրան առաջնայնություն է տալիս հարցվածների 12,1%-ը), հայոց բանակի հզորացում (12,0%), տնտեսական աճ (11,1%), կոռուպցիայի դեմ պայքար (10,9%), հանցավորության դեմ պայքար (8,3%), Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչում (5,6%), ղարաբաղյան հիմնահարցի լուծում (4,6%), մարդու իրավունքների պաշտպանություն (4,5%), բարոյական վերադաստիարակություն (3,3%): Տարօրինակ է, որ երիտասարդության ինքնազարգացման և ինքնաարտահայտման պայմանների ապահովումը երիտասարդների միայն 2%-ի դեպքում է առաջնահերթ խնդիրների շարքին դասվել: Ցածր է նաև հարցվածների բնապահպանական գիտակցության մակարդակը՝ նրանց միայն 1,9%- ն է ընդգծել շրջակա միջավայրի պահպանման խնդրի առաջնահերթությունը (տե՛ս **գծապատկեր 3.15**):

Չնայած սոցիալ-տնտեսական խնդիրների առկայության մատնանշմանը՝ հարկ է ընդգծել, որ հայաստանյան երիտասարդները երկրի տնտեսության ապագայի նկատմամբ նաև լավատեսական պատկերացումներ ունեն. ըստ հարցվածների 7.3%-ի, առաջիկա 10 տարիների ընթացքում երկրի տնտեսական վիճակը զգալիորեն կլավանա, ըստ 36,6%-ի՝ որոշակիորեն կլավանա, ըստ 30,8%-ի՝ չի փոփոխվի և ըստ հարցվածների 25,3%-ի՝ որոշ չափով կվատանա, կամ զգալիորեն կվատանա (տե՛ս **գծապատկեր 3.16**):

Գծապատկեր 3.16: Ըստ Ձեզ ինչպե՞ս կփոխվի հայաստանաբնակների տնտեսական վիճակը առաջիկա 10 տարիների ընթացքում:



Ընդ որում, բացահայտվել է նշանակալի վիճակագրական կապ առաջիկա 10 տարիների ընթացքում հարցված երիտասարդների սեփական ապագայի և երկրի տնտեսական վիճակի մասին պատկերացումների միջև (X^2=53.295, p<0.001, Cramer's V=.159: rho=.172**, p<0.001). որքան լավատեսական են երկրի տնտեսական վիճակի ապագայի մասին պատկերացումները, այնքան լավատեսական են սեփական ապագայի մասին պատկերացումները և հակառակը (տե՛ս **գծապատկեր 3.17**):

Գծապատկեր 3.17: Ըստ Ձեզ ինչպիսին կլինի Ձեր ապագան 10 տարի հետո:



Հայաստանյան քաղաքական համակարգի վերաբերյալ առկա պատկերացումների համատեքստում հետաքրքրական է հարցված երիտասարդների բավարարվածությունը ժողովրդավարության՝ ՀՀ-ում առկա աստիճանով. հարցվածների 34,8%-ը բավարարված չէ, բավարարված է միայն 11,2%-ը: Երիտասարդության մեծամասնությունը՝ 54,0%-ը, նախընտրել է միջինացված գնահատական (տե՛ս **գծապատկեր 3.18**):

Գծապատկեր 3.18: Որքանո՞վ եք բավարարված Հայաստանում ժողովրդավարության աստիճանով:



«Ընկճվում են էլի երիտասարդները, օրինակ, էն էլեկտրաէներգիայի գները որ պետք ա բարձրացնեին, էդ Բաղրամյան փողոցը փակեցին, հատուկ եթե մի քանի օր էլ փակեին իրանց ուզածին կհասնեին, ուղղակի իրանք շուտ ընկճվեցին, ես հետաքրքրված եմ մասնավորապես «ոչ բռնի պայքարի» մեթոդներով ու հասկացել եմ, որ կառավարությունը, իրականում, շատ լավ ու կրթված մասնագետներ ունի, ովքեր տիրապետում են համաշխարհային քաղաքագիտության բոլոր ուսմունքներին ու կարողանում են իրենց գիտելիքը օգտագործել ոչ թե արտաքին քաղաքականությունը զարգացնելու վրա, այլ մանիպուլյացիայի են ենթարկում հենց մեզ: Հենց Բաղրամյանի դեպքերի ժամանակ ինչի՞ տապալվեցինք, նախ որովհետև մենք չունեինք ռազմավարություն, մեր համակարգող անդամներից մեկն էլ ծախվեց ընթացքում [լռություն]»

(ՖԽ, 21-29 տարեկաններ, արական, Երևան):

Ընդ որում, բացահայտվել է նշանակալի վիճակագրական կապ ՀՀ ժողովրդավարության և **ա**) առաջիկա 10 տարիների ընթացքում երիտասարդների սեփական ապագայի մասին պատկերացումների (X^2=22.810, p=0.004, Cramer's V=.104), **բ**) երկրի տնտեսական վիճակի ապագայի մասին պատկերացումների միջև (X^2=106.962, p<0.001, Cramer's V=.159). որքան ավելի են երիտասարդները բավարարված ՀՀ ժողովրդավարության աստիճանով, այնքան ավելի լավատեսական են նրանց պատկերացումները սեփական ապագայի և երկրի տնտեսական վիճակի ապագայի վերաբերյալ:

> *«Ամեն ինչ տեղի է ունենում երկու անգամ. նախ մտքում, հետո՝ իրականության մեջ, պիտի ցանկանանք, որ լավ լինի, որ դրական փոփոխություններ լինեն երկրի վիճակի մեջ»*
>
> (ՖԽ մասնակից, 18 տ., արական, գյուղական համայնք),

> *«Եթե երիտասարդները գործեն համախմբված, կհասնեն իրենց ուզածին, որոշ չափով, բայց կհասնեն»*
>
> (ՖԽ մասնակից, 21 տ, արական, Երևան)

Քննարկում

Երիտասարդների վերաբերմունքը քաղաքականությանը բացատրվում է տնտեսական, սոցիալական և մշակութային կապիտալների համատեքստում (Bourdieu, 2001)։ Երիտասարդությունն արժևորում է քաղաքականությունը և հետաքրքրվում է քաղաքական հարցերով, սակայն գործնական մտադրությունների մակարդակում ցուցաբերում է քաղաքական անտարբերություն։ Փաստացի, որքան բարձր է երիտասարդների կրթական մակարդակը, այնքան ընտրություններին մասնակցելու նրանց ցանկությունը փոքր է։

Հայաստանի գյուղական համայնքներում ազգակիցների ազդեցությունը երիտասարդների վրա ավելի մեծ է, քանի որ անհատի նկատմամբ հանրային վերահսկողությունն անհամեմատ բարձր է գյուղական համայնքներում։ Սրանով է բացատրվում գյուղաբնակ երիտասարդների շրջանում՝ այս կամ այն քաղաքական կուսակցության օգտին քվեարկելու միտումը։ Այստեղ խոսքը ոչ թե համայնքային երիտասարդության տեղեկացված ընտրության մասին է, այլ՝ կլանային համերաշխության դրսևորման։ Ընդհանուր առմամբ քաղաքականապես ակտիվ երիտասարդության թիվը մեծ չէ, քանի որ երիտասարդները կարծում են, որ կարևոր որոշումներ կայացնելու գործընթացներում իրենց ձայնը որևէ փոփոխության չի հանգեցնում։

Քաղաքական որոշումներ կայացնելու գործընթացից երիտասարդության այսօրինակ մեկուսացումը (ինքնամեկուսացումը) հատուկ է հետխորհրդային հասարակություններին, որը պայմանավորված է մի քանի օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոններով (թերացումներ օրենսդրությունում, իշխանու-

թյունների անտարբերություն, քաղաքականապես տեղեկացված և ակտիվ երիտասարդության սակավություն) (Купров, 2009, 137-145): Արդյունքում՝ հայաստանյան քաղաքական դաշտը վերածվում է իշխանության համար մարտադաշտի, որը բացառում է ենթադրյալ ամենակարևոր հասարակական գործող անձանց (երիտասարդությանը) և տեղակայում նրանց օտարման գոտում (Bourdieu, 1985): Նույնիսկ վերջին քաղաքացիական նախաձեռնությունները[4] հայտարարվել են որպես ոչ քաղաքական: Հակառակ պարագայում ակտիվիստները կկորցնեին լայն աջակցությունը:

Ընտրություններում բացի մանիպուլյացիայի հետևանք լինելուց, ընտրված քաղաքական մարմինների նկատմամբ ցածր վստահությունը՝ շնորհիվ հայկական հասարակության «ոչ պատերազմ-ոչ խաղաղություն» իրավիճակի, ինչպես նաև պետական իշխանությունների հետ ինքնանույնականացումը նպաստում է հասարակական կյանքում անորոշ վարքագծի դրսևորման աճին, և սա ակնհայտորեն արտացոլված է հարցումներին մասնակցած երիտասարդների պատասխաններում: Երբ ֆինանսական հաջողությունը բոլորի համար գերագույն նպատակ է համարվում, սակայն չկան իրավական ուղիներ այդ նպատակին հասնելու համար, հասարակության ներսում վարքագծային շեղումն աճում է՝ հանգեցնելով արժեքային ապակողմնորոշման:

«Ոչ պատերազմ-ոչ խաղաղություն» պայմաններում երիտասարդության անվստահության և անապահովության զգացումը հաղթահարելը կապվում է «ուժեղ ձեռքի իշխանության» առասպելի հետ, ինչը հանգեցնում է ավտորիտար ժողովրդավարության զարգացման՝ կոմունիկացիոն պարզ կառույցների և սոցիալական կարգերի միջոցով: Ճգնաժամը և գլոբալիզացիան գործում են տեղական ինքնակառավարման և ժողովրդավարական սկզբունքներին հակառակ՝ նվազեցնելով երիտասարդության վստահության մակարդակը քաղաքական ինստիտուտների նկատմամբ:

Անապահով երիտասարդները հակված են բարձրաձայնել, որ հանրային բարիքը պետք է հավասարապես բաշխվի: Եթե հաշվի առնենք այն փաստը, որ երիտասարդների մեծամասնության քաղաքական հայացքները համընկնում են իրենց ծնողների հայացքների հետ, ապա պարզ է դառնում, որ կոմունիզմի խորհրդային գաղափարախոսությունը վերարտադրվում է

4 Օրինակ՝ «Փրկենք Թեղուտը», «Մաշտոցի պուրակ», «Չենք վճարում 150 դրամ», «Էլեկտրիկ Երևան» նախաձեռնությունները (տես՝ Պատուրյան և Գևորգյան 2014, Armenian Civil Society after Twenty Years of Transition: Still Post-Communist? Yerevan: AUA):

Հայաստանի Հանրապետության անկախության տարիներին ավելի քիչ տնտեսական կապիտալ ունեցող ծնողների կողմից՝ իրենց երեխաներին համապատասխան դիրքորոշումների փոխանցման միջոցով:

Արտաքին քաղաքականության ընկալումը

Ներածություն

2014 թ. իրականացված հարցումների համաձայն Հայաստանի ազգաբնակչության 51%-ը գտնում էր, որ երկիրը պետք է իր արտաքին քաղաքական կապերն ամրապնդի ինչպես Եվրոպայի, այնպես էլ Ռուսաստանի հետ. 34%-ը գտնում էր, որ Հայաստանը պետք է կապերն ամրապնդի միայն Ռուսաստանի հետ, և միայն 4%-ն էր նշում, որ Հայաստանը պետք է կապերն ամրապնդի միայն Եվրամիության հետ (Civilitas Foundation, 2011; Delcour, 2015, էջ 323)։ Փաստորեն, արտաքին քաղաքականության մեջ Եվրոպա-Ռուսաստան փոխհարաբերություններում ՀՀ կառավարության վարած կոմպլեմենտար քաղաքականությունը, ըստ նախկին հետազոտության տվյալների, հաստատում էր նաև հանրությունը։ Ըստ էության, Հայաստանի ներգրավումը որևէ միության մեջ ոչ միայն արտաքին խթանների և ազդեցությունների, այլև ներքին սոցիալ-տնտեսական, արտաքին քաղաքականության վրա ազդող կառուցվածքային հիմնահարցերի և սոցիալական տարբեր խավերի դիրքորոշումների հարց է (Delcour, 2015, էջ 317)։ Ըստ Եվրախորհրդարանի 2015 թ. տվյալների, Հայաստանի առաջին առևտրային գործընկերն էր Եվրամիությունը՝ առևտրի 27.9%-ով, Ռուսաստանը երկրորդ խոշոր գործընկերն էր՝ 24.3%-ով, սակայն Եվրամիության հետ ասոցիացման համաձայնագրից հրաժարվելու ՀՀ նախագահի 2013 թ. սեպտեմբերի 3-ի որոշումը զգալիորեն փոփոխում է իրավիճակը, քանի որ Հայաստանի համար կենսական նշանակություն ունեն Ռուսաստանում ապրող հայերի դրամական փոխանցումները, անվտանգություն մտահոգությունները և երկրի էներգետիկ կախվածությունը Ռուսաստանից (De Micco and Policy Department, Directorate-General for External Policies, 2015, էջ 20)։ Միանշանակ է, որ Հայաստանի ժողովրդավարացման տեսանկյունից Եվրամիության դերակատարությունը լուրջ հիմքեր է ստեղծել բարեփոխումների համար, սակայն ՀՀ-Եվրամիություն հարաբերությունները շարունակում են զարգանալ Հարավային Կովկասի

տարածաշրջանային համատեքստում, որի վրա զգալի ազդեցություն ունի տրանսազգային դինամիկան (Freire & Simão, 2013):

Այս բաժնում հիմնարար անդրադարձ է արվում Հայաստանյան արտաքին քաղաքականության ընկալմանը՝ շեշտադրելով Հայաստան-ԵՄ և Հայաստան-Ռուսաստան հարաբերություններն այնպես, ինչպես դրանք տեսնում են երիտասարդները:

Հիմնական տվյալներ

- Եվրամիության հետ հարաբերությունների սերտացման հեռանկարին կողմ երիտասարդների մեծամասնությունը կողմ է նաև այն դատողությանը, որ Եվրասիական տնտեսական միության կազմում ՀՀ զարգացումը նախընտրելի ուղին է, և ընդհակառակը՝ առաջին դատողության դեմ արտահայտվող երիտասարդների մեծամասնությունը, դեմ է նաև մյուս դատողությանը:
- Եվրամիության հետ հարաբերությունների սերտացմանը կողմ արտահայտվողների մեծամասնությունը իգական սեռի ներկայացուցիչներն են, իսկ դեմ՝ արական: Այս քանակական տվյալները հաստատվել են նաև որակական տվյալներով:
- Երիտասարդների 57,4%-ը գտնում է, որ Եվրամիության հետ հարաբերությունների սերտացումը կվտանգի ազգային ավանդական արժեքները, 54,5%-ը գտնում է, որ Հայաստանը ԵՄ-ի կողմից տնտեսապես կշահագործվի, և ըստ 45,7%-ի դա կվտանգվի ՀՀ ինքնիշխանությունը: Որակական տվյալներից երևում են «եվրոպավախ» մտածողության առանձնացված դեպքեր:
- ԵՄ հետ հարաբերությունները ամրապնդելուն կողմնակիցների մեծամասնությունը կանայք են: Գյուղաբնակները (ի տարբերություն քաղաքաբնակների) համարում են, որ դա Հայաստանի ավելի արագ տնտեսական զարգացման, կյանքի որակի բարձրացման, ավելի լավ կրթության և Հայաստանի անվտանգության երաշխավորման նախապայմանն է:
- Որքան շատ են կրճատվում երիտասարդների անձնական ամսական ծախսերը, այնքան ավելի շատ են նրանք դիտարկում ԵՄ հետ հարաբերությունների ամրապնդումը որպես նախապայման մարդու իրավունքների պաշտպանության հարցում:
- Բարձրագույն կրթություն ունեցող երիտասարդները, ի տարբերություն նրանց, ովքեր ունեն միջնակարգ կամ միջին մասնագիտական

կրթություն, համարում են, որ ԵՄ հետ հարաբերությունների ամրապնդումը նախապայման է՝ ավելի լավ աշխատանքային հնարավորությունների համար: Դրան հակառակ՝ ավելի ցածր կրթություն ունեցող երիտասարդները դիտարկում են այն որպես նախապայման ավելի լավ կրթության և Հայաստանի անվտանգության համար:

- ՀՀ-Եվրամիություն սերտացման հարցում առանձնացված խոչընդոտների շարքում ավելի էական են Հայաստանի «մեղավորությունը», Եվրամիության չափանիշներին անհամապատասխանության հանգամանքը, քան Եվրամիության կողմից ստեղծված խոչընդոտները:
- Քաղաքաբնակները և բարձրագույն կրթություն ունեցողները ավելի հակված են դիտարկել Հայաստան-Ռուսաստան հարաբերությունները որպես խոչընդոտ Հայաստան և ԵՄ հարաբերությունների ամրապնդման հարցում:.

Վերլուծություն

Միջազգային ինտեգրման նախապատվություններ

ՀՀ արտաքին քաղաքական հարաբերությունների վերաբերյալ պատասխաններում երիտասարդների 20,7%-ը միանշանակ կողմ է, որ Հայաստանը ամեն ինչ պետք է անի Եվրամիության հետ հարաբերությունների սերտացման համար, իսկ 16,0%-ի համար Եվրասիական տնտեսական միության անդամակցությունը Հայաստանի զարգացման համար ամենանախընտրելի ուղին է:

Ինչպես երևում է **գծապատկեր 4.1**, ընդհանուր առմամբ երիտասարդների 62.8%-ը համաձայն է Եվրամիության հետ ՀՀ հարաբերությունների սերտացման հեռանկարի հետ, իսկ 56.9%-ը ՀՀ զարգացումը կապում է Եվրասիական տնտեսական միությանը անդամակցելու հետ:

Չնայած ՀՀ արտաքին քաղաքական հարաբերությունների զարգացման համատեքստում առկա պատկերացումներն ընդունված է տեղակայել Ռուսաստան-Արևմուտք (մասնավորապես Եվրոպա) բևեռների միջակայքում, այդուամենայնիվ, ինչպես երևում է հարցման տվյալներից, այս երկուսի միջև երիտասարդների դիրքորոշումները համահարաբերակցվում են (Սպիրմանի rho=.373, p<.001). սա նշանակում է, որ Եվրամիության հետ

հարաբերությունների սերտացման հեռանկարին կողմ երիտասարդների մեծամասնությունը կողմ է նաև այն դատողությանը, որ Եվրասիական տնտեսական միության կազմում ՀՀ զարգացումը ամենանախընտրելի ուղին է, և հակառակը՝ առաջին դատողության հետ չհամաձայնողների մեծամասնությունը, համաձայն չէ նաև մյուս դատողության հետ: Արտաքին քաղաքականության համատեքստում ծավալվող գրեթե բոլոր ֆոկուս խմբային քննարկումներում «Ռուսաստան», «Եվրոպա» եզրույթներն օգտագործվում էին որպես հավաքական գոյականներ, որոնց իմաստը առանձնապես չի բացատրվում: Քննարկումների ընթացքում երիտասարդները խոստովանում էին, որ այս հարցում տեղեկատվության պակաս ունեն.

> *«Լսում ենք հեռուստացույցից, տեղեկանում ենք սոցիալական ցանցերից, մի քիչ էլ մեծերի խոսակցություններից, ուրիշ բան չկա, որ մենք լսենք, իմանանք ու մենք էլ հետևենք դրան ու մենք էլ կարողանանք մեր կարծիքը արտահայտենք էլի»*
>
> (ՖԽ, 14-20 տարեկաններ, արական, գյուղական համայնք):

Տեղեկատվության պակասին զուգահեռ, բարձրացվում է նաև ապատեղեկատվության հիմնահարցը.

Գծապատկեր 4.1

Հայաստանը պետք է ամեն ինչ անի Եվրամիության հետ հարաբերությունների սերտացման համար



Եվրասիական տնտեսական միության անդամակցությունն Հայաստանի զարգացման համար ամենանախընտրելի ուղին է



1 = 9,3% 2 = 2,9% 3 = 5,7% 4 = 5,7% 5 = 19,6% 6 = 8,0%
7 = 11,5% 8 = 14,4% 9 = 6,9% 10 = 16,0%

«Օրինակ հարուկ լրատվական կայքեր եմ կարդում, կան լրագրողներ ովքեր կեղծ տեղեկություններ են տարածում, ստիպված տարբեր կարծիքներ կարդում եմ իմ մեջ փորձում եմ ձևավորեմ իմ կարծիքը»

(ՖԽ մասնակից, 25 տ., իգական, մարզային քաղաք):

Սա երևում է նաև քանակական տվյալներում (տե՛ս **գծապատկերներ 4.3**; **4.6**), «ԴՊ/ՀՊ» նշած հարցվածների զգալի տոկոսներով:

Եթե Եվրասիական տնտեսական միությանը ՀՀ անդամակցությունը առկա փաստ է, ապա արտաքին քաղաքական հարաբերություններում այսօր առավել քննարկելի են Հայաստան-Եվրոպա փոխհարաբերությունների զարգացումը: Այդ տեսանկյունից հարկ է նկատել, որ հարցված երիտասարդների մեծամասնությունը՝ 79,5%-ը, դրական է վերաբերում ՀՀ՝ Եվրամիության հետ հարաբերությունների սերտացմանը (տե՛ս **գծապատկեր 4.2**), և նրանց 63,4%-ը համաձայն է, որ Հայաստանը պետք է վերականգնի և շարունակի Եվրամիությանը հետ սերտացման գործընթացը (տե՛ս **գծապատկեր 4.3**):

Գծապատկեր 4.2: Ինչպե՞ս եք վերաբերվում ՀՀ՝ Եվրամիության հետ հարաբերությունների սերտացմանը:



Հարկ է ընդգծել, որ բացահայտվել է նշանակալի վիճակագրական կապ սույն դիրքորոշումների և հարցվածների սեռի միջև. Եվրամիության հետ հարաբերությունների սերտացմանը կողմ արտահայտվողների մեծամասնությունը իգական սեռի ներկայացուցիչներն են, իսկ դեմ արտահայտվողներինը՝ արական (տե՛ս **գծապատկեր 4.4** X^2=26.909, p<0.001, Cramer's V=.160, **գծապատկեր 4.5** X^2=29.915, p<0.001, Cramer's V=.172):

Գծապատկեր 4.3: Կարծում եք, որ ՀՀ պետք է շարունակի ԵՄ սերտացման գործընթացը:



Գծապատկեր 4.4: Ինչպե՞ս եք վերաբերվում ՀՀ՝ Եվրամիության հետ հարաբերությունների սերտացմանը:



Գծապատկեր 4.5: Կարծո՞ւմ եք, որ ՀՀ պետք է շարունակի ԵՄ սերտացման գործընթացը:



Վերը ներկայացված քանակական տվյալները հաստատվել են որակական տվյալներով: Ֆոկուս խմբերին մասնակցած արական սեռի երիտասարդները Եվրասիական միությանը Հայաստանի անդամակցությունը մեկնաբանում են որպես ինքնուրույնության ենթադրվող և Հայաստանի արտաքին քաղաքականության տեսանկյունից՝ ռացիոնալ քայլ: Նրանք Ռուսաստանը ներկայացնում են որպես Հայաստանի պաշտպան երկիր.

> *«Եթե լինենք Եվրասիական միության մեջ, Ռուսաստանը մեզ կպաշտպանի, Ռուսաստանը հզոր երկիր է և հատկապես լարված ռազմական վիճակում կպաշտպանի մեզ»*
>
> (ՖԽ, 14-20 տարեկաններ, արական, գյուղական համայնք)

> *«Մեր տնտեսությունը կզարգանա, գիտեք ինչ, Ռուսաստանը ի վերջո մեր ռազմավարական գործընկերն ա ու դա էլ կապ ունի Հայաստանի տնտեսության հետ, ինչու չէ ռազմական ուժերի ուժեղացման հետ, ինձ թվում ա՝ մեզ ավելի շատ շահեկան ա Եվրասիական տնտեսության մեջ լինելը»*
>
> (ՖԽ, 14-20 տարեկաններ, արական, գյուղական համայնք):

Հետաքրքրական է, որ Եվրասիական տնտեսական միության մասին խոսելիս խոսվում է միմիայն Ռուսաստանի մասին, և որակական տեղեկություններ չեն տրամադրվում միության անդամ այլ երկրների մասին: 21-29 տարիքային խմբի արական սեռի ներկայացուցիչներն ավելի առարկայական են քննարկում Եվրասիական տնտեսական միությանը Հայաստանի անդամակցելու օգուտները: Մասնավորապես, ասվում է, որ մաքսատուրքերից ազատումը, բիզնեսի զարգացման հեռանկարը խոստումնալից է.

> *«Եվրասիական միության մեջ մտնելու հարցը, մեր պատմության ամբողջ ընթացքը ցույց է տալիս, Ռուսաստանի հետ մեր կապերն ավելի ամրապնդելը ավելի ճիշտ է, քան Եվրոպական երկրների հետ, որովհետև Ռուսաստանը միշտ էլ ինչ-որ չափով մեզ օգնել է»*
>
> (ՖԽ, 21-29 տարեկաններ, արական, Երևան):

Հայաստանը, ըստ ֆոկուս խմբերին մասնակցած երիտասարդների, մեկուսացած երկիր է, շրջափակման մեջ, ուստի Ռուսաստանի հետ լավ հարաբերությունները վերջինիս համար կարևոր նշանակություն ունեն.

> *«Նպատակահարմար ա Ռուսաստանի հետ լինելը, որովհետև մեր երկիրը էնքան թույլ ու աղքատ ա, որ հենց ինտեգրվի Եվրոպային, Ռուսաստանը միանգամից ճնշելու ա, հիմա մեր հայերի մեծամասնությունը Ռուսաստանում են աշխատում, էնտեղից ա գալիս մեր ֆինանսները, թե ֆինանսական առումով, թե ամեն առումով հարմար ա Ռուսաստանը»*
>
> (ՖԽ, 21-29 տարեկաններ, արական, մարզային քաղաք)

> *«Եկեք մի բան չմոռանանք, որ Ռուսաստանի էս տարածաշրջանում ամենամեծ ռազմաբազան հենց Հայաստանում ա գտնվում՝ Գյումրիում, ամբողջ սահմանը ռուսական զորքերը պաշտպանում են Թուրքիայից, մենք այլընտրանք չունենք՝ այսինքն միանանք Եվրամիությանը, Ռուսաստանը կհանի իր զորքերը ու էդ ժամանակ տեղից բլոկադայի մեջ ենք, ազգային անվտանգության խնդիր ա առաջանում, և ուզած, թե չուզած՝ պիտի մնանք Ռուսաստանի տիրապետության տակ»*
>
> (ՖԽ, 21-29 տարեկաններ, արական, մարզային քաղաք)

> *«Կոպիտ ասած՝ Ռուսաստանին ձեռ չի տա, որ իր տիրապետության տակ եղած երկիրը դուրս գա ու մտնի այլ կազմակերպության մեջ»*
>
> (ՖԽ, 21-29 տարեկաններ, արական, Երևան)

«Թեկուզ կլիմայական կամ թեկուզ գաղափարական իմաստով ավելի մոտ ենք Ռուսաստանին»

(ՖԽ, 21-29 տարեկաններ, արական, գյուղական համայնք):

Ֆոկուս խմբերին մասնակցած իգական սեռի ներկայացուցիչները բարձրաձայնում էին եվրոպամետ կարծիքներ.

«Եթե Եվրասիականին միանա [Հայաստանը], Ռուսաստանի հետ կապերը ավելի լավ կլինեն, ու շուտով Հայաստանը կդառնա ռուսական գաղութ, իսկ եթե Եվրոպականին միանա, իրա դիրքը կպահի, կարող ա ավելի հզորանա, եվրոպական երկրները կօգնեն Հայաստանին, եթե մեր կառավարությունը փոխվի, կարող է Ռուսաստանի չէ, ուրիշ ազգի հետ մոտիկ լինի ու Ռուսաստանից կախում չունենա, ստեղ մեծ դեր ունի կառավարությունը»

(ՖԽ, 14-20 տարեկաններ, իգական, մարզային քաղաք)

«Եթե մենք չենք անդամակցում Եվրամիությանը, մենք Եվրոպայի աչքին երևում ենք խամաճիկ պետություն, Ռուսաստանը ինչպես թելադրի, մենք այդպես պետք է անենք, մենք հիմա կախվածություն ունենք Ռուսաստանից, ես մի օրինակ բերեմ՝ Հայաստանը կարող էր ընդունել Իրանի գազը, բայց չընդունեց, ընդունեց Ռուսաստանինը, և Եվրոպայի աչքին մենք էլի վատը դարձանք»

(ՖԽ, 21-29 տարեկաններ, արական/իգական, Երևան)

«Դե ինձ չի թվում, որ Եվրախորհրդին [Եվրոպական Միությունը] միանալը ավելի լավ կլիներ, քան թե Մաքսային միությանը, բայց ոնց տեսնում եմ՝ հայերի համար շատ լավ ա, իրանք գնում են Մոսկվայից ավտո են բերում [ծիծաղ]»

(ՖԽ, 21-29 տարեկաններ, իգական, Երևան)

«Եվրոպական միությանը անդամակցելու մասին ես շատ եմ մտածում, որովհետև Եվրոպական միությունը կառավարությանը բավականին մեծ գրանտներ ա տալիս ու իրականում էդ գրանտները ուտում են ու կոռուպցիայի դեմ ոչ մի պայքար չկա բացարձակ, կոռուպացված են մեր համակարգերը, երկրորդ՝ դեմոկրատ երկիր չի, իրավունքները պաշտպանված չեն, իսկ գիտենք, որ կարևորագույն արժեքներից մեկը, Եվրոպական միության համար, էդ ժողովրդավարությունն ա»

(ՖԽ մասնակից, 21 տ., իգական, Երևան)

«Եվրոպային միանայինք, արդեն Հայաստանում էլ գենդերային հավասարություն կլիներ»

(ՖԽ, 21-29 տարեկաններ, իգական, Երևան)

«Դրական փոփոխություններ լինելու են տնտեսական առումով, բայց հաշվի առնելով Սովետական Միության տնտեսական ստրոպը, կասենք որ նույն ստրոպը սպասվում ա և հիմա: Ռուսաստանը էն երկիրը չի, որ ձգտում ունի առաջընթացի տնտեսական առումով, ու մենք շատ ավելի մեծ հնարավորություններ ունենք զարգանալու, եթե ձգտենք դեպի Եվրոպա ու խելամիտ երիտասարդությունն էլ ա ձգտում դեպի Եվրոպա, մեզ պետք չեն ոչ՝ Եվրոպայի, ոչ էլ Ռուսաստանի բարքերը, մեզ համար ընդամենը տնտեսական և քաղաքական որոշակի հարցեր կան, կարելի ա վերցնել ամեն երկրից այն, ինչը մեզ անհրաժեշտ կլիներ, անշուշտ եղած բարքերի առումով մենք համեմատաբար Ռուսաստանին մոտ ենք»

(ՖԽ, 21-29 տարեկաններ, իգական, Երևան):

Միջազգային ինտեգրման հիմնախնդիրներ

Ըստ հարցված երիտասարդների, հայաստանյան արտաքին քաղաքականությունն այն առաջնային ոլորտը չէ, որի վրա պետք է կենտրոնանա կառավարությունը. մասնավորապես՝ հարցվածների միայն 0,8%-ն է Եվրամիության հետ հարաբերությունների սերտացումը համարում առաջնահերթ խնդիր ՀՀ կառավարության համար (գրեթե նույն պատկերն է նաև Եվրասիական տնտեսական միությանն ինտեգրման դեպքում՝ այդ ինտեգրումը կառավարության համար առաջնային խնդիր է համարում հարցվածների 1,4%-ը):

Գծապատկեր 4.6: Որքանո՞վ եք վստահում Եվրամիությանը:



Հետաքրքրական է այն, որ հարցված երիտասարդների 46,3%-ը կողմնորոշված չէ Եվրամիությանը վստահելու հարցում, Եվրամիությանը վստահում է հարցվածների 26,3%-ը և չի վստահում՝ 20,1%-ը (տե՛ս **գծապատկեր 4.6**): Ընդ որում, Եվրամիության հանդեպ վստահությունը համահարաբերակցվում է Եվրամիության հետ հարաբերությունների սերտացմանը երիտասարդների կողմ լինելու (X^2=251,874, p<0.001, Cramer's V=.509) և այդ հարաբերությունների սերտացման հանդեպ դրական վերաբերմունքի հետ (X^2=359.524, p<0.001, Cramer's V=.343): Հարկ է ընդգծել, որ Եվրամիության հանդեպ վստահության հարցում չկողմնորոշված երիտասարդները նույնպես հիմնականում հակված են դրական արձագանքել Եվրամիության հետ ՀՀ հարաբերությունների սերտացման հեռանկարին (տե՛ս **աղյուսակ 4.7**):

Աղյուսակ 4.7

Որքանո՞վ եք վստահում Եվրամիությանը					
	Լիովին վստահում եմ	Հիմնա-կանում վստահում եմ	Ոչ վստահում եմ, ոչ չեմ վստահում	Հիմնա-կանում չեմ վստահում	Բոլորովին չեմ վստահում
Ինչպե՞ս եք վերաբերվում Եվրամիության հետ ՀՀ հարաբերությունների սերտացմանը					
Դրական	90.5%	56.1%	34.3%	26.6%	18.8%
Ավելի շուտ դրական		39.6%	49.3%	27.3%	13.8%
Ավելի շուտ բացասական		1.4%	12.4%	32.4%	16.3%
Բացասական	9.5%	2.8%	4.1%	13.7%	51.3%
Կարծու՞մ եք, որ ՀՀ-ը պետք է շարունակի ԵՄ հետ սերտացման գործընթացը					
Այո	100.0%	95.4%	77.8%	47.2%	19.2%
Ոչ		4.6%	22.2%	52.8%	80.8%

Եվրամիության հանդեպ վստահության հիմնախնդիրը արտահայտվում է նաև երիտասարդների կողմից Հայաստանի՝ Եվրամիության հետ հարաբերությունների սերտացման վտանգները ներկայացնելիս. մասնավորապես՝ նրանց 57,4%-ը գտնում է, որ Եվրամիության հետ հարաբերությունների սերտացումը կվտանգի ազգային ավանդական արժեքները, 54,5%-ը գտնում է, որ Հայաստանը ԵՄ-ի կողմից տնտեսապես կշահագործվի, իսկ ըստ 45,7%-ի, այդ սերտացումը կվտանգի ՀՀ ինքնիշխանությունը (տե՛ս **գծապատկեր 4.8**):

Գծապատկեր 4.8: Ձեր կարծիքով, Հայաստանի Եվրամիության հետ հարաբերությունների սերտացումը ...

Կվտանգի հայ ազգային ավանդական արժեքները



Հայաստանը ԵՄ-ի կողմից տնտեսապես կշահագործվի



Կվտանգի ՀՀ ինքնիշխանությունը



● Լիովին համաձայն եմ ● Հիմնականում համաձայն եմ ● Հիմնականում համաձայն չեմ ● Բոլորովին համաձայն չեմ

Ֆոկուս խմբային քննարկումներին մասնակցած երիտասարդների խոսքում նկատվում է «եվրոպավախ» մտածողություն, հատկապես՝ կապված գենդերային հավասարության Եվրոպական արժեքների, Եվրոպայում, ըստ նրանց, տարածված աթեիզմի, Եվրոպական երկրների և Հայաստանի տնտեսական անհավասարության, Եվրոպական երկրների ու Թուրքիայի միջև բարիդրացիական հարաբերությունների, Ուկրաինայի դեպքերի, ինչպես նաև տարածաշրջանում Հայաստանի համար առկա ռազմական խնդիրների հետ: Նշվում են մշակութային տարբերություններ.

> *«Եվրոպացիները սառն են, նրանց մեջ ջերմություն չկա»*
>
> (ՖԽ, 21-29 տարեկաններ, իգական, մարզային քաղաք)

> *«Մինչև մեր տնտեսական վիճակը չբարելավվի, չենք կարողանա համեմատություններ անցկացնել Հայաստանի ու Եվրոպայի մեջ, շեշտը դնում եմ մեր տնտեսական վիճակի ու աշխատավարձի վրա, եթե դա բարելավվի, նորմալ հարթակի վրա լինի, գուցե կհասկանանք նրանց, բայց հիմա Հայաստանը մեկուսացած վիճակում է Եվրոպական ապրելակերպից, հնարավոր ա՝ Եվրոպական երկրները Հայաստանին տեղ տան, բայց՝ որպես գաղութ, ու մենք ոչ մի բանով առաջ չենք գնա, պարզապես իրենց [Եվրոպական երկրների] համար սա [Հայաստանը] մի օղակ ա, որ իրենց գործերը առաջ տանեն»*
>
> (ՖԽ, 21-29 տարեկաններ, իգական, մարզային քաղաք):

14-20 տարիքային խմբում եվրոպատյաց մտածողությունը արտահայտվում է Եվրոպա-Թուրքիա հարաբերությունների կտրվածքով: Մասնավորապես նշվում է.

> *«Մենք չենք կարող էդ եվրոպական բաներով առաջ գնալ, որովհետև եվրոպական երկրներից շատերը Թուրքիայի հետ ունեն լավ հարաբերություն, Ռուսաստանի հետ ավելի հարմար ա: Եվրոպական շատ երկրներ Թուրքիայի հետ ունեն ռազմավարական կապեր, ավելի մտերիմ են Թուրքիայի, Ադրբեջանի հետ, իսկ Ադրբեջանը, Թուրքիան կեղծ հայտարարություններ են անում Հայաստանի մասին, և տարբեր էդ երկրները, որ աջակցում են Թուրքիային և Ադրբեջանին, ուրիշ տպավորություններ են ստանում Հայաստանի մասին, իսկ ավելի անվտանգ է Ռուսաստանի հետ լինել»*
>
> (ՖԽ, 14-20 տարեկաններ, արական, մարզային քաղաք):

Ուկրաինայի դեպքը հետք է թողել երիտասարդների պատկերացումներում, օրինակ, ասվում է.

> *«Չէ, լավ չի էդ Եվրոպական միությունը, էն ա Ուկրաինան, ի՞նչ եղավ»*
>
> (ՖԽ, 21-29 տարեկաններ, արական, մարզային քաղաք)

> *«Եթե օրինակ ղարաբաղյան հարցը չլիներ, Հայաստանը կձգտեր Եվրոմիությանը անդամակցել, բայց անվտանգության հարցեր են»*
>
> (ՖԽ, 21-29 տարեկաններ, իգական, Երևան):

Այստեղ կարիք կա հետաքրքիր քանակական դիտարկում անելու առ այն, որ Եվրամիության հետ հարաբերությունների սերտացման վտանգները մեծամասամբ ընդունվում են այդ գործընթացի հանդեպ բացասաբար տրամադրված երիտասարդների կողմից, իսկ դրական դիրքորոշում ունեցող երիտասարդները բաժանվում են երկու խմբի՝ վտանգը «ընդունողների» և «չընդունողների» (տե՛ս **աղյուսակ 4.9**):

Անդրադառնալով Եվրամիության հետ հարաբերությունների սերտացման հեռանկարային հնարավորություններին՝ այդ հարաբերությունների շարունակության կողմնակիցները լիովին համաձայնել են, որ դա կնպաստի առաջին հերթին ավելի լավ կրթություն ստանալուն (42,3%), աշխատանքային ավելի լավ հնարավորությունների ստեղծմանը (36,4%), ճամփորդելուն և նոր ընկերներ ձեռք բերելուն (36,0%), ՀՀ-ում կյանքի որակի բարձրացմանը (31,5%), մարդու իրավունքների պաշտպանվածությանը (31,4%), Հայաստանի տնտեսության ավելի արագ զարգացմանը (30,1%), Հայաստանի անվտանգության ապահովմանը (25,6%), ՀՀ ավելի արագ ժողովրդավարացմանը (21,2%), տարբերվող մարդկանց հանդեպ հանդուրժողական վերաբերմունքին (18,1%): Հարկ է նկատել, որ հարցված երիտասարդների մեծամասնությունը կարծում է, որ Եվրամիության հետ հարաբերությունների սերտացումը չի նպաստի տարբերվող մարդկանց հանդեպ հանդուրժողական վերաբերմունքին (34,3%) և Հայաստանի անվտանգության ապահովմանը (28,5%): 19,9%-ը գտնում է, որ Եվրամիության հետ հարաբերությունների սերտացումը չի նպաստի ՀՀ ավելի արագ ժողովրդավարացմանը:

Աղյուսակ 4.9: Ձեր կարծիքով, Հայաստանի Եվրամիության հետ հարաբերությունների սերտացումը ...

		Լիովին համաձայն եմ	Հիմնականում համաձայն եմ	Հիմնականում համաձայն չեմ	Բոլորովին համաձայն չեմ
Ինչպես եք վերաբերվում Եվրամիության հետ ՀՀ հարաբերությունների սերտացմանը:	**Կվտանգի հայ ազգային ավանդական արժեքները**				
	Դրական	14.1%	34.8%	35.5%	15.6%
	Ավելի շուտ դրական	13.1%	40.8%	38.8%	7.3%
	Ավելի շուտ բացասական	26.5%	50.4%	17.9%	5.1%
	Բացասական	51.1%	27.3%	13.6%	8.0%
	Կվտանգի ՀՀ ինքնիշխանությունը				
	Դրական	8.2%	30.4%	42.8%	18.6%
	Ավելի շուտ դրական	5.6%	35.2%	50.3%	8.9%
	Ավելի շուտ բացասական	17.4%	52.2%	26.1%	4.3%
	Բացասական	36.8%	31.0%	24.1%	8.0%
	Հայաստանը ԵՄ-ի կողմից տնտեսապես կշահագործվի				
	Դրական	14.0%	31.5%	37.8%	16.7%
	Ավելի շուտ դրական	9.2%	43.6%	37.7%	9.5%
	Ավելի շուտ բացասական	23.6%	48.2%	25.5%	2.7%
	Բացասական	46.4%	33.3%	10.7%	9.5%
Կարծում եք, որ ՀՀ-ը պետք է շարունակի ԵՄ հետ սերտացման գործընթացը	**Կվտանգի հայ ազգային ավանդական արժեքները**				
	Այո	12.2%	36.4%	39.4%	12.0%
	Ոչ	38.3%	41.7%	14.2%	5.8%
	Կվտանգի ՀՀ ինքնիշխանությունը				
	Այո	6.5%	30.6%	48.5%	14.4%
	Ոչ	24.1%	43.6%	24.9%	7.5%
	Հայաստանը ԵՄ-ի կողմից տնտեսապես կշահագործվի				
	Այո	10.3%	35.8%	39.8%	14.1%
	Ոչ	32.5%	42.1%	18.4%	7.0%

Հարկ է ընդգծել, որ բացահայտվել են վիճակագրորեն հավաստի կապեր Եվրամիության հետ հարաբերությունների սերտացմանը կողմնակից երիտասարդների սեռի, տարիքի, անձնական ծախսերի և ընտանիքի տնտեսական կարգավիճակի ու Եվրամիության հետ սերտացման օգուտների վերաբերյալ արտահայտած դիրքորոշումների միջև: Արական սեռի ներկայացուցիչները (ավելի, քան իգական սեռի ներկայացուցիչները) Եվրամիության հետ հարաբերությունների սերտացումը դիտարկում են որպես ճամփորդելու և նոր ընկերներ ձեռք բերելու հնարավորություն (X^2=14.388, p=0.002, Cramer's V=.139): Գյուղաբնակները, ի տարբերություն քաղաքաբնակների, Եվրամիության հետ հարաբերությունների սերտացումը դիտարկում են որպես Հայաստանի տնտեսության ավելի արագ զարգացման (X^2=14.089, p=0.003, Cramer's V=.137), ՀՀ-ում կյանքի որակի բարձրացման (X^2=8.183, p<0.05, Cramer's V=.105), ավելի լավ կրթության (X^2=8.837, p<0.05, Cramer's V=.109) և Հայաստանի անվտանգության ապահովման նախապայման (X^2=15.594, p=0.001, Cramer's V=.146): Ամսվա կտրվածքով, որքան ցածր են երիտասարդների անձնական ծախսերը, այնքան նրանք Եվրամիության հետ հարաբերությունների սերտացումը դիտարկում են որպես մարդու իրավունքների պաշտպանվածության նախապայման (X^2=27.136, p<0.05, Cramer's V=.110): Առավել բարձր եկամուտ ունեցող ընտանիքների անդամ երիտասարդները Եվրամիության հետ հարաբերությունների սերտացումը դիտարկում են որպես Հայաստանի տնտեսության ավելի արագ զարգացման նախապայման (X^2=26.357, p<0.05, Cramer's V=.109): Չաշխատող երիտասարդները, ի տարբերություն աշխատողների, Եվրամիության հետ հարաբերությունների սերտացումը դիտարկում են որպես տարբերվող մարդկանց հանդեպ հանդուրժողական վերաբերմունքի (X^2=10.114, p<0.05, Cramer's V=.118), աշխատանքային ավելի լավ հնարավորությունների (X^2=9.521, p<0.05, Cramer's V=.113), ավելի լավ կրթության (X^2=14.339, p=0.002, Cramer's V=.139) և Հայաստանի անվտանգության ապահովման նախապայման (X^2=13.157, p=0.004, Cramer's V=.134): Բարձրագույն կրթություն ունեցող երիտասարդները, ի տարբերություն միջնակարգ/միջին մասնագիտական կրթություն ունեցողների, Եվրամիության հետ հարաբերությունների սերտացումը դիտարկում են որպես աշխատանքի ավելի լավ հնարավորությունների նախապայման (X^2=9.809, p<0.05, Cramer's V=.114), և ընդհակառակը՝ առավել ցածր կրթական մակարդակ ունեցող երիտասարդները Եվրամիության հետ հարաբերությունների սերտացումը դիտարկում են որպես ավելի լավ կրթության (X^2=16.521, p=0.001, Cramer's V=.149) և Հայաստանի անվտանգության ապահովման նախապայման (X^2=22.552, p<0.001, Cramer's V=.175):

Հարցվածների 74,6%-ը որպես ՀՀ-ԵՄ հարաբերությունների սերտացման խոչընդոտ ընդգծում է այն, որ Հայաստանում քաղաքական համակարգը բավարար չափով ժողովրդավարական չէ, 69,1%-ը՝ որ Հայաստանում մարդու իրավունքների պաշտպանությունը չի համապատասխանում ԵՄ պահանջվող մակարդակին, 68%-ը՝ որ Հայաստանը չունի համապատասխան տնտեսական զարգացման մակարդակ, 66,6%-ը՝ որ ԵՄ դժգոհ է Հայաստանի և Ռուսաստանի հարաբերություններից, 63,8%-ը՝ որ ԵՄ շատ խիստ պահանջներ է դնում իր գործընկեր պետությունների առջև, 56,2%-ը՝ որ Հայաստանը չունի ԵՄ պահանջները բավարարելու կարողություն, 48,0%-ը՝ որ Հայաստանի համար անարդար պայմաններ են սահմանված, ինչը *առասպելի է վերածում պաշտոնապես ընդունված Հայաստանի եվրոպականացման կուրսը* (տե՛ս **գծապատկեր 4.10**):

Ընդ որում, քաղաքաբնակները (X^2=8.667, p<0.05, Cramer's V=.0.100) և բարձրագույն կրթություն ունեցողները (X^2=8.789, p<0.05, Cramer's V=.100) ավելի հակված են Հայաստան-Ռուսաստան փոխհարաբերությունները դիտարկել որպես ՀՀ-Եվրամիություն հարաբերությունների սերտացման խոչընդոտ: Առանձնացված խոչընդոտների շարքում ավելի էական են Հայաստանի «մեղավորությունը», Եվրամիության չափանիշներին անհամապատասխանության հանգամանքը, քան Եվրամիության կողմից ստեղծված խոչընդոտները: 21-29 տարեկան տարիքային ֆոկուս խմբերում Հայաստան-Եվրոպա փոխհարաբերությունների կայացման նկատմամբ թերահավատությունը արտահայտվում է Հայաստանում ժողովրդավարության բացակայության, դրա կայացած չլինելու առնչությամբ, ինչպես նաև Հայաստանի տնտեսապես ու մարդկային ռեսուրսների տեսանկյունից ավելի թույլ լինելու հանգամանքի հետ կապված.

Գծապատկեր 4.10: Ինչն է բարդացնում Հայաստանի Եվրամիության հետ հարաբերությունների սերտացումը:



«Եվրամիությունը աջակցում է մեզ, բայց խնդիրը նրանում է, թե ինչքան ենք մենք վերցնում, թե ինչքանով է մեր վերցրածը նպատակին ծառայում, նրանց տվածը օտար ա մեզ, մենք չենք կարա յուրացնենք»

(ՖԽ, 21-29 տարեկաններ, իգական, մարզային քաղաք)

«Ասենք Եվրոպայից իրավական դաշտից ինչ-ինչ բաներ վերցնենք՝ կանանց իրավունքներ, հավասարություն, լավ բաներ, որ ճիշտ են, բայց մենք, մեր կառավարությունը... էդ չի հասկացվում»

(ՖԽ, 21-29 տարեկաններ, իգական, մարզային քաղաք):

Որակական տվյալներում հատկանշական է որևէ միությանը միանալու պարագայում «Հայաստանին օգնելու» մասին պատկերացումը, ինչը ցույց է տալիս «փոքր երկրի» բարդույթի առկայության դեպքեր.

«Դե մենք փոքր երկիր ենք, ինչքան էլ ասենք անկախ ենք, մեկ ա մի քսան տարվա պատմություն ունեցող պետությունը ինքը մենակ ի՞նչ կարա անի, իսկ էդ դեպքում Ռուսաստանից օգնությունը մեր միակ հույսն ա»

(ՖԽ, 14-20 տարեկաններ, արական, գյուղական համայնք)

«Եկեք ասենք, որ մենք թույլ ազգ ենք, ավելի շուտ մեր կառավարությունն ա շատ թույլ, ու պետք ա ինչ-որ երկիր մեր կողքը լինի, որ կարողանանք մեր իրավունքները պաշտպանենք կամ օգնություն ստանանք»

(ՖԽ, 14-20 տարեկաններ, իգական, Երևան)

«Ինձ թվում ա՝ հայը Ռուսաստանի հետ համագործակցումը և կապը թողնի, կոպիտ ասած՝ կկործանվենք, մենք թիկունք չունենք»

(ՖԽ, 21-29 տարեկաններ, արական, մարզային քաղաք):

Քննարկում

Արտաքին քաղաքականության առումով առավել հետաքրքրական էր հայաստանյան երիտասարդների կողմնորոշվածությունը Եվրամիություն–Եվրասիական տնտեսական միություն երկընտրանքի հարցում:

Երիտասարդների համար միանշանակ չեն ո՛չ Եվրամիության հետ տարվող բանակցությունների տրամաբանությունը, ո՛չ էլ Եվրասիական տնտեսական միության անդամ լինելու նպատակները, նրանք նշում են, որ բավարար

չափով տեղեկացված չեն: Այնուամենայնիվ, երիտասարդների մեծամասնությունը կողմ է և՛ Եվրամիության հետ հարաբերությունների սերտացմանը, և՛ Եվրասիական տնտեսական միությանն անդամակցելուն՝ արտահայտելով երկրի կոմպլեմենտար (փոխլրացնող) արտաքին քաղաքականության տրամաբանությունը, որը որդեգրել են հայաստանյան իշխանությունները (Delcour, 2015): Այս հարցում երիտասարդության համանման դիրքորոշումը արտահայտում է այն իրողությունը, որ Հայաստանի համար որևէ կողմի ընտրությունը համազոր է կորստին (համեմատության համար տե՛ս De Micco, 2015): Մի կողմից՝ ԵՄ-ը Հայաստանի խոշորագույն առևտրային գործընկերն է (De Micco, 2015, էջ 20), մյուս կողմից՝ Ռուսաստանը Հայաստանի դաշնակիցն է անվտանգության ապահովման հարցերում, որոնք առաջվա պես հրատապ են 2016 թվականի ապրիլի հայ-ադրբեջանական պատերազմի, ինչպես նաև Թուրքիայի կողմից Հայաստանի շարունակական շրջափակման համատեքստում:

Երիտասարդների առօրյա ընկալումներում Եվրամիության հետ հարաբերությունների սերտացումը վտանգում է ՀՀ ինքնիշխանությունը, որը կախված է նաև Ռուսաստանից: Մյուս կողմից, առկա է մտավախություն, որ Հայաստանը ԵՄ-ի կողմից տնտեսապես կշահագործվի, կվտանգվեն ազգային ավանդական արժեքները: Երիտասարդությունը Եվրասիական տնտեսական անդամակցության շրջանակներում նույնպես ինքնիշխանության ռիսկեր է տեսնում, մասնավորապես՝ նրանք մտածում են, որ Հայաստանի ինքնիշխանությունը կնվազի ուղղակի աշխարհաքաղաքական համատեքստում, և երկիրը դե ֆակտո կգաղութացվի Ռուսաստանի կողմից: Օրինակ, վերջին ռուսական տնտեսական ճգնաժամը մեծացրել է մտահոգությունը Հայաստան մուտք գործող դրամական փոխանցումների հնարավոր կրճատման առնչությամբ (տե՛ս՝ De Micco, 2015, էջ 20): Եվրասիական տնտեսական միությանն ինտեգրվելու կողմնակիցները դիտարկում են այդ գործընթացը՝ որպես Ռուսաստանի հետ շուրջ երկու դար գոյություն ունեցող ընդհանուր սոցիալ-մշակութային տարածության պահպանման միջոց, իսկ բուն ԵՏՄ վերաբերյալ հայաստանյան հասարակությունը այդքան էլ տեղեկացված չէ (Manukyan, 2013): Միևնույն ժամանակ հայաստանյան երիտասարդները ընդգծում են Հայաստանի «հեռավորությունը» Եվրամիության սոցիալ-մշակութային տարածության չափանիշներին համապատասխանելու առումով:

Եվրամիություն–Եվրասիական տնտեսական միություն երկընտրանքի համատեքստում տարբերակվում են նաև հայաստանյան երիտասարդների

տարբեր խմբերի դիրքորոշումները. երիտասարդների տեսակետների ու դիրքորոշումների վրա ազդում է նրանց սեռը, տարիքը, անձնական ծախսերը և ընտանիքի տնտեսական կարգավիճակը, ինչը ևս մեկ անգամ ապացուցում է, որ երկրի արտաքին քաղաքականության մասին պատկերացումները ձևավորվում են ներքին սոցիալ-տնտեսական ու սոցիալ-մշակութային զարգացումների համապատկերում: Ուշագրավ է, որ Եվրամիության հետ հարաբերությունների սերտացմանը կողմ արտահայտվողների մեծամասնությունը իգական սեռի ներկայացուցիչներն են, իսկ արական սեռի ներկայացուցիչները հիմնականում ռուսամետ դիրքորոշումներ ունեն: Դա հավանաբար պայմանավորված է Ռուսաստանում արտագնա աշխատանքի գործոնով, որով առավել հետաքրքրված են արական սեռի ներկայացուցիչները:

Անհանգստություններ և զգոյումներ

Ներածություն

Արդի աշխարհում մի սոցիալական կարգավիճակից մյուսին անցնելիս երիտասարդությունն ավելի խոցելի է (օրինակ՝ բուհից հետո աշխատանք փնտրելիս և աշխատելիս, տե՛ս Gray, 2007, էջ 407)։ Ըստ վերլուծաբանների, արդի հասարակության մեջ հասարակական ռիսկերի «անհատականացման» պայմաններում երիտասարդներին ավելի անհրաժեշտ է համապատասխան պաշտպանական հմտությունների ձեռքբերումը (Furlong and Cartmel, 1997)։ Յուրաքանչյուր չորրորդ երիտասարդ աշխատում է ստվերային ոլորտում, չունի աշխատանքի՝ աշխատանքային օրենսդրությամբ նախատեսված պաշտպանության ոչ մի երաշխիք (Մանուկյան, 2012, էջ 34-39)։ Արտագաղթի բացարձակ արժեքով ամենափոքր դիրքորոշումը դիտվում է աղքատության կրճատման ոլորտում իրականացվող պետական քաղաքականություններում բարելավում նկատած (մինչև 35%) երիտասարդների խմբում (Մանուկյան, 2012, էջ 91)։ Այսինքն՝ այն երիտասարդները, ըստ որոնց պետական քաղաքականության երաշխիքներ առկա են, ավելի հակված են չարտագաղթելու։ Առհասարակ սոցիալական արդարությունը ենթադրում է սոցիալական անարդարության մասին տեղեկատվության մակարդակի բարձրացում։

Այս բաժնում վերլուծության են ենթարկվում հայաստանյան երիտասարդության՝ կենսակերպով բավարարվածության, ապագայի նկատմամբ նրանց ունեցած դիրքորոշումների, նրանց հանդիպած սոցիետալ ռիսկերի և մասնավորապես՝ նրանց կողմից արտագաղթի ընկալման վերաբերյալ տեղեկություններ։ Հարավային Կովկասում իրականացված վերջին հետազոտություններում վերհանվում է այն փաստը, որ տարածաշրջանում երիտասարդական շարժումները ոչ թե հանկարծակի ընդվզումներ են, այլ՝ սոցիալական անբարենպաստ, անցանկալի իրականության մեջ հասունա-

ցած՝ երիտասարդների երկարատև պայքար (Beacháin & Abel, 2010): Իսկապես, սոցիալական բացառման նախադրյալներ են ոչ միայն պարզապես աղքատությունը կամ ցածր եկամուտը և սոցիալական անապահովությունը, այլև՝ սոցիալական հիմնախնդիրների փոխկապված վիճակը, որտեղ վառ արտահայտություն ունեն աշխատանք չունենալը, խտրականությունը, կրթության՝ կարողությունների ու հմտությունների պակասը, վատ սոցիալ-տնտեսական պայմանները և այլն (Social Exclusion Unit, 2004, էջ 14): Չունենալով բավարար փորձ և պատմականորեն կայացած գործելակարգեր, քաղաքացիական հասարակությանը հատուկ տարբեր կառույցներ և ավանդույթներ՝ հայոց անկախ պետությունը սոցիալական տարբեր խմբերին, այդ թվում՝ երիտասարդներին, չի տրամադրել իրական հավասար հնարավորություններ իրենց նպատակներին հասնելու համար: Սոցիալական անարդար իրավիճակը որոշակի անհանգստություններ է առաջացնում, երիտասարդների հեռանկարները դարձնում է անորոշ, նրանց ստիպում ապագայի պլանները կապել արտերկիր տեղափոխվելու հետ:

Հիմնական տվյալներ

- Որքան ավելի ցածր է ընտանիքի սոցիալ-տնտեսական կարգավիճակը, այնքան ավելի քիչ են երիտասարդները բավարարված իրենց ընտանեկան կյանքով:
- Որևէ կրթական հաստատությունում սովորողները ավելի քիչ են բավարարված իրենց ինտիմ հարաբերություններով, քան չսովորողները: Որևէ կրթական հաստատությունում սովորողները առավել լավատեսական պատկերացումներ ունեն ապագայի նկատմամբ, քան չսովորողները:
- Որքան տարիքով ավելի մեծ են հարցվածները, այնքան ավելի հոռետեսական են ապագայի հանդեպ ունեցած դիրքորոշումները: Որքան տարիքով ավելի մեծ են հարցվածները, այնքան ավելի են ընդգծում գործազրկությունը, աղքատության աճը, արտագաղթը, կաշառակերությունը, օրենքների պահպանման ոչ պատշաճ մակարդակը որպես հրատապ հասարակական հիմնախնդիրներ, մինչդեռ շրջակա միջավայրի աղտոտումը որպես հրատապ խնդիր է ընկալվում ավելի ցածր տարիքային խմբի շրջանում:
- Որքան քիչ են երիտասարդները գումար ծախսում իրենց անձնական կարիքները բավարարելու համար, և որքան ցածր է երիտասարդների

ընտանիքի սոցիալական կարգավիճակը, այնքան ապագայի հանդեպ նրանց դիրքորոշումներն ավելի հոռետեսական են:

- Երիտասարդները համեմատաբար ավելի քիչ են կարևորում առողջապահական, բնապահպանական և կյանքի ընդհանուր որակի հիմնախնդիրները: Իգական սեռի ներկայացուցիչներն ավելի հաճախ են բնական աղետներն ընդգծում որպես հրատապ հիմնախնդիր, ի տարբերություն արական սեռի ներկայացուցիչների:
- Հայաստանի այլ քաղաք/գյուղ տեղափոխվել ավելի շատ ցանկանում են իգական, քան արական սեռի ներկայացուցիչները. տեղի հետ կապվածությունը ավելի թույլ է հատկապես քաղաքաբնակ իգական սեռի ներկայացուցիչների և ավելի ուժեղ՝ գյուղաբնակ արական սեռի ներկայացուցիչների շրջանում:
- Կյանքի որակի բարելավումը՝ որպես արտագաղթի հիմնական պատճառ են նշում առաջին հերթին ԱՄՆ մեկնել ցանկացողները (50,0%), երկրորդ տեղում են Եվրոպա (44,9%), երրորդ տեղում՝ ՌԴ (34,7%) մեկնողները:
- Նույն հերթականությունն է նաև ավելի լավ կրթություն ստանալու նպատակով մեկնողների դեպքում՝ ԱՄՆ՝ 24,2%, Եվրոպա՝ 18,0%, ՌԴ՝ 10,9%: Պատկերը փոխվում է աշխատանքի ավելի լավ հնարավորություն գտնելու ցանկությամբ մեկնողների դեպքում. առաջին տեղում ՌԴ-ն է (54,5%), երկրորդ տեղում՝ Եվրոպան՝ (37,1%), երրորդ տեղում՝ ԱՄՆ (25,8%):
- Արտագաղթելու համար արական սեռի ներկայացուցիչները նախապատվությունը առավել հաճախ տալիս են Ռուսաստանի Դաշնությանը, իսկ իգական սեռի ներկայացուցիչները՝ ԱՄՆ-ին:

Վերլուծություն

Կյանքով բավարարվածություն

Հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ երիտասարդների գերակշիռ մեծամասնությունը բավարարված է իր արտաքինով (97,7%), ընտանեկան կյանքով (92,0%), ինտիմ հարաբերություններով (86,4%), զբաղմունքով[5] (81,2%) (տե՛ս **գծապատկեր 5.1**):

5 Ընտանեկան կյանքով, ինտիմ հարաբերություններով և զբաղմունքով բավարարվածության մասին հարցերին պատասխանել են 18 տարեկանից բարձր տարիք ունեցողները (N=850):

Գծապատկեր 5.1: Որքանո՞վ եք Դուք բավարարված:



Երիտասարդների՝ ինտիմ հարաբերություններով, ընտանեկան կյանքով և զբաղմունքով բավարարվածությունները փոխադարձաբար համահարաբերակցվում են. որքան ավելի են նրանք բավարարված ընտանեկան կյանքով, այնքան ավելի են բավարարված նաև իրենց ինտիմ հարաբերություններով (Սպիրմանի rho=.491**) և զբաղմունքով (Սպիրմանի rho=.540**): Մյուս կողմից, որքան բավարարված են ինտիմ հարաբերություններով, այնքան բավարարված են նաև զբաղմունքով (Սպիրմանի rho=.393**):

Երիտասարդների կյանքով բավարարվածության ցուցանիշները վիճակագրորեն նշանակալի կապ ունեն նաև այլ փոփոխականների հետ: Մասնավորապես՝ որքան ավելի ցածր է ընտանիքի սոցիալ-տնտեսական կարգավիճակը, այնքան երիտասարդները ավելի քիչ են բավարարված իրենց ընտանեկան կյանքով (X^2=37.304, p<.001, Cramer's V=.127): Աշխատանք ունեցող երիտասարդներն ավելի շատ են բավարարված իրենց զբաղմունքով, քան չաշխատողները (X^2=22.360, p<.001, Cramer's V=.170): Որևէ կրթական հաստատությունում սովորողները ավելի քիչ են բավարարված իրենց ինտիմ հարաբերություններով, քան չսովորողները (X^2=10.931, p<.01, Cramer's V=.125): Որքան տարիքով ավելի մեծ են հարցվածները, այնքան ավելի բարձր է ինտիմ հարաբերություններով բավարարվածության աստիճանը (X^2=26.213, p<.001, Cramer's V=.138): Իրենց ինտիմ հարաբերություններով և ընտանեկան կյանքով ավելի բավարարված են ամուսնացածները, քան չամուսնացածները (համապատասխանաբար՝ X^2=94.806, p<.001, Cramer's V=.375, X^2=14.718, p=.002, Cramer's V=.140): Ընդ որում, իրենց ինտիմ հարաբերություններով ամենից քիչ են բավարարված չամուսնացած կանայք (26,3%) (տե՛ս **գծապատկեր 5.2**):

Գծապատկեր 5.2: Որքանո՞վ եք Դուք բավարարված Ձեր անձնական/ինտիմ փոխհարաբերություններով:



Հարցված երիտասարդների մեծամասնությունը լավատեսորեն է տրամադրված իր ապագայի նկատմամբ: Այն հարցին, թե ինչպիսի՞ն կլինի Ձեր ապագան 10

տարի հետո, 84,7%-ը պատասխանել է՝ ավելի լավ, քան հիմա, 9,6%-ը՝ նույնը, ինչ որ հիմա, 5,7%-ը՝ ավելի վատ, քան հիմա (տե՛ս **գծապատկեր 5.3**):

Գծապատկեր 5.3: Ըստ Ձեզ ինչպիսին կլինի Ձեր ապագան 10 տարի հետո:



Հարկ է նկատել, որ բացահայտվել է վիճակագրորեն նշանակալի կապ երիտասարդների ապագայի վերաբերյալ պատկերացումների և նրանց տարիքի, որևէ կրթական հաստատությունում սովորել/չսովորելու, ամսվա կտրվածքով անձնական կարիքների վրա կատարվող ծախսերի չափի և ընտանիքի տնտեսական կարգավիճակի միջև (տե՛ս **աղյուսակ 5.4**): Որքան տարիքով ավելի մեծ են հարցվածները, այնքան ավելի հոռետեսական են նրանց ապագայի հանդեպ դիրքորոշումները (X^2=33.296, p<.001, Cramer's V=.123): Որևէ կրթական հաստատությունում սովորողները (N=589) ավելի լավատեսական պատկերացումներ ունեն ապագայի նկատմամբ, քան չսովորողները (N=611), (X^2=33.131, p<.001, Cramer's V=.173): Որքան քիչ են երիտասարդները գումար ծախսում իրենց անձնական կարիքները բավարարելու համար, և որքան ցածր է երիտասարդների ընտանիքի սոցիալական կարգավիճակը, այնքան հոռետեսական են ապագայի հանդեպ նրանց դիրքորոշումները (համապատասխանաբար՝ X^2=23.439, p=.009, Cramer's V=.103, X^2=44.795, p<.001, Cramer's V=.143):

Որակական հետազոտությունը ցույց է տալիս, որ հատկապես արական սեռի ներկայացուցիչների շրջանում բազմաթիվ են վախերը՝ կապված Հայաստանում կայուն եկամուտ ունենալու հետ: Այս վախերն ուղղակիորեն կապվում են սոցիալական անարդարության ու մենաշնորհային տնտեսության հետ.

Աղյուսակ 5.4: Ըստ Ձեզ, ինչպիսին կլինի Ձեր ապագան 10 տարի հետո:

	Ավելի լավ, քան հիմա	Նույնը, ինչ որ հիմա	Ավելի վատ, քան հիմա
Տարիքը			
14-17 տարեկան	88.5%	9.1%	2.4%
18-21 տարեկան	87.5%	6.4%	6.0%
22-25 տարեկան	85.8%	10.2%	4.0%
26-29 տարեկան	74.9%	13.2%	11.9%
Ներկայումս սովորու՞մ եք որևէ կրթական հաստատությունում:			
Այո	90.8%	6.5%	2.7%
Ոչ	78.6%	12.7%	8.7%
Միջինում ամսական որքա՞ն գումար եք ծախսում Ձեր այլ անձնական կարիքների վրա:			
Մինչև 5000 ՀՀ դրամ	78.9%	21.1%	0%
5001 - 20 000 ՀՀ դրամ	80.3%	12.1%	7.5%
20 001 - 5 0000 ՀՀ դրամ	84.8%	9.9%	5.2%
50 001 - 100 000 ՀՀ դրամ	87.9%	7.5%	4.6%
100 001 - 200 000 ՀՀ դրամ	83.4%	8.6%	8.0%
200 001 ՀՀ դրամ և ավելի	92.0%	0%	8.0%
Նշվածից ո՞րն է լավագույնս ներկայացնում Ձեր տնային տնտեսության ֆինանսական վիճակը:			
Գումարը չի բավականացնում անգամ սնունդ գնելու համար	71.0%	12.9%	16.1%
Գումարը բավականացնում է սնունդ, բայց ոչ հագուստ գնելու համար	66.2%	18.5%	15.4%
Գումարը բավականացնում է սնունդ և հագուստ գնելու համար, բայց այն բավարար չէ թանկարժեք իրեր, գնելու համար	82.1%	10.8%	7.1%
Մենք կարող ենք մեզ թույլ տալ որոշակի թանկարժեք իրեր գնել (օրինակ՝ հեռուստացույց, կամ լվացքի մեքենա)	89.4%	7.1%	3.4%
Մենք կարող ենք մեզ թույլ տալ թանկարժեք իրեր գնել, գնալ ամառային հանգստի, մեքենա գնել, բայց չենք կարող բնակարան գնել	93.0%	6.2%	0.8%
Մենք կարող ենք նույնիսկ բնակարան գնել	84.6%	15.4%	0%

«Մեկս երազում ա լավ ավտո քշի, մյուսը երազում ա, որ լավ հեռախոս բռնի, մյուսը երազում ա լավ բիզնես ունենա ու էդ նպատակ չի, էդ ջահելների երազանքն ա, որովհետև չես կարա էլի Հայաստանում էդ ստեղծես, էդ քոնը էլի, չի լինում ուղղակի»

(ՖԽ, 14-20 տարեկաններ, արական, գյուղական համայնք)

«Հայաստանում 90 տոկոսը մենաշնորհ ա, որ տեսնում են՝ մի բան ուզում ես անես, տեսնում են՝ աճում ես, վերևից վզիդ ես տալիս, ասում են՝ մի քիչ շատ չաճա՞ի, արա՛...»

(ՖԽ, 21-29 տարեկաններ, արական, Երևան)

«Մարդը հասել ա էքսանի, բայց ֆինանսական և աջակցական բաներ չի տեսել պետությունից, որ կարողանա իր բիզնեսը ընդլայնի: Էդ փոքր բիզնեսը էգուց-մյուս օրը կարա դառնա մի հատ հսկայական գործարան, ունենա շատ աշխատող, դառնա աշխատատեղ, բայց չի լինում, ու մարդը դրանից հիասթափվում ա: Ուզում եմ ասեմ՝ հիասթափությունը շատ ա»

(ՖԽ, 21-29 տարեկաններ, արական, Երևան)

«Մտածում ենք, որ կարող ա, ասենք, լավ բան անենք մեր երկրի համար, բիզնես դնենք, բան անենք, որ տենց բիզնեսով պիտի ապրենք բան, բայց հարկերը շատ են, չենք կարա, մենք էլ էդքան փող չունենք, եղա՞վ, որ պետությունը չի թողում, որ դու ապրես»

(ՖԽ, 21-29 տարեկաններ, իգական, մարզային քաղաք)

«Պետք ա ինչ-որ ժամանակ հարկերը կրճատվեն՝ մի երկու տարով էլի, որ զարգացող տենց ֆիրմաները կամ զարգացող բիզնեսները աճեն»

(ՖԽ, 21-29 տարեկաններ, արական/իգական, Երևան):

Սոցիետալ ռիսկեր

Հարկ է ընդգծել, որ ապագայի նկատմամբ ընդհանուր լավատեսական տրամադրվածությունը չի նվազեցնում նաև ներկայի հրատապ խնդիրների բարձրաձայնման միտումը: Մասնավորապես, հայաստանյան երիտասարդությունը Հայաստանի համար հրատապ հիմնախնդիրների շարքում առավել ընդգծում է սոցիալ-տնտեսական և քաղաքական հիմնախնդիրները՝ պակաս կարևորելով առողջապահական, բնապահպանական և կյանքի որակի հիմնախնդիրները. մասնավորապես՝ երիտասարդները շատ հրատապ են համարում

գործազրկությունը (այդպես է կարծում հարցվածների 85,8%-ը), ղարաբաղյան հակամարտությունը (85,1%), աղքատության աճը (78,9%), արտագաղթը (77,9%), կոռուպցիան (77,0%), պատերազմի վտանգը (65,8%), շրջակա միջավայրի աղտոտումը (51,8%), կյանքին սպառնացող հիվանդությունների առկայությունը (51,1%), օրենքների պահպանման ոչ պատշաճ մակարդակը (49,3%) և այլն: Իսկ, օրինակ, կլիմայի փոփոխությունը շատ հրատապ է հարցվածների 19,9%-ի և բոլորովին ոչ հրատապ՝ 11,0%-ի համար (տե՛ս **գծապատկեր 5.5**):

Հարաբերականորեն ոչ հրատապ հիմնախնդիրները՝ ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի տարածման վտանգը, կյանքին սպառնացող հիվանդությունների առկայությունը, աշխատավայրում ոչ բավարար պաշտպանվածության մակարդակը, կլիմայի փոփոխությունը և բնական աղետները որպես հրատապ են ընդգծվում առավելապես գյուղաբնակների շրջանում և պակաս կարևոր են քաղաքաբնակների համար (համապատասխանաբար՝ X^2=25.506, p<.001, Cramer's V=.150, X^2=18.452, p<.001, Cramer's V=.125, X^2=14.101, p=.003, Cramer's V=.110, X^2=26.023, p<.001, Cramer's V=.148) (տե՛ս **աղյուսակ 5.6**): Ընդ որում, կյանքին սպառնացող հիվանդությունների առկայությունը և կլիմայի փոփոխությունը/բնական աղետները՝ որպես հրատապ հիմնախնդիրներ, ավելի ընդգծվում են իգական սեռի ներկայացուցիչների կողմից և պակաս չափով են այդպիսին դիտարկվում արական սեռի ներկայացուցիչների կողմից (համապատասխանաբար՝ X^2=27.450, p<.001, Cramer's V=.153, X^2=7.867, p<.05, Cramer's V=.081):

Գծապատկեր 5.5: Ըստ Ձեզ որքանով են նշված հիմնախնդիրները հրատապ հայաստանյան հասարակության համար:


Կանգին տպատրաստող հիվանդությունների առկայությունը
3,1%
15,1%
30,8%
51,1%
Օրենքների պահպանումն ոչ պատշաճ մակարդակը
2,1%
10,4%
38,2%
49,3%
Փողոցային հանցագործությունները
4,0%
17,2%
36,2%
42,6%
ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի տարածման վտանգը
5,1%
25,8%
37,3%
31,8%
Ոչ բավարարվածություն Միավորումը
12,1%
26,9%
37,6%
23,4%
Կլիմայի փոփոխությունը և բնական աղետները
11,0%
33,7%
35,4%
19,9%
Շատ հրատապ
Որոշ չափով հրատապ
Քիչ հրատապ
Բոլորովին ոչ հրատապ

Աղյուսակ 5.6: Ըստ Զեզ, որքանո՞վ են նշված հիմնախնդիրները հրատապ հայաստանյան հասարակության համար

	Շատ հրատապ	Որոշ չափով հրատապ	Քիչ հրատապ	Բոլորովին ոչ հրատապ
ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի տարածման վտանգը				
քաղաք	26.8%	38.2%	28.8%	6.1%
գյուղ	40.1%	35.8%	20.5%	3.5%
	31.8%	37.3%	25.7%	5.1%
Կյանքին սպառնացող հիվանդությունների առկայությունը				
քաղաք	46.3%	33.5%	16.6%	3.7%
գյուղ	59.0%	26.3%	12.7%	2.0%
	51.0%	30.8%	15.1%	3.1%
Աշխատավայրում ոչ բավարար պաշտպանվածության մակարդակը				
քաղաք	21.1%	37.7%	26.6%	14.6%
գյուղ	27.4%	37.5%	27.1%	8.0%
	23.4%	37.6%	26.8%	12.1%
Կլիմայի փոփոխությունը և բնական աղետները				
քաղաք	15.8%	35.0%	37.3%	11.8%
գյուղ	26.7%	36.2%	27.4%	9.7%
	19.9%	35.5%	33.6%	11.0%

Բացահայտվել է վիճակագրորեն նշանակալի կորելացիոն կապ ներկայի որոշ հրատապ հիմնախնդիրների ընդգծման և երիտասարդների տարիքի, անձնական կարիքների համար կատարվող ծախսերի չափի, կրթական մակարդակի և աշխատանքային զբաղվածության միջև (տե՛ս **աղյուսակ 5.7**): Որքան տարիքով ավելի մեծ են հարցվածները, այնքան ավելի են ընդգծվում գործազրկությունը, աղքատության աճը, արտագաղթը, կաշառակերությունը, օրենքների պահպանման ոչ պատշաճ մակարդակը՝ որպես հրատապ հասարակական հիմնախնդիրներ, այնինչ շրջակա միջավայրի աղտոտումը որպես հրատապ խնդիր է ընկալվում ավելի ցածր տարիքային խմբի շրջանում: Որքան բարձր են երիտասարդների անձնական կարիքների վրա կատարվող ծախսերը, այնքան նրանք որպես հրատապ հասարակական հիմնախնդիր են դիտարկում արտագաղթը, կաշառակերությունը, օրենքների պահպանման ոչ պատշաճ մակարդակը, և ընդհակառակը՝ որքան ցածր են երիտասարդների անձնական կարիքների վրա կատարվող ծախսերը, այնքան նրանք որպես հրատապ հասարակական հիմնախնդիր են դիտարկում փողոցային հանցագործությունները, աշխատավայրում ոչ

բավարար պաշտպանվածության մակարդակը: Որքան բարձր է երիտասարդների կրթական մակարդակը, այնքան նրանք որպես հրատապ հասարակական հիմնախնդիր են դիտարկում գործազրկությունը, աղքատության աճը, արտագաղթը, կաշառակերությունը, օրենքների պահպանման ոչ պատշաճ մակարդակը, և ընդհակառակը՝ որքան ցածր է կրթական մակարդակը, այնքան ընդգծվում են շրջակա միջավայրի աղտոտման և փողոցային հանցագործությունների հրատապությունը: Աշխատանք ունեցող երիտասարդները առավել հակված են որպես հրատապ հասարակական հիմնախնդիր ընդգծել աղքատության աճը, արտագաղթը, կաշառակերությունը, օրենքների պահպանման ոչ պատշաճ մակարդակը, և ընդհակառակը՝ չաշխատող երիտասարդները առավել հակված են ընդգծել փողոցային հանցավորության և աշխատավայրում ոչ բավարար պաշտպանվածության մակարդակի հրատապությունը:

Աղյուսակ 5.7

Սպիրմանի rho=	Տարիքը	Անձնական ծախսերը	Կրթական մակարդակը	Աշխատանքային գբաղվածությունը
Գործազրկությունը	-.171**		-.139**	
Աղքատության աճը	-.219**		-.178**	.103**
Արտագաղթը	-.120**	-.100**	-.117**	.136**
Կաշառակերությունը	-.119**	-.093**	-.100**	.100**
Շրջակա միջավայրի աղտոտումը	.063*		.069*	
Օրենքների պահպանման ոչ պատշաճ մակարդակը	-.128**	-.132**	-.120**	.105**
Փողոցային հանցավորությունը		.076**	.075**	-.078**
Ոչ բավարար պաշտպանվածության մակարդակը աշխատավայրում		.093**		-.095**

Մասնավորեցնելով վերը ներկայացված քանակական տվյալները՝ ֆոկուս խմբային հետազոտության տվյալները ցույց են տալիս, որ երիտասարդների կողմից որպես հիմնական սոցիետալ ռիսկեր են ընկալվում անկայուն, անբարենպաստ օրենսդրական դաշտը/օրենքների պահպանման ոչ պատշաճ մակարդակը, մենաշնորհային տնտեսության համատեքստում փոքր և միջին բիզնեսի զարգացման ոչ նպաստավոր պայմանները, սոցիալական անարդարությունը, սոցիալական միջավայրի կողմից երիտա-

սարդոների կենսակերպի վերահսկողությունը (հատկապես գյուղական համայնքներում ու մարզային քաղաքներում), ինչպես նաև ապագայի նկատմամբ անորոշությունը: Որպես կանոն օրենսդրական դաշտի անկայունությունը բարձրաձայնված հիմնական վախերից է.

> *«Օրինակ՝ մենք օրենքի փոփոխություններից շատ ենք նեղվում, ներվայնանում, որովհետև մի բանին ընտելանում ես, հետո մեկ էլ փոխում են, նորից հարմարվում ենք»*
>
> (ՖԽ, 21-29 տարեկաններ, իգական, մարզային քաղաք)

> *«Մենակ պահանջում են, ոչ միայն տնօրինությունը, ղեկավարությունը, այլ հենց օրենքը»*
>
> (ՖԽ, 21-29 տարեկաններ, իգական, գյուղական համանք)

> *«Պետությունը [կառավարությունը] փոխվեց, կասեն վերջ, նոր օրենք ենք հանում, հները սաղ ջնջում ենք»*
>
> (ՖԽ, 21-29 տարեկաններ, արական, գյուղական համայնք):

Օրենսդրական դաշտի նկատմամբ անվստահության դրսևորումը հատուկ է արտահայտվում կենսաթոշակային բարեփոխումների շուրջ քննարկումների ընթացքում.

> *«Օրինակ՝ մարդը կարող է 63 տարի չապրի ու այդ փողը կգնա կկորի»*
>
> (ՖԽ, 14-20 տարեկաններ, իգական, Երևան)

> *«Պետության կողմից հերթական հարվածը ոնց որ լինի [կենսաթոշակային բարեփոխումը], եթե մարդը մինիմալ աշխատավարձ ա ստանում՝ մուտ 80.000 դրամ կամ 60.000 դրամ, տրամաբանական չի էլի, որ մարդ կուտակային կենսաթոշակային համակարգին կողմ լինի, որ հետո ինչ-որ պետությունը իր ծերությունը պիտի ապահովի: Հետո մարդ էդքան աշխատելով կարող ա չհասնի չէ՞ էդ տարիքին»*
>
> (ՖԽ, 21-29 տարեկաններ, իգական, մարզային քաղաք)

> *«Օրինակ, դուք ինչ-որ մի բան կամ երկարաժամկետ հատվածով գումար եք դնում ավանդ մի 15-20 տարով, դուք վստա՞հ եք, որ էդ բանկը մինչև վերջ կաշխատի, էդ նույնն էլ էս կենսաթոշակային համակարգն ա, չի լինի, երկրորդն էլ ի՞նչ գիտես [ծիծաղ]՝ հետո ի՞նչ կլինի»*
>
> (ՖԽ, 21-29 տարեկաններ, արական/իգական, Երևան):

Այստեղ անվստահություն է արտահայտվում բանկային համակարգի նկատմամբ, այսինքն՝ կենսաթոշակի կուտակման կամ առհասարակ դրամական կապիտալի կուտակման տեսանկյունից պետության ու բանկերի նկատմամբ անվստահություն է արտահայտվում:

Միգրացիա և խտրականության փորձառություն

Հարցված երիտասարդների 27,3%-ը ցանկանում է լքել հարազատ բնակավայրը՝ տեղափոխվելով Հայաստանի այլ քաղաք կամ գյուղ (տե՛ս **գծապատկեր 5.8**), իսկ նրանց 30,6%-ը պատրաստվում է լքել Հայաստանը (տե՛ս **գծապատկեր 5.9**):

Գծապատկեր 5.8: Կցանկանա՞ք տեղափոխվել/վերաբնակվել Հայաստանի այլ քաղաք/գյուղ:



Գծապատկեր 5.9: Պատրաստվու՞մ եք հեռանալ Հայաստանից:



Գծապատկեր 5.10: Կցանկանաք տեղափոխվել/վերաբնակվել Հայաստանի այլ քաղաք/գյուղ:

Մարզաբնակ



Երևանաբնակ



● Այո ● Ոչ

Հայաստանի սահմաններում բնակավայրը փոխել ցանկացողները մեծ մասամբ մարզաբնակ երիտասարդներն են. եթե Երևանից դեպի մարզեր տեղափոխվել ցանկացողները կազմում են (N=424) ընդամենը 9,9%, ապա մարզերից Երևան տեղափոխվել ցանկաղոցները (N=776) կազմում են 37,4% (տե՛ս **գծապատկեր 5.10**): Հետևաբար՝ ներքին միգրացիայի պատճառները ներկայացնելիս պետք է այդ միգրացիան դիտարկել հիմնականում որպես տեղաշարժ մարզային քաղաքներից և գյուղերից դեպի մայրաքաղաք (տե՛ս Մանուկյան, 2012, էջ 39):

Հարկ է ընդգծել, որ Հայաստանի այլ քաղաք/գյուղ տեղափոխվել ավելի շատ ցանկանում են իգական, քան արական սեռի ներկայացուցիչները (X^2=17,508, p<.001, Cramer's V=.122): «Մարդ պետք է միշտ իր ծննդավայրում ապրի» դատողության գնահատականները ցույց են տալիս, որ ընդհանուր առմամբ ծայրահեռ և միջինացված դիրքորոշումները հավասարապես են բաշխված (լիովին համաձայն են 21,4%-ը, բոլորովին համաձայն չեն 19,7%-ը), (տե՛ս **գծապատկեր 5.11**): Ընդ որում, բացահայտվել է վիճակագրորեն նշանակալի կապ այս փոփոխականի և հարցված երիտասարդների սեռի ու բնակության վայրի միջև (X^2=25.326, p=.003, Cramer's V=.146, X^2=36.955, p<.001, Cramer's V=.176). կարելի է պնդել, որ տեղի հետ կապվածությունը առավել թույլ է հատկապես քաղաքաբնակ իգական սեռի ներկայացուցիչների մոտ և առավել ուժեղ գյուղաբնակ արական սեռի ներկայացուցիչների մոտ:

Գծապատկեր 5.11: Խնդրում եմ գնահատել/Մարդ պետք է միշտ ապրի իր ծննդավայրում. (1-ը նշանակում է, որ բոլորովին համաձայն չեք նշված դատողության հետ, 10-ը՝ լիովին համաձայն եք)



Գծապատկեր 5.12: Երբևէ խտրական վերաբերմունք զգացե՞լ եք պայմանավորված Ձեր ...



Գյուղից քաղաք տեղափոխվելու մտադրությունը պայմանավորող գործոնների շարքում կարելի է դիտարկել գյուղաբնակների՝ բնակավայրով պայմանավորված խտրական վերաբերմունք զգալու հանգամանքը: Հնադյան նրան, որ ըստ հետազոտության տվյալների, հարցված երիտասարդների փոքր մասն է երբևիցե որևէ խտրականություն զգացել իր նկատմամբ՝ պայմանավորված տարբեր հանգամանքներով (կրթական մակարդակով՝ 42,9%, սոցիալ-տնտեսական կարգավիճակով՝ 39,1%, բնակավայրի տեսակով՝ 25,4%, տարածաշրջանային պատկանելությամբ՝ 20,9%, սեռով՝ 18,7%, կուսակցական պատկանելությամբ՝ 12,3%, ամուսնական կարգավիճակով՝ 11,9%, որևէ քաղաքացիական շարժման անդամակցելով՝ 10,8% (տե՛ս **գծապատկեր 5.12**), այդուհանդերձ բացահայտվել է վիճակագրորեն նշանակալի կապ այն հանգամանքի հետ, որ իրենց կրթական մակարդակով, սոցիալ-տնտեսական կարգավիճակով, սեռով, տարածաշրջանային պատկանելությամբ/ծագումով և բնակության վայրով խտրական վերաբերմունք գյուղաբնակները զգացել են ավելի հաճախ, քան քաղաքաբնակները (համապատասխանաբար՝ X^2=14,750, p=.005, Cramer's V=.111,

X^2=20,625, p<.001, Cramer's V=.132, X^2=17,125, p=.002, Cramer's V=.120, X^2=22,708, p<.001, Cramer's V=.138, X^2=33,163, p<.001, Cramer's V=.167):

Գյուղական համայնքներում իրականացված ֆոկուս խմբային քննարկումների ընթացքում հաճախ շոշափվում էր հագուստի թեման՝ որպես երիտասարդների ինքնաներկայացման ու տպավորություն թողնելու, ինչպես նաև ծնողների ու ընտանիքի այլ անդամների կողմից նրանց կենսակերպի վերահսկման կարևոր գործոն: Պարզվում է, որ հագուստը, ըստ ֆոկուս խմբերին մասնակցած երիտասարդների, հայաստանյան հասարակության մեջ տվյալ անձի սոցիալական վիճակը ներկայացնելու միջոց է: Քննարկումների ընթացքում բարձրաձայնվեցին դեպքեր, երբ գյուղ-քաղաք միջավայրում հագուստը ընկալվում է որպես ծաղրի կամ սոցիալ-տնտեսական վիճակի վրա հենվող խտրականության պատճառ.

> *«Օրինակ, որ գյուղացին գնում ա քաղաք իրա ինչ-որ բարեկամի տանը մնալու ու էնպես ա իրան պահում, որ հետո չընկնի իրանց նման մտածի, իրանց նման հագնվի, որ կարողանան իրար հետ շփվեն, ավելի ամուր լինի կապը»*
>
> (ՖԽ, 14-20 տարեկաններ, իգական, գյուղական համայնք):

Հատկապես գյուղաբնակ/մարզային քաղաքների արական սեռի ներկայացուցիչների շրջանում որպես տնտեսական վիճակի ցուցիչ էր համարվում մեքենան, և այն երիտասարդները, ովքեր չեն կարող իրենց թույլ տալ լավ մակնիշի մեքենա վարել, իրենց ավելի ստորադաս դիրքում են զգում հասարակության մեջ: Դա է բացահայտում հետևյալ մեջբերումը.

> *«Տհաճ ա, որ մեր մեջ ցուցամոլություն կա, այսինքն՝ իմ ջիպը ավելի լավը լինի, քան քո ջիպը, տենց...»*
>
> (ՖԽ, 21-29 տարեկաններ, արական, մարզային քաղաք):

Եթե հաշվի առնենք այն հանգամանքը, որ հարցված երիտասարդների 14,5%-ը խտրականություն է զգացել ըստ էթնիկ պատկանելության (հարցմանը մասնակցած այլազգի երիտասարդները ընդամենը 2,3% են կազմում), թերևս կարելի է ենթադրել, որ հարցվածներն այդ խտրականությանը առավելապես բախվել են Հայաստանից դուրս գտնվելու ժամանակ:

Երիտասարդներն առանձնացնում են ներքին և արտաքին միգրացիայի հիմնական երեք պատճառ. 1) կյանքի որակը բարձրացնելու ցանկությունը (ներքին միգրացիա՝ 32,9%, արտաքին միգրացիա՝ 35,6%), 2) աշխատանքի անցնելու ավելի լավ հնարավորությունը (ներքին միգրացիա՝ 28,9, արտաքին միգրացիա՝ 30,8%), 3) ավելի լավ կրթություն ստանալու ցանկությունը (ներքին միգրացիա՝ 16,1%, արտաքին միգրացիա՝ 12,6%) (տե՛ս **աղյուսակ 5.13**):

Աղյուսակ 5.13

	Ո՞րն է տեղափոխվելու/վերաբնակվելու ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՏՃԱՌԸ:	Ո՞րն է այլ երկիր տեղափոխվելու մտադրության ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՏՃԱՌԸ:
Կյանքի որակը բարձրացնելու ցանկությունը	32.9	35.6
Աշխատանքի անցնելու ավելի լավ հնարավորությունը	28.9	30.8
Ավելի լավ կրթություն ստանալու ցանկությունը	16.1	12.6
Սեփական բիզնեսը սկսելու ավելի լայն հնարավորությունը	6.5	4.2
Ինձ համար կարևոր մարդկանց ավելի մոտ լինելու ցանկությունը	3.7	1.4
Ուրիշների կարծիքից կախված չլինելը	2.2	1.1
Ինքնահիրացվելու և գաղափարներս իրացնելու ցանկությունը	3.7	1.4
Իմ ներկայիս բնակավայրում (քաղաք/գյուղ) առկա կոնֆլիկտներից խուսափելու ցանկությունը	1.9	-
Ինձ ավելի ազատ զգալու ցանկությունը	-	0.3
Ավելի արժանապատիվ կյանքով ապրելու ցանկությունը	-	6.4
Մշակութային ավելի մեծ բազմազանություն ունենալու ցանկությունը	-	2.5
Ավելի անվտանգ/ապահով պետությունում ապրելու ցանկությունը	-	2.2
Այլ	4.0	1.4
Ընդամենը՝	100	100

Թե՛ արտաքին, թե՛ ներքին միգրացիայի հիմնական պատճառները փոփոխվում են՝ կախված հարցված երիտասարդների տարիքից (տե՛ս **աղյուսակ 5.14**). մասնավորապես՝ 14-17 տարեկանների 38,1%-ի համար ներքին տեղափոխությունների հիմնական պատճառն ավելի լավ կրթություն ստանալն է, 21,9%-ի համար՝ կյանքի որակը բարձրացնելու ցանկությունը և 15,2%-ի համար՝ աշխատանքի անցնելու ավելի լավ հնարավորությունը, Հայաստանից հեռանալու հիմնական պատճառը կյանքի որակը բարձրացնելու ցանկությունն է 30,7%-ի համար, աշխատանքի անցնելու ավելի լավ հնարավորությունը՝ 24,8%-ի և ավելի լավ կրթություն ստանալը՝ 22,8%-ի համար: 18 տարեկանից բարձր տարիքի երիտասարդների համար միգրացիայի հիմնական պատճառների շարքում առավել ընդգծվում են կյանքի որակը բարելավելու ցանկությունն ու աշխատանքի անցնելու ավելի լավ հնարավորությունը: 18-21 տարեկանների շրջանում, ի տարբերություն ավելի ցածր տարիքի երիտասարդների, ոչ թե ներքին, այլ արտաքին միգրացիան է դիտարկվում որպես ավելի լավ կրթություն ստանալու հնարավորություն:

Հայաստանից հեռանալու հիմնական պատճառները վիճակագրորեն նշանակալի կապի մեջ են հարցվածների սեռի (X^2=26,934, p=.005, Cramer's V=.275) և որևէ կրթական հաստատությունում սովորելու (X^2=51,982, p<.001, Cramer's V=.382) փոփոխականների հետ: Եթե իգական սեռի ներկայացուցիչները արտագաղթը դիտարկում են որպես ավելի լավ կրթություն ստանալու հնարավորություն, ապա արական սեռի ներկայացուցիչները հատկապես ընդգծում են արտագաղթի՝ աշխատանքի անցնելու ավելի լավ հնարավորությունները: Եթե ներկայումս որևէ կրթական հաստատությունում սովորողներն արտագաղթը դիտարկում են որպես ավելի լավ կրթություն ստանալու հնարավորություն, ապա չսովորողները հատկապես ընդգծում են արտագաղթով պայմանավորված՝ կյանքի որակը բարելավելու և աշխատանքի անցնելու ավելի լավ հնարավորությունները: Պոտենցիալ միգրանտների ամենամեծ մասը՝ 36,3%-ը, որպես թիրախային երկիր նախընտրում է Ռուսաստանը, 23,4%-ը՝ ԱՄՆ, 13,2%-ը՝ Ֆրանսիան, 9,9%-ը՝ Անգլիան և Գերմանիան (տե՛ս **գծապատկեր 5.15**):

Աղյուսակ 5.14

	14–17 տարեկան		18–21 տարեկան		22–25 տարեկան		26–29 տարեկան	
	Միգրացիա ներքին/արտաքին		Միգրացիա ներքին/արտաքին		Միգրացիա ներքին/արտաքին		Միգրացիա ներքին/արտաքին	
Կյանքի որակը բարելավելու ցանկությունը	21.9%	30.7%	28.8%	30.5%	46.9%	35.1%	38.1%	48.1%
Աշխատանքի անցնելու ավելի լավ հնարավորությունը	15.2%	24.8%	34.2%	24.4%	34.6%	38.1%	38.1%	36.3%
Ավելի լավ կրթություն ստանալու ցանկությունը	38.1%	22.8%	11.0%	20.7%	3.7%	4.1%	1.6%	1.3%
Սեփական բիզնեսը սկսելու ավելի լայն հնարավորությունը	8.6%	7.7%	5.5%	5.0%	7.4%	2.1%	3.2%	1.3%
Ինձ համար կարևոր մարդկանց ավելի մոտ լինելու ցանկությունը	2.9%	1.0%	4.1%	2.4%	3.7%	2.0%	4.8%	
Ուրիշների կարծիքից կախված չլինելը	2.9%	2.0%	4.1%	2.4%	1.2%			
Ինքնաիրացվելու և գաղափարներս իրացնելու ցանկությունը	5.7%	2.0%	6.8%	3.7%			1.6%	
Իմ ներկայիս բնակավայրում (քաղաք/գյուղ) առկա կոնֆլիկտներից խուսափելու ցանկությունը	1.9%		2.7%		2.5%			
Ինձ ավելի ազատ զգալու ցանկությունը		1.0%						
Ավելի արժանապատիվ կյանքով ապրելու ցանկությունը		3.0%		4.9%		11.3%		6.5%
Մշակութային ավելի մեծ բազմազանություն ունենալու ցանկությունը		4.0%		1.2%		3.1%		1.3%
Ավելի անվտանգ/ապահով պետությունում ապրելու ցանկությունը				2.4%		2.1%		5.2%
Այլ	2.9%	1.0%	2.7%	2.4%		2.1%	12.7%	

Գծապատկեր 5.15: Ամենից շատ ո՞ւր կցանկանաք տեղափոխվել:



Հետաքրքիր է վերոհիշյալ երկրներում հայկական համեմատաբար մեծ և ազդեցիկ Սփյուռքի գոյության փաստի հաշվառումը: Այդ երկրների սփյուռքահայ համայնքներն իրենց չափերով գրեթե արտահայտում են հարցվածների պատասխաններից ստացած համամասնությունները (ամենաշատ թվով սփյուռքահայեր բնակվում են Ռուսաստանի Դաշնությունում, այնուհետև՝ ԱՄՆ-ում, Ֆրանսիայում (տե՛ս International Labour Organization, 2009, էջ 6-8; Panossian, 2003, էջ 140-169):

Կախված սեռից՝ արտագաղթի ուղղությունները տարբերվում են (X^2=18,267, p<.001, Cramer's V=.231). մասնավորապես՝ արական սեռի ներկայացուցիչները նախապատվությունը առավել տալիս են Ռուսաստանի Դաշնությանը, իսկ իգական սեռի ներկայացուցիչները՝ ԱՄՆ-ին (տե՛ս **գծապատկեր 5.16**):

Եթե փորձենք փոխկապակցել միգրացիայի հիմնական ուղղություններն ու հիմնական պատճառները, ապա կարող ենք պնդել, որ կյանքի որակի բարելավումը որպես հիմնական պատճառ են նշում առաջին հերթին ԱՄՆ մեկնել ցանկացողները (50,0%), երկրորդ տեղում են Եվրոպա մեկնողները (44,9%), երրորդ տեղում՝ ՌԴ մեկնողները (34,7%): Նույն հերթականությունն է նաև ավելի լավ կրթություն ստանալու նպատակով մեկնողների դեպքում՝

ԱՄՆ՝ 24,2%, Եվրոպա՝ 18,0%, ՌԴ՝ 10,9%: Պատկերը փոխվում է աշխատանքի ավելի լավ հնարավորություն գտնելու նպատակով մեկնողների դեպքում. առաջին տեղում ՌԴ-ն է (54,5%), երկրորդ տեղում՝ ԱՄՆ-ը (25,8%), երրորդ տեղում՝ Եվրոպան (37,1%) (տե՛ս **գծապատկեր 5.17**):

Գծապատկեր 5.16: Ամենից շատ ուր կցանկանաք տեղափոխվել:



Արտագաղթելու ցանկություն ունեցողների (N=359) 49,9%-ը դեռ ոչինչ չի ձեռնարկել երկրից հեռանալու համար: Երիտասարդ պոտենցիալ միգրանտների 29,9%-ն արդեն կապ է հաստատել արտերկրի իր բարեկամների և ընկերների հետ, ընդ որում, այդպես է վարվել գյուղաբնակ հարցվածների 35,6%-ը, քաղաքաբնակների՝ 27,5%-ը: Այսինքն՝ նրանք արտագաղթը կազմակերպելու համար ապավինում են հայկական վերազգային միգրացիոն ցանցերի օգնությանը: Բարեկամների և ընկերների վերազգային ցանցերը կարևոր դերակատարություն ունեն այս գործում (Մանուկյան, 2013, էջ 20-29):

Հարցվածների 13,8%-ը գումար է կուտակում արտագաղթը կազմակերպելու համար, 8,2%-ը մասնակցում է երիտասարդական ծրագրերին և նախաձեռնություններին՝ հույս ունենալով այդ ձևով լուծել Հայաստանից հեռանալու խնդիրը: Միգրացիային հակված երիտասարդ հարցվածների 5,9%-ն ակտիվորեն շփվում է արտասահմանցիների հետ, 5,6%-ը կապ է հաստատել հնարավոր գործատուների հետ, ևս 5,6%-ն արդեն կապի մեջ է համապատասխան դեսպանատան հետ, 5,0%-ը կապ է հաստատել համապատասխան

համալսարանների հետ: Հարկ է ընդգծել, որ հնարավոր գործատուների և/կամ ընկեր/բարեկամների հետ կապ հաստատողների մեծամասնություն են կազմում (համապատասխանաբար՝ 68,4% և 50,5%) Ռուսաստանի Դաշնություն տեղափոխվել ցանկացողները (տե՛ս **գծապատկեր 5.18**):

Գծապատկեր 5.17:Ո՞րն է երկրից տեղափոխվելու մտադրության ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՏՃԱՌԸ: Ամենից շատ ուր կցանկանաք տեղափոխվել:



Գծապատկեր 5.18: Ինչ գործողություններ եք ձեռնարկում երկրից գնալու համար:/ Ամենից շատ ուր կցանկանաք տեղափոխվել:



Ըստ ֆոկուս խմբերից ստացված տվյալների, ինչպես կրթության, այնպես էլ այլ հասարակություններում, օրինակ՝ Ռուսաստանում, հասարակական կյանքում ազատ ու ինքնուրույն լինելու հեռանկարները գրավում են երիտասարդության ներկայացուցիչներին.

> *«Ընդեղ [Ռուսաստանում] սաղ զարգացած են, գնում ես, կյանք ես տեսնում, մեկը էստեղ, որ ծիսող աղջիկ են տեսնում, ասում են՝ էս ինչ ա, Ռուսաստան տենց բան չկա, էստեղ ով ինչ ուզում, անում ա»*
>
> (ՖԽ, 21-29 տարեկաններ, արական, գյուղական համայնք):

Արտագաղթը ֆոկուս խմբերի բոլոր մասնակիցների կողմից քննարկվում էր որպես Հայաստանի իրականության հետ կապված ցավալի թեմա: Այս տեսանկյունից, ըստ ֆոկուս խմբերի մասնակիցների, սոցիալ-տնտեսական հիմնախնդիրների լուծումը հրամայական է: Արտագաղթը քննարկվում է նաև որպես Հայաստանի համար առաջնային վտանգ ներկայացնող երևույթ.

> *«Հատկապես երիտասարդները շատ են գնում, ոմանք գնում են արտագնա աշխատանքի և վերադառնում են, ոմանք նաև ընտանիքներով են գնում և չեն գալիս, կա, որ ընդհանրապես կապ չկա ստեղի հետ»*
>
> (ՖԽ, 21-29 տարեկաններ, իգական, մարզային քաղաք):

Գրեթե բոլոր մասնակիցները գտնում են, որ արտագաղթի հիմնական պատճառը սոցիալական անապահովությունն է, բավարար աշխատատեղերի ու աշխատանքային պայմանների բացակայությունը.

> *«Ապրուստ չկա, ասում ես՝ գնամ, փող տուն բերեմ, գնամ, աշխատանք գտնեմ Ռուսաստանում կամ ուրիշ երկրում, փող կաշխատեմ, իմ ընտանիքը կկարողանա ապրի, դրա համար էլ արտագաղթ ա լինում»*
>
> (ՖԽ, 21-29 տարեկաններ, արական, մարզային քաղաք)

> *«Հիմնականում էդ սոցիալական դրույթն ա հային դրդում գնալ, բայց եթե լիներ լավ աշխատատեղեր, լիներ լավ կառավարություն, որը կապահովեր լավ աշխատանքով, ես վստահ եմ, որ իրանք [արտագաղթողները] հաստատ իրանց տունը չէին թողի»*
>
> (ՖԽ, 21-29 տարեկաններ, իգական, գյուղական համայնք):

Քննարկումների շրջանակներում, արտագաղթի հիմնական թեմային զուգահեռ ուշադրության էր արժանանում ընտանիքի թեման.

> *«Արտագաղթը պանդխտություն է, քանի որ շատ մարդիկ լքում են հայրենիքը ապրուստ վաստակելու պատճառով, քանդվում են ընտանիքներ, կան մարդիկ, ովքեր լքում են իրենց ընտանիքները ու վերջնականապես հեռանում են»*
>
> (ՖԽ, 21-29 տարեկաններ, իգական, մարզային քաղաք)

> *«Դե վատ ա, որ հայրիկները, պապիկները իրենց երեխաներին, իրենց ընտանիքը թողնում են և իրենք մեկնում են աշխատանքի, իսկ դա արդեն երեխայի համար, դա հայրիկների համար մեծ հոգեկան ապրումներ են, նրանք՝ իրանց ընտանիքից հեռու...»*
>
> (ՖԽ, 14-20 տարեկաններ, իգական, գյուղական համայնք):

Որակական տվյալները ցույց են տալիս, որ արտագաղթի երևույթը նպաստում է նաև ապագայի հետ կապված հոռետեսական սցենարների ուրվագծմանը.

> *«Արտագաղթի պատճառը աշխատատեղերի պակասն է, ու եթե հայերը մնային Հայաստանում, թեկուզ՝ հայտնի հայերը՝ ճարտարապետները, արվեստագետները, մնային Հայաստանում, տնտեսությունը զարգացած կլիներ, ավելի գեղեցիկ շինություններ կունենայինք, իսկ հիմա ոչինչ չկա»*
>
> (ՖԽ, 14-20 տարեկաններ, իգական, Երևան)

> *«Ճիշտ է, դժվար է այստեղ ապրելը, ընտանիք պահելը, բայց եթե այդպես մտածենք, բոլորն էլ կգնան ու մարդ չի մնա Հայաստանում»*
>
> (ՖԽ, 21-29 տարեկաններ, իգական, մարզային քաղաք)

> *«Ուղեղների հոսք է տեղի ունենում. մարդիկ, ովքեր հրաշալի տիրապետում են իրենց մասնագիտությանը, բնականաբար, ուրիշ տեղ ավելի բարձր են վարձատրվում ու մնում են այդտեղ, ես չեմ մեղադրում»*
>
> (ՖԽ, 21-29 տարեկաններ, արական, Երևան)

> *«Եթե ընտանիքումդ չկա ֆինանսական խնդիր, դու դրան հայրենասիրորեն ես վերաբերվում, որ պետք չէ գնալ, արտագաղթը վատ բան է, եթե բոլորը գնան, ո՞վ կմնա, բայց եթե քո ընտանիքում կա խնդիր, որ չես կարողանում*

ուսմանդ վարձը տալ կամ քեզանից շատ ավելի լավ են հագնվում, ապա էլ հաշվի չես առնում արտագաղթի հետևանքները»

(ՖԽ, 21-29 տարեկաններ, իգական, մարզային քաղաք):

Կապված արտագաղթի ուղղությունների հետ՝ հատկապես գյուղական ու մարզային քաղաքներում ֆոկուս խմբերի մասնակիցները հիմնականում նշում էին Ռուսաստանը, երբեմն՝ ԱՄՆ-ը, նաև՝ Ֆրանսիան և Գերմանիան՝ որպես եվրոպական երկներ.

«Նայած՝ երիտասարդությունն ի՞նչ նպատակ ունի, եթե կրթության նպատակով են գնում, հիմնականում՝ Եվրոպա, իսկ աշխատելու համար՝ Ռուսաստան, այսինքն՝ նայած, թե ի՞նչ մասնագիտական որակներ ունի, ի՞նչ աշխատանք է փնտրում դրսում, միշտ չէ, որ ցանկությունները, հնարավորությունները հաշվի են առնվում, Ռուսաստան ավելի հեշտ է գնալ: Մարդիկ կան, որ ուզում են գնալ Ամերիկա, այնտեղ ավելի շատ է աշխատավարձը, բայց հնարավորություն չունեն»

(ՖԽ, 21-29 տարեկաններ, իգական, մարզային քաղաք)

«Հիմնականում Ռուսաստան են գնում, սակայն այլ երկրներ էլ են ցանկանում գնալ՝ Ամերիկա, Ֆրանսիա, Գերմանիա, ու իմ ծանոթները գնացել են Ֆրանսիա՝ որպես փախստական, տեղավորվել են աշխատանքի, տուն են տվել իրանց, հիմա էլ օգնում են էնտեղից ստեղի հարազատներին, լինում է, որ ընտանիքները, կանայք էլ են գնում, բայց հատկապես տղամարդիկ են գնում»

(ՖԽ, 21-29 տարեկաններ, արական, գյուղական համայնք):

Երկրի ապագայի շուրջ հոռետեսական մտորումների համատեքստում ընդգծվում էին նաև Հայաստան-Ադրբեջան լարված պատերազմական հարաբերությունները.

«Պատերազմ պիտի լինի, լավ չի լինի էս երկիրը»

(ՖԽ, 21-29 տարեկաններ, արական/իգական, Երևան)

«Երևի բոլորս էլ ուզում ենք ապրել ավելի ապահով երկրում, պատերազմի փասրը ցավալի ա»

(ՖԽ, 21-29 տարեկաններ, իգական, մարզային քաղաք)

«Վախերի հետ կապված՝ համամիտ եմ էն մտքի հետ, որ ավելի շուտ անվտահության պահն ա, որ Հայաստանում ունես, կա պատերազմի ռիսկի գործոն, քանի որ կա Ղարաբաղի հարց»

(ՖԽ, 21-29 տարեկաններ, արական, մարզային քաղաք):

Քննարկում

Հետազոտության տվյալներն ընդգծում են մի կողմից՝ երիտասարդների վախերը անկայուն ապագայի և մենաշնորհային տնտեսական միջավայրի նկատմամբ, մյուս կողմից՝ անվստահությունն օրենքի իշխանության նկատմամբ: Այդ համատեքստում բարձրաձայնվում են սոցիետալ հիմնարար խնդիրներ՝ գործազրկություն, աղքատության աճ, արտագաղթ, կաշառակերություն, օրենքների պահպանման ոչ պատշաճ մակարդակ:

Ընդհանուր առմամբ, իրենց կենսական նախագծերի իրականացման ժամանակ երիտասարդներին հանդիպող սոցիետալ ռիսկերը պայմանավորված են հայաստանյան հասարակությունում տնտեսական, սոցիալական և մշակութային կապիտալի բաշխման առանձնահատկություններով: Հայաստանում մեծ է տարբերությունը առավել հարուստների և առավել աղքատների եկամուտների միջև, ինչը արտահայտվում է Ջինի գործակցով, որը 2008-ից մինչև 2014 թվականը աճել է (Social Snapshot and Poverty in Armenia, 2015): Իսկ տնտեսական կապիտալի նման ծայրահեղ անհավասար բաշխումը առաջացնում է մշակութային կապիտալի ձեռք բերման շանսերի անհավասարություն և հանգեցնում է սոցիալական կարգավիճակների բևեռացման և սոցիալական լարվածության (տե՛ս նաև Մանուկյան, 2014), այդ թվում նաև երիտասարդների շրջանում, քանի որ սոցիալ-տնտեսական կարգավիճակը հիմնարար է երիտասարդների կյանքում:

Իրենց ընտանեկան կյանքով չբավարարված երիտասարդներն ավելի ցածր տնտեսական և սոցիալական կապիտալի են տիրապետում: Նրանց դիրքորոշումները ապագայի հանդեպ ավելի հոռետեսական են: Կարևորվում է նաև մշակութային կապիտալը. որևէ կրթական հաստատությունում սովորողները ավելի լավատեսական պատկերացումներ ունեն ապագայի նկատմամբ, քան չսովորողները:

Թեև երիտասարդների մեծամասնությունը լավատեսորեն է տրամադրված իր ապագայի նկատմամբ, այդուհանդերձ նրանց տարիքի աճին զուգահեռ

աճում են նաև ապագայի հանդեպ հոռետեսական դիրքորոշումները: Առավել հասուն տարիքի երիտասարդների մոտ զբաղվածության բացահայտված հիմնախնդիրների ակտուալությունը ընդգծվել է նաև վերջին տարիներին իրականացված հետազոտություններում (Սերիեր, 2014):

Ապագայի հանդեպ անվստահությունը, աշխատանքի տեղավորվելու և հայրենիքում սեփական վիճակը բարելավելու հեռանկարի հանդեպ հավատ չունենալն արտագաղթի ընդհանուր պատճառներ են: Տնտեսական անկումը, չավարտված պատերազմը և ներքաղաքական լարվածությունը, անկայունությունն ու գոյության սպառնալիքը առաջացրել են ֆրուստրացիա, հիասթափություն՝ նպաստելով արտագաղթին: Ռուսաստանի Դաշնությունը, Ամերիկայի Միացյալ Նահանգները և Եվրոպան (հատկապես Ֆրանսիան) հայ երիտասարդների համար ներկայանում են որպես արտագաղթի թիրախ երկրներ (Aleksanyan, 2015, էջ 21): Արտագաղթի բարձր ցուցանիշների հարցում նշանակալի է հայկական սփյուռքի և տրանսնացիոնալ միգրացիոն ցանցերի ազդեցությունը (Atanesyan, Mkrtchyan & Tumanyan, 2015):

Այս բաժնում արծարծված քանակական տվյալները միանշանակորեն հետաքրքիր հենք են ստեղծում Հայաստանում գենդերային հիմնահարցերի հետագա ուսումնասիրության համար: Մասնավորապես՝ հետագա խորքային հետազոտությունների համար հետաքրքրական են այն տվյալները, ըստ որոնց որևէ կրթական հաստատությունում սովորողները ավելի քիչ են բավարարված իրենց ինտիմ հարաբերություններով, քան չսովորողները, որ իրենց ինտիմ հարաբերություններով ամենաքիչն են բավարարված չամուսնացած կանայք և որ տեղի հետ կապվածությունը առավել թույլ է հատկապես քաղաքաբնակ իգական սեռի ներկայացուցիչների ու առավել ուժեղ՝ գյուղաբնակ արական սեռի ներկայացուցիչների շրջանում:

ԻՆՔՆՈՒԹՅՈՒՆ, ԱՐԺԵՔՆԵՐ ԵՎ ԿՐՈՆ

Ներածություն

Երիտասարդության արժեքանորմատիվ համակարգը ստեղծում է հասարակական կյանքին (ընտրություններին, քաղաքացիական նախաձեռնություններին, հասարակական շարժումներին) երիտասարդության մասնակցության սոցիալական հնարավորությունները, ինչպես նաև ապահովում է այլ մարդկանց հետ հաղորդակցվելու և համագործակցելու կարողությունները (ընդհանրապես՝ հասարակության ներսում և մասնավորապես՝ առանձին սոցիալական խմբերի ու անհատների հետ): Վերլուծաբաններն արդեն իսկ ցույց են տվել, որ կրոնականությունը (religiousness) երիտասարդների շրջանում կապվում է կոնկրետ, սոցիալապես ընդունելի ու նպաստավոր (prosocial) բարոյական վարքի ու մոտեցումների հետ (Donahue & Benson, 1995): Էմպիրիկ հետազոտությունը ցույց է տալիս, որ կրոնապես ակտիվ երիտասարդության շրջանում արձանագրվում է սոցիալական կապիտալի պաշարների ավելի բարձր մակարդակ (King, Furrow & White, 2004): Երիտասարդության ինչպես ակադեմիական, այնպես էլ սոցիալական կարողությունները կապված են կրոնական մասնակցության և համապատասխան արժեքային դիրքորոշումների հետ (Regnerus, 2000; Youniss, McLellan & Yates, 1999): Կրոնը կարևորող երիտասարդներն ավելի հետշությամբ են դիմադրում ստրեսային իրավիճակներին, քան նրանք, ովքեր չեն կարևորում այն (Donelson, 1999): Վերջին շրջանի մի հետազոտություն ցույց է տալիս նաև, որ համեմատաբար ավելի ավանդապահ ընտանիքներից սերող երիտասարդների կրոնական սոցիալականացումը ավելի արդյունավետ է, քան ոչ ավանդապահ ընտանիքներից սերող երիտասարդներինը (Petts, 2014):

2012 թ. Հայաստանում իրականացված մի հետազոտություն ցույց է տալիս, որ երիտասարդներն իրենք իրենց հայ համարելուն զուգահեռ, առաջնային են համարում Հայ Առաքելական եկեղեցուն պատկանելը, ինչը կրոնը և քրիստոնեությունը նրանց ազգային ինքնության էական բաղադրատարր է դարձնում (Մանուկյան, էջ 144):

Առհասարակ, մարդկային հասարակական գործունեությունը բաղկացած է որոշակի արժեքների արտադրության, տարածման և սպառման գործընթացներից: Հատկապես մեծ է կրոնի դերը հասարակական արժեքները երիտասարդներին փոխանցելու գործընթացներում և մշակույթի պահպանման և զարգացման գործում: Հետխորհրդային շրջանում վերացել են կրոնական հաստատությունների գործունեությունը սահմանափակող քաղաքական ճնշումները, կտրուկ աճել է գործող եկեղեցիների թիվը: Կրոնական տոները նշվում են պետական մակարդակով, և այդ ամենը չի կարող իր ազդեցությունը չունենալ երիտասարդների աշխարհայացքի ձևավորման վրա:

Հետազոտության այս բաժնում ներկայացված են հայաստանյան երիտասարդության կրոնական վարքի մասին տվյալներ՝ զուգակցված նրանց արժեքային դիրքորոշումների ու աշխարհայացքային տարրերի հետ: Ըստ վերջին Կովկասյան բարոմետրի հետազոտության (Caucasus Barometer, 2015)՝ որքան երիտասարդ է հարցվածների տարիքը (35-ից ցածր), այնքան մեծ է վստահությունը կրոնական հաստատությունների նկատմամբ, որն անուղղակիորեն ապացուցում է, որ հետխորհրդային սերունդն ավելի կրոնական է: Այս հետազոտության շրջանակում կատարված բացահայտումները նույնպես դրա հաստատումն են:

Հիմնական տվյալներ

- Հայաստանյան երիտասարդներն իրենք իրենց բնութագրելիս հատկապես ընդգծում են, որ հայ են (29,1%), քրիստոնյա են (24,4%), ինքնաբնորոշման առավել չկարևորվող հատկանիշների շարքում ընդգրկվել են աշխարհաքաղաքացիությունը՝ 1,2%, «եվրոպացիությունը»՝ 1.0%, մարդ լինելը՝ 0.8% և ցեղակրոնությունը՝ 0.6%:
- Հայ լինելը առավելապես դիտարկվում է էթնիկության և ոչ թե պետականության համատեքստում, որպես ինքնության անկյունաքար՝ քաղաքացիությունը ավելի քիչ է կարևորվում:

- Գյուղաբնակ երիտասարդները, ի տարբերություն իրենց քաղաքաբնակ հասակակիցների, ավելի են հակված վստահել հարևաններին, հայրենակիցներին և քաղաքական առաջնորդներին:
- Որքան տարիքով ավելի մեծ են հարցվածները, այնքան ավելի են նրանք ընդգծում «անձնական արժանապատվություն» արժեքը՝ նվազ կարևորելով «ուրիշի նկատմամբ սեր/նվիրվածության» և «հայրենասիրություն» արժեքները:
- Կամավորական աշխատանք իրականացնելիս արական սեռի ներկայացուցիչներն ավելի ներգրավված են սովորելու հարցում հասակակցին օգնելու, տեղական համայնքում հանրային աշխատանքներ իրականացնելու և սպորտային իրադարձություններ կազմակերպելու գործողություններում, իսկ իգական սեռի ներկայացուցիչները՝ ուսուցողական և մշակութային իրադարձություններ կազմակերպելու գործողություններում ու ՀԿ գործունեության մեջ:
- Երիտասարդների մի մասի համար կրոնը զուտ ծիսական նշանակություն ունի. հարցվածների 77,3%-ն է կանոնավոր կամ հաճախ աղոթում, 76%-ը նշում է կրոնական տոները, 25,8%-ը մասնակցում է պատարագների: Իսկ հոգևորականի մոտ խոստովանության կամ ուխտագնացության գնալը ընդհանրապես տարածված չէ երիտասարդության շրջանում. նրանց համապատասխանաբար՝ 80,3%-ն ու 70,1%-ը երբեք չեն արել դա, իսկ 33,1%-ը բոլորովին չի վստահում կրոնական առաջնորդներին:
- Երիտասարդ հարցվածների 50,3%-ը շատ, իսկ 31,2%-ը որոշ չափով է վստահում եկեղեցուն, իսկ, օրինակ, մարդու իրավունքների պաշտպանին շատ է վստահում երիտասարդների 18,1%-ը, որոշ չափով՝ 42,9%-ը:
- Եկեղեցու հանդեպ վստահությունը պակաս չափով է արձանագրվել առավել մեծ տարիքի երիտասարդների (25-ից 29 տարեկան) և քաղաքաբնակների շրջանում:
- Կախված երիտասարդների բնակավայրից, տարիքից, սեռից, ընտանիքի տնտեսական կարգավիճակից՝ փոփոխվում է նաև որոշ սոցիալական ինստիտուտների և կազմակերպությունների հանդեպ վստահությունը: Օրինակ՝ որքան տարիքով ավելի մեծ են հարցվածները, այնքան ավելի ցածր է նրանց վստահությունը դատարանների, ոստիկանության, մարդու իրավունքների պաշտպանի, զանգվածային լրատվամիջոցների, առողջապահական հաստատությունների, հասարակական կազմակերպությունների և բանկերի հանդեպ:

- Երիտասարդների ճնշող մեծամասնությունը չի ցանկանում, որ իրենց հարևանությամբ և/կամ իրենց համայնքում բնակություն հաստատեն միասեռականներ, դրան դեմ է արտահայտվել հարցվածների 81,0%-ը: Ընդ որում, միասեռականների հանդեպ հանդուրժողականությունը և/կամ անտարբերությունը համեմատաբար ավելի բարձր է իգական սեռի ներկայացուցիչների շրջանում:

Վերլուծություն

Սոցիալական պատկանելություն և վստահություն

Հայաստանյան երիտասարդներն իրենք իրենց բնորոշելիս ընդգծում են, որ իրենք հայ են (29,1%), քրիստոնյա են (24,4%) և իրենց ծնողների զավակն են (22,1%) (տե՛ս **գծապատկեր 6.1**): Որպես երիտասարդների ինքնանույնականացման այլ բնորոշիչներ առանձնանում են նաև սեռը՝ 6.2%, քաղաքացիությունը՝ 3.9%, կրթական կարգավիճակը՝ 3.5% և բնակավայրը՝ 3.3%: Խորհրդանշական կերպով որպես «երկրի զինվոր» իրեն նույնականացրել է հարցված երիտասարդների 3.8%-ը: Առավել չկարևորվող հատկանիշների շարքում ընդգրկվել են աշխարհաքաղաքացիությունը՝ 1,2%, «եվրոպացիությունը»՝ 1.0%, մարդ լինելը՝ 0.8% և ցեղակրոնությունը՝ 0.6%:

Կրոն-էթնիկություն սերտ կապը չի կորցրել իր ավանդական նշանակությունը նաև այսօրվա հայաստանյան երիտասարդ սերնդի համար: Ընդ որում, երիտասարդների ընկալումներում տարբերակվում են ազգությունն ու քաղաքացիությունը. հայ լինելը առավել դիտարկվում է էթնիկության և ոչ պետականության համատեքստում: Մասամբ դրանով է պայմանավորված քաղաքացիությունը՝ որպես ինքնության անկյունաքար, նվազ կարևորելու հանգամանքը, որն անշուշտ կարող է երիտասարդներին տանել դեպի քաղաքացիական անտարբերություն: Հասկանալի է, թե ինչու հարցվածների միայն 35,9%-ն է քաղաքացիական նախաձեռնությունների մասնակցելը համարում մոդայիկ: Երիտասարդների մեծամասնության քաղաքացիական ինքնագիտակցությունն ու քաղաքացիական ներգրավվածության մշակույթը դեռևս բարձր մակարդակի վրա չեն (օրինակ՝ երիտասարդների միայն 11.3% է իրեն ճանաչում որպես քաղաքացի): Էթնիկ գիտակցությունն ու ավանդական մշակույթը ավելի են կարևորվում: Ընդ որում, քաղաքացիությունը և աշխարհաքաղաքացիությունը՝ որպես ինքնանույնականացման բնորոշիչ

ընդգծողների համապատասխանաբար 42,9%-ը և 55,8%-ը քաղաքաբնակ իգական սեռի ներկայացուցիչներ են:

Գծապատկեր 6.1: Ես ...



Երիտասարդների այլ դիրքորոշումներից ևս երևում է «ընտանիք» և «հայրենիք»[6] արժեքների ընդգծման հանգամանքը (տե՛ս **գծապատկեր 6.2**):

6 Ֆոկուս խմբային քննակումները ցույց են տալիս, որ «հայրենիք» հասկացությունը երիտասարդների մտածողության շրջանակներում ունի սուբյեկտիվ, անհատականացված խորհրդանշական իմաստ, որը ևս ավելի շուտ պատմական և վերացական կոնստրուկտ է, քան պետական և կոնկրետ:

Գծապատկեր 6.2: Խնդրում եմ գնահատել. (1-ը նշանակում է, որ բոլորովին համաձայն չեք նշված դատողության հետ, 10-ը՝ լիովին համաձայն եք)



Ընտանիքի՝ որպես կարևոր արժեքի ընդգծման համատեքստում, հարկ է նկատել, որ հարցված երիտասարդների 98,0%-ը (որից 88,0%-ը անվերապահորեն) վստահում են իրենց ընտանիքի անդամներին: Հարցվածների 84,7%-ը վստահում է ընկերներին, բայց միայն 47,1%-ն է դա անում անվերապահորեն: Գրեթե նույն պատկերը բարեկամների պարագայում է՝ հարցվածների 78%-ը հակված է վստահել նրանց, բայց միայն 35,7%-ն է անվերապահորեն վստահում (տե՛ս **գծապատկեր 6.3**):

Գծապատկեր 6.3: Գնահատեք, թե որքանով եք ընդհանուր առմամբ վստահում հետևյալ խմբերից յուրաքանչյուրին:



1 2 3 4 5 6 7 8 9 10

Բոլորովին չեմ վստահում — Լիովին վստահում եմ


Այլ կրոնի/դավանանքի ներկայացուցիչներին
63,8%
6,1%
5,8%
4,2%
8,8%
3,0%
3,4%
2,8%
1,0%
1,0%
Կրոնական առաջնորդներին
33,1%
5,8%
7,7%
5,4%
12,9%
5,2%
7,7%
7,2%
4,6%
10,2%
Քաղաքական առաջնորդներին
47,9%
9,4%
9,7%
6,6%
11,5%
5,2%
4,1%
2,5%
1,2%
1,9%
Այլ քաղաքական հայացքներ ունեցող անդրկիցց
31,7%
8,9%
9,4%
8,7%
20,6%
6,8%
8,0%
3,2%
1,6%
1,0%
Այլ ազգի ներկայացուցիչներին
28,6%
7,7%
11,4%
6,8%
20,0%
8,7%
6,6%
5,3%
1,9%
3,0%
1
2
3
4
5
6
7
8
9
10
Բոլորովին չեմ վստահում
Լիովին վստահում եմ

Ընտանիքից դուրս՝ այլ սոցիալական խմբերի պարագայում, երիտասարդ հարցվածների շրջանում նկատվում է վստահության պակաս: Անվստահության աստիճանը բարձր է միջանձնային հարաբերություններում, հատկապես, երբ խոսքն այլ ազգի ներկայացուցիչների մասին է՝ երիտասարդների միայն 25,5%-ն է հակված այս կամ այն չափով վստահել նրանց: Իրենց գործընկերներին/դասընկերներին վստահում է հարցվածների 54,8%-ը, հայրենակիցներին՝ 39,2%-ը, հարևաններին՝ 32,5%-ը:

Ընդհանուր առմամբ, սա մտահոգիչ պատկեր է, քանի որ փոխադարձ վստահության պակասը, լինելով սոցիալական կապիտալի նախապայման և արդյունք, կդժվարեցնի հասարակական հարաբերությունների և միջանձնային հաղորդակցության արդյունավետ կարգավորումը: Այս առումով, հատկապես կարևոր ցուցիչ է ընկերների նկատմամբ վերաբերմունքը (բնորոշ երևույթ հետխորհրդային երկրների համար): Ընկերներին երիտասարդները ազատ ընտրում են, չեն ժառանգում. եթե ընկերը չի արդարացնում սպասումները, նրան այլևս ընկեր չեն անվանում: Սակայն, պարզվում է, որ երիտասարդների մի մասը շարունակում է ընկերություն անել այնպիսի մարդկանց հետ, որոնց կա՛մ չի վստահում, կա՛մ քիչ է վստահում: Այդպիսով ընկերությունը փոխակերպվում է մեկ այլ բանի. մոդայիկ է ունենալ շատ ընկերներ, բայց հարցվածների 19,6%-ի համար հավատարիմ լինելը մոդայիկ չէ, 28,9%-ի համար՝ ոչ այդքան մոդայիկ է: Մարդկանց օգնության հասնել՝ անկախ անձնական շահից մոդայիկ չէ երիտասարդների 24,7%-ի համար, ոչ այդքան մոդայիկ՝ 29,8%-ի համար:

Անդրադառնալով ընկերության մասին ֆոկուս խմբային քննարկումներին՝ կարևոր է նշել, որ ընկերությունը երիտասարդների համար ներկայանում է որպես արժեքային առումով բավականին ծավալուն հասկացություն, որի որակական բնորոշումը նաև ցույց է տալիս նրանց կենսակերպը: «Ընկերություն» նշանակում է՝ նվիրվել ընկերությանը, ունենալ այնպիսի ընկեր, ում կվստահես, կիսել ընկերոջ ցավը, գաղտնապահ լինել, ընկերոջ կողքին լինել ոչ միայն ուրախ, այլև տխուր պահերին, կարողանալ ընկերոջ հետ ուրախանալ, ոչ թե նրան նախանձել, սակայն, եթե ընտանիքը պետք չէ փոխել, ապա դավաճան ընկերոջը հնարավոր է ու պետք է փոխարինել ավելի հավատարիմ մեկով:

> *«Ասա ով է ընկերդ, ասեմ՝ ով ես դու»*
>
> (ՖԽ, 14-20 տարեկաններ, արական, գյուղական համայնք)

«Առանց ընկեր մարդն ո՞ւմ է պետք»

(ՖԽ, 21-29 տարեկաններ, իգական, մարզային քաղաք)

«Առանց ընկերության հնարավոր չէ ապրել»

(ՖԽ, 14-20 տարեկաններ, արական/իգական, Երևան): .

Մեջբերվող արտահայտությունները բնորոշում են ընկերության երևույթի նկատմամբ առկա արժեքային դիրքորոշումները: Հարցին, թե արդյոք ընկերները պետք է իրար նման լինեն՝ ներկայացնեն նույն սոցիալական խավը կամ նույն սոցիալական որակները (օրինակ՝ ժլատ, կատակասեր, խոռվկան, և այլն), քննարկումների մասնակիցները միաշնանակ չեն պատասխանում, ասում են, որ մարդկանց միջև գոյություն ունեցող ընկերական հարաբերությունները բազմազան են, և ինչպես որ հնարավոր է, որ հարուստներն ու աղքատները իրար հետ լավ ընկերություն անեն, այնպես էլ հնարավոր է, որ նույնիսկ չփորձեն ընկերություն անել: Սա վկայում է այն մասին, որ ընկերությունը միանշանակ կերպով չի ընկալվում երիտասարդների կողմից, քանի որ հասարակության մեջ ունի բազմազան դրսևորումներ ու սոցիալական ձևեր: Ֆոկուս խմբերին մասնակցած երիտասարդները նշում են, որ իրական ընկերները շատ չեն լինում, որ հնարավոր չէ շատ մարդկանց հետ նույն որակի ու մտերմության նույն աստիճանի փոխհարաբերություններ ենթադրող ընկերություն անել: Նշվում է, որ Հայաստանում ընկերությունը համապատասխան մշակութային ենթատեսքտ ունի.

«Շատ-շատ ա փարբերվում մեր ընկերությունը արտասահմանի երիտասարդների ընկերությունից: Ես հենց արտասահմանում էլ ընկերներ ունեմ ու նենց չեմ իրանց հետ շփվում ոնց որ իմ ընկերների ու ընկերուհիների հետ, ու ինձ մի հատ աղջիկ արտասահմանից հենց էդ էր ասում՝ Էնքան հետաքրքիր ա՝ դուք, որ գնում եք, ասենք, հաց ուտելու, բոլորով իրար հետ եք գնում, թեկուզ որ գնում եք ինչ-որ տեղ, էլի կանչում եք իրար, միասին եք գնում, իսկ մենք ավելի շատ նախընտրում ենք, որ մենակ գնանք կամ երկու հոգով»

(ՖԽ, 21-29 տարեկաններ, արական/իգական, Երևան)

«Ի դեպ, իսպանացիները հայերին շատ նման են իրանց տրաքարյունությամբ, մտածելակերպով, իտալացիներն էլ, իրանք էլ են մի քիչ մեր [հայերի] պես ընկերություն անում, իսկ էս շոտլանդացիները, անգլիացիները… Նույնիսկ ձեռքով բարևելը իրանց մոտ շատ սառն ա, հա շատ սառն են, դրա համար էլ սաղ օրը չայի վրա են [ծիծաղ]»

(ՖԽ, 21-29 տարեկաններ, իգական, Երևան):

Մեջբերումներից նկատելի է, որ երիտասարդներն ընկերությունը դնում են մշակութային ենթատեքստի մեջ: Նրանք գտնում են, որ այն ազգային բնորոշիչներ ունի և հայերի պարագայում հանդիսանում է սոցիալական ավելի փոքր հեռավորություն ենթադրող ու անձնական երևույթ: Հարցվածներն իրապես ընդգծում են ընկերների հետ մտերիմ և յուրահատուկ հարաբերությունները, որը հնարավոր է միայն հայկական համատեքստում:

> *«Ինչպես ասել է Պարույր Սևակը՝ ընկեր լինենք նույն հուզմունքի, համոզմունքի՛, նույն ճաշակի, դրոշակի՛, ո՛չ թե ընկեր լոկ բաժակի...»*
>
> (ՖԽ մասնակից, 25 տ., իգական, մարզային քաղաք):

In the Yerevan groups in particular, mistrust towards friends is registered and they speak of the decrease in numbers of friends over the years. In other words, the developing city environment has a negative impact on friendship.

> «*Today in Yerevan, in good times, it's always easy to find friends, but when you are in a difficult situation, those same friends are not by your side; you don't understand why they left. In many cases you consider all of them your friends, but few of them become your friend*»
>
> (24-year-old male, Yerevan).

> «*There have been people around me whom I considered friends but after getting to know them, in the end it turned out that they were fair-weather friends*»
>
> (20-year-old male, Yerevan).

Հատկապես Երևանի խմբերում ընկերների նկատմամբ անվստահություն է արձանագրվում, և խոսվում է տարիների ընթացքում լավ ընկերների թվի նվազելու մասին: Այսինքն՝ զարգացող քաղաքային միջավայրը բացասաբար է ազդում ընկերության վրա.

> *«Էսօր Երևանում լավ վիճակում միշտ էլ հեշտ ա ընկերներ գտնել, բայց երբ որ դժվար իրավիճակում ես լինում, էդ նույն ընկերներդ կողքդ չեն լինում, դու չես հասկանում՝ ինչի գնացին, շատ դեպքում բոլորին ես համարում քո ընկեր, բայց շատ քչերն են լինում քեզ ընկեր»*
>
> (ՖԽ, 21-29 տարեկաններ, արական, Երևան)

> *«Իմ շրջապատում եղել են մարդիկ, ում ես համարել եմ ընկեր, բայց շփման վերջնական արդյունքում դրանք պարզվել են գրպանի ընկեր»*
>
> (ՖԽ, 14-20 տարեկաններ, արական, Երևան):

Առհասարակ, ընկերությանը բացասական որակներ հաղորդող երկու հիմնական երևույթները, որ երիտասարդների կողմից առանձնացվում էին ոչ միայն Երևանի, այլ նաև գյուղական ու մարզային համապատկերում, նախանձն էր (իգական սեռի ներկայացուցիչների պարագայում) և փողը (արական սեռի ներկայացուցիչների պարագայում).

> *«Կա ընկերություն, որ հիմնված ա փողի վրա, եթե ընկերդ ունի փող, ուրեմն ինքը քո ընկերն ա, եթե չունի փող, ուղղակի նրան առհամարած ունի, դրա համար չպետք ա էդպիսի ընկերություն լինի»*
>
> (ՖԽ, 14-20 տարեկաններ, արական, գյուղական համայնք)

> *«Աղջիկները ունեն նախանձ իրենց մեջ, դրա համար»*
>
> (ՖԽ, 14-20 տարեկաններ, իգական, յուղական համայնք)

> *«Եթե կինը կնոջը կարող է նախանձել, տղամարդը կնոջը չի նախանձի»*
>
> (ՖԽ, 21-29 տարեկաններ, իգական, Երևան):

Ֆոկուս խմբային քննարկումների ընթացքում առանձնահատուկ տարաձայնությունների հիմք էին տղաների ու աղջիկների, տղամարդկանց ու կանանց միջև հնարավոր կամ անհնարին ընկերական փոխհարաբերությունները: Յուրաքանչյուր քննարկման ընթացքում թեման վերաճում էր բանավեճի՝ մի մասը գտնում էր, որ դա հնարավոր է, մյուս մասը գտնում էր, որ հնարավոր չէ.

> *«Շատ ավելի լավ ընկեր կարող է լինել տղան, քան աղջիկը»*
>
> (ՖԽ, 14-20 տարեկաններ, իգական, գյուղական համայնք)

> *«Տղայի և աղջկա միջև ընկերությունը հնարավոր է, մինչև մեկը չսիրահարվի մյուսին»*
>
> (ՖԽ, 14-20 տարեկաններ, իգական, գյուղական համայնք)

> *«Հայաստանում դժվար ա, որ աղջիկներն ու տղաները զուտ ընկերական հարաբերություններ ունենան»*
>
> (ՖԽ, 21-29 տարեկաններ, արական, մարզային քաղաք)

«Չէ, ես գտնում եմ, որ կարա լինի ու կարա երկար լինի, ու կարան ոչ մեկ չսիրահարվեն արդյունքում, չէ երկուսն էլ կարան սիրահարված չլինեն ու իրար չսիրեն ու կարան իրար հետ ընկերություն անեն բավականին երկար ժամանակ, էդ կարա չիանգարի, որ իրանք շուտ-շուտ չիանդիպեն և այլն, բայց իրանք կմնան էլի ընկերներ: Կարա լինի տղայի ու աղջկա միջև ընկերություն, եթե հեռավորություն պահեն»

(ՖԽ, 21-29 տարեկաններ, արական/իգական, Երևան)

«Ենթադրենք՝ տղան ու աղջիկը ընկերներ են ուղղակի, ու տղան ամուսնանում ա, արդեն իրա կինը նորմալ չի նայի, որ ինքը էդքան մոտիկ ընկերուհի ունի. երբ որ դու ամուսին, կին ունես, էդ արդեն նորմալ չի»

(ՖԽ, 21-29 տարեկաններ, իգական, Երևան)

«Օրինակ՝ Երևանում հնարավոր ա, շրջաններում ավելի դժվար ա»

(ՖԽ, 14-20 տարեկաններ, իգական, մարզային քաղաք):

Այս թեմայի շուրջ հնչած կարծիքներն աչքի են ընկնում հակասականությամբ ու բազմազանությամբ: Հատկապես գյուղական համայնքներում աղջիկ-տղա փոխհարաբերությունները ենթարկվում են համայնքային վերահսկման և այս իմաստով, եթե անգամ նրանց միջև ընկերական հարաբերություններ են ձևավորվում, նրանք փորձում են դա հասարակության աչքից հեռու պահել: Օրինակ՝ դեռահասները միմյանց հետ առցանց են շփվում.

«Շատ է տարածված, որ գյուղում աղջիկ-տղա համացանցով իրար հետ ընկերություն են անում, շփվում են»

(ՖԽ, 14-20 տարեկաններ, արական, գյուղական համայնք):

Ընդհանուր առմամբ, տարբեր սոցիալական խմբերի հանդեպ վստահությունը համահարաբերակցվում է երիտասարդների սեռի, բնակավայրի, տարիքի և աշխատանքային կարգավիճակի հետ: Մասնավորապես՝ գյուղաբնակ երիտասարդներն ավելի հակված են վստահել հարևաններին, հայրենակիցներին և քաղաքական առաջնորդներին, քան քաղաքաբնակները[7]: Արական սեռի ներկայացուցիչներն ավելի են հակված վստահել գործընկերներին/համադասարանցիներին, ընկերներին, բարե-

7 Հարևանների հանդեպ վստահություն՝ գյուղաբնակներ (Mdn=7), քաղաքաբնակներ (Mdn=5)- (U=193.906, z= 4.911, p<.001); հայրենակիցների հանդեպ վստահություն՝ գյուղաբնակներ (Mdn=6), քաղաքաբնակներ (Mdn=5)- (U=183.131, z=3.086, p=.002); քաղաքական առաջնորդների հանդեպ վստահությունը՝ գյուղաբնակներ (Mdn=2), քաղաքաբնակներ (Mdn=1)- (U=183.421, z=3.841, p<.001):

կամներին, հարևաններին, ընտանիքի անդամներին և հայրենակիցներին, քան իգական սեռի ներկայացուցիչները[8]: Չաշխատող երիտասարդներն առավել հակված են վստահել կրոնական առաջնորդներին, բարեկամներին, քաղաքական առաջնորդներին և հայրենակիցներին, քան աշխատողները[9]: Առավել ցածր տարիքային խմբի երիտասարդներն առավել հակված են վստահել կրոնական առաջնորդներին, ընկերներին, բարեկամներին, քաղաքական առաջնորդներին և հայրենակիցներին, քան առավել հասուն տարիքի ներկայացուցիչները[10]:

Ընդ որում, հարցված երիտասարդների 50,3%-ը շատ, իսկ 31,2%-ը որոշ չափով է վստահում եկեղեցուն: Սա լավ ցուցանիշ է, որովհետև տարբեր ինստիտուտների նկատմամբ վստահության ճգնաժամի խնդիրն ընդհանրապես շատ սուր է արտահայտված արդի հայաստանյան հասարակությունում: Միայն բանակն է, որ եկեղեցուց ավելի մեծ վստահություն է վայելում (համապատասխանաբար՝ 70,6%- և 19,5%) (տե՛ս **գծապատկեր 6.4**): Իսկ, օրինակ, մարդու իրավունքների պաշտպանին շատ է վստահում երիտասարդների 18,1%-ը, որոշ չափով է վստահում 42,9%-ը:

Համեմատության համար նշենք, որ առողջապահության հաստատություններին շատ է վստահում հարցվածների 18,6%-ը, որոշ չափով՝ 50,5%-ը, ոստի-

8 Գործընկերների/համադասարանցիների հանդեպ վստահություն՝ արական (Mean Rank=618.82), իգական (Mean Rank=536.02)- (U=161.492, z= -3.561, p<.001); ընկերների հանդեպ վստահություն՝ արական (Mdn=10), իգական (Mdn=9)- (U=123.067, z=-8.976, p<.001); բարեկամների հանդեպ վստահություն՝ արական (Mdn=9), իգական (Mdn=8)- (U=146.836, z=-4.634, p<.001); հարևանների հանդեպ վստահություն՝ արական (Mdn=7), իգական (Mdn=5)- (U=136.203, z=-6.110, p<.001); ընտանիքի անդամների հանդեպ վստահությունը՝ արական (Mean Rank=623.09), իգական (Mean Rank=582.24)- (U=161.492, z=-3.561, p<.001); հայրենակիցների հանդեպ վստահություն՝ արական (Mdn=6), իգական (Mdn=5)- (U=156.017, z=-2.736, p=.006):

9 Կրոնական առաջնորդների հանդեպ վստահություն՝ աշխատողներ (Mdn=3), չաշխատողներ (Mdn=5)- (U=155.291, z=4.583, p<.001); բարեկամների հանդեպ վստահություն՝ աշխատողներ (Mdn=8), չաշխատողներ (Mdn=9)- (U=152.982, z=3.611, p<.001); քաղաքական առաջնորդների հանդեպ վստահություն՝ աշխատողներ (Mdn=1), չաշխատողներ (Mdn=2)- (U=148.881, z=3.693, p<.001); հայրենակիցների հանդեպ վստահություն՝ աշխատողներ (Mdn=5), չաշխատողներ (Mdn=6)- (U=151.216, z=3.457, p=.001):

10 Կրոնական առաջնորդների հանդեպ վստահություն՝ 14-22 տարեկաններ (Mdn=5), 23-29 տարեկաններ (Mdn=3)- (U=146.716, z=-4.816, p<.001); ընկերների հանդեպ վստահություն՝ 14-22 տարեկաններ (Mdn=9.5), 23-29 տարեկաններ (Mdn=9)- (U=159.887, z=-3.151, p=.002); բարեկամների հանդեպ վստահություն՝ 14-22 տարեկաններ (Mdn=9), 23-29 տարեկաններ (Mdn=8)- (U=154.192, z=-4.174, p<.001); քաղաքական առաջնորդների հանդեպ վստահություն՝ 14-22 տարեկաններ (Mdn=2), 23-29 տարեկաններ (Mdn=1)- (U=142.097, z=-5.736, p<.001); հայրենակիցների հանդեպ վստահություն՝ 14-22 տարեկաններ (Mdn=6), 23-29 տարեկաններ (Mdn=5)- (U=159.044, z=-3.006, p=.003):

կանությանը շատ է վստահում 13,6%-ը, որոշ չափով՝ 39,3%-ը, բանկերին շատ է վստահում 11,5%-ը, որոշ չափով՝ 41,6%-ը, դատարաններին շատ է վստահում 8%-ը, որոշ չափով՝ 36,5%-ը, քաղաքացիական շարժումներին՝ շատ՝ 7%-ը, որոշ չափով՝ 31,4%-ը, հասարակական կազմակերպություններին՝ շատ՝ 6,7%-ը, որոշ չափով՝ 42%-ը, տեղական ինքնակառավարման մարմիններին՝ շատ՝ 3,9%-ը, որոշ չափով՝ 27,7%-ը, ՀՀ կառավարությանը՝ շատ՝ 2,4%-ը, որոշ չափով՝ 22,5%-ը, արհմիություններին՝ շատ՝ 1,8%-ը, որոշ չափով՝ 32,3%-ը:

Եկեղեցու հանդեպ վստահությունը ավելի նվազ աստիճանի է առավել հասուն տարիքի երիտասարդների (X^2=30.734, p<.001, Cramer's V=.093) և քաղաքաբնակների շրջանում (X^2=31.794, p<.001, Cramer's V=.163):

Հետաքրքրական է, որ ըստ ֆոկուս խմբերին մասնակցած երիտասարդների, արդի Հայաստանում երիտասարդներն իրենց կյանքում ավելի մեծ տեղ են տալիս կրոնին, ավելի հաճախ են գնում եկեղեցի ու ավելի շատ են հետևում եկեղեցական խորհուրդներին, քան իրենց ծնողները: Շատերն այս հանգամանքը պատճառաբանում են նրանով, որ իրենց ծնողներն ապրել են Խորհրդային Միությունում, ուր պաշտոնապես աթեիզմ էր քարոզվում, և հավատացյալ լինելը չէր խրախուսվում.

«Ինչքան էլ որ գնացել եմ եկեղեցի, էդ ծեսերի ժամանակ, օրինակ՝ Զատիկի կամ... Սուրբ ծննդյան նախորդ օրը, որ մոմավառություն ա, չէ՞, որ մոմ են պանում, երիտասարդները էնքան շատ են: 90-ականներից հետո շատացել ա եկեղեցի այցելելը, ԽՍՀՄ-ի ժամանակ քարոզվում էր աթեիզմի գաղափարախոսությունը, ինձ թվում ա էդ ժամանակ էդքան չէին հաճախում երիտասարդությունը, հիմա շատացել ա, ու շատ ուրախ եմ, որ շատացել ա»

(ՖԽ, 21-29 տարեկաններ, իգական, գյուղական համայնք)

«Հիմա երիտասարդները ավելի հետաքրքրված են եկեղեցականների հետ շփում հաստատեն»

(ՖԽ, 14-20 տարեկաններ, արական, գյուղական համայնք)

«Օրինակ բերեմ դպրոցի վրա [դպրոցում է աշխատում]՝ հիմա մենք աշակերտների հետ աշխատանք ենք պանում, որ պատարագների մասնակցեն, իսկ իմ դպրոցական տարիներին ես նման բան չեմ հիշում»

(ՖԽ, 21-29 տարեկաններ, իգական, մարզային քաղաք):

Գծապատկեր 6.4: Ընդհանրապես որքանո՞վ եք վստահում ...



● Շատ ● Որոշ չափով ● Քիչ ● Չեմ վստահում

Կախված երիտասարդների բնակավայրից, տարիքից, սեռից, ընտանիքի տնտեսական կարգավիճակից՝ փոփոխվում է նաև որոշ սոցիալական ինստիտուտների և կազմակերպությունների հանդեպ ունեցած վստահության աստիճանը: Բանակին, դատարաններին, ոստիկանությանը և առողջապահական հաստատություններին ավելի շատ են վստահում գյուղաբնակները, քան քաղաքաբնակները (համապատասխանաբար՝ X^2=16.495, p=.001, Cramer's V=.118, X^2=21.398, p<.001, Cramer's V=.135, X^2=27.835, p<.001, Cramer's V=.153, X^2=16.334, p<.001, Cramer's V=.117): Ոստիկանությանը, զանգվածային լրատվամիջոցներին, հասարակական կազմակերպություններին և բանկերին ավելի շատ են վստահում իգական, քան արական սեռի ներկայացուցիչները (համապատասխանաբար՝ X^2=29.199, p<.001, Cramer's V=.157, X^2=7.781, p=.051, Cramer's V=.081, X^2=12.982, p=.005, Cramer's V=.106, X^2=13.063, p=.005, Cramer's V=.105): Որքան տարիքով ավելի մեծ են հարցվածները, այնքան ավելի ցածր է

նրանց վստահությունը դատարանների, ոստիկանության, մարդու իրավունքների պաշտպանի, զանգվածային լրատվամիջոցների, առողջապահական հաստատությունների, հասարակական կազմակերպությունների և բանկերի հանդեպ (համապատասխանաբար՝ X^2=49.093, p<.001, Cramer's V=.118, X^2=25.073, p=.003, Cramer's V=.084, X^2=38.524, p<.001, Cramer's V=.105, X^2=24.096, p=.003, Cramer's V=.082, X^2=50.523, p<.001, Cramer's V=.119, X^2=18.384, p=.031, Cramer's V=.073, X^2=26.430, p=.002, Cramer's V=.086):

Արժեքանորմատիվ պատկերացումներ

Անդրադառնալով երիտասարդների արժեհամակարգին՝ պետք է նշել, որ հարցված երիտասարդների կողմից նշված երեք կարևորագույն արժեքների շարքում առանձնացել են՝ անձնական արժանապատվությունը (22,2%), ազնվությունը (14,6%), հավատարմությունը (13,3%), կամքի ուժը և պայքարելու համառությունը (11,5%), սեր/հարգանք ուրիշի նկատմամբ (9,8%), պարկեշտությունը (6,3%), հայրենասիրությունը (5,8%): Մյուս արժեքները նշվել են 5%-ից քիչ դեպքերում. մասնավորապես՝ համեստությունը (4,3%), նյութական բարեկեցությունը (2,9%), հանդուրժողականությունը (2,5%), համագործակցելու հմտությունը (2,2%), սոցիալական համբավը (1,8%), խորամանկությունը (1,2%), նորարարական ոգին (0,9%), սեփական դիրքերը ամրապնդելու կարողությունը (0,5%) (տե՛ս **գծապատկեր 6.5**):

Գծապատկեր 6.5: Նշված արժեքներից ո՞ր երեքն եք առավելագույնս կարևորում:

22,2% Անձնական արժանապատվություն
14,6% Ազնվություն
13,3% Հավատարմություն
11,5% Կամքի ուժ և պայքարելու համառություն
9,8% Սեր/հարգանք ուրիշի նկատմամբ (նվիրվածություն, ուրիշներին օգնություն)
6,3% Պարկեշտություն
5,8% Հայրենասիրություն
4,3% Համեստություն
2,9% Նյութական բարեկեցություն
2,5% Հանդուրժողականություն (ընդունել մարդ-կանց, որոնք տարբերվում են Ձեզանից)
2,2% Մարդկանց հետ համագործակցելու հմտություն
1,8% Սոցիալական համբավ (սոցիալական կարգավիճակ, սոցիալական դիրք)
1,2% Խորամանկություն
0,9% Նորարական ոգի (առաջ քաշել գաղափարներ, և ընդունել այլոց տարբեր նոր գաղափարները)
0,5% Մյուսներին հակադրվելու միջոցով սեփական դիրքերն ամրապնդելու կարողություն

Արական սեռի ներկայացուցիչներն ավելի հակված են որպես արժեք ընդգծել անձնական արժանապատվությունը և հայրենասիրությունը, իսկ իգական սեռի ներկայացուցիչները՝ պարկեշտությունը և հավատարմությունը (X^2=27.393, p=.017, Cramer's V=.151): Մյուս կողմից, որքան տարիքով ավելի մեծ են հարցվածները, այնքան նրանք ավելի են ընդգծում անձնական արժանապատվությունը՝ որպես արժեք, և ավելի հազվադեպ են ընդգծվում ուրիշի նկատմամբ սերը/նվիրվածությունը և հայրենասիրությունը (X^2=83.3, p<.001, Cramer's V=.152):

Ընդ որում, երիտասարդների համար բնավ չի հնացել հայկական ժողովրդական ասացվածքների իմաստը: Հարցվածների 90,9%-ը համաձայն է ժողովրդական այն խոսքի հետ, թե *ապի ոտքը կարճ է*: Եվ, իսկապես, ինչպես արդեն նշել ենք, ազնվությունը կարևոր արժեք է մեր երիտասարդների համար: Հարցվածների 90,7%-ը համարում է, որ *կաշած քարը գետնին չի մնա*: Այսինքն, անկախ ներկա իրավիճակից պետք է զարգացնել սեփական կարողություններն ու հմտությունները, որովհետև, վերջ ի վերջո, դա կհանգեցնի սպասված արդյունքին: Ճիշտ նույնքան երիտասարդ համաձայն է, որ *լավ հարևանը վատ բարեկամից լավն է*: Այստեղ դրսևորվում է ավանդական լոկալ համերաշխությունը: Հարցվածների 90,2%-ը գտնում է, որ *փորձված թանը անփորձ մածնից լավ է*, այսինքն՝ տուրք է տրվում ավանդական զգուշավորությանը կտրուկ որոշումներ կայացնելու ժամանակ: Մեր երիտասարդների 89,1%-ը համամիտ է, որ *ջուրը փոքրինն է, խոսքը մեծինը*: Ակնհայտ է ավանդական հարգանքը տարիքով մարդկանց նկատմամբ: Հարցման մասնակիցների 86,5%-ը հակված է ընդունելու հետևյալ ժողովրդական խոսքը՝ *եղունգ ունես, գլուխդ քորիր*, ինչը հայի եսակենտրոն գծերի դրսևորում է: Միևնույն ժամանակ, երիտասարդների 85,8%-ի համար ճշմարիտ է *լավություն արա, գցիր ջուրը* ասացվածքը: Բարությունը՝ որպես մարդու հիմնարար բնութագրիչ, հայերի մեջ միշտ բարձր է արժևորվել:

Հարցվածների 85,2%-ը համաձայն է այն մտքի հետ, որ *տերությունն տերն է տարել, անտերինն գայլը*: Դա հայերի պատմական անցյալի և ներկա իրավիճակի արդյունքում ձևավորված եզրակացություն է հասարակական կյանքում մարդու ունեցած հաջողություններում հովանավորչության կարևոր դերի և մեծ ազդեցության վերաբերյալ: Երիտասարդների 82,6%-ը համամիտ է, որ *թանկից էժանը չկա*: Դա արձանագրումն է այն փաստի, որ սոցիալական ուղղվածություն չունեցող բիզնեսի պայմաններում միշտ հրամցվում է անորակ, էժան ապրանք, և թվացյալ տնտեսումը, վերջին հաշվով, ավելի մեծ ծախսերի է հանգեցնում: Հարցվածների 78,9%-ը համաձայն է, որ *էշ նստելը*

մի փորձանք է, իջնելը՝ երկու: Սա կապված է թերարժեքության բարդույթի հետ, երբ ընդունված չէ հրապարակավ խոստովանել սեփական սխալները: Նույն բարդույթի դրսևորում է, երբ չեն ընդունվում յուրայինների առավելությունները սեփական անձի նկատմամբ: Հարցվածների 76,9%-ը համաձայն է, որ *ընկերովի մահը հարսանիք է*: Սա կոլեկտիվիստական դիրքորոշման դրսևորում է, որը երիտասարդները ժառանգել են խորհրդային մտածելակերպ ունեցող ավագ սերնդից: Հարցվածների 63,8%-ը գտնում է, որ ընդունելի է «*որտեղ հաց, այնտեղ կաց*» սկզբունքով արտահայտված կենսափիլիսոփայությունը:

Հարցման մասնակիցների 58,4%-ը գտնում է, որ *շնից մազ պոկելը խեր է*, այսինքն՝ հակված է ամեն կերպով օգուտ քաղելու: Եվ հարցաթերթում նշված միայն մեկ հայկական ժողովրդական ասացվածք է, որին երիտասարդների մեծամասնությունը չի համաձայնել՝ *նստեմ թախտին, սպասեմ բախտին*: Այս կարծիքը կիսում է երիտասարդների միայն 17%-ը, մյուսները հակված են ինքնուրույն տնօրինելու իրենց կյանքը, զանազան կենսական հարցերի լուծման ժամանակ ցուցաբերելու ակտիվություն և նախաձեռնություն:

Վերոնշյալ ասացվածքները հնարավորություն են տալիս բացահայտել վիճակագրորեն նշանակալի կապեր՝ ընդգծելով հարցված երիտասարդների արժեհամակարգի որոշ հայեցակետեր: Մասնավորապես՝ իգական սեռի ներկայացուցիչներն ավելի են հակված համաձայնելու, որ *ապի ուրքը կարճ է լինում* (X^2=13.861, p=.003, Cramer's V=.112)՝ ընդգծելով ազնվության արժեքը, և հակառակը՝ արական սեռի ներկայացուցիչներն ավելի հակված են համաձայնելու, որ *ընկերովի մահը հարսանիք է*՝ ընդգծելով ընկերության և անձնական արժանապատվության արժեքը (X^2=17.364, p=.001, Cramer's V=.121): Քաղաքաբնակներն ավելի հակված են համաձայնելու, թե *եղունգ ունես, գլուխդ քորիր*՝ ընդգծելով եսակենտրոնությունը (X^2=13.861, p=.003, Cramer's V=.112), և հակառակը՝ գյուղաբնակները ավելի հակված են համաձայնելու, որ *լավ հարևանը, վատ բարեկամից լավն է*՝ ընդգծելով լոկալ համայնքային կապերի կարևորությունը (X^2=17.364, p=.001, Cramer's V=.121):

Երիտասարդների 85,8%-ի համար ճշմարիտ է *լավություն արա, գցիր ջուրը* ասացվածքը, սակայն հարցման մասնակիցների միայն 16,9%-ն է վերջին 12 ամիսներին կամավոր կերպով իրականացրել չվճարվող աշխատանք: Ընդ որում, կամավորական աշխատանք առավել հաճախ իրականացրել են որևէ կրթական հաստատությունում սովորող և/կամ աշխատանք ունեցող արական

սեռի երիտասարդները (համապատասխանաբար՝ X^2=13.558, p<.001, Cramer's V=.106, X^2=20.060, p<.001, Cramer's V=.130, X^2=7.145, p=.008, Cramer's V=.077):

Հարցմանը նախորդող 12 ամիսների ընթացքում երիտասարդների կողմից իրականացված կամավորական աշխատանքներն ուղղված են եղել սովորելու հարցում հասակակցին օգնելուն (22,6%), կարիքավոր մարդկանց օգնելուն (21,7%), տեղի համայնքում հանրային աշխատանքներ իրականացնելուն (16,7%), ուսուցանմանը (10,9%), մշակութային իրադարձություններ կազմակերպելուն (10,0%), սպորտային իրադարձություններ կազմակերպելուն (7,0%), ՀԿ գործունեությանը (6,7%) (N=202) (տե՛ս **գծապատկեր 6.6**):

Բացահայտվել է վիճակագրորեն նշանակալի կապ կամավոր աշխատանքի ընույթի և երիտասարդների սեռի (X^2=30.399, p<.001) ու տարիքի (X^2=59.057, p<.001) միջև:

Գծապատկեր 6.6: Նշված գործողություններից որո՞նք եք վերջին 12 ամիսների ընթացքում իրականացրել կամավոր կերպով:



Ինչպես երևում է **գծապատկեր 6.7**-ից, արական սեռի ներկայացուցիչներն ավելի շատ են ներգրավված եղել սովորելու հարցում հասակակցին օգնելու, տեղի համայնքում հանրային աշխատանքներ իրականացնելու և սպորտային իրադարձություններ կազմակերպելու գործողություններում, իսկ իգական սեռի ներկայացուցիչները՝ ուսուցանման, մշակութային իրադարձություններ կազմակերպելու և ՀԿ գործունեության մեջ:

Գծապատկեր 6.7: Նշված գործողություններից որո՞նք եք վերջին 12 ամիսների ընթացքում իրականացրել կամավոր կերպով:



Տեղի համայնքում հանրային աշխատանքներ իրականացնելու և սպորտային իրադարձություններ կազմակերպելու գործընթացներում ընդգրկված են հիմնականում դպրոցական տարիքի երիտասարդները, իսկ մշակութային իրադարձություններ կազմակերպելու և ՀԿ գործունեության մեջ ներգրավված են հիմնականում 18-21 տարեկանները (հիմնականում ուսանողական տարիք է): Կամավոր կերպով ուսուցանում իրականացնում են հիմնականում 18-25 տարեկանները (տե՛ս **գծապատկեր 6.8**):

Գծապատկեր 6.8: Նշված գործողություններից որո՞նք եք վերջին 12 ամիսների ընթացքում իրականացրել կամավոր կերպով:



Ուշագրավ է նաև, որ կամավորական աշխատանքներում ներգրավվածների միայն 57,8%-ն է որպես այդ աշխատանքներն իրականացնելու հիմնական պատճառ նշել այլոց օգնելու ցանկությունը (տե՛ս **գծապատկեր 6.9**): Մի զգալի մասը նշել է զբաղված լինելու ցանկությունը (32,2%), մյուս մասը՝ մասնագիտական գիտելիքներ կիրառելու (30,2%), նոր ընկերներ ձեռք բերելու (22,6%), հնարավոր գործատուների հետ հանդիպելու (12,1%) ցանկությունը: Հարցվածների 22,1%-ը կամավորական աշխատանք իրականացնում է սեփական համոզմունքներից, 12,1%-ն ընտանեկան ավանդույթից, 5,5%-ը հավատքից ելնելով:

Ընդհանուր առմամբ, կարելի է նկատել, որ կամավորական աշխատանք իրականացնելու պատճառներն առավել ռացիոնալ բնույթ ունեն և հազվադեպ են պայմանավորված ավանդական գործոններով: Ընդ որում, կամավոր աշխատանքներում ընդգրկվածությունը բացասական կերպով է համահարաբերակցվում երիտասարդների կրոնական հավատալիքների հետ. *Ապրված գոյություն ունի, Ապրված է ստեղծել աշխարհը, դժոխքն ու դրախտը գոյություն*

ունեն և *Ապրված է բարոյականության աղբյուրը*[11] դատողություններն առավել ընդունելի են կամավորական աշխատանքներում չընդգրկված երիտասարդների (Mean Rank=556.01), քան կամավորական աշխատանք իրականացնողների (Mean Rank=633.774) համար (U=77.664, z=-3.363, p=.001):

Գծապատկեր 6.9: Ո՞րն է կամավորական աշխատանք իրականացնելու հիմնական պատճառ/ները:



Երիտասարդների 94,7%-ը իրեն համարում է Հայ Առաքելական Եկեղեցու հետևորդ քրիստոնյա, 1,8%-ը՝ կաթոլիկ քրիստոնյա, 1,0%-ը՝ աթեիստ:

11 Այս չորս փոփոխականների համադրմամբ ստեղծվել է նոր՝ 1-9 բալանոց մետրիկական սանդղակ, որտեղ 1-ը ընդգծում է առաջարկված դատողությունների հանդեպ առավելագույն հավատ, 9-ը՝ նվազագույն:

Ընդհանուր առմամբ, Աստծո գոյությանը հավատում է հարցվածների 91.9%-ը, 85,4%-ը հավատում է, որ Աստված է ստեղծել աշխարհը, Աստված է բարոյականության աղբյուրը (83,9%) և որ դժոխքն ու դրախտը գոյություն ունեն (64,1%) (տե՛ս **գծապատկեր 6.10**):

Երիտասարդների մի մասի համար կրոնը զուտ ծիսական նշանակություն ունի. հարցվածների 77,3%-ն է կանոնավոր կամ հաճախ աղոթում, 76%-ը՝ նշում կրոնական տոները, 25,8%-ը՝ մասնակցում պատարագների: Իսկ հոգևորականի մոտ խոստովանության կամ ուխտագնացության գնալն ընդհանրապես տարածված չէ երիտասարդության շրջանում (տե՛ս **գծապատկեր 6.11**): Համապատասխանաբար նրանց 80,3%-ն ու 70,1%-ը երբեք չեն արել դա, իսկ 33,1%-ը բոլորովին չի վստահում կրոնական առաջնորդներին: Հետաքրքիր է, որ հարցված երիտասարդների 72,9%-ը չի դիտում կրոնական հաղորդումներ:

Գծապատկեր 6.10: Որքանո՞վ եք հավատում, որ ...



Ֆոկուս խմբային քննարկումներին մասնակցած երիտասարդների զգալի մեծամասնության համար քրիստոնյա լինելը նույնացվում է քրիստոնեական հավատ ունենալու հետ: Այսինքն՝ քրիստոնյա լինել, նշանակում է հավատալ Աստծոն: Միևնույն ժամանակ, մասնակիցների կրոնական ինքնությունը չի կապվում եկեղեցու հետ, ինչն արտահայտված է մասնակիցներից մեկի հետևյալ մտքում.

«Պարտադիր չի՝ գնաս եկեղեցի, մում վառես, եթե դու հավատում ես քո Աստծուն, ես հավատում եմ Աստծուն ու ես գիտեմ, որ Աստված գիտի, որ ես հավատում եմ իրան»

(ՖԽ, 21-29 տարեկաններ, արական, մարզային քաղաք):

Քրիստոնյա լինելու մեջ երիտասարդները շատ են կարևորում ընտանիքի դաստիարակությունը, որը նրանց է փոխանցում քրիստոնեական արժեքներն ու նորմերը.

«Ես, օրինակ, տարբերակում եմ «կրոնական դաստիարակություն» ասվածը, կարելի է հավատք ունենալ, բայց էդ կյանքով չապրել, օրինակ՝ շատ ընտանիքներում գիտեմ ուտելուց առաջ աղոթում են, նոր են սկսում ուտել կամ ամեն կիրակի գնում են եկեղեցի, բաներ են դրանք, ավտրիբուտներ են, որ պիտի սովորացնեն, օրինակ՝ էդ աղոթքը, որ պետք ա ասեն ուտելուց առաջ, ես կոնկրետ պապայիցս եմ սովորել»

(ՖԽ մասնակից, 19 տ., իգական, մարզային քաղաք):

Քրիստոնեությունը երիտասարդների համար հայոց պատմության հիմնարար շարժիչ ուժը և հայի ինքնության կարևոր մասն է ոչ միայն հայաստանյան հասարակության շրջանակներում, այլև՝ միջազգային համապատկերի մեջ ինքնաներկայացման տեսանկյունից.

«Օրինակ՝ իմ մոտ եղել ա իրավիճակ, երբ այլ երկրում էի, ինձ հպարտ էի զգում, երբ հարցրեցին՝ ինչ ազգի ես, առաջինը մտաբերեցի էն, որ մենք ենք քրիստոնեությունը առաջինը ընդունել, ես ուրախ եմ, որ քրիստոնյա եմ»

(ՖԽ մասնակից, 29 տ., արական, Երևան):

Այսպիսով, քրիստոնեությունը ընկալվում է պատմության համատեքստում, որպես հայոց ինքնությունը խորհրդանշող երևույթ.

«Ես, հա, համարում եմ ինձ հայ քրիստոնյա, հա, էդ ոնց որ ես կարծում եմ, որ էդ երկուսը իրարից տարանջատելի չի, իմ հայ լինելն ա որոշում իմ քրիստոնյա լինելը»

(ՖԽ մասնակից, 26 տ., արական, գյուղական համայնք):.

Գծապատկեր 6.11: Որքան հաճախ եք Դուք ...



(Ան)հանդուրժողականություն և սոցիալական հեռավորություն

Ինչ վերաբերում է տարբեր խմբերի/համայնքների պատկանող մարդկանց նկատմամբ երիտասարդների հանդուրժողականությանը, ապա պատկերը հետևյալն է. երիտասարդների ճնշող մեծամասնությունը չի ցանկանում, որ իրենց հարևանությամբ և/կամ իրենց համայնքում բնակություն հաստատեն միասեռականներ, դրան դեմ է արտահայտվել հարցվածների 81,0 %-ը (տե՛ս **գծապատկեր 6.12**): Իրենց համարելով Հայ Առաքելական Եկեղեցու ներկայացուցիչներ ու եկեղեցու ավանդույթներին հետևողներ՝ ֆոկուս խմբերին

մասնակցած երիտասարդները անհադուրժողականություն են արտահայտում համասեռամոլների նկատմամբ, ինչն արտահայտված է, օրինակ, հետևյալ մեջբերումներում.

> *«Աստուծաշունչը, քրիստոնեությունը, մեր եկեղեցին, չի ընդունում համասեռամոլներին, դա մեղք ա»*
>
> (ՖԽ, 21-29 տարեկաններ, արական, Երևան)

> *«Ասենք, եթե եվրոպացիք ընդունում են [համասեռամոլությունը], ասում են՝ էդ իրանց խնդիրն ա, մենք մեր ազգային ակունքները, մեր քրիստոնեական հավատքը պղտորում ենք, էնց չի կարելի»*
>
> (ՖԽ, 14-20 տարեկաններ, իգական, Երևան):

Գծապատկեր 6.12: Ինչպե՞ս կվերաբերեք այն հանգամանքին, որ նշված մարդիկ տեղափոխվեն Ձեր հարևանությամբ ապրելու:



78,9%-ը ցանկանում է սոցիալական հեռավորություն պահպանել ադրբեջանցիների, իսկ 64,8%-ը՝ թուրքերի նկատմամբ (տե՛ս **գծապատկեր 6.13**): Այլակրոն իրանցիների հարևանությունը անընդունելի է հարցվածների 27,7%-ի համար: Այլազգի պոտենցիալ հարևանների նկատմամբ (ամերիկացիներ, ռուսներ, վրացիներ) անհանդուրժողականությունը ավելի ցածր մակարդակի է, քան, օրինակ, փախստականների ընտանիքների նկատմամբ դրսևորվող անհանդուրժողականությունը. հարևանությամբ բնակվող փախստականներին վատ կվերաբերվի երիտասարդ հարցվածների 12,5%-ը: Երիտասարդները գրեթե ոչ մի խնդիր չունեն հատուկ կարիքներով մարդկանց, թոշակառուների և ուսանողների հետ հարևանություն անելու հարցում:

Գծապատկեր 6.13: Ինչպե՞ս կվերաբվերեք այն հանգամանքին, որ նշված ազգությամբ ընտանիքները տեղափոխվեն Ձեր հարևանությամբ ապրելու:



Ֆոկուս խմբային քննարկումների ընթացքում երիտասարդներն իրենց որպես քրիստոնյա ներկայացնելու համար հաճախ էին հղում անում այլ դավանանքների: Այս առումով, իսլամը երբեմն ընկալվում էր որպես ավելի համախմբված հավատացյալներ ենթադրող դավանանք, ինչն արտացոլված է հետևյալ մեջբերման մեջ.

«Մուսուլմանների մեջ, գվյալ մուսուլմանական պետությունում կրոնը շատ ուժեղ գործոն է համարվում, նրանց մոտ կրոնի գաղափարախոսությունը շատ ա արմատացած իրանց ապրած կյանքի մեջ, դրա համար իրենք կարողանում են պահպանել իրենց համախմբվածությունը, այսինքն երբ որ ասում են՝ Ալլահը կանիծի ձեզ, իրանք դրան շատ լուրջ ու վստահաբար են վերաբերվում, ցավոք մենք՝ քրիստոնյաներս, այդ հարցին թերի ենք նայում»

(ՖԽ, 21-29 տարեկաններ, արական, գյուղական համայնք):

Ֆոկուս խմբերին մասնակցած երիտասարդների մի մասը հանդուրժող էր այլ դավանանքի ներկայացուցիչների նկատմամբ, մի մասն էլ, ընդհակառակը, գտնում էր, որ եթե դիմացինը քրիստոնյա չէ, ապա նրանից պետք է զգուշանալ, քանի որ նրա արժեհամակարգն ու ինքնությունը տարբեր են հայերի արժեհամակարգից ու ինքնությունից: Գրեթե յուրաքանչյուր խմբային քննարկման ընթացքում այս հարցը դառնում էր բանավեճի առարկա, և հնչում էին տարբեր կարծիքներ.

«Բոլոր կրոնները, ինձ թվում ա, հավասարազոր են իրանք ու կապ չունի, մարդը մնում ա մարդ, ինքը ինչ կրոնի ա դավանում, լինի մուսուլմանություն, քրիստոնեություն, բուդիստ ա, թե հուդայականություն ա դավանում»

(ՖԽ, 21-29 տարեկաններ, արական/իգական, Երևան)

«Մենք [հայերը] առաջին ազգն ենք եղել, որ քրիստոնեությունը ընդունել ա, դա մեր մեջ էն 301 թվից ա եկել, ամենքս մեր մեջ հավատում ենք, կապ չունի ամեն օր ենք եկեղեցի գնում, թե շաբաթը մեկ, օրինակ ես ամեն եկեղեցու կողքով անցնելիս պետք ա խաչակնքվեմ, ամեն մարդ իրա ձևով ա իր հավատքը արտահայտում...»

(ՖԽ, 21-29 տարեկաններ, արական, մարզային քաղաք):

Թուրքերի հանդեպ հանդուրժողականության և/կամ անտարբերության աստիճանը համեմատաբար ավելի բարձր է քաղաքաբնակների շրջանում (X^2=16,346, p=.003, Cramer's V=.117), իսկ միասեռականների հանդեպ հանդուրժողականության և/կամ անտարբերության աստիճանը համեմատաբար ավելի բարձր է իգական սեռի ներկայացուցիչների շրջանում (X^2=53,164, p<.001, Cramer's V=.211): Հարկ է ընդգծել, որ միասեռականներին ընդունելի համարող երիտասարդների (N=49) 42,9%-ը չի ցանկացել, որ իրենց հարևանությամբ միասեռականներ ապրեն, իսկ 26,5%-ն անտարբեր է այդ հարցում (տե՛ս **գծապատկեր 6.14**):

Գծապատկեր 6.14: Ըստ Ձեզ, ընդունելի՞ են միասեռականները (տղամարդ՝ գեյեր և կին՝ լեսբիներ): Ինչպե՞ս կվերաբվերեք այն հանգամանքին, որ նշված մարդիկ տեղափոխվեն Ձեր հարևանությամբ ապրելու:



Քննարկում

Արդի հայաստանյան երիտասարդության ինքնանույնականացման գործընթացում ազգը բնութագրող բաղադրատարրերից՝ քաղաքացիական պատկանելությունը գրեթե չի կարևորվում, ինքնաբնորոշման հարցում կենտրոնական նշանակություն են ստանում էթնոխորհրդանշական տարրերը (էթնիկությունը և կրոնը) և ընտանեկան պատկանելությունը: Այդուհանդերձ, կրոնը առավելապես ներկայանում է որպես խորհրդանշական ատրիբուտ, հայի էթնիկ ինքնության արտահայտիչ և չի կապվում պետականության կամ քաղաքացիական ինքնագիտակցության կառուցման գործընթացների հետ: Որպես առավել ընդգծված արժեք դիտարկվում է ընտանիքը, և ընտանիքի արժևորման ֆոնին դիտարկվում է քաղաքացիական հասարակության և պետության ինստիտուտների հանդեպ վստահության համեմատաբար ցածր մակարդակ: Եթե համաձայն արևմտյան մոդելի հասարակական կազմակերպման լեգիտիմ ձևը պետությունն է, ապա հայաստանյան հասարակության պայմաններում՝ ընտանիքն է (Vermishyan, 2015):

Սույն խնդիրը արտահայտվում է նաև երիտասարդների հասարակական պասիվության և/կամ հասարակական գործունեության մեջ ընդգրկման մտադրությունների ոչ ադեկվատության համատեքստում: Հարցման արդյունքները ցույց են տալիս, որ երիտասարդության փոքր հատվածն է ընդգրկված հասարակական/կամավորական գործունեության մեջ, իսկ ընդգրկվածների մի ստվար զանգվածի համար կամավորական աշխատանք իրականացնելու պատճառներն առավել ռացիոնալ բնույթ ունեն (ընդգծելով զբաղված լինելու, մասնագիտական գիտելիքներ կիրառելու, նոր ընկերներ ձեռք բերելու և հնարավոր գործատուների հետ հանդիպելու ցանկությունը) և հազվադեպ են պայմանավորված այլոց օգնելու մտադրությամբ: Այդ տեսանկյունից դիտարկելի է հետխորհրդային հասարակությունների բնորոշ անձնական շահի գերակայության և հանրային բարիքի նվազ արժևորման միտում (Skrebyte, Garnett & Kendal, 2016): Մյուս կողմից հարկ է ընդգծել կամավորության ինստիտուտի ներդրման ֆորմալ մեխանիզմների բացակայության խնդիրը. Մասնավորապես՝ կամավորական աշխատանքը չի կարգավորվում ՀՀ օրենսդրությամբ, ուստի իրավական բացթողումները, ընդհանրական չափանիշների բացակայությունը տեղիք են տալիս կամավորականության վերաբերյալ տարաբնույթ մեկնաբանությունների (Transparency International Anticorruption Center, 2011):

Ընդհանուր առմամբ, հիմնվելով հետազոտության արդյունքների վրա՝ երիտասարդության ընկալումներում կարելի է նկատել ավագ սերնդի խորհրդային մտածելակերպից ժառանգված կոլեկտիվիզմի աղավաղված դիրքորոշումներ, որոնց բնորոշ է խոսքի և գործի անհամապատասխանությունը և որոնք առավել արտահայտված են ժողովրդական ասացվածքների սիմվոլիկ և գաղափարախոսական բովանդակության և երիտասարդների իրական գործելակերպի միջև հակասությունում:

Հայաստանյան երիտասարդության ընդհանուր վստահության (generalized trust) ցածր մակարդակի, էթնիկ-կրոնական հիմքի վրա ինքնանույնականացման/տարբերակման և առաջնային սոցիալական խմբերում (հատկապես ընտանեկան) ներփակվածության պայմաններում ի հայտ են գալիս հասարակության մեջ երիտասարդների հարակցվածության (cohesion) հիմնախնդիրներ (Social Cohesion Survey, 2011): Սույն խնդիրները դրսևորվում են տարբեր էթնիկ և սոցիալական խմբերի հանդեպ հանդուրժողականության համատեքստում. մասնավորապես՝ առավել ցածր է հանդուրժողականությունը ոչ ավանդական սեռական կողմնորոշում ունեցող և ոչ քրիստոնյա խմբերի և կատեգորիաների նկատմամբ: Պատմականորեն իրենց մշակութային և կրոնական արժեքները պահպանելու համար հայերը զգուշորեն են վերաբերվում նոր մոտեցումների ներհոսքերի և ավանդական գենդերային դերերի նկատմամբ դիրքորոշումների փոփոխությանը (տե՛ս Գևորգյան, 2011): Սա գործել է որպես ինքնապաշտպանական մեխանիզմ՝ էթնիկ ինքնությունը չկորցնելու համար: Ընդ որում, սոցիալական ներփակվածության համեմատաբար ցածր մակարդակ և հասարակական ներգրավվածության և հանդուրժողականության առավել բարձր մակարդակ դիտարկելի է իգական սեռի ներկայացուցիչների շրջանում:

Ավելի մանրամասն կրոնին անդրադառնալով՝ Հայ Առաքելական Եկեղեցու հետևորդների թիվը 1970 թ.-ին՝ Խորհրդային Հայաստանում միայն 33,9% էր, մինչդեռ անկախության հռչակումից մի քանի տարի անց՝ 1995 թվականին, այս ցուցանիշը հասել է 73,4%-ի, իսկ 2000-ականներին՝ 78,2%-ի (Barrett et al., 2001): Հայերի 76%-ն է հրապարակայնորեն վստահություն ցուցաբերել Հայաստանում կրոնական հաստատությունների նկատմամբ (Caucasus Barometer, 2013): Ըստ Սարգսյանի՝(2008), կրոնական բազմազանության պակասը Հայաստանում կապված է սոցիալական և քաղաքական հայացքների բազմազանության բացակայության հետ: Տվյալները նաև խոսում են այն մասին, որ հայաստանյան ներկայիս երիտասարդության կրոնական հայացքները, արժեքները նրանց չեն ուղղորդում դեպի աշխարհաքաղա-

քացիություն կամ եվրոպական ինքնությունը, ինչը հետագա ուսումնասիրությունների հիմք է ստեղծում:

Ընդհանուր առմամբ, անկախ պետության քաղաքացու համապատասխան ազգային նույնականության ձևավորման միջոցով սոցիալական զարգացման ապակայունացման միտումների թուլացումը ենթադրում է նաև, որ կրոնական դաստիարակության հետ մեկտեղ նույնականության հիմնահարցի լուծման համար, որպես պետական կառավարման կարևորագույն ոլորտ, պետք է դիտարկել նաև սոցիալական քաղաքականությունը՝ որպես սոցիալական ինտեգրացիան և քաղաքական համակարգի լեգիտիմությունն ապահովող գործոն (Մկրտիչյան, 2007):

ԸՆՏԱՆԻՔ և ԱՄՈՒՍՆՈՒԹՅՈՒՆ

Ներածություն

Հայաստանյան հասարակությունում ընտանիքն ավանդաբար ընկալվում է իբրև կարևորագույն արժեքներից մեկը: Սա նկատելի էր նախորդ բաժիններում բերված՝ ընտանիքի գործոնի կարևորությանը վերաբերող տվյալներում: Այդուամենայնիվ, իր տեղն ու նշանակությունը չզիջելով այլ արժեքների՝ ընտանիքը որոշակի փոխակերպումների փուլում է. բարձրացել է ամուսնանալու տարիքը, երեխաների թիվը կրճատվել է, բազմանդամ ընտանիքով՝ ծնողների հետ համատեղ ապրելու սովորույթը տեղի է տալիս ծնողներից առանձին ապրելու երիտասարդների ցանկությանը (Մանուկյան, 2012, էջ 193): Միևնույն ժամանակ, ընտանիքն առաջվա պես իր անդամներին աջակցություն ցուցաբերող հիմնական օղակն է: Վերջին տարիների մի հետազոտություն ցույց է տալիս, որ երիտասարդներն ամուր ընտանեկան կապեր ունեն, և նրանց վարքը մեծապես վերահսկվում է ընտանիքի կողմից (Roberts et al., 2009): Սակայն, Հայաստանից արտագաղթի աճի պայմաններում շատ ընտանիքներ բաժանվում են՝ ընտանիքի մի մասը Հայաստանում է, մյուսը՝ արտերկրում (Tarkhnishvili et al., 2005): Ընդ որում, արտագնա աշխատանքների են մեկնում հիմնականում տղամարդիկ, կանայք երեխաների հետ մնում են Հայաստանում (International Labour Organization, 2009): Ստացվում է, որ ավանդական ընտանիքը վերածվում է «հեռավորության վրա ընտանիքի»: Այս ամենը ներազդում է երիտասարդների կենսակերպի և մտածելակերպի վրա: Հետազոտության այս բաժնում ներկայացված են տվյալներ երիտասարդների՝ ընտանիքի հետ կապվածության, ընտանիքի կողմից երիտասարդների նկատմամբ առկա սոցիալական վերահսկողության, նաև՝ աջակցության մասին: Բերվում են տվյալներ որոշում կայացնելու, ընատնիքում կամ ընտանիքից դուրս ապրելու, ընտանիքը պլանավորելու առանձնահատկությունների վերաբերյալ:

Հիմնական տվյալներ

- Երիտասարդների 87,8%-ն անվերապահորեն նշում է, որ իր կյանքի հիմնական նպատակը ծնողներին հպարտության առիթներ տալն է:
- Յոթ և ավելի շնչից բաղկացած ընտանիքներ հանդիպել են քաղաքաբնակների 8,8%-ի դեպքում, այդպիսի ընտանիքում է ապրում գյուղաբնակների 20,6%-ը:
- Ընտանիքի հայրիշխանական կառուցվածքը պայմանավորում է հարցվածների պատասխանները հետևյալ հարցին՝ կարևոր որոշումների կայացման հարցում ո՞վ է ընտանիքի ամենաազդեցիկ անդամը: Երիտասարդների 51,3%-ի համար ամենաազդեցիկ անդամը հայրն է, 18,8%-ի համար՝ մայրը, 15,8%-ի համար՝ ամուսինը, 2,1%-ի համար՝ եղբայրը:
- Որորշումներ կայացնելիս ամուսնացած գյուղաբնակ կանանց 84,5%-ի և քաղաքաբնակ կանանց 77,0%-ի համար ազդեցիկ է ամուսնու դերը, իսկ իրենց կնոջ ազդեցիկությունը ընդհանրապես չեն ընդգծում քաղաքաբնակ արական սեռի ներկայացուցիչները, և միայն ամուսնացած գյուղաբնակ տղամարդկանց 13,0%-ն է ընդգծում այն:
- Արական սեռի հարցվածների մեծամասնությունը՝ 57,6%-ը, տղամարդու համար ամուսնության լավագույն տարիք է նշում 25-ից 27 տարեկան ժամանակահատվածը, կնոջ համար նշված տարիքը լավագույնն է հարցվածների 20,4%-ի համար, իսկ 47,1%-ի համար ամուսնության լավագույն տարիքը 22-ից 24 տարեկան ժամանակահատվածն է:
- Հարցված երիտասարդների 70,6%-ը ցանկանում է անպայման մեկ աղջիկ ունենալ, առնվազն մեկ տղա է ցանկանում ունենալ 52,3%-ը: 46,3%-ը ցանկանում է երկու և ավելի տղա ունենալ, իսկ երկու և ավելի աղջիկ ցանկանում է ունենալ հարցվածների 26,2%-ը:
- Իգական սեռի ներկայացուցիչների մեծամասնությունը՝ 64,8%-ը, որպես երեխա ունենալու ցանկալի տարիք է նշել մինչև 25 տարեկանը, իսկ տղամարդկանց՝ 85,0%-ը՝ 25 տարեկանից բարձր տարիքը:

Վերլուծություն

Ծնողների հետ փոխհարաբերություններ

Հայաստանյան երիտասարդների կյանքում ծնողների դերը շատ կարևոր է, այն աստիճան, որ հարցված երիտասարդների 87,8%-ն անվերապահորեն

նշում է, որ իր կյանքի հիմնական նպատակը ծնողներին հպարտանալու առիթներ տալն է: Ծնողների հետ կապվածության և մտերմության, նրանց հանդեպ ունեցած վստահության բարձր աստիճանի մասին են վկայում նրանց հետ կամ նրանցից առանձին ապրելու վերաբերյալ հարցմամբ ձեռք բերված տվյալները. հարցված երիտասարդների մեծ մասը՝ 71,9%-ը, վերջին մեկ տարվա ընթացքում ապրել է ծնողների հետ (որից 73,4%-ը հենց ծնողների տանը), 14,7%-ը՝ ամուսնու/կնոջ ծնողների հետ, միայն 7,5%-ն է, որ ապրել է առանձին ամուսնու/կնոջ և/կամ երեխաների հետ: Ընկերների/բարեկամների տանը ապրել են հարցվածների 2,8%-ը, իսկ միայնակ՝ ընդամենը 2,2%-ը (տե՛ս **գծապատկեր 7.1**):

Գծապատկեր 7.1: Ո՞ւմ հետ եք ՀԻՄՆԱԿԱՆՈՒՄ ապրել վերջին մեկ տարվա ընթացքում:



Ուշագրավ է, որ երիտասարդ հարցվածների 1,8%-ն է ապրում վարձակալած բնակարանում, որի համար հենց ինքն էլ վճարում է, ուսանողական հանրակացարանում բնակվում է 0,3%-ը: Պետք է նշել նաև, որ երիտասարդների 77,8%-ն իր առանձին սեփական սենյակն ունի, չնայած, որ միայն 40%-ն է ապրում 4 և ավելի սենյականոց բնակարանում:

Ծնողների հետ ապրելու հիմնական պատճառը, ըստ հարցվածների, այն է, որ այդպիսի լուծումն ինչպես սոցիալ-կենցաղային, այնպես էլ ֆինանսատնտեսական կամ այլ առումներով ամենաճիշտն է իրենց ընտանիքների համար: Այդ հանգամանքը հավանաբար պայմանավորված է ծնողների հետ ունեցած շատ լավ հարաբերություններով, ինչը նշում է երիտասարդների 72,4%-ը (տե՛ս **գծապատկեր 7.2**), իսկ ծնողների հետ վիճելու

կամ կոնֆլիկտային հարաբերությունների մասին հիշատակել է միայն 2,7%-ը: Երիտասարդների միայն 15,8%-ն է ցանկանում հնարավորության դեպքում միայնակ ապրել (տե՛ս **գծապատկեր 7.3**). այդ ցանկությունն առավել ընդգծվում է տարիքով ավելի մեծ հարցվածների մոտ (X^2=80,144, p<0.001, Cramer's V=.160):

Գծապատկեր 7.2: Նշված դատողություններից ո՞րն է լավագույնս նկարագրում Ձեր փոխհարաբերությունները ծնողների հետ:



Գծապատկեր 7.3: Նշված դատողություններից ո՞րն է լավագույնս նկարագրում ծնողների հետ ապրելու ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՏՃԱՌԸ:



Հարցված երիտասարդները հիմնականում բնակվում են չորս (28,2%), հինգ (24,4%) և վեց (14.9%) շնչից բաղկացած տնային տնտեսություններում: Համեմատաբար մեծ թիվ են կազմում նաև յոթ (7,1%) և ութ (3,4%) շնչից

բաղկացած տնտեսությունները (տե՛ս **գծապատկեր 7.4**[12]): Ընդ որում, եթե յոթ և ավելի շնչից բաղկացած ընտանիքներ հանդիպել են քաղաքաբնակների 8,8% դեպքերում, ապա այդպիսի ընտանիքներում է ապրում գյուղաբնակների 20,6%-ը:

Հատկապես գյուղական գերդաստաններում ավանդույթների պահպանման և փոխանցման առումով մեծ է ավագ սերնդի ներկայացուցիչների դերը երիտասարդների սոցիալականացման գործում: Այդ հանգամանքը դրսևորվում է երիտասարդների 60,7%-ի պատասխաններում, նրանց կարծիքով գյուղն է այսօր ազգային արժեքներն ու ավանդույթները պահպանողը: Ընդ որում, այդպես է կարծում գյուղաբնակ հարցվածների 72,9%-ը, իսկ քաղաքաբնակների 53,4%-ը:

Գծապատկեր 7.4: Քանի՞ հոգի է ապրում Ձեր տնային տնտեսությունում (ներառյալ Ձեզ):



Ընտանիքի հայրիշխանական կառուցվածքը պայմանավորում է հարցվածների պատասխանները հետևյալ հարցին՝ կարևոր որոշումների կայացման հարցում ո՞վ է ընտանիքի ամենաազդեցիկ անդամը: Երիտասարդների 51,3%-ի համար ամենաազդեցիկ անդամը հայրն է, 18,8%-ի համար՝ մայրը, 15,8%-ի համար՝ ամուսինը, 2,1%-ի համար՝ եղբայրը (տե՛ս **գծապատկեր 7.5**): Կոլեգիալության սկզբունքը, այսինքն՝ երբ բոլորն են հավասարապես կարևորվում որոշումներ կայացնելիս, գործում է միայն հարցմանը մասնակցած երիտասարդների 2,6%-ի ընտանիքներում: Եվս 4,7%-ը պատասխանել է՝ ոչ ոք:

12 Ընդհանուր՝ N=1193, Mean=4.78, Std=1.629, Mdn=5, քաղաք՝ N=747, Mean=4.46, Std=1.517, Mdn=4, գյուղ՝ N=446, Mean=5.33, Std=1.667, Mdn=5:

Գծապատկեր 7.5: Ձեր ընտանիքի ո՞ր անդամն է ամենաազդեցիկը Ձեզ համար կարևոր որոշումների կայացման հարցում:



Կախված հարցված երիտասարդների սեռից, տարիքից, բնակավայրից և ամուսնական կարգավիճակից՝ փոփոխվում են նաև որոշումների կայացման հարցում երիտասարդների համար ամենաազդեցիկ դերակատարները (համապատասխանաբար՝ X^2=165,764, p<0.001, Cramer's V=.0,392, X^2=245,911, p<0.001, Cramer's V=.275, X^2=21,482, p<0.001, Cramer's V=.141, X^2=591,550, p<0.001, Cramer's V=.746)։ Որորշումներ կայացնելիս ամուսնացած գյուղաբնակ կանանց 84,5%-ի և քաղաքաբնակ կանանց 77,0%-ի համար ազդեցիկ է ամուսնու դերը, իսկ իրենց կնոջ ազդեցիկությունը ընդհանրապես չեն ընդգծում քաղաքաբնակ արական սեռի ներկայացուցիչները և միայն ամուսնացած գյուղաբնակ տղամարդկանց 13,0%-ն է ընդգծում այն։ Հոր ազդեցիկ դերը հատկապես կարևոր է գյուղաբնակ չամուսնացած արական սեռի ներկայացուցիչների 82,8%-ի և իգական սեռի ներկայացուցիչների 70,9%-ի համար։ Իրենց ինքնուրույնությամբ առավել աչքի են ընկնում հատկապես ամուսնացած քաղաքաբնակ արական սեռի ներկայացուցիչները (15.6%)։ Մոր դերը հատկապես ընդգծված է չամուսնացած իգական սեռի ներկայացուցիչների պատասխաններում (տե՛ս **գծապատկեր 7.6**)։

Գծապատկեր 7.6: Ձեր ընտանիքի ո՞ր անդամն է ամենաազդեցիկը Ձեզ համար կարևոր որոշումների կայացման հարցում:





Ծնողների կողմից երիտասարդներին ներկայացվող պահանջներն ու իրականացվող սոցիալական վերահսկողությունը առավել ընդգծվում են ֆոկուս խմբային քննարկումների տվյալներում.

«Ծնողները կարծում են, որ երեխաները պետք է իրենց հոգսերով ապրեն, կա այդ խնդիրը»

(ՖԽ, 21-29 տարեկաններ, իգական, Երևան)

«Կան ծնողներ, որ ինչքան էլ ծանրաբեռնված լինես, ասում են երեխային, որ դու պետք է առաջնային համարես քո ուսումը և ավելի մեծ ուշադրություն դարձնես ուսմանը»

(ՖԽ, 14-20 տարեկաններ, իգական, մարզային քաղաք)

«Երիտասարդ աղջիկները ձգտում են ավելի բաց հագնվել, իսկ ծնողները և տատիկ-պապիկները չեն ընդունում»

(ՖԽ, 14-20 տարեկաններ, իգական, գյուղական համայնք)

«Իհարկե, ծնողների ասածով պիտի շարժվել»

(ՖԽ, 14-20 տարեկաններ, իգական, գյուղական համայնք):

Ըստ որակական տվյալների, հատկապես դեռահաս աղջիկների կենսակերպի նկատմամբ զգալի է ավագ եղբոր վերահսկողությունը կամ ավագ եղբոր կերպարի նշանակությունը.

«Իմ ախպերը կարա ժամը 1-ին [գիշերը] գա տուն, ու իմ մաման կյանքում չի եղել ախպորս հարցնի՝ ո՞ր ես, իմ ախպերը արդեն մեծ մարդ ա, իրա պատասխանատվությունը ունի, բայց որ ես ուշ գամ, նույն ախպերս չի թողի»

(ՖԽ մասնակից, 17 տ., իգական, Երևան)

«Կան տղաներ, որ դեմ են, որ իրենց քույրերը տղաների հետ ընկերություն անեն»

(ՖԽ, 14-20 տարեկաններ, իգական, գյուղական համայնք)

«Ես էլ ամենաշատը մեծ ախպորս կարծիքն եմ հաշվի առնում, իսկ եթե ինքը չի թողնում, մամաս ասի, տատս ասի, ով ասի, իրա ասածը վերջ, իրա ասածը ասած ա»

(ՖԽ մասնակից, 16 տ., իգական, գյուղական համայնք)

«Ախպորս համար կարևոր ա, որ իրա քույրը էնպես հանդիսանա, որ չկանգնեն ասեն՝ քո քույրը էսպիսի աղջիկ ա, որ ինքը գլուխը կախ մաման չգա»

(ՖԽ, 14-20 տարեկաններ, իգական, մարզային քաղաք):

Հասկանալի է, որ գործող գենդերային կարծրատիպերի հիման վրա է, որ սահմանվում է՝ ինչ է կարելի ու ինչ չի կարելի հատկապես դեռահաս աղջիկների համար: Նկատելի է, որ ընտանիքի վերահսկողությունն ու միջամտությունը շատ ավելի զգալի է աղջիկների կյանքում, քան տղաների: Առհասարակ, բոլոր տարիքի իգական սեռի ներկայացուցիչների համար երեկոյան ուշ ժամին տուն հասնելը անթույլատրելի երևույթ է.

> *«Իմ ընտանիքում խոսակցություն չի եղել իմ դուրս գալու համար, ես երբեք ուշ չեմ եկել տուն կամ ես միշտ գանն եմ եղել, երբ որ ուշ ժամ ա, օրինակ ես ունեմ ծանոթներ, որ ուշ են գալիս տուն իրանց պապիկն ա զանգում արդեն՝ ուր ա էդ աղջիկը, ի՞նչ ա անում... 11:30՝ էս ժամին դրսում»*
>
> (ՖԽ մասնակից, 20 տ., իգական, Երևան):

Ընդ որում, «դուրս» բառն այստեղ նշանակում է այլ տեղ, ոչ հենց իր՝ աղջկա տանը: Այսինքն՝ եթե աղջիկն այդ ժամին տանը չէ, ուրեմն անկախ նրա գտնվելու վայրից, նա «դրսում» է: Հատկապես գյուղական համայնքներում, ինչպես նաև մարզային քաղաքներում, ուժեղ է համայնքի վերահսկողությունը՝ համայնքի կողմից աղջիկների կյանքը վերահսկելը բամբասանքի, հարևանների խորհուրդների միջոցով.

> *«Դե գյուղ ա, մի բան էն չարեցիր, մի քիչ ուշ եկար, մի տղայի հետ տեսան՝ վերջ [13]...»*
>
> (ՖԽ, 21-29 տարեկաններ, իգական, գյուղական համայնք)

> *«Դե մինչև ամուսանանալը էլի կարճ [կիսաշրջազգեստ] մեկ-մեկ հագնում էի, բայց ամուսանանալուց հետո՝ ոչ, գյուղում ի՞նչ կասեն»*
>
> (ՖԽ, 21-29 տարեկաններ, իգական, գյուղական համայնք)

> *«Հանկարծ մի օր ուշ գամ տուն, կամ մի տղայի հետ հարևանությունը տեսնի, հետո պիտի բացատրական աշխատանքներ տանես, որ անունդ չհանեն»*
>
> (ՖԽ մասնակից, 22 տ., իգական, մարզային քաղաք)

> *«Ժամը 11-ին տուն ես գալիս, ասում են՝ բա ամոթ չի՞, էս ժամին տուն ես գալիս բան, բա հարևաններն ի՞նչ կմտածեն, տենց մի քիչ բան կա էլի հայերի մոտ»*
>
> (ՖԽ մասնակից, 20 տ., իգական, Երևան):

13 «Վերջ» բառը նշանակում է, որ աղջկա մասին բամբասանք կտարածվի, որ նա ընդունված բարոյական վարքականոններին չի հետևում:

Տղաների նկատմամբ ծնողների վերահսկողությունը հիմնականում վերաբերում է կրթությանը՝ վերահսկում են, որ տղաները լուրջ վերաբերվեն դպրոցական կամ բուհական կրթությանը, ինչպես նաև տղաների ու նրանց ծնողների մեջ, ըստ ֆոկուս խմբերի մասնակիցների, շատ են լինում տարաձայնություններ համացանցի օգտագործումը չարաշահելու պատճառով.

«Մեծերը մտածում են, որ ինտերնետը ամենավատ բանն ա, բայց չեն մտածում, որ երեխեքը դրանից կարող ա ինֆորմացիա են ստանում»

(ՖԽ, 14-20 տարեկաններ, արական, Երևան)

«Ուղղակի ասում են, որ քիչ մտնենք՝ աչքերի, տեսողության համար վատ ա, որ էդքան կոմպյուտերի առաջ նստում ես»

(ՖԽ մասնակից, 16 տ., արական, մարզային քաղաք)

«Ինտերնետը շատ ա ազդում մեր կյանքի վրա. մի ժամանակ գյուղում ֆուտբոլ էին խաղում, հեծանիվ էին քշում, հիմա չէս տենա, հիմա սաղս կոմպի դիմաց զոմբիացած ենք»

(ՖԽ, 14-20 տարեկաններ, արական, գյուղական համայնք):

Տղա-աղջիկ փոխհարաբերությունները նույնպես կառուցվում են փոխադարձ վերահսկողության և, հատկապես դեռահասության շրջանում, համայնական վերահսկողության պայմաններում.

«Տղաների մտածելակերպն ուրիշ ա, մենք [աղջիկները] իրանց չենք հասկանում»

(ՖԽ, 14-20 տարեկաններ, իգական, գյուղական համայնք)

«Տղաները աղջիկներին միշտ վարքի համար քննադատում են, դասարանի աղջիկները ու տղաները մենակ քննությունից քննություն են ընկերանում, թե չէ միշտ պատերազմ ա [ծիծաղ]»

(ՖԽ, 14-20 տարեկաններ, իգական, մարզային քաղաք)

«Օրինակ, դպրոցական տարիքում սիրահարվում ես, արդեն ընկերություն ես անում, էդ վատ ա արդեն էլի, վատ են մտածում, հասարակությունը վատ ա մտածում, ո՞նց կարան դպրոցական տարիքից իրար սիրեն»

(ՖԽ մասնակից, 17 տ., արական, գյուղական համայնք)

> *«Օրինակ, եթե հագած շորը իրանց [կողաներին] դուր չի գալիս, ընենց են ձեռ առնում, իրանց տալի-անցնում»*
>
> (ՖԽ, 14-20 տարեկաններ, իգական, գյուղական համայնք)

> *«Աղջիկները շատ են սխալ քայլեր անում, ու դա տղաները ավելի շուտ են նկատում, քան աղջիկների ծնողները, եթե մի ինչ-որ սխալ քայլ արեցիր, քեզ կքննադատեն՝ վայ խի՞ սենց արեցիր, վայ ընենց արեցիր»*
>
> (ՖԽ, 14-20 տարեկաններ, իգական, գյուղական համայնք):

Ինչ վերաբերում է որոշումների ընդունման բուն գործընթացին, ապա հարցված երիտասարդների 61.7%-ը որոշումներ կայացնում է ծնողների հետ համատեղ, ինքնուրույն են որոշում կայացնում 26,1%-ը: Ինքնուրույն չեն հարցված երիտասարդների 12,2%-ը, որոնց 9,3%-ի դեպքերում մեկ ուրիշն է որոշում կայացնում իրենց փոխարեն, 2,9%-ի պարագայում դա անում են ծնողները (տե՛ս **գծապատկեր 7.7**):

Գծապատկեր 7.7: Ինչպե՞ս եք որոշում կայացնում Ձեզ համար կարևոր հարցերում:



Այս հարցում ևս նշանակալի են երիտասարդների սեռը, տարիքը, բնակավայրը և ամուսնական կարգավիճակը. ծնողները որոշում են կայացնում հատկապես չամուսնացած երիտասարդների փոխարեն, իսկ «մեկ ուրիշն է իմ փոխարեն որոշումներ կայացնում» տարբերակը նշել են հիմնականում ամուսնացած իգական սեռի ներկայացուցիչները՝ ընդգծելով ամուսնու դերն այդ հարցում:

Ընդհանուր առմամբ, նկատելի է հայաստանյան երիտասարդների կողմից ընտանիքի, մասնավորապես՝ ծնողների դերի ընդգծումը, որն արտահայտ-

վում է նաև այնպիսի ճակատագրական որոշում կայացնելու հարցում, ինչպիսին է ամուսնական ընտրությունը: Ընտանիքի համաձայնությունը կարևորում է հարցվածների 80,1%-ը:

Ֆոկուս խմբային հանդիպումների յուրաքանչյուր թեմայի շրջանակներում երիտասարդները խոսում են ընտանիքի, ծնողների կարծիքի, երեխաների մասին: Յուրաքանչյուր ֆոկուս խմբի շրջանակներում «ընտանիք» բառը հանդիպում է առնվազն 35 անգամ: Նույնիսկ եթե հարևանությունը կամ դասարանը լավն է, ապա բնորոշվում է որպես «ընտանիք»: Ընկերոջ նկատմամբ լավ վերաբերմունքը բնորոշվում է «ինչպես կվերաբերվես հարազատ եղբորդ կամ քրոջդ» գնահատող դատողությամբ: Ասվածը վկայում է այն մասին, որ հայաստանյան իրականության մեջ երիտասարդները իրենց ընտանիքը՝ որպես սոցիալական արժեք խիստ կարևորում են և իրենց անհանգստություններն ու կարծիքները կապում են ընտանիքի հետ.

«Ընտանիքը առաջնային է, հետո նոր մնացածը»

(ՖԽ, 21-29 տարեկաններ, իգական, գյուղական համայնք)

«Իմ ընտանիքն է ինձ այդպես ավանդել, որ ամենակարևորը կյանքում դա ընտանիքն է, անկախ նրանից, թե ինչ մասնագիտություն դու կունենաս, ինչ աշխատանք, ինչ կարիերայի կհասնես, ամենից կարևորը դա լավ ընտանիք և երեխաներ ունենալն է ու պահպանելն է»

(ՖԽ մասնակից, 26 տ., իգական, մարզային քաղաք)

«Ես ունեմ լավ ընտանիք, որտեղ կա փոխըմբռնում, միաբանություն, երբ ունենում ես դա, միայն մի բանի ես ձգտում՝ երեխաներին լավ կրթություն, գնահատում ես մարդկային արժեքները, որ լինես բարի, կամեցող ու լավ ընկեր, լավ մայր, լավ դուստր, իսկ տղամարդիկ՝ լավ հայր, լավ զավակ, նրանց համար շատ կարևոր է նաև լավ աշխատանք ունենալը»

(ՖԽ մասնակից, 23 տ., իգական, գյուղական համայնք)

«Շատ եմ կարևորում ընտանիքում մտերմությունը, ճիշտ հայեցի դաստիարակությունը, քանի որ յուրաքանչյուր կին ձգտում է առողջ ու լավ ընտանիքում մեծացնել իր երեխային և լավ շփում ունենալ շրջապատի հետ, տղամարդիկ ուզում են ունենալ լավ ու հավատարիմ կին, կայուն ընտանիք»

(ՖԽ մասնակից, 27 տ., իգական, մարզային քաղաք):

«Ի՞նչ նպատակ ունի երիտասարդությունը» հարցին արական սեռի հարցվածների հիմնական պատասխաններն արտահայտվում են հետևյալ մեջբերումներով.

> *«Զգվում են նորմալ գործ ունենան, ընտանիք կազմեն»*
>
> (ՖԽ, 14-20 տարեկաններ, արական, մարզային քաղաք)

> *«Ուզում ենք աշխատանք ունենանք, մի քիչ փող հավաքենք, որ ամուսնանանք ու ընտանիքը պահենք»*
>
> (ՖԽ, 21-29 տարեկաններ, արական, գյուղական համայնք)

> *«Ցանկացած տղա, ուզում ա լավ աշխատանք ունենա, ընտանիք կազմի ու իրա ընտանիքը պահի»*
>
> (ՖԽ, 21-29 տարեկաններ, արական, Երևան)

> *«Նպատակներս ավելի շատ կապված ա ընտանիքի բարեկեցության հետ, որ ստեղծենք են պայմանները որ մեր ընտանիքիները, մեր երեխեքը ավելի նորմալ պայմաններում ապրեն»*
>
> (ՖԽ մասնակից, 29 տ., արական, Երևան):

Երիտասարդների շրջանում ընտանիքի գաղափարը կապվում է սերնդեսերունդ փոխանցվող սոցիալական պատկերացումների հետ, որոնք ենթադրում են, որ ընտանիքը յուրաքանչյուր անձի համար անքննարկելի արժեք է ու պետք է ունենա համապատասխան սոցիալական կառուցվածք: Այս հարցում նկատելի են ազգայնական պատկերացումներ այն մասին, որ հայը պետք է ամուսնանա հայի հետ, ու հայ ընտանիքներում պետք է պահպանվեն փոքրի ու մեծի, ծնողի ու զավակի միջև սոցիալապես լեգիտիմ փոխհարաբերություններ: Հակառակ դեպքում, այն մարդը, որը նմանատիպ ընտանիք չունի, դիտարկվում է որպես սոցիալապես խոցելի.

> *«Ընտանիքի գաղափարը շատ կարևոր է, այնքան, որ մարդիկ ամուսնանում են, ստիպված ամուսնացած են մնում, որովհետև չի կարելի բաժանվել»*
>
> (ՖԽ, 21-29 տարեկաններ, արական, մարզային քաղաք):

Մեջբերումից նկատելի է ամուսնալուծության նկատմամբ եղած սոցիալական տաբուն:

> *«Արժեքը ընտանիքն ա, ամենամեծ արժեքը դա ա»*
>
> (ՖԽ, 14-20 տարեկաններ, արական, գյուղական համայնք)

«Ընտանիքի գաղափարախոսությունը վեր ա ամեն ինչից, դա ինքը սրբություն ա»

(ՖԽ, 21-29 տարեկաններ, արական, Երևան)

«Ամեն մարդ, ոնց որ ունենալով լավ ընտանիք, ինքն էլ ա չէ՞ ցանկանում նույն ձևի ընտանիք կազմի»

(ՖԽ, 21-29 տարեկաններ, արական, մարզային քաղաք)

«Մարդը պետք է ունենա լավ ընտանիք, լավ հայր և մայր, բարձր պահի իր արժեքային համակարգը, ունենա լավ վարք»

(ՖԽ, 21-29 տարեկաններ, արական, գյուղական համայնք)

«Ինձ թվում ա՝ փոխվում ա տարիքի ընթացքում մեր արժեքները, սկզբից՝ դե մանուկ վախտվանից, ընտանիքն ա, ամուսնությունը, ընկերները, հետո արդեն սեփական ընտանիքը»

(ՖԽ մասնակից, 29 տ., արական, մարզային քաղաք)

«Ընտանիքը այն է, որտեղ դու ծնվում ես, ապրում ես, դաստիարակվում ես, իսկ ամուսնությունը բերում է էլի ընտանիքի ստեղծման, բայց էդ պարագայում արդեն հենց քո ընտանիքն ես ստեղծում»

(ՖԽ, 21-29 տարեկաններ, իգական, Երևան):

Վերջին մեջբերումից նկատելի է, որ երիտասարդի համար անձնական արժեքների առումով հիմնարար տարածությունը սկսվում է ծնողների ընտանիքում ու ավարտվում՝ սեփական ընտանիքում, վերջինս կառուցվում է ծնողների ընտանիքի մոդելով, եթե այն համապատասխանում է «լավ» ընտանիքի սոցիալական չափանիշներին: Ըստ որակական տվյալների, «լավ» ընտանիք է համարվում փոխօգնություն դրսևորող, համերաշխ, ավադապահ, կայուն մեծ ընտանիքը, որը հայաստանյան երիտասարդների համար իրենից փակ շրջան է ներկայացնում. այն անձեռնմխելի է հասարակական ազդեցություններից, չի կարող փոփոխության ենթարկվել որևէ «արտաքին» վտանգից: Թերևս յուրաքանչյուր երիտասարդի սոցիալական շրջանում (social cirlce) առաջին օղակն ընտանիքն է, որն արտաքին աշխարհի նկատմամբ փակ սոցիալական տարածություն է իրենից ներկայացնում: Եվ չնայած, որ երիտասարդների նկատմամբ սոցիալական վերահսկողություն իրականացնող առաձին դերակատարը հենց ընտանիքն է, երիտասարդները միանշանակ ու առանց նախապայմանների վստահություն են դրսևորում միայն ընտանիքի անդամների նկատմամբ.

«Մենակ մեր մոտ ա [հայերի շրջանում] ընտանիքի գաղափարը տենց ամուր... Որովհետև մենք ամեն մեկս, ինձ թվում ա, գործողություն անելուց առաջին հերթին մտածում ենք՝ մեր ծնողներին ինչ ենք պատասխանելու: Այսինքն՝ պատասխանատու ենք մեր գործողությունների համար մեր ծնողների առաջ [շեշտում է «ծնողների» բառը]»

(ՖԽ, 21-29 տարեկաններ, արական, գյուղական համայնք)

«Ընտանիքն ա, որ քեզ վստահում ա, որ միշտ քո կողքին ա, ու դու գիտես, որ ինչքան էլ սխալ քայլ թույլ տաս, քեզ կներեն ու մի տեսակ ջերմություն կա, որ էլ ուրիշ ոչ մի տեղ չես գտնի դա»

(ՖԽ, 14-20 տարեկաններ, արական, գյուղական համայնք)

«Աշխարհում ամենից շատ դու սիրում ես քո ընտանիքի անդամներին, նոր մնացածը»

(ՖԽ մասնակից, 22 տ., իգական, Երևան):

Ընտանիքի նկատմամբ անվերապահորեն տածած վստահությունը վառ արտահայտվում է, հատկապես, դեռահասների շրջանում՝ մայր-դուստր, հայր-որդի փոխհարաբերություններում.

«Ես հիմնականում մայրիկիս հետ եմ կիսվում, ոչ մի մայր վատ բան չի ցանկանա իր աղջկան»

(ՖԽ մասնակից, 18 տ., իգական, գյուղական համայնք)

«Ընկերուհիներ կան, ովքեր նախանձում են, այսինքն՝ դու իրան կարաս համարես ամենալավ ընկեր, բայց ինքը քեզ նախանձի ու վատն անի... Ոնց որ փղաների մոտ հայրն ա, աղջիկների մոտ էլ մայրն ու քույրն են, որովհետև մայրը էդ սաղ կյանքը տեսնում ա, այսինքն՝ հասկանում ա՝ ինչ պետք ա դու անես, որ ճիշտ լինի, իսկ ընկերուհիները միշտ էլ կդավաճանեն»

(ՖԽ, 14-20 տարեկաններ, իգական, գյուղական համայնք)

«Տղան հատատ իրա ընկերոջ հետ ավելի շատ ա կիսվում, քան թե՝ եղբոր, բայց դե փղան, ինչքան էլ ընկեր ունենա, փղայի ամենալավ ընկերը իրա հայրն ա, կարող ա ինչ-որ ժամանակ գա, որ դու ինչ-որ խնդիր ունես հատատ ինձ չի թվում, որ ընկերը կողքդ կկանգնի, ասենք օրինակ, քո կյանքի կամ մահվան հարցով ինչքան էլ որ իրար հետ մոտիկ ընկեր լինեք,

հապրաբ ինքը իրա կյանքը կփրկի, էլի մեկ ա քո հայրն ա քո կողքը լինելու, իմ կարծիքով քո ամենալավ ընկերը հայրն ա»

(ՖԽ, 14-20 տարեկաններ, արական, մարզային քաղաք):

Երիտասարդները հաճախ են հատուկ նշում (այս մասին նշվել է իրականացված բոլոր ֆոկուս խմբային քննարկումների ընթացքում), որ ընկերությունը ընտանիքից հետո երկրորդ հիմնարար արժեքն է: Ընդորում, ընտանիքի ու ընկերության միջև անցումը նուրբ է: Նախ, ընտանիքն ինքը նույնպես հանդիսանում է որպես ընկերության տարածություն.

«Ընտանիքում էլ պետք է ընկերներ լինես»

(ՖԽ, 21-29 տարեկաններ, իգական, մարզային քաղաք)

«Հենց առաջին ընկերը քո ընտանիքն ա, եթե ընկերություն ընտանիքում կա, ավելի հեշտ ես ապրում»

(ՖԽ, 21-29 տարեկաններ, իգական, գյուղական համայնք)

«Փոքր ժամանակ երևի թե ընկերուհուդ ես վստահում, մեծ ժամանակ՝ արդեն ընտանիքիդ, ընտանիքում կարող ես հա՛մ երեխայիդ հետ ընկեր լինես, հա՛մ՝ ծնողիդ, հա՛մ ամուսնուդ հետ ընկեր լինես»

(ՖԽ, 21-29 տարեկաններ, իգական, Երևան)

«Ամուսնացար, ուրեմն մեծացար, ու քո ընկերը արդեն միայն ընտանիքն ա»

(ՖԽ, 21-29 տարեկաններ, իգական, մարզային քաղաք):

Հետաքրքիր է, որ ընտանիքի ու ընկերության տարածության նույնացման միտում ունեն 21-29 տարեկան տարիքային խմբի իգական սեռի ներկայացուցիչները, ինչը վկայում է այն մասին, որ նրանց սոցիալական շրջանում ընտանիքի ու ընկերության օղակները ժամանակի ընթացքում նեղանում ու նույնանում են: Ասվածի ապացույցն է նաև այն, որ նույն տարիքային խմբի իգական սեռի ներկայացուցիչներից շատերը չեն ընդունում, որ հնարավոր է տղամարդկանց հետ ընկերություն անել.

«Երբ որ դու ամուսին, կին ունես, էդ արդեն նորմալ չի, ես կոնկրետ չեմ ուզի, որ իմ ամուսինը շատ մոտիկ ընկերուհի ունենա, որ հարցեր լինի, որ իմ հետ չքննարկի, իրա հետ քննարկի»

(ՖԽ մասնակից, 26 տ., իգական, Երևան):

Ավելի փոքր տարիքում, հատկապես դեռահասության շրջանում, երբեմն երիտասարդներն ընտանիքից ինչ-որ բան ունեն թաքցնելու.

> *«Պահ ա լինում, որ ընտանիքի անդամների հետ չես կարողանում էդ հարցի շուրջ նստես խոսես, կիսվես կամ ինչ-որ հարց քննարկես ընկերոջդ հետ, ընկերուհուդ հետ կարում ես դա անես»*
>
> (ՖԽ, 14-20 տարեկաններ, իգական, գյուղական համայնք)

> *«Ես մորս հետ անկեղծանում եմ, բայց լրիվ անկեղծանում եմ ընկերուհիներիս հետ, ընկերությունը շատ կարևոր ա, որովհետև շատ բաներ կան, որ դու ծնողներին չես պատմի, մանավանդ էն, որ մտածելակերպի առումով կմտածես՝ իրենք վատ կվերաբերվեն կամ չգիտեմ, բայց ընկերուհուդ հասարակ կպատմես, ես իմ ընկերուհիների հետ ավելի մոտ եմ, քան մորքուրիս աղջկա կամ հորքուրիս աղջկա հետ»*
>
> (ՖԽ մասնակից, 15 տ., իգական, գյուղական համայնք):

Ամուսնություն

Ապագայում իրեն ամուսնացած, իր ընտանիքի հետ է տեսնում հարցված երիտասարդների 93,5%-ը, իսկ չամուսնացածի կարգավիճակում է իրեն տեսնում հարցվածների միայն 6,0%-ը (2,6%-ն իրեն պատկերացնում է զուգընկերոջ հետ, 2,3%-ը առանց երեխաների և 1,1%-ը միայն երեխաների հետ) (տե՛ս **գծապատկեր 7.8**):

Գծապատկեր 7.8: Ինչպե՞ս եք Դուք Ձեզ տեսնում ապագայում:



Ապագայում իրենց չամուսնացած, բայց զուգընկերոջ հետ հարաբերությունների մեջ տեսնողները (N=39, 16 իգական, 23 արական սեռի ներկայացուցիչներ) նման հարաբերությունների առավելությունների շարքում ընդգծում են կարիերայի վրա կենտրոնանալու հնարավորությունը (30,8%): Հարցվածների 10,3%-ի կարծիքով զուգընկերների միջև կոնֆլիկտների հնարավորությունը ավելի քիչ է և նրանք ավելի դյուրին են լուծում տարաձայնությունները, մյուս կողմից՝ շեշտադրվում է զուգընկերների միջև առկա ազատության ավելի բարձր աստիճանը (23,1%) և խնդիրների դեպքում ավելի հեշտ բաժանվելու հնարավորությունը (5,1%-ը) (տե՛ս **գծապատկեր 7.9**): Ամուսնանալ չցանկացողների 17,9%-ի կարծիքով չամուսնանալն ու զուգընկերոջ հետ ապրելը առավելություն չունի:

Գծապատկեր 7.9: Ո՞րն է, ըստ Ձեզ, չամուսնանալու և զուգընկերոջ/զուգընկերուհու հետ ապրելու ՀԻՄՆԱԿԱՆ ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆԸ:



Որպես ամուսնության հիմնական առավելություն երիտասարդներն ընդգծում են պատասխանատվության ավելի բարձր աստիճանը. նրանց 43,7%-ը նշում է, որ ամուսնությունը ավելի մեծ պատասխանատվություն է ենթադրում երեխաների նկատմամբ, իսկ 36,5%-ը նշում է, որ ամուսնությունն ավելի մեծ պատասխանատվություն է ենթադրում զույգերի հարաբերությունների տեսանկյունից:

Ընդհանրապես, պատասխանատու լինելը շատ մոդայիկ արժեք է երիտասարդների 56,8%-ի համար (տե՛ս **գծապատկեր 7.11**): Այդպես է կարծում արական սեռի հարցվածների 61,4%-ը և իգական սեռի հարցվածների 53,6%-ը (X^2=8,282, p=.016, Cramer's V=.083): Այսինքն՝ ավանդաբար հայ

տղամարդուն վերագրվող արժեքն ու նրանից ակնկալվող համապատասխան վարքը չեն կորցրել արդիականությունը: Շատ բնութագրական է, որ հարցվածների 5,6%-ը հիմնական առավելություն է համարում այն, որ Հայաստանում ամուսնությունն ավելի է արժևորվում, քան ամուսնացած չլինելը (տե՛ս **գծապատկեր 7.10**):

Գծապատկեր 7.10: Ո՞րն է, ըստ Ձեզ, ամուսնության ՀԻՄՆԱԿԱՆ ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆԸ:



Այսպիսով, հարցմանը մասնակցած երիտասարդների բացարձակ մեծամասնությունը նախընտրում է ընտանիք և երեխաներ ունենալ: Նրանց միայն 1,2%-ը չի ուզում երեխաներ ունենալ և միայն 19,5%-ն է համարում, որ ամուսնացած լինելը և երեխաներ ունենալը մոդայիկ չէ (տե՛ս **գծապատկեր 7.11**):

Արական սեռի հարցվածների մեծամասնությունը՝ 57,6%-ը, տղամարդու համար ամուսնության լավագույն տարիք է նշում 25-ից 27 տարեկան ժամանակահատվածը (N=1188, Mean=26.41, Std=2.796, Mdn=26), կնոջ համար նշված տարիքը լավագույնն է հարցվածների 20,4%-ի համար, իսկ 47,1%-ի համար ամուսնության լավագույն տարիքը 22-ից 24 տարեկան ժամանակահատվածն է (N=1181, Mean=23.43, Std=2.484, Mdn=23) (տե՛ս **գծապատկեր 7.12**): Անչափահասների ամուսնանալուն կողմ են շատ քչերը, առավելապես՝ գյուղաբնակ աղջիկները:

Գծապատկեր 7.11: Նշված որակներից որո՞նք են, ըստ Ձեզ, ներկայումս մոդայիկ, իսկ որոնք՝ ոչ:



Գծապատկեր 7.12: Ո՞րն է, ըստ Ձեզ, ամուսանանալու լավագույն տարիքը կանանց/տղամարդկանց համար:



Ընդ որում, համահարաբերակցություն (կորելացիա) է բացահայտվել հարցված երիտասարդների սեռի, բնակության վայրի, ամուսնական կարգավիճակի և տղամարդկանց/կանանց համար ամուսնության նախընտրելի տարիքի միջև: Այսպես՝ արական սեռի երիտասարդները հակված են նշել կնոջ և տղամարդու ամուսնական ավելի վաղ տարիք (համապատասխանաբար՝ Mdn=23 տարեկան, Mdn=25 տարեկան), քան իգական սեռի ներկայացուցիչները (համապատասխանաբար՝ Mdn=25 տարեկան, Mdn=27 տարեկան) (համապատասխանաբար՝ կնոջ տարիք՝ U=220,416, z=9,170, p<.001, տղամարդու տարիք՝ U=236,126, z=11,452, p<.001): Գյուղաբնակ երիտասարդները հակված են նշել կնոջ և տղամարդու ամուսնական ավելի վաղ

տարիք (համապատասխանաբար՝ Mdn=23 տարեկան, Mdn=25 տարեկան), քան քաղաքաբնակները (համապատասխանաբար՝ Mdn=24 տարեկան, Mdn=27 տարեկան) (համապատասխանաբար՝ կնոջ տարիք՝ U=128,038, z=-6,354, p<.001, տղամարդու տարիք՝ U=131,158, z=-6,065, p<.001): Եթե ըստ ամուսնական կարգավիճակի կնոջ ամուսնական տարիքի մասին երիտասարդների պատկերացումները հիմնականում համընկնում են, ապա տղամարդկանց ամուսնական տարիքի հարցում չամուսնացածները հակված են նշել տղամարդու ամուսնական ավելի վաղ տարիք (Mdn=26 տարեկան), քան ամուսնացածները (Mdn=27 տարեկան) (U=160,646, z=5,904, p<.001):

Գծապատկեր 7.13: Գործոնները ամուսին/կին ընտրելու հարցում: Ամուսնու/կնոջ ...



Ինչ վերաբերում է ընտանիք կազմելիս ամուսնու/կնոջ ընտրությանը, ապա դրան նպաստող կարևոր գործոնները բաշխվել են հետևյալ կերպ. ընտանիք կազմելու հարցում երիտասարդ հարցվածները առավել կարև-

որում են ապագա կյանքի ընկերոջ անհատականությունը (92,7%), շրջապատը (81,1%), ընտանիքի համաձայնությունը (80,1%), ընդհանուր հետաքրքրությունների առկայությունը (79,9%), ներկայանալի տեսքը (78,7%), կրթական մակարդակը (76,4%), կրոնական և ազգային պատկանելությունը (76,0% և 71,4%), կուսությունը (73,6%): Պակաս կարևորվող գործոնների շարքում են ապագա զուգընկերոջ ծագումն ու բնակության վայրը (36,9%), տնտեսական ապահովվածությունը (30,5%) և ընտանիքի սոցիալական դիրքը (25,4%):

Բացահայտվել է վիճակագրորեն նշանակալի կապ հարցված երիտասարդների սեռի, տարիքի, բնակության վայրի, ամուսնական կարգավիճակի և ամուսին/կին ընտրելիս հաշվի առնվող գործոնների կարևորության միջև: Իգական սեռի ներկայացուցիչները ամուսին ընտրելիս առավել հակված են կարևորել ապագա ամուսնու տնտեսական ապահովվածությունը, ընտանիքի համաձայնությունը, անհատականությունը և ընտանիքի դիրքը/կարգավիճակը (համապատասխանաբար՝ X^2=181,837, p<.001, Cramer's V=.390, X^2=42,666, p<.001, Cramer's V=.189, X^2=12,896, p=.012, Cramer's V=.104, X^2=21,266, p<.001, Cramer's V=.134): Արական սեռի ներկայացուցիչներն առավել հակված են ընդգծել ապագա կնոջ կուսության և ներկայանալի տեսքի կարևորությունը (համապատասխանաբար՝ X^2=214,023, p<.001, Cramer's V=.437, X^2=23,767, p<.001, Cramer's V=.141): Որքան տարիքով ավելի մեծ են հարցվածները, այնքան ավելի պակաս են կարևորում ապագա ամուսնու/կնոջ կուսությունը, շրջապատը և կրթական մակարդակը (համապատասխանաբար՝ X^2=30,004, p=.003, Cramer's V=.094, X^2=26,541, p=.009, Cramer's V=.086, X^2=12,896, p=.012, Cramer's V=.104, X^2=33,456, p=.001, Cramer's V=.096): Գյուղաբնակ երիտասարդները, ի տարբերություն քաղաքաբնակների, ամուսին ընտրելիս ավելի են հակված կարևորել ապագա ամուսնու կրոնական պատկանելությունը, կուսությունը, ծագումն ու բնակության վայրը, ազգային պատկանելությունը և ընտանիքի դիրքը (համապատասխանաբար՝ X^2=10,862, p=.028, Cramer's V=.095, X^2=35,630, p<.001, Cramer's V=.178, X^2=22,050, p<.001, Cramer's V=.136, X^2=21,153, p<.001, Cramer's V=.133, X^2=17,029, p=.002, Cramer's V=.120): Ամուսնացած երիտասարդները, ի տարբերություն չամուսնացածների, ամուսին ընտրելու մասին կարծիք արտահայտելիս նշում են, որ պակաս կարևորություն են տվել ապագա ամուսնու կուսությանը, կրթական մակարդակին, շրջապատին և ծագման/բնակության վայրին (համապատասխանաբար՝ X^2=25,364, p<.001, Cramer's V=.152, X^2=37,861, p<.001,

Cramer's V=.179, X^2=27,553, p<.001, Cramer's V=.153, X^2=17,205, p=.002, Cramer's V=.121):

Հարցված երիտասարդների 25,3%-ն արդեն ամուսնացած է, երեխաներ ունի 21,9%-ը (մեկ երեխա՝ 11,4%-ը, երկու երեխա՝ 8,9%-ը, երեք երեխա՝ 1,6%-ը):

Գծապատկեր 7.14: Ձեր ամուսանական կարգավիճակը: Քանի՞ երեխա ունեք:



Երեխաների թվի հարցում կարծիքները հետևյալ ձևով են բաշխվել. հարցվածների 45,9%-ը ցանկանում է երկու երեխա ունենալ, 35,3%-ը՝ երեք երեխա, 11,1%-ը՝ չորս երեխա, 3,5%-ը՝ մեկ երեխա, 1,3%-ը՝ հինգ երեխա, 0,9%-ը՝ վեց երեխա, 0,5%-ը՝ յոթ երեխա, 0,2%-ը՝ ութ երեխա (N=1199, Mdn=3): Ընդ որում, մեծամասնությունը ցանկանում է և՛ տղա, և՛ աղջիկ ունենալ: Հարցված երիտասարդների 70,6%-ը ցանկանում է անպայման մեկ աղջիկ ունենալ (առնվազն մեկ տղա է ցանկանում 52,3%-ը): Սակայն քանակական առումով ավանդույթի ուժով որոշակի նախապատվություն տրվել է տղա երեխային. 46,3%-ը ցանկանում է երկու և ավելի տղա ունենալ, իսկ աղջիկների պարագայում այդ թիվը 26,2% է կազմում: Տղա երեխաներ ունենալու վերաբերյալ հրաժարվել կամ դժվարացել է պատասխանել հարցվածների 8,1%-ը, իսկ աղջիկ երեխաների վերաբերյալ՝ 14,4%-ը: Ընդհանուր առմամբ, տղա (N=1119, Mdn=1) և աղջիկ (N=1043, Mdn=1) երեխաների ցանկալի թվի բաշխումը տե՛ս **գծապատկեր 7.15**-ում:

Հարկ է նկատել, որ հարցված երիտասարդների սեռը համահարաբերակցվում է նրանց կողմից պլանավորված երեխաների և մասնավորապես՝ տղա երեխաների թվի հետ. արական սեռի ներկայացուցիչները հակված են ավելի շատ երեխա ունենալ (Mdn=3), քան իգական սեռի ներկայացուցիչները (Mdn=2) (U=157.231, z=-3.022, p=.003): Նույնը վերաբերում է պլանավորվող տղա երեխաների թվին (արական՝ Mdn=2, իգական՝ Mdn=1, U=114.340, z=-6.398, p<.001):

Գծապատկեր 7.15: Քանի՞ երեխա կուզենաք ունենալ:



Մյուս կողմից, հարցված երիտասարդների 21,5%-ն արդեն ունեին երեխաներ, իսկ չունեցողների պարագայում որպես երեխա ունենալու ամենանախընտրելի տարիք է դիտվում 25 տարեկանը: Իգական սեռի ներկայացուցիչների մեծամասնությունը՝ 64,8%-ը, երեխա ունենալու տարիք է նշել մինչև 25 տարեկան ժամանակահատվածը (N=267, Mean=24.98, Std=2.999, Mdn=25), իսկ տղամարդկանց 85,0%-ը՝ 25 տարեկանից հետո (N=247, Mean=26.37, Std=2.354, Mdn=26) (U=22.137, z=-6.516, p<.001) (տե՛ս **գծապատկեր 7.16**):

Գծապատկեր 7.16: Ե՞րբ եք պլանավորում երեխա ունենալ:



Հարցված երիտասարդների 32,2%-ը միանշանակ դեմ է արտահայտվել հղիության արհեստական ընդհատմանը՝ ընդգծելով, որ այն պետք է արգելվի օրենքով, 27,2%-ը թույլատրելի է համարել միայն բժշկությամբ

հիմնավորված դեպքերի պարագայում, իսկ 7,3%-ը նշել է, որ աբորտը պետք է օրինական լինի: Հարցվածների 33,3%-ը դժվարացել է կարծիք հայտնել (նրանց 39.9%-ը անչափահասներ են) (տե՛ս **գծապատկեր 7.17**):

Գծապատկեր 7.17: Ի՞նչ կարծիք ունեք հղիության արհեստական դադարեցման/աբորտի մասին:



Հարկ է ընդգծել, որ հղիության արհեստական ընդհատման հանդեպ դիրքորոշումները վիճակագրորեն կապված են երիտասարդների սեռի և բնակության վայրի հետ: Աբորտն օրենքով արգելելուն ավելի հաճախ կողմ են արական սեռի ներկայացուցիչները, իսկ իգական սեռի ներկայացուցիչներն ավելի հաճախ բժշկության կողմից հիմնավորված աբորտների թույլտվության կողմնակից են (X^2=16.345, p<.001, Cramer's V=.146): Աբորտն օրենքով արգելելուն ավելի հաճախ կողմ են գյուղաբնակ երիտասարդները, իսկ քաղաքաբնակները ավելի հաճախ բժշկության կողմից հիմնավորված աբորտների թույլտվության կողմնակից են (X^2=11.003, p=.004, Cramer's V=.120):

Քննարկում

Հետազոտությունը բացահայտել է ինչպես հայաստանյան ընտանիքի ավանդական գծերի պահպանում, այնպես էլ նրա արդիականացման որոշակի միտումներ՝ պայմանավորված հետխորհրդային Հայաստանում տեղի ունեցող սոցիալ-տնտեսական գործընթացներով և բնակչության տեղաշարժերով (Խոջաբեկյան, 2001):

Հայաստանյան հասարակությունում պահպանվել են երիտասարդների ավանդական ամուր կապերը ծնողների հետ: Դրանք բնորոշվում են զգացմունքային բարձր մակարդակով. երիտասարդների համար կյանքի հիմնանպատակներից է դիտարկվում ծնողներին հպարտացնելը: Երիտասարդների տնտեսական և բնակարային խնդիրները ծնողներն են լուծում, ինչը համապատասխան կախվածություն է առաջացնում: Հետազոտության տվյալների ընդհանրացմամբ, կարելի է ընդգծել, որ երիտասարդները անկախ իրենց ամուսնական կարգավիճակից հիմնականում բնակվում են ավագ սերնդի ներկայացուցիչների (սեփական կամ ամուսնու ծնողների) հետ՝ չորսից վեց շնչից բաղկացած տնային տնտեսություններում: Քաղաքային ընտանիքներում առավել տարածված են երկու և գյուղական ընտանիքներում երեք սերնդից բաղկացած ընտանիքները: Ծնողներից անկախանալու և առանձին բնակվելու ձգտումը աճում է տարիքի հետ միասին, երբ երիտասարդները կարողանում են ինքնուրույն հոգալ իրենց կեցության ծախսերը:

Հայաստանյան ընտանիքներում մինչսերնդային կապերը առանձնանում են հայրիշխանական բնույթի փոխհարաբերություններով: Ընտանիքի հայրիշխանական կառուցվածքը հատկապես դրսևորվում է որոշումների կայացման գործընթացում, ուր ամենաազդեցիկ դերն ունի հայրը (ամուսնացած կանանց պարագայում՝ ամուսինը): Մյուս կողմից, ընտանեկան դերերի բաշխման կառուցվածքում ընդգծվում է երիտասարդների կողմից մոր դերի կարևորելը և կնոջ դերի չկարևորելը, ինչը բացատրվում է ընտանիքի ավանդական մոդելի շարունակական վերարտադրությամբ (կնոջ սոցիալական դիրքի և տարիքի կապվածության նման նկարագիրը բնորոշ էր 19-րդ դարավերջի հայ ավանդական ընտանիքին, տե՛ս Ռաֆֆի, 1991):

Հայաստանյան ընտանիքներում հստակ ընդգծված են գենդերային մոտեցումներ: Ընտանեկան հսկողությունն ու վերահսկողությունը առավելապես կիրառվում է աղջիկների, քան տղաների նկատմամբ: Անհատականության դրսևորումները երիտասարդների ընկալմամբ վերագրվում են տղամարդկանց, իսկ կանանց վերագրվում են առավելապես ամուսնա-ընտանեկան դերեր և պարտականություններ (տե՛ս նաև Gender Barometer Survey: A Sociological Survey, 2015):

Իդեալական ընտանիքում, ըստ հայաստանյան երիտասարդների պատկերացումների, պետք է լինի 2-3 երեխա: Համեմատության համար նշենք, որ երեխաների թվի հանդեպ դիրքորոշումները նույնական են հարևան Վրաստանում (Caucasus Barometer, 2015a): Վերջին շրջանի հե-

տազոտությունները ընդգծում են այն միտումը, որ ներկայիս երիտասարդությունը, ի տարբերություն ավագ սերնդի ներկայացուցիչների, նախընտրում է ավելի քիչ երեխա ունենալ (Caucasus Barometer, 2015b): Գենդերային մոտեցումները դրսևորվում են նաև ապագա երեխայի սեռի նախապատվությունների հարցում: Երեք և ավելի երեխա ունենալ ցանկացողների մեծամասնությունը նախընտրում է ունենալ ավելի շատ տղա երեխա, քան աղջիկ: Տղա երեխաների նախապատվության հարցը շատ սուր է դրսևորվում հետխորհրդային հայաստանյան հասարակությունում. համաձայն ժողովրդագրական ցուցանիշների՝ ՀՀ-ում մինչև 14 տարեկան երեխաների շրջանում տղաների թիվը գերազանցում է աղջիկների թվին, ինչը պայմանավորված է սելեկտիվ աբորտներով (Dudwick, 2015), որոնց ցուցանիշով Հայաստանը տարածաշրջանում առաջատար դիրք է գրավում՝ համեմատվելով այդ խնդրի տեսանկյունից առավել խոցելի այնպիսի երկրների հետ, ինչպիսիք Չինաստանն ու Հնդկաստանն են: Ընդ որում, այս խնդիրը պայմանավորող գործոնների շարքում, համաձայն հետազոտության տվյալների, կենտրոնական են ոչ այնքան ամուսինների որոշումները, որքան շրջապատի ճնշումը (Dudwick, 2015):

Այսպիսով, երիտասարդների պատկերացումներում դեռևս իշխում է հայ ընտանիքի ավանդական ըմբռնումը: Այդ ավանդականության վերարտադրության ոչ ֆորմալ սոցիալական մեխանիզմներին (կարծրատիպեր, սովորույթներ, դերային և վարքային նմուշներ և այլն) զուգահեռ յուրահատուկ խրախուսող մեխանիզմ է նաև պետության կողմից իրականացվող սոցիալական քաղաքականությունը. մասնավորապես ընտանեկան նպաստի տրամադրման կարգը, երբ սոցիալական աջակցության թիրախ են դիտվում ոչ թե առանձին վերցված կարիքավոր անհատները, այլ՝ ընտանիքները (Հայաստանի Հանրապետության օրենքը պետական նպաստների մասին, 2013): Ընդհանուր առմամբ հսկայական գենդերային տարբերությունը և ավանդական դերային մոդելները հայաստանյան երիտասարդության մոտ պայմանավորված են գենդերային սոցիալականացմամբ (Գևորգյան, 2011), այդ մոդելներն անդադար վերարտադրվում են տղամարդկանց և կանանց տարբերակմամբ (տե՛ս Ծատուրյան 2011)՝ ծնողներից երեխաներին փոխանցվող ոչ էգալիտար արժեքների և հայկական ընտանիքների յուրահատուկ ավանդական կառուցվածքով:

ԺԱՄԱՆՑ և ԱՊՐԵԼԱԿԵՐՊ

Ներածություն

Հարավային Կովկասում իրականացված վերջին հետազոտությունը ցույց է տալիս, որ տարածաշրջանում երիտասարդների ժամանցի ու ապրելակերպի մեջ տեղի են ունենում նշանակալի փոփոխություններ՝ 16-ից 30 տարեկան երիտասարդները բաժանվում են երկու հիմնական խմբի. ա) երիտասարդներ, որոնց ժամանցի հիմնական տարրեր են ծխախոտն ու ալկոհոլը, իսկ սպառվող սոցիալական տարածությունը հարևանությունն է և տունը, բ) երիտասարդներ, որոնց ժամանցը բնորոշվում է սպորտային ակտիվությամբ, բարձր մշակույթի սպառմամբ, բարեր, սրճարաններ, կինոթատրոններ, պարային ակումբներ հաճախելով (Roberts et al, 2009): Իսկապես, մարդու ինքնության կառուցվածքում կարևոր տեղ ունեն նրա առօրյա զբաղմունքները: Կյանքը ապրելու կերպը կապված է մարդու սոցիալական դիրքորոշումների, բարոյական պատկերացումների, դավանած արժեքների, հոգևոր պահանջմունքների, մշակութային հետաքրքրությունների, նախասիրությունների և հնարավորությունների հետ: Միևնույն ժամանակ, ապրելակերպը կապված է երկրի մակրոտնտեսական և քաղաքական հնարավորությունների հետ, և որևէ երկրում երիտասարդների ապրելակերպը հետազոտելը նշանակում է ուսումնասիրել նաև այդ երկրի մակրոսոցիալական կառուցվածքը և մշակույթը: Հետաքրքրական է 2009 թ.-ին իրականացված հետազոտության (Manukyan et al, 2009, էջ 178) տվյալը, ըստ որի համացանցի թե՛ ինտելեկտուալ, թե՛ ժամանցային կիրառությունների ինտենսիվացումն ընդհանուր առմամբ նվազեցնում է հայաստանյան գործընթացներին վերաբերող երիտասարդների դրական դիրքորոշումների տարածումը:

Երիտասարդների ապրելակերպը սովորաբար ավելի դինամիկ է լինում (Furlong & Cartmel, 2007)։ Անկախության ժամանակաշրջանի հայաստանյան երիտասարդությունը այս առումով ունի լայն հնարավորություններ, որոնք նախկինում չկային, բայց միևնույն ժամանակ այդ հնարավորություններից օգտվելու միջոցները կախված են առկա սոցիալ-տնտեսական հնարավորություններից։

Այս բաժնում ներկայացվում են Հայաստանի համար արդիական տվյալներ այն մասին, թե ինչպես և ինչպիսի սոցիալական միջավայրում են երիտասարդները կազմակերպում իրենց ժամանցը։

Հիմնական տվյալներ

- Քաղաքաբնակ երիտասարդներն ավելի հաճախ են գրքեր, թերթեր, ամսագրեր ընթերցում և օգտվում համացանցից, քան գյուղաբնակները։
- Գյուղաբնակներն ավելի հաճախ են հեռուստացույց դիտում և վիդեոխաղեր խաղում, քան քաղաքաբնակները։
- Արական սեռի ներկայացուցիչներն ավելի հաճախ են հանդիպում ընկերներին, զբաղվում սպորտով, վիդեոխաղեր խաղում, քան իգական սեռի ներկայացուցիչները։
- Իգական սեռի ներկայացուցիչներն ավելի հաճախ են ընթերցում և ստեղծագործում, քան արական սեռի ներկայացուցիչները։
- Ամուսնացած երիտասարդներն ավելի հազվադեպ են երաժշտություն լսում, հանդիպում ընկերներին, զբաղվում սպորտով և ավելի հաճախ են հեռուստացույց դիտում, քան չամուսնացածները։
- Որքան ավելի մեծ գումար են երիտասարդները ծախսում իրենց անձնական կարիքների վրա, այնքան ավելի հաճախ են երաժշտություն ունկնդրում, հանդիպում ընկերներին, ընթերցում, զբաղվում սպորտով և օգտվում համացանցից և ավելի քիչ են հեռուստացույց դիտում։
- Հեռուստացույց դիտելը կապվում է սոցիալական պասիվության հետ։
- Աշխատող երիտասարդները միջինում ավելի քիչ են հեռուստացույց դիտում, քան չաշխատողները։ Որքան բարձր է ծնողների կրթական մակարդակը, այնքան երիտասարդներն ավելի քիչ են հեռուստացույց դիտում։
- Տարիքային տվյալի բարձրացմանը զուգահեռ երիտասարդներն առավել հաճախ են դիտում հայկական ֆիլմեր և լուրեր։
- Ընթերցանությամբ հաճախ է զբաղվում երիտասարդների 35,9 %-ը։

- Միջինում ավելի շատ են ծախսում արական սեռի ներկայացուցիչները, առավել հասուն տարիքի երիտասարդները և քաղաքաբնակները:
- Երիտասարդների հիմնական եկամուտը ծնողների ֆինանսական աջակցությունն է (49,8,%):
- Երիտասարդների կողմից ծխախոտ և ալկոհոլ օգտագործելու հաճախականությունները համահարաբերակցվում են՝ որքան հաճախ են ալկոհոլ օգտագործում, այնքան հաճախ են ծխում:
- Մինչև 21 տարեկան իգական սեռի ներկայացուցիչների 77,2%-ը նշել է, որ չունի սեռական փորձ, այնինչ նույն տարիքային խմբի արական սեռի ներկայացուցիչների 75,0%-ի պնդմամբ նրանք ունեն այդ փորձը:
- Համացանցը մեր երիտասարդների կյանքում ունի շատ կարևոր դերակատարում, և հանդես է գալիս որպես ժամանցի կազմակերպման հիմնական եղանակներից մեկը:

Վերլուծություն

Ժամանց

Հայաստանյան երիտասարդության մեծամասնությունը՝ 81,0%-ը, իր ազատ ժամանակը հաճախ նախընտրում է տրամադրել երաժշտություն ունկնդրելուն (16.3%-ը՝ երբեմն), 80,7%-ը հաճախ օգտվում է համացանցային միջոցներից (15,3%-ը՝ երբեմն), 67,7%-ը հաճախ հանդիպում է ընկերներին (26,5%-ը՝ երբեմն), 53,7%-ը հաճախ հեռուստացույց է դիտում (33,5%-ը՝ երբեմն), 35,9%-ը հաճախ նախընտրում է ընթերցել (42,9%-ը՝ երբեմն) և 26,2%-ը հաճախ խաղում է վիդեոխաղեր (26,7%-ը՝ երբեմն) (տե՛ս **գծապատկեր 8.1**): Հարկ է նկատել, որ նրանց մեծամասնությունը՝ 50,4%-ը, գրեթե երբեք չի ստեղծագործում (գրում, նկարում, նվագում), իսկ 45,9%-ը գրեթե երբեք չի զբաղվում սպորտով:

Գծապատկեր 8.1: Ինչ հաճախականությամբ եք ...



Ժամանցի որոշ ձևերը համահարաբերակցվում են միմյանց հետ: Հեռուստացույց դիտելը, ի տարբերություն համացանցից օգտվելու, բացասաբար է համահարաբերակցվում ընկերների հետ հանդիպելու, ընթերցանության և սպորտով զբաղվելու հետ. որքան երիտասարդները շատ են հեռուստացույց դիտում, այնքան հազվադեպ են հանդիպում ընկերներին, ընթերցում և սպորտով զբաղվում:

Երիտասարդների կողմից սպառած ժամանցի ձևերը վիճակագրորեն փոխկապված են երիտասարդների բնակավայրի, սեռի, տարիքի, ամուսնական կարգավիճակի և անձնական կարիքների վրա կատարվող ծախսերի չափի հետ. մասնավորապես՝ քաղաքաբնակներն ավելի հաճախ են գրքեր, թերթեր, ամսագրեր ընթերցում (X^2=22.694, p<.001, Cramer's V=.138) և օգտվում համացանցից (X^2=6.167, p<.05, Cramer's V=.072), քան գյուղաբնակները, և ընդհակառակը՝ գյուղաբնակներն ավելի հաճախ են հեռուստացույց դիտում (X^2=21.657, p<.001, Cramer's V=.134) և վիդեոխաղեր խաղում (X^2=11.440, p=.003, Cramer's V=.098), քան քաղաքաբնակները (տե՛ս **գծապատկեր 8.2**):

Գծապատկեր 8.2: Ի՞նչ հաճախականությամբ եք ... / Ըստ բնակավայրի



Արական սեռի ներկայացուցիչներն ավելի հաճախ են հանդիպում ընկերներին (X^2=136.680, p<.001, Cramer's V=.337), զբաղվում սպորտով (X^2=65.448, p<.001, Cramer's V=.234), վիդեոխաղեր խաղում (X^2=91.188, p<.001, Cramer's V=.276), քան իգական սեռի ներկայացուցիչները, և ընդհակառակը՝ իգական սեռի ներկայացուցիչներն ավելի հաճախ են ընթերցում (X^2=126.308, p<.001, Cramer's V=.325), ստեղծագործում (X^2=24.562, p<.001, Cramer's V=.143), քան արական սեռի ներկայացուցիչները (տե՛ս **գծապատկեր 8.3**):

Գծապատկեր 8.3: Ինչ հաճախականությամբ եք ... / Ըստ սեռի



Որքան տարիքով ավելի մեծ են հարցվածները, այնքան նրանք ավելի քիչ են երաժշտություն ունկնդրում (X^2=20.450, p=.002, Cramer's V=.092), հանդիպում ընկերներին (X^2=96.553, p<.001, Cramer's V=.201), զբաղվում սպորտով (X^2=69.565, p<.001, Cramer's V=.170), ստեղծագործում (X^2=67.165, p<.001, Cramer's V=.167), վիդեոխաղեր խաղում (X^2=66.092, p<.001, Cramer's V=.166), և ընդհակառակը՝ ավելի շատ են ընթերցում (X^2=31.207, p<.001, Cramer's V=.114) և հեռուստացույց դիտում (X^2=17.634, p=.007, Cramer's V=.086) (տե՛ս **գծապատկեր 8.4**):

Ամուսնացած երիտասարդներն ավելի հազվադեպ են երաժշտություն լսում (X^2=15.144, p=.001, Cramer's V=.113), հանդիպում ընկերներին (X^2=147.531, p<.001, Cramer's V=.353), զբաղվում սպորտով (X^2=62.168, p<.001, Cramer's V=.230), ստեղծագործում (X^2=8.170, p=.017, Cramer's V=.083), վիդեոխաղեր խաղում (X^2=20.915, p<.001, Cramer's V=.133) և օգտվում համակարգչից, քան չամուսնացածները, ամուսնացածները ավելի հաճախ են հեռուստացույց դիտում, քան չամուսնացածները (X^2=48.222, p<.001, Cramer's V=.202) (տե՛ս **գծապատկեր 8.5**):

Գծապատկեր 8.4: Ինչ հաճախականությամբ եք ... / Ըստ տարիքի



Գծապատկեր 8.5: Ինչ հաճախականությամբ եք ... / Ըստ ամուսնական կարգավիճակի



Որքան մեծ գումար են երիտասարդները ծախսում անձնական կարիքների վրա, այնքան ավելի հաճախ են երաժշտություն ունկնդրում (X^2=24.050, p=.007, Cramer's V=.100), հանդիպում ընկերներին (X^2=40.459, p<.001, Cramer's V=.130), ընթերցում (X^2=30.836, p=.001, Cramer's V=.113), զբաղվում սպորտով (X^2=24.853, p=.006, Cramer's V=.102) և օգտվում համացանցից (X^2=27.908, p=.002, Cramer's V=.108) և ավելի քիչ են հեռուստացույց դիտում (X^2=48.139, p<.001, Cramer's V=.142) (տե՛ս **գծապատկեր 8.6**):

Գծապատկեր 8.6: Ինչ հաճախականությամբ եք ... / Ըստ անձնական կարիքների վրա կատարվող ծախսերի չափի



Զանգվածային լրատվամիջոցներ և համացանց

Համաձայն վերը կատարված դիտարկման, հեռուստացույց դիտելը համահարաբերակցվում է սոցիալական պասիվության հետ՝ բացասաբար անդրադառնալով ընկերների հետ հանդիպելու հաճախականությանը: Հետաքրքրական է այն դիտարկումը, որ հեռուստացույց դիտում են հիմնականում գյուղաբնակները, առավել հասուն տարիքի ներկա-

յացուցիչները, ամուսնացածները և ավելի քիչ եկամուտ/ծախս ունեցողները: Չնայած այս հանգամանքին՝ հեռուստացույց դիտողները բավականին մեծ տոկոս են կազմում, իսկ նրանց 32%-ը հեռուստացույց դիտում է միջինում օրը 3 ժամ և ավելի, 26,5%-ը հեռուստացույց է դիտում օրական միջինում 2-3 ժամ, 25,4%-ը՝ 1-2 ժամ, միայն 8,6%-ն է, որ դիտում է 1 ժամից պակաս: Հեռուստացույց ընդհանրապես չեն դիտում հարցված երիտասարդների 7,2%-ը (տե՛ս **գծապատկեր 8.7**): Հարկ է նկատել, որ աշխատող երիտասարդները (N=305, Mdn=3) միջինում ավելի քիչ են հեռուստացույց դիտում, քան չաշխատողները (N=899, Mdn=4) (U=155.898, z=4.186, p<.001): Մյուս կողմից, որքան բարձր է ծնողների կրթական մակարդակը, այնքան երիտասարդներն ավելի քիչ են հեռուստացույց դիտում (X^2=48.837, p<.001, Cramer's V=.144):

Գծապատկեր 8.7: Սովորաբար միջինում օրը քանի՞ ժամ եք հեռուստացույց դիտում:



Հարկ է պարզել, թե ինչպիսի՞ն է հայաստանյան երիտասարդների հեռուստատեսային ճաշակը: Ինչպես երևում է **գծապատկեր 8.8**-ից, առավել հաճախ նրանք լուրեր են դիտում (ամեն օր՝ 45,1%, շաբաթն առնվազն մեկ անգամ՝ 30,4%), արտասահմանյան ֆիլմեր (ամեն օր՝ 20,8%, շաբաթն առնվազն մեկ անգամ՝ 50,3%), արտասահմանյան երաժշտական ծրագրեր (ամեն օր՝ 27,3%, շաբաթն առնվազն մեկ անգամ՝ 37,1%), հայկական

ֆիլմեր (ամեն օր՝ 12,6%, շաբաթն առնվազն մեկ անգամ՝ 50,0%), վավերագրական ֆիլմեր (ամեն օր՝ 8,6%, շաբաթն առնվազն մեկ անգամ՝ 48,9%), իսկ կրոնական հաղորդումներ (գրեթե երբեք՝ 72,9%), ռեալիթի շոուներ (գրեթե երբեք՝ 64,7%), արտասահմանյան հեռուստասերիալներ (գրեթե երբեք՝ 57,2%) և քաղաքական բանավեճեր (գրեթե երբեք՝ 54,0%) ավելի հազվադեպ են դիտում:

Գծապատկեր 8.8: Ինչ հաճախականությամբ եք դիտում հետևյալը:



Հարցված երիտասարդների հեռուստատեսային ճաշակները վիճակագրորեն կապված են նրանց սեռի, տարիքի, բնակության վայրի,

ընտանիքի տնտեսական կարգավիճակի և ամուսնական կարգավիճակի հետ. մասնավորապես՝ արական սեռի ներկայացուցիչներն ավելի հազվադեպ են դիտում հայկական ժողովրդական երաժշտական ծրագրեր (X^2=20.165, p<.001, Cramer's V=.130), հայկական փոփ երաժշտական ծրագրեր (X^2=57.094, p<.001, Cramer's V=.218), հայկական հեռուստասերիալներ (X^2=31.367, p<.001, Cramer's V=.162), արտասահմանյան հեռուստասերիալներ (X^2=38.555, p<.001, Cramer's V=.179), ռեալիթի շոուներ (X^2=18.841, p=.001, Cramer's V=.124) և ավելի հաճախ են դիտում արտասահմանյան ֆիլմեր (X^2=18.771, p=.001, Cramer's V=.125), պատմական/գիտական վավերագրական ֆիլմեր (X^2=19.794, p=.001, Cramer's V=.128), մարզական հաղորդումներ (X^2=182.407, p<.001, Cramer's V=.390): Որքան տարիքով ավելի մեծ են հարցվածները, այնքան նրանք ավելի քիչ են դիտում արտասահմանյան երաժշտական ծրագրեր (X^2=52.602, p<.001, Cramer's V=.121), հայկական հեռուստասերիալներ (X^2=25.223, p=.014, Cramer's V=.084), արտասահմանյան հեռուստասերիալներ (X^2=25.756, p=.012, Cramer's V=.085), մարզական հաղորդումներ (X^2=39.517, p<.001, Cramer's V=.105), խաղային շոուներ/վիկտորինաներ (X^2=23.761, p=.022, Cramer's V=.081) և ավելի հաճախ են դիտում հայկական ֆիլմեր (X^2=24.571, p=.017, Cramer's V=.083), լուրեր (X^2=47.929, p<.001, Cramer's V=.115): Քաղաքաբնակներն, ի տարբերություն մարզաբնակների, առավել հաճախ են դիտում արտասահմանյան ֆիլմեր (X^2=15.358, p=.004, Cramer's V=.113) և ընդհակառակը՝ ավելի հազվադեպ են դիտում հայկական ժողովրդական երաժշտական ծրագրեր (X^2=60.395, p<.001, Cramer's V=.225), հայկական ֆիլմեր (X^2=55.383, p<.001, Cramer's V=.215), հայկական հեռուստասերիալներ (X^2=61.584, p<.001, Cramer's V=.227), լուրեր (X^2=17.248, p=.002, Cramer's V=.120): Ամուսնացած երիտասարդներն ավելի հաճախ են դիտում հայկական ժողովրդական երաժշտական ծրագրեր (X^2=20.711, p<.001, Cramer's V=.132), հայկական հեռուստասերիալներ (X^2=20.193, p<.001, Cramer's V=.131), լուրեր (X^2=40.515, p<.001, Cramer's V=.185) և ավելի հազվադեպ են դիտում արտասահմանյան երաժշտական ծրագրեր (X^2=12.022, p=.017, Cramer's V=.101), մարզական հաղորդումներ (X^2=28.843, p<.001, Cramer's V=.156): Հարկ է նկատել, որ հարցված երիտասարդները համեմատաբար ավելի հաճախ համացանցից են օգտվում, քան հեռուստացույց են դիտում. նրանց ճնշող մեծամասնությունը՝ 96.1%-ը, օգտվում է համացանցից: Ընդ որում, համացանցից օգտվելու ժամաքանակը ևս ավելին է, քան հեռուստադիտման ժամանակաքանակը. նրանց 55,9%-ը համացանցում է լինում օրական միջինում 3 ժամ և ավելի, 20,3%-ը՝ օրական միջինում 2-3 ժամ, 17,7%-ը՝ 1-2 ժամ, միայն 6,2%-ն է, որ համացանցում լինում է 1 ժամից պակաս (տե՛ս **գծապատկեր 8.9**): Եվ եթե

աշխատող երիտասարդներն ավելի հազվադեպ են հեռուստացույց դիտում, քան չաշխատողները, ապա համացանցից օգտվելը չի համահարաբերակցվում աշխատանքային զբաղվածության հետ:

Գծապատկեր 8.9: Միջինում օրը քանի՞ ժամ եք լինում համացանցում:



Առավել հաճախ երիտասարդները համացանցն օգտագործում են սոցիալական ցանցերից օգտվելու (20,0%), ծանոթ/բարեկամների հետ հաղորդակցվելու (17,3%), ֆիլմեր դիտելու (14,1%), տեսանյութ դիտելու/երաժշտություն ունկնդրելու (13,7%), տեղեկատվություն փնտրելու և առցանց լրատվություն ստանալու (10,2-ական%) համար: Ավելի հազվադեպ օգտվում են էլեկտրոնային փոստից (4,3%), գրքեր/հոդվածներ ներբեռնում (3,7%), վիդեոխաղեր խաղում (3,4%), գումար վաստակում (2,0%), առցանց գնումներ կատարում, հաշիվներ ստուգում (1,0%) (տե՛ս **գծապատկեր 8.10**):

Մտահոգիչ է, որ հարցվածները քիչ են գիրք ներբեռնում համացանցից, մանավանդ որ նրանց 5,4%-ը տանը գրքեր չունի, 32,6%-ն ունի մինչև 30 գիրք, այսինքն՝ առավելագույնը մեկ գրադարակ: 100 և ավելի գիրք ունի հարցվածների 26,7%-ը, իսկ ընթերցանությամբ հաճախ է զբաղվում 35,9%-ը, ինչն այդքան էլ մեծ թիվ չէ, եթե նկատի ունենանք, որ հարցվածների 24,1%-ն աշակերտներ են, 19,8%-ը՝ ուսանողներ:

Գծապատկեր 8.10: Հիմնականում ինչ նպատակով եք լինում համացանցում:



Անձնական ծախսեր

Ամսական միջինում երիտասարդները համացանցի և բջջային կապի վրա ծախսում են 4700 ՀՀ դրամ/մոտավորապես 9 եվրո (Mdn=3000 ՀՀ դրամ/մոտավորապես 5.5 եվրո): Ընդհանուր առմամբ, երիտասարդների անձնական կարիքների վրա կատարվող ամսական ծախսերն ունեն հետևյալ բաշխումը (տե՛ս **գծապատկեր 8.11**):

Գծապատկեր 8.11: Միջինում ամսեկան որքան գումար եք ծախսում Ձեր այլ անձնական կարիքների վրա:



Միջինում ավելի շատ ծախսում են արական սեռի ներկայացուցիչները (X^2=28.180, p<.001, Cramer's V=.153), առավել հասուն տարիքի երիտասարդները (X^2=170.233, p<.001, Cramer's V=.217), քաղաքաբնակները (X^2=18.901, p=.002, Cramer's V=.126):

Երիտասարդների հիմնական եկամուտը ծնողների ֆինանսական աջակցությունն է (49,8,%), աշխատավարձը և/կամ վարձավճարը (18,9%), ամուսնու/կնոջ աջակցությունը (13,4%) (97.6% դեպքերում սա վերաբերում է իգական սեռի ներկայացուցիչներին), արտերկրից փոխանցումները (6,3%), ընտանեկան նպաստը (5,8%), դրամաշնորհները և պետական աջակցությունը (2-ական%):

Հարցված երիտասարդների եկամուտների բաշխումն ըստ սեռի, տարիքի և բնակության վայրի բերված է **աղյուսակ 8.13**-ում: Աղյուսակից պարզ է դառնում, որ որքան տարիքով ավելի մեծ են երիտասարդ արական սեռի ներկայացուցիչները, այնքան ցածր է նրանց հատկացվող ծնողների աջակցության աստիճանը ու բարձ է անձնական եկամուտը: Այդուամենայնիվ նույնիսկ 26-29 տարեկանների շրջանում ծնողների ֆինանսական աջակցությունը շարունակում է էական լինել:

Գծապատկեր 8.12: Որոնք են Ձեր հիմնական ֆինանսական աղբյուրները:



- Ստանում եմ ֆինանսական աջակցություն ծնողներից
- Ես ունեմ սեփական եկամուտ (աշխատավարձ, վճար և այլն)
- Ստանում եմ ֆինանսական աջակցություն ամուսնուցս/կնոջիցս
- Ես դրամական փոխանցումներ եմ ստանում արտերկրից
- Ընտանեկան նպաստ
- Դրամաշնորհ, ուսանողական վարկ, կրթաթոշակ
- Պետական օգնություն
- Ես եկամուտ ունեմ վարձակալությունից
- Եկամուտ հողամասից

Աղյուսակ 8.13

			Աջակցություն ծնողներից	Ընտանեկան նպաստ	Փոխանցումներ արտերկրից	Պետական օգնություն	Դրամաշնորհ, կրթաթոշակ	Սեփական եկամուտ	Աջակցություն ամուսնուց/կնոջից	Եկամուտ վարձակալությունից	Եկամուտ հողամասից
քաղաք	Արական	14–17 տարեկան	83.9	4.2	3.4	2.5	2.5	2.5	0.0	0.8	0.0
		18–21 տարեկան	60.6	2.8	4.2	0.0	2.8	28.2	0.0	0.0	1.4
		22–25 տարեկան	36.3	1.1	8.8	1.1	2.2	45.1	0.0	3.3	2.2
		26–29 տարեկան	31.3	3.0	3.0	3.0	0.0	55.2	0.0	3.0	1.5
	Իգական	14–17 տարեկան	75.9	11.0	7.6	2.1	2.8	0.7	0.0	0.0	0.0
		18–21 տարեկան	73.3	2.0	8.0	0.7	4.0	7.3	4.7	0.0	0.0
		22–25 տարեկան	28.2	3.4	4.0	1.1	2.9	27.0	30.5	2.3	0.6
		26–29 տարեկան	15.7	3.9	0.7	2.0	0.0	31.4	44.4	1.3	0.7
գյուղ	Արական	14–17 տարեկան	76.3	12.4	3.1	2.1	1.0	4.1	0.0	1.0	0.0
		18–21 տարեկան	51.7	5.2	19.0	5.2	0.0	15.5	1.7	1.7	0.0
		22–25 տարեկան	42.2	3.1	10.9	0.0	0.0	39.1	3.1	1.6	0.0
		26–29 տարեկան	38.1	2.4	7.1	0.0	0.0	42.9	2.4	0.0	7.1
	Իգական	14–17 տարեկան	71.1	15.8	7.9	2.6	1.3	0.0	1.3	0.0	0.0
		18–21 տարեկան	62.1	6.3	5.3	4.2	7.4	6.3	8.4	0.0	0.0
		22–25 տարեկան	27.9	7.0	14.0	4.7	0.0	14.0	30.2	0.0	2.3
		26–29 տարեկան	16.3	9.8	5.4	1.1	0.0	18.5	47.8	0.0	1.1

Ինչ վերաբերում է հարցված երիտասարդների ծախսերի բաշխմանը, ապա ըստ բաղադրիչների այն հետևյալ տեսքն ունի. ամսվա կտրվածքով երիտասարդները միջինում ավելի շատ են ծախսում հագուստի և կոշիկի, բջջային կապի և համացանցի, տրանսպորտի, գեղեցկության սրահի, ժամանցի և դրսում սնվելու համար (տե՛ս **գծապատկեր 8.14**): Հարկ է նկատել, որ հարցված երիտասարդները միջինում գեղեցկության սրահներ գնալու համար ավելի շատ գումար են ծախսում, քան գրքեր գնելու համար: Ընդ որում, եթե արական սեռի ներկայացուցիչներն ավելի շատ ծախսեր են անում ժամանցի (X^2=47.047, p<.001, Cramer's V=.214) և դրսում սնվելու համար

(X^2=51.344, p<.001, Cramer's V=.217), ապա իգական սեռի ներկայացուցիչները՝ բջջային կապի/համացանցի (X^2=19.146, p<.001, Cramer's V=.129), գրքերի և տպագրական նյութերի (X^2=40.773, p<.001, Cramer's V=.194), գեղեցկության սրահների (X^2=134.022, p<.001, Cramer's V=.342) համար:

Գծապատկեր 8.14: Միջինում ամսեկան որքան գումար եք ծախսում Ձեր այլ անձնական կարիքների վրա:



Վերջին տարվա ընթացքում հարցված երիտասարդների միայն փոքր հատվածն է օգտվել որևէ վճարովի ծառայությունից: Մասնավորապես՝ հանգստի ծառայություններից (32.4%), սպորտային ծառայություններից (20,4%) և օտար լեզվի դասընթացներից (16,7%) երիտասարդներն առավել հաճախ են օգտվում, ավելի հազվադեպ՝ արվեստին վերաբերող դասընթացներից և մասնագիտական վերապատրաստումներից (8,4-ական%) (տե՛ս **գծապատկեր 8.15**):

Գծապատկեր 8.15: Անցած տարվա ընթացքում օգտվե՞լ եք արդյոք նշված վճարովի ծառայություններից:



Գծապատկեր 8.16: Անցած տարվա ընթացքում օգտվե՞լ եք արդյոք նշված վճարովի ծառայություններից: / Ըստ տարիքի



Որքան տարիքով ավելի մեծ են հարցվածները, այնքան ավելի ցածր է վճարովի ծառայություններից օգտվելու հաճախականությունը. հատկապես

տարիքն անդրադառնում է օտար լեզվի դասընթացներից (X^2=68.992, p<.001, Cramer's V=.240), սպորտային ծառայություններից (X^2=41.044, p<.001, Cramer's V=.185) և արվեստին վերաբերող դասընթացներից օգտվելու վրա (X^2=33.176, p<.001, Cramer's V=.166) (տե՛ս **գծապատկեր 8.16**):

Սովորություններ և տարածված վարքաձևեր

Ինչ վերաբերում է երիտասարդների ծխելու սովորությանը, ապա հարկ է նկատել, որ ծխախոտի համար գումար ծախսողները հիմնականում արական սեռի ներկայացուցիչներն են (94,7%): Ընդ որում, ամեն օր ծխելու հանգամանքը խոստովանել են հարցվածների 14,8%-ը, իսկ 3,5%-ը նշել է, որ ծխում է ժամանակ առ ժամանակ: Նույնն է պատկերը նաև ալկոհոլ օգտագործելու պարագայում. պարբերաբար օգտագործելը խոստովանել են 11,2%-ը, հազվադեպ օգտագործելու հանգամանքը նշել են 46,6%-ը (տե՛ս **գծապատկեր 8.17**): Երիտասարդների կողմից ծխախոտ և ալկոհոլ օգտագործելու հաճախականությունները համահարաբերակցվում են (Սպիրմանի rho=.356**, p<.001). որքան հաճախ են ալկոհոլ օգտագործում, այնքան հաճախ ծխում են:

Պարբերաբար ամեն օր ալկոհոլ օգտագործում են հիմնականում գյուղաբնակ արական սեռի ներկայացուցիչները՝ հատկապես 18-21 տարեկանները (9,3%): Պարբերաբար շաբաթվա կտրվածքով առավել հաճախ ալկոհոլ օգտագործում են 26-29 տարեկան քաղաքաբնակ տղամարդիկ: Առավել հազվադեպ ալկոհոլ օգտագործում են անչափահաս իգական սեռի ներկայացուցիչները (տե՛ս **գծապատկեր 8.18**):

Գծապատկեր 8.17: Ալկոհոլ օգտագործո՞ւմ եք:



Գծապատկեր 8.18: Ալկոհոլ օգտագործում եք:



Որակական տվյալները ցույց են տալիս, որ սեռային տարբերությունների մասին պատկերացումները վառ արտահայտվում են արլկոհոլի և ծխախոտի օգտագործման հետ կապված քննարկումներում: Այս թեմայով ֆոկուս խմբերի մասնակիցները հիմնականում բանավիճում էին արական և իգական սեռի երիտասարդների սոցիալապես ընդունելի կամ անընդունելի վարքային նմուշների տեսանկյունից: Օրինակ, ալկոհոլի չարաշհումը մասնակիցների կողմից երկու սեռի դեպքում էլ դիտվում էր որպես բացասական երևույթ, իսկ օգտագործումը՝ նորմալ, եթե խոսքը չափավոր օգտագործման մասին է: Ֆոկուս խմբի մասնակիցներն ալկոհոլի չափավոր օգտագործումն ավելի էին հակված ընդունել որպես իգական սեռի վարքային նմուշ, քան ծխելը: Ծխախոտը երկու սեռի դեպքում էլ դիտվում էր որպես բացասական, առողջությանը վնասող երևույթ, մասնավորապես կանանց առնչությամբ չէր ընդունվում մայրանալու մասին մեկնաբանությունների համատեքստում.

> *«Դե գիտեք, եթե աղջիկը մայրանալու փարիքում ա, ասենք ծխելը էլ ո՞նն ա, չի կարելի, չէ՞»*
>
> (ՖԽ, 21-29 տարեկաններ, արական, մարզային քաղաք):

Իգական սեռի ներկայացուցիչները նշում էին, որ հայ աղջիկը չպետք է ծխի.

> *«Դե հայ աղջկան էդ ծխախոտը ձեռը պահելը հեչ չի սազում»*
>
> (ՖԽ, 21-29 տարեկաններ, իգական, գյուղական համայքն)

> *«Դե չի կարելի էլի, որ աղջկա վրայից ծխի էդ վատ հոտը գա»*
>
> (ՖԽ, 21-29 տարեկաններ, արական/իգական, Երևան)

> *«Մեր գյուղում, մեր ամուսինների աչքում, հասկանում՞ եք, ծխող աղջիկը վարքից թեթև ա [թեթևաբարո]»*
>
> (ՖԽ, 21-29 տարեկաններ, իգական, գյուղական համայնք):

Բնորոշումները, հիմնականում կապվում են «խորհրդանշման» հետ, այսինք՝ գարեջրի շիշը և ծխախոտը չեն ընկալվում որպես «հայուհու» ավանդական կերպարի մաս, այդուհանդերձ հատկապես Երևանի իգական սեռի ներկայացուցիչներն ավելի ազատական և էգալիտար հայացքներ ունեին այս հարցում.

> *«Ժամանակները փոխվել են, այսօր արդեն ծխախոտ օգտագործող կինը ոչ մեկի չի զարմացնում, ու դա մարդու ընտրությունն ա, ուզում ա, թող ծխի, ինձ ի՞նչ»*
>
> (ՖԽ, 21-29 տարեկաններ, իգական, Երևան)

«Դե հարցը հենց ծխել-խմելը չի, օրինակ՝ որ ընկերուհիներով ուզում ենք լավ խմենք, մեկիս տանն ենք հավաքվում, հասարակության աչքից հեռու, որ ավել-պակաս չիտասան»

(ՖԽ, 14-20 տարեկաններ, իգական, Երևան)

«Թե՛ աղջիկների, թե՛ տղաների առողջության համար հավասարապես վնասակար սովորություններ են շատ ծխելը, խմելը»

(ՖԽ, 21-29 տարեկաններ, իգական, Երևան):

Գրեթե բոլոր երիտասարդների մոտ ծխախոտ օգտագործող՝ տարիքով կանանց նկատմամբ ավելի հանդուրժողական վերաբերմունք էր նկատվում.

«Դե արդեն եթե կինը հասուն տարիքում է, երեխեք ունի, տարիքը առել ա, արդեն էդ լրիվ ուրիշ հարց ա, հիմա էդ ոչ մեկ չի կարա քննադատի, էդ իրա գործն ա»

(ՖԽ, 21-29 տարեկաններ, արական, մարզային քաղաք):

Ըստ քանական տվյալների, հարցված երիտասարդների 36,9%-ի համար ալկոհոլ օգտագործելն ընդունելի չէ, ըստ 45,9%-ի այն անհրաժեշտ է միայն ընկերակցության համար և ընդունելի է 17,1%-ի համար: Ընդ որում, ալկոհոլի օգտագործում ընդունել/չընդունելը վիճակագրորեն կապված է հարցված երիտասարդների սեռի, տարիքի և բնակության վայրի հետ (համապատասխանաբար՝ X^2=18.777, p<.001, Cramer's V=.126, X^2=34.089, p<.001, Cramer's V=.120, X^2=34.566, p<.001, Cramer's V=.171). այն առավել ընդունելի է հիմնականում արական սեռի ներկայացուցիչների, քաղաքաբնակների և առավել բարձր տարիքի երիտասարդների շրջանում:

Գծապատկեր 8.19: Ըստ, Ձեզ ալկոհոլ ընդունելը:



Գծապատկեր 8.20: Նշված որակներից որոնք են, ըստ Ձեզ, ներկայումս մոդայիկ, իսկ որոնք՝ ոչ:



Հարկ է նկատել, որ առողջ ապրելակերպ վարելը միանշանակ մոդայիկ է համարել հարցվածների 70,4%-ը, իսկ ծխելը և թմրամիջոցների օգտագործումը դիտարկվել են որպես ծայրահեղ աստիճանի ոչ մոդայիկ զբաղմունքները (համապատասխանաբար՝ 46,3% և 68,5%): Մոդայիկ և ոչ մոդայիկ հատկությունների շարքը շարունակելով՝ պետք է ընդգծել, որ ըստ հարցված երիտասարդների մոդայիկ են նորաձև հագնվելը (89,8%), բարետես լինելը (86,4%), բարձրագույն

կրթություն ստանալը (83,5%), զուգընկեր ունենալը (81,4%), կարիերա անելը (77,4%), ազատ լինելը (76,4%): Հարկ է նշել, որ վերոնշյալ հատկանիշների համեմատությամբ, առավել ոչ մոդայիկ են դիտարկվում հայրենիքը սիրելը, պատասխանատու լինելը, բանիմաց լինելը, ամուսնացած և հավատարիմ լինելն ու մարդկանց օգնության հասնելը (տե՛ս **գծապատկեր 8.20**):

Հարցված երիտասարդների կողմից քիչ է ընդգծվել նաև քաղաքականապես ակտիվ լինելու և քաղաքացիական շարժումներին մասնակցության մոդայիկությունը (ոչ այնքան մոդայիկ և/կամ ոչ մոդայիկ են դիտարկել համապատասխանաբար՝ 59%-ը և 64,1%-ը): Ընդհանուր առմամբ, հարցված երիտասարդների մեծ մասը վերջին 12 ամիսներին ապրել է խաղաղ կյանքով, ընդգրկված չի եղել բռնի կոնֆլիկտներում: Ամենաշատը միմյանց հետ բախվում են աշակերտները՝ դպրոցում և ուսանողները՝ բուհում (19,3%) (տե՛ս **գծապատկեր 8.21**):

Գծապատկեր 8.21: Վերջին 12 ամիսների ընթացքում արդյոք մասնակցել/ընդգրկված եղել եք նշված բռնի կոնֆլիկտներում:



Սպորտային հրապարակում բռնի ընդհարումներ է ունեցել հարցվածների 8,4%-ը, հարևանների հետ՝ 8,2%-ը: Այլ քաղաքական դիրքորոշումներ ունեցող մարդկանց հետ բռնի կերպով ընդհարվել է հարցվածների 6,3%-ը, ոստիկանության հետ՝ 2,9%-ը:

Սեռական կենսափորձ

Երիտասարդների ապրելակերպի համատեքստում հարկ է անդրադառնալ նաև նրանց սեռական կենսափորձի առանձնահատկություններին[14]: Հարցված երիտասարդների 32,6%-ը նշել է, որ դեռևս սեռական հարաբերություն չի ունեցել, սեռական հարաբերություն միայն մեկ զուգընկերոջ հետ ունեցել է 35,4%-ը և մեկ զուգընկերոջից ավելի են ունեցել 23,1%-ը (հրաժարվել են պատասխանել հարցվածների 8,9%-ը) (տե՛ս **գծապատկեր 8.22**):

Գծապատկեր 8.22: Նշվածներից ո՞րն է լավագույնս նկարագրում Ձեր սեռական փորձը:



Գծապատկեր 8.23: Նշվածներից ո՞րն է լավագույնս նկարագրում Ձեր սեռական փորձը: / Ըստ տարիքի



Ընդ որում, եթե սեռական հարաբերություններ չեն ունեցել հարցված չամուսնացած արական սեռի ներկայացուցիչների միայն 11,4%-ը, ապա

14 Սեռական կենսափորձի վերաբերյալ հարցերը տրվել են 18 տարին լրացած հարցվածներին (N=850):

չամուսնացած իգական սեռի ներկայացուցիչների պարագայում այդ թիվը 92,6% է: Սեռական փորձ ունեցողները և չունեցողները հավասարապես բաշխվում են 20-21 տարեկան տարիքային խմբում. Դա այն անցումային շեմն, երբ սեռական փորձ ունեցողների թիվը սկսում է աճել, չունեցողներինը՝ նվազել (տե՛ս **գծապատկեր 8.23**):

Հարցված երիտասարդների սեռական փորձը վիճակագրորեն կապված է ոչ միայն տարիքի (X^2=122.133, p<.001, Cramer's V=.401), այլ նաև՝ սեռի հետ (X^2=127.071, p<.001, Cramer's V=.409): Ինչպես երևում է **գծապատկեր 8.24**-ից, մինչև 21 տարեկան իգական սեռի ներկայացուցիչների 77,2%-ը նշել է, որ չունի սեռական փորձ, այնինչ նույն տարիքային խմբի արական սեռի ներկայացուցիչների 75,0%-ի պնդմամբ նրանք ունեն այդ փորձը: Ընդ որում, այս անհամամասնական հարաբերակցությունը պահպանվում է նաև 22-25 տարեկանների շրջանում. եթե իգական սեռի ներկայացուցիչների 47,2%-ն ունի սեռական փորձ, ապա արական սեռի պարագայում սեռական փորձ ունեցողների տվյալը հասնում է 87,1%-ի:

Գծապատկեր 8.24: Նշվածներից ո՞րն է լավագույնս նկարագրում Ձեր սեռական փորձը: / Ըստ սեռի/տարիքի



Հետաքրքրական է այն, որ եթե սեռական փորձ ունեցող երիտասարդների արական սեռի ներկայացուցիչների 74,3%-ը սեռական հարաբերություն է

ունեցել մի քանի զուգընկերների հետ, ապա նման սեռական փորձ ունեն իգական սեռի ներկայացուցիչների միայն 3,3%-ը: (տե՛ս **գծապատկեր 8.25**):

Գծապատկեր 8.25: Նշվածներից ո՞րն է լավագույնս նկարագրում Ձեր սեռական փորձը: / Ըստ սեռի/տարիքի



Հակաբեղմնավորիչներ (պահպանակ, հաբեր և այլն) օգտագործում են հարցված չափահաս երիտասարդների 37,7%-ը, որից 18,5%-ը կանոնավոր կերպով: Հակաբեղմնավորիչներից անտեղյակ են հարցվածների 7,6%-ը, իսկ 54,7%-ը երբեք չի օգտագործել: Ընդ որում, հակաբեղմնավորիչներ առավել շատ օգտագործում են արական սեռի ներկայացուցիչները. ընդհանուր առմամբ, հակաբեղմնավորիչների օգտագործման հաճախականության բաշխումն ըստ սեռի ունի հետևյալ տեսքը (տես **գծապատկեր 8.26**):

Ինչ վերաբերում է սեռական ցանկությունների հանդեպ երիտասարդների դիրքորոշումներին, ապա հարկ է նկատել, որ առավել տարածված կարծիքն այն է, որ սեռական ցանկությունները զսպելը արժանապատվության հարց է երկու սեռերի համար, այդպես են կարծում հարցվածների 43,3%-ը, 27,1%-ը նշել է, որ դա արժանապատվության հարց է հատկապես աղջիկների համար: Միայն 29,6%-ն է դեմ սեռական ցանկությունների զսպմանը. 14,6%-ը դա դիտարկում է որպես առողջության համար վնասակար, 6,7%-ը դա հոգեբանական ճնշում է համարում, իսկ 8,2%-ն սեռական ցանկությունները զսպելը համարում է հնացած դիրքորոշում (տե՛ս **գծապատկեր 8.27**): Ընդ որում, սեռական ցանկությունները զսպելը որպես արժանապատվության հարց դիտարկվում է հատկապես գյուղաբնակների շրջանում, ավելի ազատական է քաղաքաբնակների դիրքորոշումը (X^2=34.994, p<.001, Cramer's V=.217):

Գծապատկեր 8.26: Հակաբեղմնավորիչներ (պահպանակ, հաբեր և այլն) օգտագործում եք:



- Այո, որպես կանոն
- Այո, երբեմն
- Ոչ, երբեք
- Ես տեղյակ չեմ հակաբեղմնավորիչների մասին, չգիտեմ դա ինչ է

Գծապատկեր 8.27: Ինչպե՞ս եք վերաբերվում սեռական ցանկությունների զսպմանը մեր օրերում:



Քննարկում

Ինչպես արդեն նշել ենք նախորդ գլուխներում, հայաստանյան երիտասարդները հիմնականում ապրում են ծնողների հետ, մի քանի սերնդից բաղկացած ընտանիքներում, հաճախ ծնողների խիստ սոցիալական հսկողության և ֆինանսական կախվածության պայմաններում, ինչը հաճախ սահմանափակում է նաև նրանց ազատությունները երիտասարդական ժամանցի կազմակերպման հարցում (Roberts et al., 2009): Սոցիալական վերահսկողության գենդերային, տարիքային և կարգավիճակային տարբերությունները, դրսևորվում են նաև նրանց կենսակերպում ու ժամանցային նախասիրություններում. որպես հիմնական պայմանավորող գործոններն են հանդիսանում երիտասարդների սեռը, տարիքը և բնակավայրը: Այդ տեսանկյունից, ինչ-որ առումով իրար հակադրվում են արական և իգական սեռի ներկայացուցիչները, ամուսնացած և չամուսնացած, գյուղաբնակ և քաղաքաբնակ երիտասարդները:

Հայաստանյան երիտասարդ կանանց ժամանցն ավելի պասիվ բնույթ է կրում: Արական սեռի ներկայացուցիչներն ավելի ակտիվ սոցիալական կյանքով են ապրում և ներգրավված են ավելի լայն սոցիալական կապերում, քան իգական սեռի ներկայացուցիչները, որոնց նախապատվությունների շարքում առանձնանում են ընթերցանությունն ու ստեղծագործությունը:

Տվյալները ցույց են տալիս, որ պիտակավորման ենթակա են ծխախոտ և/կամ ալկոհոլ օգտագործող երիտասարդ աղջիկները. համաձայն հետազոտության տվյալների, հայ կնոջ կերպարին չի համապատասխանում ալկոհոլ և ծխախոտ օգտագործողի վարքանմուշը, որը քննադատվում է ու հանրության կողմից դատապարտվում:

Մեդիա նախապատվությունների համատեքստում հարկ է նկատել, որ ինտերնետը դարձել է արդի երիտասարդության կենսակերպի բաղկացուցիչ մասը: Չնայած դրան, հեռուստատեսությունը շարունակում է մնալ երիտասարդության տեղեկատվության և ժամանցի ատրիբուտ: Ընդ որում, հեռուստացույց դիտելու հաճախականությունը պայմանավորված է երիտասարդների սոցիալական պասիվության և նրանց ծնողների մշակութային կապիտալի ցածր մակարդակի հետ:

Զգալի են տարբերությունները գյուղաբնակ և քաղաքաբնակ երիտասարդների միջև. երիտասարդական ժամանցի վայրերը կենտրոնացած են քաղաքային բնակավայրերում, հատկապես մայրաքաղաքում՝ Երևանում (Գյուղական համայնքների հետազոտության հիմնական արդյունքների մասին, 2009): Հայաստանի մարզային բնակավայրերում երիտասարդական ժամանցի կազմակերպման հաստատությունների բացակայության կամ սակավության պայմաններում գյուղաբնակ երիտասարդները շատ ավելի հաճախ են նախընտրում պասիվ ժամանցի ձևերը՝ հեռուստացույց դիտելը և վիդեոխաղեր խաղալը, մյուս կողմից՝ առավել տարածում են գտնում նեղ ընկերական հավաքները և դրանց շրջանակներում ալկոհոլի և ծխախոտի պարբերական օգտագործումը:

Հայաստանյան երիտասարդության կենսակերպի գենդերային խիստ տարբերակումը դիտարկելի է նաև սեռական փորձի համատեքստում: Առավել վաղ տարիքում սեռական կենսափորձ և մեկից ավելի սեռական զուգընկեր ունեցողների ճնշող մեծամասնությունը արական սեռի ներկայացուցիչներն են. չափահաս կանանց 3,3%-ի դիմաց տղամարդկանց 74,3%-ը նշել է, որ ունեցել է սեռական հարաբերություն մեկից ավելի զուգընկերոջ հետ: Ընդ որում, երիտասարդության ստվար հատվածը սեռական ցանկությունների զսպումը դիտարկում է որպես երիտասարդի, հատկապես կնոջ, արժանապատվության հարց՝ ընդգծելով գենդերային սեռական դաստիարակության ավանդական սկզբունքները:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Սույն հետազոտությունը բացահայտել է անկախության սերունդը ներկայացնող երիտասարդության յուրահատուկ ու բազմազան հավաքական կերպարը, որը քաղաքական մտորումների, քննարկումների ու բանավեճերի հիմք է ստեղծում: Հայաստանյան երիտասարդությունը լավատես է, կտրուկ իր դիրքորոշումներում, բայց և՝ տարբերակված արական-իգական, քաղաք-գյուղ, աշխատող-չաշխատող, հարուստ-աղքատ սոցիալական կառուցվածքային հակադրամիասնություններում: Այս իմաստով, լինելով հակասական ամբողջություն՝ անկախության սերունդը դժվարությամբ է միանշանակորեն բնութագրվում: Նրանց կարծիքներում միախառնված են հետխորհրդայինը, ազգայինն ու համաշխարհայինը, և նրանց բնորոշ է արժեքների երերուն բնույթն ու անորոշությունը: Մի դեպքում նրանք արտահայտում են ազատական դիրքորոշումներ, մեկ այլ դեպքում՝ պահպանողական: Անհամապատասխանություն է նկատվում նրանց ձգտումների, ապագայի նկատմամբ լավատեսության և ներկայում նրանց ապրած դժվարությունների, հաջողության հասնելու ինստիտուցիոնալ մեխանիզմների բացակայության միջև:

Ընդհանուր առմամբ, հայաստանյան երիտասարդներին բնութագրական է հասարակական կյանքում նրանց վարքի անորոշության մեծ աստիճանը: Ճգնաժամայնությունը և գլոբալացումը գործում են տեղական ինքնակառավարման և ժողովրդավարական ենթակայության սկզբունքներին հակառակ՝ ցածրացնելով քաղաքական ինստիտուտների նկատմամբ երիտասարդների սոցիալական վստահության մակարդակը: Ուստի, երիտասարդներն անցնում են հետխորհրդային իրականությանը բնորոշ առանձնահատուկ ինքնակառավարման ռեժիմի, որը հիմնականում գործառնում է ավանդույթների, ողջախոհության, հասարակական հոգեբանության, սոցիալական կապերի, ապագայի նկատմամբ անձնական պատկերացումների (և ոչ կայուն գործող քաղաքական ինստիտուցիոնալ մեխանիզմների) հիման վրա:

Ամփոփելով հայաստանյան երիտասարդության սոցիոլոգիական հետազոտության արդյունքները՝ ստանում ենք արդի հայաստանյան երիտասարդության ընդհանրական բնութագիրը՝ տարբերակելով երիտասարդության սոցիալ-ժողովրդագրական ենթախմբեր՝ պայմանավորված նրանց հասարակական-քաղաքական ակտիվությամբ/պասիվությամբ, սոցիալական ներառվածությամբ/ բացառվածությամբ (inclusion/exclusion), կյանքով բավարարվածությամբ/ անբավարարվածությամբ, սոցիալական վստահությամբ/անվստահությամբ, ապագայի հանդեպ լավատեսությամբ/հոռետեսությամբ և սոցիալ-տնտեսական ինքնուրույնությամբ/կախվածությամբ (որպես պայմանավորող գործոններ հանդես են եկել հարցված երիտասարդների սեռը, տարիքը, բնակավայրի տիպը, եկամուտը և կրթությունը): Այսպիսով,

- Սոցիալական ակտիվությունը առավել բնութագրական է արական սեռի ներկայացուցիչներին, իսկ քաղաքական ակտիվությունը՝ ցածր կրթական մակարդակ ունեցող գյուղաբնակ երիտասարդներին:
- Սոցիալապես առավել ներառված սոցիալական խմբերն են բարձր կրթական մակարդակ և եկամուտ ունեցող արական սեռի ներկայացուցիչները: Սոցիալական բացառվածության տեսանկյունից առավել խոցելի են ամուսնացած իգական սեռի երիտասարդները, որոնց հատկապես բնութագրական են ավանդական գենդերային դերեր, նորմատիվ սպասումները և սոցիալական խիստ վերահսկողությունը:
- Կյանքով առավելապես բավարարված և առավել լավատեսական կենսական պլաններ ունեն բարձր եկամուտ ունեցող երիտասարդները: Երիտասարդների կենսական պլանները առավել հոռետեսական են դառնում տարիքի մեծացմանը զուգահեռ:
- Սոցիալական վստահության բարձր աստիճանը բնորոշ է ցածր տարիքի գյուղաբնակ երիտասարդներին:
- Առավել ինքնուրույն և անկախ սոցիալական կատեգորիաներն են բարձր եկամուտ ունեցող արական սեռի ներկայացուցիչները:

Ընդհանուր առմամբ հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ Հայաստանի այսօրվա երիտասարդությունը խոցելի է և ոչ լիարժեք ինքնուրույն: Եթե ստեղծենք հայաստանյան երիտասարդի հավաքական կերպարը, ապա քիչ է հավանական, որ նա երաշխավորված աշխատանք ունենա իր մասնագիտության ոլորտում: Փոխարենը «ծանոթներ» ունենալը մեծ դեր է խաղում աշխատանք ստանալու հարցում: Այդ երիտասարդը չի

վստահում ընտրված քաղաքական մարմիններին և ցուցաբերում է նվազագույն քաղաքական մասնակցություն: Նա նախընտրում է որևէ նախապատվություն չցուցաբերել Եվրոպական կամ Եվրասիական ինտեգրացիայի նկատմամբ, մի գործոն, որը կարող է այս կամ այն կերպով կորուստների հանգեցնել: Համացանցը տեղեկատվության նրա հիմնական աղբյուրն է: Այս երիտասարդը հոռետես է ապագայի հանդեպ, և տարիքի հետ վստահությունը դատարանների, ոստիկանության, մարդու իրավունքների պաշտպանի, լրատվամիջոցների, բժշկական հաստատությունների, ՀԿ-ների և բանկերի նկատմամբ ավելի է ընկնում: Այս երիտասարդի կյանքը խիստ կախյալ է և դիվերսիֆիկացված նրա գենդերային պատկանելությամբ, ուսանող լինել կամ չլինելով, ինչպես նաև քաղաքում կամ գյուղում ապրելով: Այս անձը անհանդուրժող է նույնասեռականների նկատմամբ: Կյանքի հիմնական նպատակը իր ծնողներին հպարտացնելն է: Եթե արական սեռի ներկայացուցիչ է, ապա նա սեռական հարաբերություն է ունեցել մինչև 21 տարեկանը, և իրավիճակը ճիշտ հակառակն է, եթե իգական սեռի ներկայացուցիչ է: Եթե արական սեռի ներկայացուցիչ է, ապա ունի ամուսնության հետ կապված կարևոր որոշումներ կայացնելու իշխանություն, իգական սեռի ներկայացուցիչների պարագայում իրավիճակը հակառակն է:

Օգտագործված գրականություն

Beacháin, D. Ó. & Polese, A. (2010): »Rocking the vote«: new forms of youth organisations in Eastern Europe and the former Soviet Union. *Journal of Youth Studies*, 13 (5): 615f.

Bourdieu, P. and Passeron, J. C. (1990): *La Reproduction*. London: Newbury Park, CA: Sage.

Caucasus Research Resource Center (2015): Caucasus Barometer 2015 Armenia dataset; available at: http://www.caucasusbarometer.org/en/cb2015am/AGEGROUP-by-TRURELI/ (last accessed 17.10.2016).

Civilitas Foundation (2011): *National Security and Foreign Military Bases in Armenia: Public Discussion and Opinion Poll Report*; available at: http://www.civilitasfoundation.org/cf/ (last accessed 30.7.2016).

De Micco, P. and European Parliament / Directorate-General for External Policies of the Union (2015): *When choosing means losing: The Eastern partners, the EU and the Eurasian Economic Union*. Brussels: European Commission.

Delcour, L. (2015): Between the Eastern Partnership and Eurasian Integration: Explaining Post--Soviet Countries' Engagement in (Competing) Region-Building Projects, *Problems of Post--Communism*, 62 *(6)*, pp. 316-327.

Donahue, M. J., & Benson, P. L. (1995). Religion and the Well-Being of Adolescents. *Journal of Social Issues*, 51: 145f.

Donelson, E. (1999): Psychology of religion and adolescents in the United States: Past to present. *Journal of Adolescence*, 22: 187f.

EHEA (2014): *About the Bologna Process, Members, Armenia*; available at: http://www.ehea.info/country-details.aspx?countryId=4 (last accessed 25.7.2016).

Freire, M. R. and Simão, L. (2013): »From words to deeds«: European Union democracy promotion in Armenia. *East European Politics*, 29 (2): 175f.

Furlong, A. (2013): *Youth studies: An introduction*. New York: Routledge.

Furlong, A. and Cartmel, F. (1997): *Young People and Social Change: Individualisation and Risk in Late Modernity*. Buckingham: Open University Press.

Furlong, A. and Cartmel, F. (2007): *Young people and social change: New perspectives*. Berkshire: Open University Press.

Furrow, J. L., King, P. E., & White, K. (2004). Religion and Positive Youth Development: Identity, Meaning, and Prosocial Concerns, *Applied Developmental Science*, 8: 17f.

Gray, P. (2007): Youth Justice, Social Exclusion and the Demise of Social Justice, *The Howard Journal*, 46 (4): 401f.

Hurrelmann, K. & Quenzel, G. (2015): Lost in transition: status insecurity and inconsistency as hallmarks of modern adolescence, *International Journal of Adolescence and Youth*, 20 (3): 261f.

International Labour Organization (2009): *Migration and Development. Armenia Country Study.* ILO Subregional Office for Eastern Europe and Central Asia, International Labour Office: Moscow.

Ishkanian, A. (2015): Self-Determined Citizens? New Forms of Civic Activism and Citizenship in Armenia. *Europe-Asia Studies*, **67 (8): 1203f.**

Lebanidze, B. (2014): What makes authoritarian regimes sweat? Linkage, leverage and democratization in post-Soviet South Caucasus. *Southeast European and Black Sea Studies*, **14 (2): 199f.**

Luhman, N. and Schorr, K.-E. (2000). *Problems of Reflection in the System of Education.* **New York: Waxmann.**

MacFarlane, S. (1997): Democratization, Nationalism and Regional Security in the Southern Caucasus. *Government and Opposition*, **32 (3): 399f.**

Մանուկյան Ս. (2012). Հայաստանի երիտասարդության ազգային զեկույց: Եր.: Երիտասարդական միջոցառումների իրականացման կենտրոն, մաս II: Վերլուծական մաս:

Մկրտիչյան Ա. Ե., Շահնազարյան Գ. Ն., Սահակյան Ա. Կ., Վարտիկյան Ա. Ռ., Վերմիշյան Հ. Ռ. (2013). Սոցիալական ինքնության պահպանման հիմնախնդիրները ՀՀ գյուղական համայնքներում: Եր.: ԵՊՀ հրատ.:

Nagle, J., & Mahr, A. (1999): *Democracy and Democratization: Post-communist Europe in Comparative Perspective.* **London/ Thousand Oaks, CA: Sage Publications.**

Panossian, R. (2003): Courting a Diaspora: Armenia-Diaspora Relations since 1988, in: E. Østergaard-Nielsen (ed.) *International Migration and Sending Countries: Perceptions, Policies, and Transnational Relations.* **Basingstoke, Hampshire / New York: Palgrave Macmillan.**

Petts, Richard J. (2014): Parental Religiosity and Youth Religiosity: Variations by Family Structure, *Sociology of Religion*, **76 (1): 95.**

Regnerus, M. (2000): Shaping Schooling Success: Religious Socialization and Educational Outcomes in Metropolitan Public Schools, *Journal for the Scientific Study of Religion*, **39: 363f.**

Robbins, D. (2010): Sociological analysis and socio-political change: juxtaposing elements of the work of Bourdieu, Passeron and Lyotard. *The Sociological Review*, **58: 115f.**

Roberts, K., Pollock, G., Rustamova, S., Mammadova, Z., & Tholend, J. (2009a): Young adults' family and housing life-stage transitions during post-communist transition in the South Caucasus. *Journal of Youth Studies,* **12 (2): 151f.**

Roberts, K., Pollock, G., Tholen, J., & Tarkhnishvili, L. (2009b): Youth leisure careers during post-communist transitions in the South Caucasus, *Leisure Studies*, **28 (3): 261f.**

Scott, J. (2014): *A Dictionary of Sociology.* **Oxford: Oxford University Press.**

Silova, I. (2010): *Post-Socialism is Not Dead: (Re)Reading the Global in Comparative Education.* **Bingley: Emerald.**

Siroky, D., & Aprasidze, D. (2011): Guns, roses and democratization: Huntington's secret admirer in the Caucasus. *Democratization*, **18 (6): 1227f.**

Social Exclusion Unit (2004): *Breaking the Cycle: Taking Stock of Progress and Priorities for the Future.* **London: Social Exclusion Unit.**

Tarkhnishvili, L., Voskanyan, A., Tholen, J., & Roberts, K. (2005): Waiting for the Market: Young Adults in Telavi and Vanadzor. *Journal of Youth Studies,* **8 (3): 313f.**

Tiryakian, E. (1972): Toward the Sociology of Esoteric Culture, *American Journal of Sociology*, **78 (3): 491f.**

Youniss, J., McLellan, J. A., Su, Y., & Yates, M. (1999): The Role of Community Service in Identity Development: Normative, Unconventional, and Deviant Orientations, *Journal of Adolescent Research*, **14: 248.**

Aleksanyan, A. Armenian Labour Migration as a Phenomenon of Social Integratione. (2015). *Armenians around the World: Migration and Transnationality,* **Peter Lang, pp. 219-236.**

Atanesyan, A., Mkrtchyan, A., Tumanyan, G. (2015). Some Aspects of Functioning of the Armenian Migratory Networks. *Armenians around the World: Migration and Transnationality,* **Peter Lang, pp. 49-64.**

Barrett, D. B., Kurian, G. T. and Johnson, T. M. (2001) *World Christian Encyclopedia*, **Oxford, Oxford University Press.**

Bourdieu P. (1989). Social Space and Symbolic Power. *Sociological Theory,* **Vol. 7(1), pp. 14-25.**

Bourdieu, P. (1985). The Social Space and the Genesis of Groups. *Theory and Society,* **Vol. 14, No. 6, pp. 723-744.**

Bourdieu, P. Forms of Capital, in: Granovetter, M. and R.Swedberg (eds.). *The Sociology of Economic Life.* **2nd ed. Boulder: Westview Press, 2001. pp. 96-111.**

Caucasus Barometer. **(2015a). Regional dataset- Armenia and Georgia, [Online] Available from** http://www.caucasusbarometer.org/en/cb2015/IDEALNCH/, [Accessed 31.10.2016].

Caucasus Barometer. (2015b). Armenia dataset, [Online] Available from http://www.caucasusbarometer.org/en/cb2015am/IDEALNCH-by-AGEGROUP/, [Accessed 31.10.2016].

De Micco, P. (2015). *When choosing means losing The Eastern partners, the EU and the Eurasian Economic Union.* [Online] Available from http://www.europarl.europa.eu/RegData/etudes/STUD/2015/549026/EXPO_STUD(2015)549026_EN.pdf, [Accessed 31.10.2016].

Dudwick, N. (2015). *"Missing Women" in the South Caucasus: Local perceptions and proposed solutions.* [Online] Available from http://www.worldbank.org/content/dam/Worldbank/Highlights%20&%20Features/eca/armenia/missing-girls-report-english.pdf, [Accessed 31.10.2016].

ETF (European Training Foundation), (2013). Torino Process 2012: Armenia, ETF, Turin.

Gender Barometer Survey: A Sociological Survey. (2015). Center for Gender and Leadership Studies, Yerevan. [Online] Available from http://www.ysu.am/files/Gender%20Barometer.Armenia.English.pdf, [Accessed 31.10.2016].

Gevorgyan, H. (ed.). (2011). *The mosaics of gender relation: gender socialization, gender tolerance, gender identity.* Yerevan: Edit print.

Makaryan, G. & Galstyan, M. (2012). *Costs and Benefits of Labour Mobility between the EU and the Eastern Partnership Partner Countries.* Country report: Armenia, [Online] Available from http://www.case-research.eu/sites/default/files/Armenia%20country%20study%20-%20final.pdf, [Accessed 31.10.2016].

Paturyan, Y.J., Gevorgyan,V. (2014). *Armenian Civil Society after Twenty Years of Transition: Still Post-Communist?* Yerevan: AUA.

Գյուղական համայնքների հետազոտության հիմնական արդյունքների մասին. (2009). Հաշվետվություն, ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն, Երևան. [Online] Available from http://www.armstat.am/file/article/csreport-09a.pdf, [Accessed 31.10.2016].

Sarkissian, A. (2008). Religion in postsoviet Armenia: Pluralism and identity formation in transition. *Religion, State and Society,* 36 (2), pp. 163-180.

Skrebyte, A., Garnett, Ph., Kendal, J.R. (2016). Temporal Relationships Between Individualism–Collectivism and the Economy in Soviet Russia. Journal of Cross-Cultural Psychology, Vol.47(9), pp.1217-1235.

Social Cohesion Survey. (2011). Caucasus Research Resource CentersArmenia. [Online] Available from http://www.crrc.am/hosting/file/_static_content/projects/social_cohesion_survey/CRRC_UNDP_SocialCohesion%20Presentation_English.pdf, [Accessed 31.10.2016].

Social Snapshot and Poverty in Armenia. (2015). [Online] Available from http://www.armstat.am/en/?nid=81&id=1718, [Accessed 31.10.2016].

Transparency International Anticorruption center. (2011). *Risks and opportunities for the NGO sectorin Armenia.* Yerevan

Tsaturyan, R.. (2012). *Gender roles in Armenian elementary school textbooks.* [Online] Available from http://www.osf.am/wp-content/uploads/2015/05/OSF_POS_ENP_ARMENIA_2014.pdf, [Accessed 03.11.2016].

Almond, G.A. & Verba, S. (Eds) (1989).*The Civic Culture: Political Attitudes and Democracy in Five Nations.* First Sage Printing.

Vermishyan, H. (2015). "Local Manifestation of Transnationality in Current Armenian (RA) Village Communities". *Armenians around the World: Migration and Transnationality*, Peter Lang, pp. 65-76.

Yeghiazaryan, A, Avanesyan, V, Shahnazaryan, Sh. (2003) How to reverse emigration. Armenia, Ameria CJSC. [Online] Available from http://www.amerialegal.am/pdf/d5c0447534321fa8e3db55f97def1070.pdf, [Accessed 31.10.2016].

Манукян, С. (2013). Отношение армянского общества к евразийской и европейской интеграции. [Online] Available from http://www.noravank.am/upload/pdf/UNKNOWN_PARAMETER_VALUE.pdf, [Accessed 31.10.2016].

Чупров В.И., Зубок Ю.А., Певцова Е.А. (2009). Молодежь и кризис. Диалектика неопределенности и определенности в социальном развитии. М.: ООО «ТИД «Русское слово - РС».

Արծրունի Գր. (1904). Կրկին համալսարանի մասին. Աշխատություններ, հ.1, Թբիլիսի: Մշակի խմբ., էջ 108-119

Խոջաբեկյան, Վ.Ե. (2001). Հայաստանի բնակչության վերարտադրությունը և տեղաշարժերը *XIX – XX* դարերում, *XXI* դ. շեմին. Երևան: ՀՀ ԳԱԱ Գիտություն հրատ.

Հայաստանի ազգային մրցունակության զեկույց. (2010). Բարձրագույն կրթության մարտահրավերը. Երևան: Փրինթինֆո, http://ev.am/sites/default/files/attachments/pdf/ACR%202010_arm.pdf.

Հայաստանի Հանրապետության օրենքը պետական նպաստների մասին. (27.11.2013). [Online] Available from http://www.parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID=6454&Reading=0, [Accessed 31.10.2016].

ՀՀ երիտասարդների զբաղվածության հիմնախնդիրները՝ Սոցիոլոգիական հետազոտության արդյունքների վերլուծություն. (2013). Եր.: Երիտասարդական միջոցառումների իրականացման կենտրոն: [Online] Available from http://www.minsportyouth.am/files/post/1463655073-2.pdf, [Accessed 03.11.2016].

Մանուկյան, Ս. (2014). Սոցիալական լարվածությունները հայաստանում. [Online] Available from http://www.noravank.am/upload/pdf/3.Samvel_Manukyan_02_2014_21_DAR.pdf, [Accessed 31.10.2016].

Մկրտիչյան, Ա. (2007). Սոցիալական պետությունը իբրև միֆ կամ լեգիտիմության ճգնաժամ. Սոցիալական պետություն, Եր., էջ 53-57.

Սերիեր, Ն. (2014). Հայաստանում երիտասարդ կանանց և տղամարդկանց անցումն աշխատաշուկա. Աշխատանքի միջազգային գրասենյակի զբաղվածության քաղաքականության բաժին, Ժնև: ԱՄԿ.

Ռաֆֆի. (1991). Հայ կինը. Երկերի ժողովածու, հ. 11, Երևան:

Շատ հետխորհրդային երկրների պես, Հարավային Կովկասի երկրները դեռևս գտնվում են անցումային շրջանում: Հայաստանը, լինելով տարածաշրջանում ամենափոքր հանրապետությունը, դեռևս փորձում է իր ուղին գտնել Եվրոպայի և Ռուսաստանի, ինչպես նաև արժեքների, ինտեգրացիոն մոդելների և դրանց առնչվող անվտանգության գործոնների միջև: Ժողովրդավարական հասարակության և ազատ շուկայական տնտեսության տրանսֆորմացիան հեռու է ավարտված համարվելուց: Ի հավելումն այդ ամենին, երկիրն ունի Թուրքիայի և Ադրբեջանի հետ տևական վեճեր, որոնք հանգեցնում են մեկուսացման, ինչպես նաև «ոչ պատերազմ–ոչ խաղաղություն» իրավիճակի:

Տվյալ հետազոտությունը բացահայտում է Հայաստանի երիտասարդների մտահոգությունները, ձգտումները, արժեքները և կենսակերպերը: Այսօրվա 14–29 տարեկան երիտասարդները մեծացել են Խորհրդային Միության փլուզումից հետո՝ անկախ Հայաստանում, նրանք «անկախության սերունդն են»: Այս իմաստով, այս սերունդը ներկայացնողն է մի կողմից՝ խորհրդային ժառանգության և մյուս կողմից՝ հայաստանյան հասարակության հետագա զարգացման:

ISBN 978-9939-1-0485-0